



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1889

ՅՈՒՆԻՍ

1889 № 6

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Էրև

|                                     |     |                                  |
|-------------------------------------|-----|----------------------------------|
| 1 ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ . . . . .        | 839 | Խե Կարապետ (վկայ):               |
| 2 ՄԱՆՈՒԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ . . . . .        | 896 | Օաղիս (բանաստեղծութիւն):         |
| 3 ԱԼԻՔԱՆ . . . . .                  | 897 | Գաղթականի պատմածից (բանաստ.)     |
| 4 ՊՈՒՇԵԱՆՑ ՊԵՐՃ . . . . .           | 899 | Յեղիբ (վերջ):                    |
| 5 ԱՐԵՒԻՔԱՆ . . . . .                | 919 | Ամբասին (բանաստեղծութիւն):       |
| 6 ԲԱԼՈՒԼԱՆ Զ. . . . .               | 921 | Մի՛ թռնաւորիւ... (բանաստեղծութ.) |
| 7 Ա., Լ. Ս. . . . .                 | 922 | Գրախօսութ.:— Համբէա, Բաղմաթէպ:   |
| 8 Տ.-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐ. ԲՃԶԿԱՊ. . . . . | 944 | Բարակայտ.— թարգմար:              |
| 9 ԼՈՒՍԻՆԻ . . . . .                 | 949 | Ամուտ Բրօնիկ:                    |
| 10 ԶԼԻՅԵԱՆՑ ԱԼԵՏԻՍ . . . . .        | 964 | Բաքուի Մարգ. րնկ. 25-ամեայ չօր:  |
| 11 . . . . .                        | 972 | Կաթիլատեան Կառավարչ. չրջարեբակ:  |
| 12 . . . . .                        | 974 | Արձան և Յօրեղեան:                |
| 13 Շ. . . . .                       | 975 | Փաղարական տեսութիւն:             |
| 14 ԽՄԲ. . . . .                     | 982 | «Մարձ»-ի նամակադրութիւն:         |

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Գ. ԹՕՏԵՆԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротшильда, на Гол. просп. соф. д. № 41.

1889

1841

1841

1841

1841

1841

1841

# Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1889

Յ Ո Ւ Ն Ի Ս

1889 № 6

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ԴՕՏԻՆԵԱՆՅԻ

1889

Дозволено цензурою Тифлисъ. 22-го Мая 1889 года.

Типографія М. Д. Ротинянца на Гол. просп. домъ № 41.



# ԽԵՒ ԿԱՐԱՊԵՏ

ՍԱՐԳԻՍ ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

«ԱՇԽԱՐՀԸ ԴՍԱԿ, ՄԱՐԴԻԿԸ ԴԱՆԱԿ—ԿՏՐԷ ՈՒ ԿԵՐ»

Ա.

ԱՐԴԱՐ ՄԱՐԴԸ

Սուլթան Արզիւլ-Ազիզի թագաւորութեան ժամանակ, Տաճկան-Հալապտանի Կարին քաղաքում, կաթոլիկ (Հալ-կաթոլիկ) ժողովրդին հովոււմ էր Մելիտոնենց աէր-Վարապետը: Յիսուն տուն ծուխ ունէր, որոնցից միայն տասը կարողանում էին առանց կարօտութեան ապրել: Մնացեալները մեծ մասամբ կառավարութեան կամ ուրիշի զոնները ծառայողներ էին ու արւեստին ծուռ նայող արհեստաւորներ և օրական ապրուստը հազիւ էին կարողանում ձեռք բերել: Սոցանից շատերը նորադարձ էին, որը ուրիշ աշխարհներից կամ քաղաքներից վախած, որը ծնողներից վախւած, որը պարտաւորներից հալածւած, որը անցաջողութիւններից ստիպւած, որը օգնութիւններով հրապուրւած, որը պաշտօնների ձեռք բերելու յուսով խաբւած, որը արտաքին փաշտով շլացած, որն էլ զանազան աստուածաբանական վարդապետութիւններից նախապաշարւած՝ եկել միայն էին ընդհանրական եկեղեցուն:

Տէր-Վարապետին ժողովրդի մեծ մասը ու նորադարձներից շատերը արդար էին կանչում և նորան՝ հակառակորդ կուսակցութեան դէմ՝ միշտ պաշտպանում: Փոքր մասն էլ երկդիմի բառով ԽՆԻ էր անւանում, որը, զաւառական բարբառով, թիւրքական զէլի բառի բուն թարգմանութիւնն է: Այս դէլի բառը շատ վաղ ժամանակներից ժողովրդի մէջ մեծ արտօնութիւններ վայելող անձնաւորութիւններին էր արւում և սուլթաններն ու երեւելի բէգերը իրանց սիրած ոչ-մահմէդականներին զէլի էին անւանում: Ժողովուրդն էլ շատ անւանի քաջերին միայն խե էր կանչում և սոցա արարքներն ու խօսքերը ոչ մի դատարանում քննութեան տակ չէին ընկնում: Դորա համար, երբ իւր կուսակիցներն յայանեցին նորան թէ՛ իրան խե են կանչում, — շա՛տ շնորհակալ եմ, պատասխանեց. — եղբայրս, այդ տիտղոսին արժանանալու համար, հազար զուրուշ ծախսեց, իսկ ժողովուրդը ինձ շատ սիրելու համար՝ ձրի է բաշխում:

Տէր-Վարապետը թէ արդար էր և թէ խե: Սա աշխարհից ձեռք քաշածի պէս էր ապրում և ամենայն ճշդութեամբ իւր եկեղեցական պարտականութիւնները կատարելուց ջոկ, իւր անձը ամեն տեսակ զրկանքների տակ էր գցում: Շատ անգամ նորան այցելողները ծնկաչոք էին տեսնում նորան և սպասում խցի դուռը մինչի աւարտն: Երբեմն երբեմն պառաւները նորա կեղտոտ քուրձը լւանում էին: Պասն ու ծոմը շատ խտուրթեամբ պահում էր և միայն երկու տեսակ կերակրով ճաշում: Ամեն մարդու հետ եղբօր և մտերիմի պէս էր վարւում և ամենքին բարի ու առաքինի խրատներ տալուց չէր զադարում:

Կեանքի մէջ երկու ձեռք շոր չէր պահիլ. նորը կարել տալուն պէս՝ հինը աղքատներին էր բաժանում: Վարդապետից ով ինչ խընդրէր, չէր մերժիլ — որին վերարկուն էր տալիս, որին էնթարին, որին կօշիկները, որին ձերմակեղէնները, որին զլխարկը, որին ժամացոյցը: Ստէպ ստիպւած էր լինում մի քանի օր շարունակ տանիցը դուրս չը գալ, մինչև մէկին նւիրած ջիւբի կամ ուրիշ հալաւի տեղ՝ նորը կարելը: Փողոցներում մուրացկաններին հանդիպելիս՝ տուն էր բերում, իրան հետ սեղան նստեցնում, ուտեցնում, խմեցնում ու կշտացնում և ծախսի փող էլ տալով՝ ճանապարհ գցում:

Նա իւր սակաւաթիւ ծուխերին լաւ էր ճանաչում. գիտէր թէ



ո՛վ իւղ էր ուտում՝ պռօշներին մոխիր քսում և ո՛վ մոխիր ուտում՝ շրթունքներին իւղ քսում ու աշխարհին երևում: Գաղանի հասնում էր բոլոր անձար աղքատներին: Մէկի տունը մի տիկ պանիր էր ուղարկում՝ առանց անունը յայտնելու, մի ուրիշի մօտ՝ մի քուղաց իւղ, մի երրորդի մօտ՝ մի կարաս զաւուրմաց: Պատարագն ասում ու եկեղեցուց դուրս գալուն պէս՝ պատարագուցը աղքատներին բաժանում, նւէրներն ընդունում ու անմիջապէս կարօտեալներին էր ուղարկում: Ընդունում էր իւր մօտ և սիրով ու յօժարութեամբ լսում դանգառներն ու բողոքներն՝ էրիկ մարդուն էլ, կնիկ մարդուն էլ, մեծին էլ, փոքրին էլ, հարուստին էլ, աղքատին էլ, տեղացուն էլ, օտարին էլ, ազգակցին էլ, ալլազգին էլ, կրօնակցին էլ, ալլակրօնին էլ: Ամեն րոպէ և ամեն ժամանակ նորա դուռը նեղեալների համար բաց էր:

Շատ սակաւ էր պատահում, որ վարդապետի մօտից հեռացողը նորանից անբաւական բաժանէր: Անբաւական էին հարուստների մեծ մասը և լուսաւորեալ կոչւած երիտասարդների մի մասը: Որովհետեւ նա մեծատուններին ետ էր մղում և խնտելիզեցեացին արհամարհում: Ասիական մի քաղաքում, որտեղ փողատէր մարդիկ շրջապատողներից անհամեմատ պատիւ ու յարգանք են վայելում ու սովորած են բարձր աթոռների վերայ բազմելու և խնկարկւելու ամեն դասակարգից, կատաղում էին՝ դէպի իրանց ճոխութիւնը արհամարհանքով հայեացք դրող այս կղերականի դէմ, որ աշխատում էր հներին ետ քշելով՝ թարմ ոյժեր առաջ բերել իւր հովանաւորութեան տակ: Սա հեռզհեռէ աղաներին ետ թողնելով, զերձակներին, կօշկակարներին ու ոսկերիչներին սերտուկ ու ժիլէտ հազցնելով, հասարակութիւնից ձայն ժողովեց ու ընտրել տւեց զանազան ժողովների անդամ: Այսպիսի նոր արարքներով բորբոքեց հների սիրտը, որոնք սաստիկ վրդովեցան ու հեռզհեռէ ետ մնալով՝ քանդեցին, կործանեցին:

Վենետիկից ու Կ. Պօլսից եկած երիտասարդներին, որ ամեն տեղ ուսման ու դպրոցի հարց էին բարձրացնում և զլուս տանում—դէվ-դէկ, անկրօններ կանչելով՝ վարդապետը վռնդում էր ատեաններից: Շատ անգամ էլ զայրանալով՝ դառնում էր զառանցեալ ծնողների կողմը ու հետևեալ խօսքերով խրատում.—Ուսումն ու գիտութիւնը որ կիսատ տրւի, երեխաները անկրօն կը դառնան: Տեսնո՞ւմ ես այս

վանքի վարդապետների մօտից յետ եկող պատանիներին, ծնողները շաբաթը մի անգամ, կիւրակի օրին, նոցա ստիպմունքով հազիւ ժամեն բերում ու տարին մի անգամ զժաւորութեամբ խոստովանեցնում: Իրանք հերիք չեն, ուզում են, որ մեր բարի վարքով ու շնորհքով լի երեսնաներն էլ իրանց պէս դառնան:

Տէր-Վարապետին լաւ ճանաչելու համար, հարկաւոր է լաւ ծանօթանալ նորա անձնաւորութեան և անցեալի հետ: Սա տասն և հինգ տարեկան հասակում հայրենիքից Կ. Պօլիս և այստեղից Հոմէր ուղարկւած՝ ուսումը շարունակելու: «Պրօպագանդայում» ուսած էր աստուածաբանութիւն և փիլիսոփայութիւն: Սորա Հոմէր եղած ժամանակը, Պապը, հոգեւորական իշխանութեան հետ, պահպանւում էր և Պէպինոսի շնորհած կալւածները: Բայց այդ ժամանակները քաղաքական հանգամանքները և Խալաքի ազատասէրների ապստամբութիւնները մեծ վտանգներ էին սպառնում ու զիպլոմաները զանազան խորհուրդներ էին տալիս Պիոս Թ-ին: Այս հանգամանքներում ստիպւեց Հոմի կալիստոսը Յիսուսեաններից առժամանակեայ խելիւ Ուրբանեան ուսումնարանի ղեկը և ուրիշներին յանձնելու, մինչև քաղաքական նոր փոփոխութիւնները: Տիրացու Վարապետին դուր չ'եկաւ այս կարգադրութիւնը և մի քանի ընկերներին համոզելով ապստամբեցին նոր կառավարիչների դէմ և բողոքեցին բարձր վարչութեան, որ վերադարձնեն իրանց հին պրօֆէսօրներին: Այս բանը մեծ ազմուկ բարձրացրեց. Վարդինալների ժողովն էլ ստիպեց Վարդինալ Բարնաբօյին, որ անպատճառ գտնի ապստամբների պարագլխին և իմանալ սկզբնական պատճառները: Բարնաբօն խիստ քննութիւնից յետոյ՝ զեկուցում տւեց, որ արեւելքի մի տիրացու է եղել ամեն բանի պատճառը, որին անմիջապէս արձակեց ծիրանաւորը «Պրօպագանդայից»: Պապից սկսեալ մինչև ամենավերջին վարդապետը ցանկանում էին տեսնել այս ապստամբին: Այստեղից հռչակեց մեր տիրացու Վարապետի համբաւը Հոմում, որը՝ առանց ուսումնի աւարտելու և նպատակին հասնելու՝ վերադառնալու էր հայրենիք: Բայց նախկին ուսուցիչների օգնութեամբ Յիսուսեան Անկերութեան մեծաւորը Վարապետին զաղտնի կանչեց իւր մօտ, երդւել տւեց և ընդունեց իւր միաբանութեան միջև և յանձնարարականներով Կ. քաղաքը ճանապարհ գրեց: Զը մոռացաւ խոստանալու ոչ թէ վարդապետու-



Թեան պաշտօն, որին հասնելու փափագում էր տիրացուն, հապա՛ եպիսկոպոսութեան և եպիսկոպոսապետութեան: Ահա այս յոյսերով քսաներորդ տարին էր, որ ապրում էր մեր Վարապետ վարդապետը:

Տէր-Վարապետը երկացնահասակ, վայելչակազմ, առողջ մի մարդ էր: Թէև քառասուն և հինգ տարեկան կար, բայց կարծր ու սև մօրուքի մէջ մի սպիտակ մազ չը կար: Լայն ճակատը, խոր ու շիւ աչքերը, արծուենգը, միշտ մռայլոտ դէմքը իրան շրջապատողներին սոսկացնում և զգաստ էր պահում: Շատ քիչ էր ծիծաղում տէր-Վարապետը, այն էլ քթի տակը ու շատ աննշան, որը խիստ մոտերիմները միայն կարող էին նկատել: Թէև քիչ էր խօսում, բայց խօսքն ազդու և վճռողական էր:

Առաւօտեան ժամից յետոյ վարդապետը վերադարձել էր իւր խուցը և սուրճ էր խմում: Տիրացուն ոտքի վերայ անշարժ կանգնած՝ սպասում էր հրամաններին:

—Այս ո՛րքան պինդ է. հազար անգամ ասել եմ, որ իմ զայֆէն Թեթև եփիր ու շատ եռացրու: Միայն զարդի՛ համար են ականջներդ. զնա՛, ուրիշն եփիր:

Տիրացուն դուրս գալուց յետոյ, ներս մտաւ մի միջահասակ կին, շարսաւը գլուխը և Վարդարան ու գիրքը ձեռքին:—«Գովեցեալ է Յիսուս» ասելով, մօտեցաւ և տէր-Վարապետի աջն համբուրեց:

—Եղիցի միշտ և հանապազ, պատասխանեց վարդապետը. հրամեցէ՛ք, նստէ՛ք, Լուցի՛ա խանում: Տիրացո՛ւ, զայֆէ բեր խանումին:

—Երկու օր է, տուն չը հանդիպեցար, ասի՛ տեսնեմ ո՞ւր մնաց վարդապետը:

—Գործ ունէի, դորա համար ուշացայ ձեզ այցելելու:

## Բ.

### ՋԵՐՄԵՌԱՆԴ ԿԻՆԸ

Լուցիա խանումին Կարին քաղաքում ամեն մարդ ճանաչում ու յարգում էր: Սա իւր հասակակցին եղբայր կամ քոյր էր կանչում, ծերին՝ ավար, պառաւին՝ քաջան, դեռահասին՝ որդի՛, աղջիկ: Ամենի հետ խօսում էր ջանով ու ջիգարով, ինչպէս ստեր (հարապարտ) մայրը իւր զաւակներին հետ: Ո՞վ չէր տեսել կամ ո՞վ չէր վայելել

նորա հազար ու մէկ պատիւները, թէ խօսքով և թէ կեր. ու խոսմով, կամ ո՞վ կարող էր ուրանալ նորա տանը կերած հացը, չէ՞ որ աղն ու հացը աչքերը կը բռնէին: Վերջապէս բերան չը կար, որ չը զովէր սորա մարդասիրութիւնը և մարդավարութիւնը:

Արշալուսին Լուցիա խանութը ոտքի վերայ էր. հագնելու և լւացելուն պէս՝ բաց էր անում տան դռները, ամեն մի սենեակը մտնում, քննում, բացւողների վերմակները ծածկում, ծառաներին և աղախիններին վերկացնում, տունը, դուռը աւիլել տալիս, մալերին (դասարան) հոգալ տալիս, կովերն ու մատակները կթել տալիս, նախիրն ուղարկում, կաթը տաքացնում, ինքն էլ Վարդարանը ձեռին մի կողմից աղօթում, միւս կողմից հրամաններ տալիս: Ամեն բան կարգի սարքի դնելուց յետոյ, բախում պաղ սալերի վերայ չոքած՝ բարձր ձայնով աղօթքը շարունակում էր, մինչև եկեղեցու առաջին զանգ տալը:

Ձանգի ձայնը առնելուն պէս՝ վեր էր կացնում տան բոլոր անդամներին՝ մեծին, փոքրին, որին կամայ, որին ակամայ առաջը խառնած եկեղեցի տանում: Ժամում ժամերգութիւնից մինչև պատարադի վերջը մնում և վերնատնից ցած ձայնով բոլոր երգերն ու շարականները տիրացուների հետ երգում էր, իրան անծանօթ ժամասացութեան ժամանակն էլ աղօթագրքով էր աղօթում: Ամեն շաբաթ խոստովանւում, հաղորդւում էր: Վերնատան մէջ կարգ ու կանոններին հսկում էր և մի ծուռ նայածքով ամեն խօսք ու խօսակցութիւն վերջացնում: Թէ խելօքին և թէ անխելքին սաստում—վախեցնում էր: Պարապ նստողներին էլ աղօթք էր անե՞լ տալիս, որին աղօթադիրք տալիս, որին էլ Վարդարան: Տնէ տուն ման էր գալիս, խոովածներին հաշտեցնում, չը խոստովանողներին ստիպում խոստովանեցնում, աղօթք չ'իմացողներին սովորեցնում, ծոյլերին էլ անպատուելով, ամաչացնելով ժամ բերում: Շատ տեղեր էլ Սուրբ Գրոց ու Վարք Սրբոց պատմութիւնները պատմում ու սովորեցնում էր և զանազան առակներով ու առածներով համոզում, վանքական եղբայրների և քոյրերի զանազան կենսագրութիւններով զւարճացնում:

Ամեն դուռ նորա համար բաց էր. ժամից յետոյ մինչև տուն գալը քառասուն տուն էր այցելում: Ամեն տեղ այնպէս էր քննում, որ իմանում էր, թէ ո՞ր տունը ի՞նչ էր մտել կամ ո՞րն ինչի՞ պէտք ունէր: Բոլորը սրան շահում էին. որը կաթ, որը սուրճ, որն էլ կաթ-



նով սուրճ էր խմեցնում, որը ձևաձեղ, որը մխլու (ձևաձեղի մի տեսակը), որը հալւաց, որը հասութա և որն էլ խաւիժ էր ուտեցնում: Ամեն մէկի տունը եկած ուտեստից նորամասը պահւում էր, ամեն լաւ եփած կերակուրից նորա բաժինը հանւում ու հասնում էր: Նաոտ անգամ սա իր բաժին դաթան կամ բաղարջը, պտուղներն ու քաղցրեղէնները գօտին էր դնում և ո՛ր անսէր պառաւը կարօտ էր, նորան հասցնում: Անպաշտպան ծերերին ու պառաւներին աչցելում, մխիթարում, անկողինները թափ տալիս, արւը զցում, շտկում ու ձերմակներն լւանալ էր տալիս: Նաոտերի էլ ցանկացած կերակուրները եփում, ուտացնում և օրհնէքներն առնելով՝ հեռանում էր: Լուցիա խանումը ցերեկով շատ քիչ անգամ տանն էր մնում. հարկաւոր եղած ժամանակը, տասը-քսան տուն հարցնելուց յետոյ՝ հազիւ կարողանում էին գոնել:

Քսան տարի առաջ պատկեւ էր, միայն նա երկու զաւակ ուներ, մինը տղայ, միւսն՝ աղջիկ: Մէկ երկուսին էլ թաղել էր ու էլ չէր բերում: Ինքը մի մեծ մարդու զուտոր չէր, բայց շատ վարպետ մօր զաւակ էր: Մարդն էլ իր դուռ վաստակով, քրդերի և թիւրքմանների մէջ երկար տարիներ նեղութիւն կրելով՝ կարողացել էր մի քանի հազար ոսկի դիզել և մէկ երկու անգամ Հալէբ ու Շամ ոչխար տարել, ծախել, աչքտեղից էլ Նրուսաղէմ մտել, Հաջիի մարկան թւին դրոշմել: Վերադառնալիս՝ Շամից ու Հալէբից մետաքսեղէն թանկագին ապրանքներ էր բերել, կարինում ծախել և այս առուտորով պարապել: Բայց որքան որ հարստացել ու վաճառականների կարգն էր անցել, հին մարդիկ էլի «կեղտոտ Թաթոս» էին կանչում և շատերն էլ «ոչխարի Հաճի» անւանում:

Լուցիա խանումը միջահասակ, կլոր ու գէր գեղեցկապէմ մի կին էր: Թէև քառասուն գարուն անց էր կացրել, բայց երեսուն տարեկան հազիւ էր կարծւում: Կլոր երես, սպիտակ մորթով, կարմիր ու վառվռուն թշերով, սև աչք-ունքով՝ գեղեցկուհիների դասում միջակ տեղ էր բռնում: Թէև չքնաղ չէր, բայց չքնաղ ասող ուներ:

Լուցիա խանումը թէև ամեն տեղ յարգանք էր վատտակել, բայց իւր յաճախ աչցելութիւններով շատերին ձանձրացրել և շատերին էլ զցել էր կասկածների ու տարակոյսների մէջ: Երբեմն մի տան ամենածածուկ գաղտնիքները տարածւում էին, մի ուրիշի էլ



սրտի դարդերը ականջէ ականջ խօսուում, մի երրորդի էլ անյայտ յանցանքները երևան գալիս: Սոցա նման մթին զանազան պատմութիւնները, որպէս կարծուում էր, լուցիւս խանութն էր տարածում: Յայտնի բան է, ժողովրդի բերանը ընկած խօսքը հետզհետէ զարգարւում է, վրազիրներով պատմւում և ամեն կողմ տարածւում: Թէև յաճախ խօսք էր տալիս ուրիշ անգամ էլ բամբասանքներ չ'անելու, բայց բնականաբար սաստիկ նախանձոտ լինելով, իւր կրքերը չէր կարողանում զսպել: Բայց նոցա մօտ իւր չարակամների յանցանքները խօսելուց չէր քաշւում: Նրբեմն էլ իւր շատ մտերիմ կանանց ականջներում զոցա զաղտնիքները փափսում էր և վերջն ասում.— Դեռ շա՛տ կայ, դեռ ո՛րտեղ ես, լաւ է լռել ու մեղքի տակ չ'ընկնել: Մեղի չի վերաբերիլ խօսել, էլի մերն է, ծածկելու է:—

Շատ կանայք էլ աւելորդապաշտութեամբ լուցիւս խանութի իրանց տունը մտնելը ձախող դէպքերի առիթ էին համարում: Ասում էին՝ շունչը ծանր է: Բայց բոլորն էլ ամաչում էին և երես չէին կարողանում դուրս գալ ու ճանապարհը կտրել: Մի՞թէ կարելի է ջան ասողին՝ չո՞ւ ասել: Ի՞նչպէս քեզ քաջ պատահու տուն տանող պատուողին փոխադարձաբար չ'ընդունել: Մի՞թէ չէմքից ուրախ երես մտնողին մարդ կը կարողանայ ասել՝ չեմ ուզում, իմ տունը մի՛ գալ: Նամանուսանդ բոլորը վախենում էին, մեծ կնիկ է ու ամեն տեղ նստող կանգնող, զգուշանում էին՝ չը բամբասւելու համար:

Սուրճերը խմելուց յետոյ՝ վարդապետն ասաց.

—Լուցիւս խանութ, այն թղթերը գրել տւի, պատրաստ են, հիմի գրագիրը կը բերէ: Պէտք է Պապ աղային էլ կանչել, որ հասկանայ գրածներն ու մէկտեղ ստորագրէք: Այն մարդն էլ չի կարող սպասել, Կ. Պօլսում մեծ գործեր ունի և վաղը միտք ունի կարաւանի հետ ճանապարհ դուրս գալու:

—Միւսիւ Յանե՞սը, մի՞թէ այդքան շուտով պիտի գնայ:

—Այստեղ նորան ի՞նչ գործ կայ. Դաւթին ինչպէս որ սովորեցնեմ, այնպէս կը շարժւի և գործը անտարակոյս գլուխ կը գայ: Մեզ Կ. Պօլսում մարդ է պէտք և միւսիւ Յանեսը Դուռը այնպէս պատիւ ունի, որ ամեն ժամանակ մեր ուզած կարեւոր հրամանները ու հրահանգները այստեղի ժողովների վերայ կարող է ուղարկել տալ:

—Այդ ձե՛ր գործն է:

— Ես գիտեմ և ինչպէս որ ձեր օգուին բարի է, այնպէս էլ կարգադրած եմ:

— Ձեր կամքն է, ձեզ ենք յանձնւած: Ղաւոր մի՛ կորցնէք, ինչ որ ասէք՝ համաձայն ենք:

— Տիրացո՛ւ, դնա՛ Պապ աղային կանչի՛ր, հրամայեց վարդապետը:

Լուս թիւնը տիրեց: Ներս մտաւ վաճառականական ժողովի քարտուղարը՝ Մէդէթ Էֆէնդին: Յարգանքով վարդապետին բարևելուց յետոյ, ծոցիցը հանեց երկու պայմաններ, զրասեղանի վերայ դրեց ու նստեց: Քիչ յետոյ, իրար ետևից ներս եկան միւսիւ Յանեսը և Պապ աղան: Վարդապետը բոլորին զայնպէսով պատուեց:

— Մէդէթ Էֆէնդի, ասաց վարդապետը, այդ պայմանները բարձր կարգա՛, որ բոլորն էլ լսեն: Թուրքերէն ամենքն էլ գիտեն:

Մէդէթ Էֆէնդին, կարդաց: Ընթերցումից ոչինչ չը հասկացան Լուցիա խանումը և Պապ աղան, բայց վստահ վարդապետի տւած խօսքերին՝ անմիջապէս ստորադրեցին ու կնքեցին: Այդ ստորադրութիւնով քոյր և եղբայր իրանց հասանելիք ժառանգութեան մի չորրորդ մասը յօժարութեամբ տալիս էին միւսիւ Յանեսին, որը պարտաւոր էր անձամբ կամ փոխանորդով պաշտպանելու նոցա գործերը մինչև վերջը: Լուցիա խանումը և եղբայրը իրաւունք չ'ունէին հեռացնելու դործի պաշտպանութիւնից կամ հաշուելու և ամեն դէպքում այդ չորրորդ մասը պարտաւոր էին հասցնելու միւսիւ Յանեսին: Պայմանների հետ յանձնեցին հաւատարմութուղթը գրադրին, որ տարաւ ժողովարան, վաւերացրեց և ետ ուղարկեց: Վարդապետը պայմանագրի մի օրինակը տւեց Պապ աղային:

— Ես ի՞նչ պիտի անեմ այս թուղթը, կարելի է կորցնեմ. լաւ է՝ քոյր, դու պահես:

— Ո՛չ, ասաց վարդապետը, նոցա տանը չի կարելի թողնել այդ թուղթը:

— Վարդապետ, ձեր սնդուկից լաւ տեղ չը կայ, դո՛ւք պահեցէք, ասաց Լուցիա խանումը. երբ որ պէտք զայ, կը դանք, կը տանենք:

— Լա՛ւ, ասաց վարդապետը:



— Շա առաւօտը գնալու եմ, վարդապե՛տ, մարդ ուղարկի՛ր, որ ինձ համար ձի վարձեն, ասաց միւսիւ Յանեսը:

— Շա՛տ բարի, ասաց վարդապետը, դու պատրաստութիւնդ տես:

— Իրիկան տուն կը դա՞ք, ասաց վարդապետին Լուցիա խանումը:

— Թէ գործ ունիք՝ դամ, թէ ոչ՝ զիշերս միւսիւ Յանեսի հետ խօսելիքներ ունիմ, վաղը երեկոցեան անպատճառ կը դամ:

— Այդ աւելի լաւ: Եղբա՛յր, գնա՛նք, ասաց Լուցիա խանումը տեղից կանգնելով:

— Ձեզ ենք ապաւինած, ասաց Պապը դուրս դալիս:

— Երթա՛յք խաղաղութեամբ, պատասխանեց վարդապետը:

## Գ.

### Մ Ս Ա Յ Ո Ւ Ի Գ Ի Շ Ե Ր Ը

Հայաստանի զանազան կողմերում շատ զւարճալի կերպով և մեծ ուրախութեամբ կատարւում է այս ձմեռայ պաշարի պատրաստութիւնը: Մեր նախորդները սիրել էին և աւանդել են մեզ ամեն գործ ուրախութեամբ կատարել: Երկրագործից սկսեալ ամենանուրբ և բարակ գործերով պարապող ոսկերիչը մի կողմից գործում է, միւս կողմից՝ երգում: Ո՛վ չէ լսել ռանչպարի «Հոռովելը» իւր երկիրը վարելիս, հովւի «Սրազը» խաշներն արածեցնելիս, ճամբորդի՝ «Ին-գեօլը» սարէ սար անցնելիս, դերձակի «Աշուղ-Ղարիբն» իւր կարն ու ձեն անելիս, կօշկակարի «Վայ-սարերն», կաշին բերնում քաշքշելիս, ջուլհակի «Աէլէն» մըքուկը ճոճացնելիս, ոչխարը կթող ժիր աղջկանը՝ Ջան-Գիւլիւմը՝ շարադրելիս և զթառառ մօրն «Սրօրը» իւր որդուն օրօրելիս:

Ուրախութիւնը միայնակ անելը, եթէ անկարելի չէ, անտանելի է. ամեն մարդ իւր զւարթ ժամերում ընկեր է որոնում իւր խընդութեանը մասնակցելու: Ընկերութեամբ էլ գործ գործելիս՝ ոչ թէ միայն ժամանակն ուրախ է անց կենում, այլ ընկերների մէջ այնքան զւարճաբանութիւններ են պատահում, որ աշխատութեան ծանրութիւնը բոլորովին չի նկատւում: Ինչպէս ուրախ երգելով պարապելը մեր պապերից է մեզ աւանդւած, այնպէս էլ գործը ընկերութեամբ

կատարելը մեր հնազարեան սովորութիւններին է: Զորս-հինգ տուն միասին են լծում զուլթանը, հովիւները մէկ տեղ են արածեցնում իրանց խաշինքը, ծամբորդները կարաւանների հետ են ման գալիս, դերձակները քաղաքի մի որոշ մասում իրար կից խանութներ ունին, կօշկակարները նոյնպէս, ջուլհակները մի դաշտում իրար հետ են հինում իրանց մանածը և հայ կանայք իրար տուն տանում կաթը, խաբ անում կամ փռում ու սերը քաշում:

Այսպէս մի քանի զրկիցներ ու ազգականներ միանում են և ուրախութեամբ պատրաստում ձմեռւայ մնացուի պաշարը: Ամբողջ զարուն ու ամառը, մինչև աշնան էլ կէսը, զիշեր ցերեկ բացօդեայ, ազատ սարերի փէշերի վերայ, մարդաստաններում և խոտաւէտ հովիտներում թողած կովը, որը գերութիւնից կարծես կը խնձոր է դարձել, նախրից տուն է բերում հովիւը: Մեծ ուրախութիւն է տանեցոց մնացուի զալուստը: Սեպտեմբերի վերջին օրերում մի քիւրդ հովիւ, առաջը երկու գէր կով խառնած՝ եկաւ մտաւ Հաջի-Թաթոս աղայենց տունը: Մէկ-երկու օր առաջ, տանեցիք գիտէին սոցա դալուստը, ուստի տաշտերը լւացած՝ մաքրած, միս ծեծելու կոճըղները քերած, դաւուրմի քուղէքը լւացած, երշիկի ու ապուխտի սրըխները կախած, ասպի թերերը պատրաստած, դանակ, կացին, սաթը՝ սրել տւած, թոնրի մոխիրը՝ քաշած ու աղիքն խտակելու համար քթոցով սւաղանի տակը դրած, տունն ու թնրերտունը աւելած, իստակած, պահարաններն ու թարախները խտակած, սեացող ու կեղտոտուող առարկաները ներքի տունը տարած, տան երեսին փէշտուններն ու սինիները տարածած՝ սպասում էին Ապիսի սերունդների գալստեանը:

Կովերը տուն գալուն պէս, Լուցիա խանումը իրանց ծառային ուղարկեց բազար, որ գնաց աղային քրդի կովերի բերելն իմացնէ և ասէ, որ շուտ Մնացականենց Մկրտչին ուղարկէ՝ կովը մօրթելու: Թաթոս աղան Մկրտչին ուղարկելուց յետոյ, մարդ ուղարկեց պղնձագործ Նաւթին ու աթոար Զատիկին խնդրեց, որ խաթերը համար իրիկւան իրանց տուն գան, մի քիչ ժամանակ անցկացնեն և ապուխտները, ինչպէս որ պէտք է, սարքեն: Սոքա ամենայն ուրախութեամբ ընդունեցին հրաւերը: Լուցիա խանումն էլ բանանող Մարիամի չարսաւը դուռը դցելով՝ խնդրակ ուղարկեց իւր եղ-



բօր կնոջ և մի քանի բարեկամների և մօտիկ զրկիցների մօտ։  
 Մառաները կովերը կապկպեցին, պառկեցրին՝ երեսները զեպի  
 արևելք։ Մկրտիչը դանակը մաստեց ու «Հայր, Որդի և Հոգի սուրբ»  
 ասելով՝ կովի գլուխը մինչև ողնաշարը կտրեց, կտրեց և երկրորդինը։  
 Թէև կէս դար առաջ սովորութիւն կար, որ քահանան կը դար ու  
 մորթէիք անասուններին կ'աղօթէր, բայց այժմ կաթովի ժողո-  
 վուրդը այդ տեսակ աւանդական սնտոխապաշտութիւնների էլ չէր  
 հաւատում։ Մի ժամ վերջը կովերը քերթեաժ և պառկեցրած էին  
 իրանց կաշիների վերայ։ Նրիկւայ ժամօրի տուն դառնալու ժամա-  
 նակը Դաւիթն ու Զատիկն էլ եկան։ Վերջինս իւր պարօն հանեց,  
 մի կոնդից կախեց ու մի զոգնոց վեր ասաւ՝ կապեց։ Զգուշութեամբ  
 գրպանից դանակը հանեց, պատեանը գրպանը դրեց և թէևրը ետ  
 դարձնելով՝ մօտեցաւ մնացուին։ Առաջին դործն եղաւ ձկի (ողնաշա-  
 րի արտաքին մասի երկու կողմի մսերը) ապուխտներն հանելը, ա-  
 պա կողերինը և ալբպէս հեազհեռէ ջարդելով՝ կովերի միան ու ոս-  
 կորը ներս ուղարկեցին։

Արևն արդէն մայրն էր մանում. հօրիզօնը արնեղոյն ամպերով  
 զարդարւել էր. փողոցների անց ու դարձը տատկացել էր. աղմուկը,  
 կեանքի եռ գալը ամեն կողմը տարածւել էր։ Սաստիկ շարժումը  
 շուտով դադարելու և հանգստանալու նշան էր, որը երկար չը  
 տևեց և մարդկանց խաղաղ բնակարաններից ցլացին ճրագների ա-  
 զօտ լոյսերը։

Այս խառնաշփոթ ժամում պղնձադործ Դաւիթը և Նուցիա  
 խանութը յարմար ժամանակ դանելով՝ քաշեցին և դարպասի մի  
 անկիւնում նստեցին՝ մի քիչ առանձին խորհրդակցելու։ Արտաքին  
 ձևերից յայտնի երևում էր, որ Դաւիթն ու Նուցիա խանութը իրար  
 հետ վաղուցւայ լաւ ծանօթներ էին. ուստի մի քանի սովորական  
 հարց ու պատասխաններից յետոյ, բաղմութեան աչքից ու ական-  
 ջից հեռու, բաց արին իրանց մտքի թելերն ու անցազաբար իրար  
 հաղորդեցին իրանց խորհուրդները։

Խոհանոցում, կամ Բարձր-Հայոց բուն բառով՝ տանը մեծ  
 բաղմութիւն կար։ Մառաները իրանց բերած միսը իրար վերայ թա-  
 փում էին. բանանոց Մարիամը ջոկում և ապտկանեալ տեղը դար-  
 սում էր։ Շողակաթ խանութը, Նուցիա խանութի եղբօր կինը, զրացի

Սրբուհի գուգուէն, Խաղուհի հարսը, հացթուխ Աննան ու լաւացարար Նշխունը ամեն մէկը մի մի խոնչի զլխին նստած՝ սուր զանակները ձեռքերը, մօտները զրած տաշտերից մսերն աւնում ու ջարդում էին, որը զաւուրմացու, որը իրշիկցու։ Խնամի Գարանն էլ ճարպերը մանր ջարդում էր հալելու։ Այն կողմն էլ Մկրտիչ աղբարը թուրքման Հիւսէինի հետ ոսկորները պլոկում, ջարդում և աղն էր դնում։ Զատիկն էլ իւր սուր զանակով ապուխտներն էր ձեւաւորում և աւելացրած մսերը Պետրոսը աղում ու շամփուրն էր անցկացնում, բաղմնէթիւնը կշտացնելու համար խորոված եփելու։ Բաց ամենից ուրախ աղջիկներն էին. նոքա սուր սուր սաթերները ձեռքերը, տան մէկ կողմը մինչդարները փռած, կարգով նստած, առանց հանգստանալու ամենը իւր առաջը դրած կլոր կոճղի վերայ երշիկցու միսը ծեծում ու զանազան հանաքներով ծիծաղում, ծիծաղացնում, ճլվում էին։

Տունը տասն և երկու արշին լայնութիւն, այդքան էլ երկայնութիւն ունէր և իրար վրայ շարած գերաններով զմբէթած և ծածկւած էր։ Գմբէթը մէջ տեղից ունէր լուսամուտ, որը գիշերները ծածկւում էր։ Տան մէկ կողմը գտնւում էր թնդերտունը կամ թոնդրափը, միւս կողմը ներքին տունը կամ մատանը ու մէկ կողմն էլ սէքուն։ Տան ամեն կողմից աշխատող ձեռքերի ձայն էր լսւում։ Ճրագները ամեն կողմից լուսաւորում էին իրանց աղօտ լոյսերովը։ Մի քիչ յետոյ ամեն մէկին բաժանեցին հաց ու խորոված։—Ներողութիւն, ասաց Լուցիա խանումը հիւրերին. այս իրիկուն խորովածով պիտի կշտանանք, վաղն էլ թերխաշով։ Մարիամը փլաւ է եփել ու մածուն էլ մակրթիւ է, բացց էս ժամանակ զորանց երեսին նայողն ո՞վ է։—Մի քիչ յետոյ՝ դառնալով բանանողին, ասաց.—Մարիամ, քարղանը տար ու կարասից երեկւայ մեր Քորթումի բաղից եկած մաջարից լից ու բեր խմենք։ Խորովածի հետ լաւ կը դաշ։—Մարիամը շուտով կատարեց խանումի հրամանը։

—Սրբուհի գուգուէ, ասաց տանտիկինը, մէկ համը տե՛ս, շա՛տ անուշ է։ Նրեկ բերին, խիստ լաւն է։

Մաջարի համը ամենքն էլ առան։ Մի քիչ յետոյ փլաւն ու մածունը բաժանեցին։ Ներսից էլ մեծ սինիով ծառան բերաւ ուրտուղներ՝ տանձ, խնձոր, խաղող և ձմերուկ ու ամենին բաժանեց։ Կերան, կշտացան, գոհացան ու շարունակեցին զործերը։



Հացից յետոյ Շողակաթ խանութը դառնալով Հիւսէինին՝ ասաց.

— Հիւսէին, վեր կա՛ց, զնա՛ սէքուն, վեր ա՛ռ սաղդ ու «Գեղեցիկ Մանուկի» հէքիաթն ասա՛:

— Հիւսէին, Հիւսէին, շուտ արա՛, կանչեցին ամեն կողմից:  
Ծառան նազ էր անում:

— Ձե՞ս իմանում, Հիւսէին, ասաց Լուցիա խանութը, շուտ արա՛, միայն կարճ կապէ, որ բանից զործից ետ չ'ընկնեն:

Հիւսէինը սաղի թելերը քոքելով, հազում էր՝ կոկորդն խտակելու, ձայնը բանալու համար: Նախ մի լեռնախան եղանակ ածեց բոլորի տկանջները իւր կողմը լարելու համար: Ապա սկսեց ծիծաղաշարժ յառաջաբանը.

— Դարէ տարին, փիղը թառին, երբ գորտն էր սափրիչ, բզեզը դահիճ, ձուկը աթտար, մուկը բախալ, ուղտը զազազ, եղը բազազ, արջը բաղնեպան, գայլը օգնական՝ բաղնիքը ջուր չը կար, քիւլխանը կրակ չը կար, առիքը ձիւնից, յատակը ջրից, կամուրջը մազէ, պատերն աւազէ, լուն գոմշի լուծ էր կրում, հաւը խնդիրք էր գըրում, ճանճը փոշու էր տանում, մեղուն նորան էր պահպանում, Ֆէրմանը գրած էր սառուցի վրայ, սառուցը դրած էր պղնձի վրայ, մրջիւնը գերան էր կրում ու թիթեռը, պղնձի տակ այդ գերաններով, կրակ վառում ու զօրում էր: Նա՛ Մշու Սուլթա՛ն, դու քեօմակ արա՛, թէ արդար խօսեմ՝ լեզուիս թելերը բաց, ձայնս զնգզնգացրո՛ւ, արարոց Արարատ աշխարհ հասցրու:

Սորանից յետոյ պատմեց և երգեց մի առ մի «Գեղեցիկ Մանուկի» զանազան քաղաքներում և աշխարհներում իւր լեզուի համար անխիղճ ու անդուլթ դատաւորներից կրած տանջանքները և վերջապէս Սեբաստիայի Սանասար իշխանի Հազար-Վարդ գտեր հետ պտակւելով երջանկութեան հասնելը: Լսողներին էլ իրանց ցանկացած բաղդաւորութեան հասնելու բարեմաղթեց, վերցրեց սաղը և կրկին տեղը կախելով՝ իջաւ:

Աշնան երկար գիշերները ուրախ, զւարթ զրացիները խօսեցին, խնդացին, երգեցին, զործերը պրծան ու կէս գիշերին գնացին հանգըստացան:

## Դ.

## ՊՂՆԶԱԳՈՐԾ ԴԱԽԻԹԸ

Պղնձագործ Դաւիթը Կարինում գաղթական էր: Ո՛րտեղացի լինելը, մինչև քսան և հինգ տարեկան հասակը ի՛նչ կեանք անցկացնելը՝ Կարինի բնակիչներին ոչ ոքին յայտնի չէր: Գործիքները շալակը եկել էր և մի փոքրիկ կղզակ վարձելով՝ վառարան էր շինել ու սկսել նախ կլայեկագործութիւնով և ապա պղնձագործութիւնով պարսպել: Գիտէր նոյնպէս ուրիշ մետաղագործական արւեստներ. պայտեր էր շինում և քաղաքից մի երկու ժամ հեռաւորութեամբ գիւղեր գնալով, եզներ էր պայտում կամ կարաւանների ձիերը պայտում: Ոսկերչութեան մէջ էլ լաւ վարպետ էր. արծաթից կամարներ, ապարանջաններ, զէնքի պատեաններ էր շինում, սաւասում ու էփան էփան գնով ծախում, մինչև անգամ ոսկուց նուրբ օղեր, մատանիներ, մանեակներ, գնդասեղներ էր շինում, գոհարներով զարդարում: Մետաղներ հալելու, ձուլելու, բաղադրելու, ծաղիկներ փորելու, կաղապարներ շինելու ճարպիկ վարպետ էր: Վարձ խօսքով՝ գործին տեղեակ արհեստաւոր էր:

Սորանից մի քառորդ դար առաջ, մինչև այսօր խկ, շատ տեղեր հայ ծնողներ որդուն տիրացուի մօտից հանելուն պէս, նորան հացի հասցնելու համար՝ տանում են արհեստի: Հարստութիւնը ձեռքի աղտէ, ասում են, որ կ'երթայ, բայց արհեստը—անբաժան ոսկի ապարանջան:—Դեռ աւելի զարգացնելու համար, մի արւեստ սովորեցնելուց յետո՛ւ՝ տալիս են մի ուրիշի մօտ, այդտեղից մի երրորդի, հետեւելով իրանց լսած զանազան արկածներին ու հէքիաթներին, որոնց հերոսները մի քանի արւեստագէտներ լինելով, ամեն դէպքում կարողացել են իրանց գլուխը պաշտպանել: Դաւիթը շատ արւեստներ սովորելով, ընդարձակ գաղափարներ կազմած ու դոցա գաղտնիքների հետ ծանօթանալով՝ միտքը մշակած ու դարգացած էր: Դաւիթը, սորանից ջոկ, լաւ զրեկ-կարդալ գիտէր ու կարդացածը՝ շատ լաւ հասկանալ: Այն կոշտ ձեռքերով մարդարտի շարքերի նման զիր էր զրում և այն էլ ոչ թէ մէկ, այլ տասը տեսա՛լ: Նորս գլխաղիւրն ու ծաղկաղիւրը օրինակ էր դարձած դպրատան մէջ: Լաւ էլ



շարադրութիւն ունէր, համարձակ վարդապետներին ու եպիսկոպոսներին գիր էր գրում համոզիչ ու ազդու ոճով:

Մի տաճկական քաղաքի մէջ Դաւթի պէս ժրագլուխ ու աչքաբաց մարդը մէկին մի գիր գրելով, մի ուրիշին մի հաշիւ մաքրելով, մի երրորդին խելք սովորեցնելով, որին էլ իւր արւեստների շնորհիւ գրաւելով, կամ հմուտութիւնով ու լեզուով զիւթելով, աղաներին ու իշխաններին էլ զւարճախօսութեամբ ուրախացնելով, քիչ թէ շատ կարող էր զիրք բռնել. այնպէս որ սովորական էր զարձել ամեն տան մէջ և ամեն հարկինքներում նորա անհրաժեշտութիւնը: Դաւթի թը, ընկերութիւնից ընկերութիւն մանելով, բարեկամներ գտնելով, հետզհետէ երեք-չորս տարւայ մէջ զարձաւ Վարինի բնակիչների մեծին ու փոքրին ծանօթ, հարուստին ու աղքատին զուրեկան: Դաւթի թը, ծանօթներն ու բարեկամները բազմացնելով, մեծ մեծ մարդկանց հետ նիստ ու կացով թէև աշխատում էր հոշակելու, բայց լաւ զգում էր, որ իւր զրութիւնը քաղաքում ոչ թէ առաջնակարգ կամ երկրորդակարգ, այլ երրորդակարգ տեղ էլ չէր բռնում: Բարձր կարգերի հասնելու համար փող էր պէտք և այս երկրներում առանց ոսկու ու հարստութեան չէր կարելի պատուի հասնել: Նստ ու շատ մաշում էր Դաւթին այս պատուի մետաղը. աշխատում էր, մոտածում էր ու էլ ճանապարհ չէր գտնում: Գրպանն էլ ծակ էր, ծոցը դրած գումարը մօտը հիւր չէր մնում: Կնքն էլ ծախսելու լաւ եղանակը զիտէր, բայց արւեստով ո՞րտեղից ձարէր մեծ գումարներ: Դաւթի թը մեծ հարստութիւն ձեռք բերելու սաստիկ փափագ ունէր: Նա փողը մեծ գումար դիզելու համար չէր ուզում, ու շատ էլ նախատում էր գանձերը տակերը դրած ու վրէն կսկսւծ նստած ժլատներին: Նա գումարով մեծ գործեր կատարելու, իրան աշխարհին հռչակելու ու յաւիտենական յիշատակ թողնելու ցանկութիւն ունէր: Նորա երեւակացութիւնները իւր շրջանի մարդկանցից շատ տարբեր էին: Մոտածում էր ունենալ Կ. Պօլսում պալատներ ու քէօչկիւր հարեմներով, Նամում՝ մետաքսի գործարաններ՝ անթիւ բանւորներով, Պրուսայում՝ թթենու անտառների, շերամի գործարանների համար, Եգիպտոսում՝ բարեբեր կալւածներ ապարանքներով. ծովերում՝ սեպհական նաւեր, ցամաքում՝ անթիւ կառքեր ու արաբական նժուղներ, հաւատարիմ ծառաների, զերինների ու հարճերի խմբեր. եւրո-

սրական քաղաքներում՝ մետաքսի, մարգարտի, զոհարի և թանկագին հնութիւնների վաճառանոցներ: Նախարարների հետ նիստ ու կաց և նորանց մէջ՝ տեղ ունենալ: Իւր հաշուով շինել եկեղեցիներ, վանքեր, հիւանդանոցներ ու որբանոցներ և սոցա, կալւածների եկամուտներով, մշտապէս ապահովացնել:

Արհեստով այս նպատակներին հասնելու անկարելիութիւնը նա լաւ զիտէր. այդ պատճառով երեք-չորս տարւայ մէջ ետ դցած երկու հարիւր ոսկի զրամագլխով ընկերացաւ Թլւառեաց Սահակի հետ ու մանուկիստուրի առևտուր սկսեցին: Դաւիթը թէև մուրճը ձեռքից վեր չը դցեց, բայց ճարահատեալ ստուեց: Սահակը Կ. Պօլսից Սուաջ-Օղլու ապրանքի հակերը ամեն շաբաթ ստանում, բաց անում, մագաղինում շարում ու վրան նստում էր: Իրանց զրամագլուխը քիչ էր, բայց Կ. Պօլսեցիք ապառիկ չէին խնայում ու, ապրանքի զինը մի քիչ բարձրացնելով, լաւ թէ վատ, անխնայ ճամբում էին: Սահակն էլ ժամանակին փող հասցնելու համար՝ ապրանքը կէս գընով բաժանելու բնաւ չէր հոգս անում: Ուրիշի փողով ուտել-խմելուց, հագնելուց ու շարունակ քէֆեր անելուց չէր ամաչում Սահակ աղան ու տարի ու կեսւայ մէջ ընկերութեան զրամագլխից դուրս՝ հազար հինգ հարիւր ոսկով բացն ելաւ (սնանկացաւ): Կնիսուն օր բանտ նստելուց յետոյ, ազատօրէն Դաւիթի փողերի հետ քանիսների ոսկիները կուլ տուեց:

Աորանից յետոյ Դաւիթը առևտուրից էլ յոյսը կորած՝ մի նոր հնարք էր մտածում՝ շուտով և այն էլ առանց ծանր աշխատանքի, խիստ մեծ գումար ձեռք բերելու:

Պղնձագործ Դաւիթը միջահասակ, հաստափոր, դէր ու հաստոսիր, մեծպլուխ, բորբերես, զեղեցկադէմ, խոշոր աչքերով, շաղանակազոյն մազերով, սրածայր քթով, բարակ բեխերով, հաստ ու կարճ վզով մարդ էր: Բնութեամբ շատ ծանր էր, զանդաղաշարժ, մտածող, կամաց ու ցած խօսող: Շատ անգամ տասը հարցին մի պատասխան չէր տալ, տւածն էլ անխմաստ, երկղխմի ու լսկոնական: Միշտ աչքը մի որ և իցէ առարկայի վերայ սլշած՝ խոհուն դրութեան մէջ էր:

Դաւիթը նպատակներին հասնելու յոյս ուներ և, վարդապետի հետ մտերմութիւնը սաստկացնելուց յետոյ, կարծում էր, որ բարձրանում էր փափագած փառքերի սանդուղքներից:



## Ե.

## Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

Մի իրիկուն, ժամից յետոյ, տէր-Վարապետը խուլ փողոցներից զնաց շուկայ, Օսման փաշի հին խանը (Կարա-ախարայ), Դաւթի օղան (սէնեալ) մտաւ։ Պղնձագործը օճաղը վառել, հաւերը խաշել և ջրի վերայ փրաւ էր զցել։ Պանդուխտի՝ կեանք, առաւօտից մինչև իրիկուն պղինձ ծեծելուց և զանազան մտածմունքներով վրդովւելուց յետոյ, միժանը յոգնած, դադրած, պարտաւորւած՝ ձեռքովը իւր կերակուրը պիտի պատրաստէր, որ քաղցը կշտացնէր և բաղուկները զօրացնէր յաջորդ օրւայ աշխատանքների համար։ Դաւիթը մտերմաբար համբուրելով հօր ձեռքը՝ օճաղի աջ կողմը, բազմոցի վերայ նստացրեց։

Օսման փաշի խանը մի հարիւր յիսուն սենեակներով ու խանութներով երկու հարիւր տարւայ հին ընդարձակ շինութիւն էր։ Այս տառի ձէն ունէր և բոլոր օդաններից դէպի ներս շինութեան միջանցքի վերայ էին դուրս դալիս։ Երկու ծայրերին ունէր երկու դուռ, որոնք արեւագալին բացուում ու մայր մանելիս կողպուում էին՝ քաղաքի դարևոր սովորութիւնների համաձայն։ Այս դռներից մինը հիւսիսային կողմն էր գտնուում, միւսը՝ արևելեան։ Միջանցքի երկու ուղղութիւնների անկիւնի արտաքին կողմին կպած էր Դաւթի բնակարանը, որը բաղկացած էր ընդունարանից և սորա արևմտեան կողմն եղած ննջարանից։ Այս սենեակները չորս կողմից պատած էին թանձր պատերով, որոնք սրբատաշ լեռ քարերից կրաշաղախով էին հիւսւած։ Պատերում լուսամուտներ չը կային և ամեն մի աչքում գտնուում էին երկու երկու պահարաններ։ Առաստաղի մէջ տեղից երեք քառորդ քառակուսի արշին տարածութեամբ թողած էին լուսամուտներ, որոնք աւելի օղը մաքրելու էին ծառայում։ Միայն ննջարանում կար օճաղ և երկու սենեակներն էլ ունէին իրանց ներքնատները իրար խառնած, որոնց մուտքը ննջարանից էր։

Դաւիթը աշտանակը վեր առաւ ու ձարպէ մոմը վառելով՝ սեղանի վերայ դրեց։ Բաց արաւ պահարանը, հաց, աղ, զգալ, դահալ, պանիր, պնակներ, արաղ, դաւաթ և այլն հանելով սեղանը

զուգեց: Փլաւը լցրեց լանգարին, հաւերը կուշտը շարեց ու զրեց սուփրի մէջ տեղն, ասելով.

—Ապա, հրամեցէ՛ք, վարդապե՛տ:

Տէր-Վարապետը, առանց պատասխան տալու, կախած տեղից վեր առաւ սրբիչը, բազմեց ու օրհնեց սեղանը: Մի մի բաժակ կոնծելուց յետոյ՝ լսելեացն ակորժակով կերան—կշտացան: Սուրճը խմելուց և բաւական ժամանակ անցկացնելուց յետոյ, Դաւիթը երդիքի լուսամուտների չւանները քաշեց ու կողպեց, զաների նեղը զրեց, ներքնատան դուռը բացեց և ճրագը ձեռքն առնելով՝ առաջ ընկաւ: Վարդապետը նորան հեռեց և բարձր ու թէք սանդուղքներից զող-զողալով իջաւ մութը տունը: Դաւիթը չը մոռացաւ կրկին անցքը փակելու:

Ննջարանի օճաղի տակ, նորա ծխանքքին զուգընթաց ու խառն ներքնատան մէջ, կար մի կրակարան, ոսկերիչների հալոցի նման: Կեղտոտ պատերից կախած էին ալլ և ալլ գործիքներ և շարւած սնդուկներում լցրած էին զանազան մեքենաներ, կաղապարներ, մետաղներ, պարկերով ածուխներ, գաճեր և ուրիշ պէտքական նիւթեր: Մէջ տեղը դրած էր մի հաստ կոճղ, որի վերայ նստեցրած էր մի մեծ սալ: Դաւիթը մի երկրորդ ճրագ վառելուց յետոյ, մի աթոռ ներկայացրեց տէր-Վարապետին նստելու, ինքը գնաց միւս կողմից մի քսակով փող ու կաղապարներ բերաւ՝ ասելով.

—Մտքիցս չէր անցնիլ, որ այսքան նուրբ դուրս գար Կեսարի պատկերը, վերան բոլորովին չիլ չը կաց: Շատ ու քիչ կաղապարներ շինեցի, բաց սա աննման է: Իրիկունը ոսկեջուրս պահեց, բոլորը չը կարողացայ ջրել: Ոսկեջրից ելածները աւելի փափկացել են. համեմատի՛ր և տես:

Տէր-Վարապետը քննում էր մի առ մի և խոշորացոյցով գննում:

—Դաւիթ, ասաց, գնա՛՝ հին ոսկի փողերի տոպրակները բե՛ր:

Դաւիթը բերաւ ուղածները: Տէր-Վարապետը իւրաքանչիւր տեսակից երկու կամ երեք հատ ջովելով, առանձին առանձին թղթերի մէջ փաթաթեց ու մօտի սնդուկի վերայ դարսեց:

—Պէնձէ փողերը թանի մէջ գցեցի՞ր, հարցրեց վարդապետը:

—Նո՛ւ, ժանգոտուել են այնպէս, որ բոլորովին նոր կարելի չէ:



—Այս արծաթ զրամները՝ այսքան մաքուր ու նոր, կարող են կասկածել տեսողներից. ծծումք ու մեղրամոմ ունի՞ս:

—Կա՛յ, այս բոպէիս. ասաց ու գնաց բերաւ:

—Քուրացում կրակ կա՛յ:

—Հիմի կը վառեմ:

Դաւիթը մի քանի կտոր ածուխ ածեց քուրան ու սկսեց փուքսը փչել: Կրակը գոլլիւրեցաւ և կայծերն ու պէծերը բարձրացան: Քաւան վեր առաւ վարդապետը ու արծաթ փողերը մէջը լցնելով, դրեց կրակի վերայ տաքանալու:

—Դաւիթ, ասաց, շուտով այդ ծծումքը մանրէ՛, մեղրամոմն էլ մի քիչ կակղացրո՛ւ ու հետը շաղախիր: —Դաւիթը, ամեն հրամանները կատարելու վարժ, մի ակնթարթում կատարեց: Վարդապետը շաղախեց, մի կտոր կտրեց, մատների մէջ ոլորեց, բարակացրեց ու տաքացած փողերից վեր առնելով, սկսեց շաղախովը դորա փոսերը լցնել: Յետոյ ասրէ կտորով շիւեց, սրբեց և ուրախ-ուրախ մեկնեց Դաւթին: Սա, փողի տեղ-տեղ ստացած սև կեղտերը տեսնելով՝ ցնծութիւնից վեր վեր էր թռչում:

—Այսպէս բոլորը կը սևացնես ու կը կոկես: —Մի քիչ յետոյ վարդապետն ասաց. —Այս շաբաթեայ հաշիւդ բեր:

Դաւիթը թանաքն ու զրիչը ներկայացրեց և վարդապետը՝ Դաւթի թելադրութեամբ՝ ծոցի տետրում հետեւեալ ծախսերը գրեց.

«Ութ հատ եալիւղ Մելիք-Վարազեօղեանից՝ հինգ լիրայ:

«Երեք հոխայ պղինձ՝ կէս լիրայ:

«Պաղապարների և ուրիշ գործիքների՝ լիրայ ու կէս:»

—Մուտք չունի՞նք, հարցրեց տէր-Վարապետը:

—Քեզ յայտնի եղածներից ջոկ չը կայ:

—Արծաթները բոլորը բանեցրի՞ր:

—Ո՛չ, դեռ երկու հոխայի չափ էլ կայ:

—Տեսնեմ:

Դաւիթը բացեց մի սնդուկ ու մէկ մէկ արծաթեայ զարդեր, անոթներ, զաւաթներ, պնակներ, դեփիթներ, դաւններ, պատառաքաղներ, կլոր կամարներ, ապարանջաններ և ուրիշ կտոր կտոր արծաթներ լցրեց տէր հօր առաջը և, կրկին տուրաքելը հոտ ածելով, դրեց սնդուկը:

—Դաւիթ, ասաց հոգեորականը՝ ցոյց տալով լւր արած փաթոյթները. առաւօտը էստոնք պիտի յանձնես կոյրին ու զրկես Ռուսաստանից եկած զոհարաւաճառների մօտ: Բայց սկզբից լուս լրտեսելու է, որ անախորժ մարդ չը պատահի: Ա՛ւ. պատւիրիր, որ փեղցփեղ բաներ չը դուրս տայ, կարճ ու միայն իր վաճառքի վերայ խօսի:

—Ա՛րդապետ, հրամանիդ համաձայն՝ իրիկունը հետը շատ խօսեցայ, մթանը մինչև տունը տարայ: Մարդը համոզւեց: Կարծածիցդ աւելի խորամանկն է և չափազանց էլ շահասէր է:

—Ամենը հեշտ է, միայն այդ աւելորդապաշտը բամ գցելու, ջինների, դւերի ու փէրինների չիմար պատմութիւնները ամեն տեղ բլբլալով կարող է զործը կասկածանքի տակ դցել: Միշտ Պօլսի թուրքերին չի հանդիպիլ, որ իւր առասպելներովը շլացնէ:

—Կը բացատրեմ ձեր հրամանները և կ'աշխատեմ մեծ յուսով, փտահանալով ձեր խորհուրդներին, որոնցով միշտ պիտի յաջողենք:

—Այդ փողերի դինը կը նշանակես քեզ վաղուց յանձնած ցուցակի համաձայն և կոյրին կ'ասես, որ որոշ գներ պահանջի, ո՛չ աւելացնի և ո՛չ պակսեցնի: Եթէ բոլորը ուզեն՝ ընդհանուր գումարի մէջ կարող է քսան տոկոս գեղջել: Այդտեղ մնացած արծաթները գիշերս հալի՛ր, թափի՛ր և պղնձի մէջ՝ տւած չափերի համաձայն՝ խառնիր միւս մետաղների հետ, որ որոշ գոյն ու ծանրութիւն ստանան և կտորելիս՝ տարբերութիւն չը նկատուի:

—Ճշգրութեամբ կ'առարելս փորձով տեսած էք:

—Ոսկեջուրը լաւ պատրաստի՛ր, ոսկին մի՛ խնայիլ, թո՛ղ քիչ հաստ շապիկ կապի փողերի վերայ, որ վերայի գրերն ու փոսերը քիչ լցւին ու դարերի ձեռքը մաշւածի կերպարանք ստանան:

—Հասկանում եմ:

—Միշտ զգոյշ և կաղապարները խորը թաղի՛ր, որ փորձանքից հեռու մնանք:

Կէս գիշեր էր: Ա՛րդապետը շինելում փափաթւած՝ դուրս եկաւ: Դաւիթը իւր մօտ ունեցած մի երկրորդ բանալիով բացեց խանի (խարտատարայի) արտաքին դրան կողպէքը, վարդապետին ծանուպարհ գրեց: Մութ գիշեր էր: Բազարում և տներում ոչ մի ձրագի լոյս չէր երևում: Փողոցի գիշերապահների թղթեայ լսպտերներում



պլպլում էր ճարպէ ճրագը, որ աղօտ լոյս էր տարածում իւր շուրջը։ Սովորութեան համաձայն, ամեն մի հինգ րոպէում, բոլոր զին-  
շերապահները իրար, յայտնի ձայներով ու բառերով հաղորդում էին  
իրանց մոքերը, որ մի ծայրից սկսւում ու քառորդ ժամում հազիւ  
միւս ծայրն էին հասնում։ Աշնան եղանակներին եղած ցրտերի հա-  
մեմատ՝ զինշերապահները հագած էին ոչխարի մորթուց երկար ու  
լայն մուշտակներ։ Տէր-Վարդապետը, երկրի սովորութեան համաձայն,  
փոքրիկ ապակեայ լապտերը ձեռին շարունակում էր իւր ճանա-  
պարհը։ Վարդապետը, չը նկատելու համար, փողոցի միջից էր զնում։  
Վիզը, զէմքը շինելի մի փէշովը աջնպէս էր փաթաթած, որ միայն  
Ֆէան ու աչքերն էին երևում. այն էլ մթնանը ո՞վ կարող էր զանա-  
զանել։ Գինշերապահներից մինը, չիբուխը վառելու համար միւսին  
մօտենալիս՝ ասաց. — Կարծես թէ՛ բժիշկն է։

— Այո՛, պատասխանեց ընկերը, իտալացի Շանցօն է։ Էլի ո՞վ  
գիտէ, ո՛ր հիւանդի մօտից է գալիս։ Շա՛տ բարի մարդ է։

Վարդապետը այս խօսքերն իմացաւ, ժպտաց ու անցաւ։ Գո-  
ցա կարծիքը հաստատելու համար՝ իւր ճանապարհը ծռեց և  
բժշկի տան կողմից անցաւ։ Միջնաբերդի տակից անցնելիս՝ տէր-Վա-  
րապետը աչքերը պտտահամբ վեր բարձրացրեց։ Սքանչելի՛ տեսա-  
րան և պարզ գիշեր։ Աստեղաշատ ու շողշողուն երկնականմարի մէջ տեղը  
գօտենման տարածւած էր յարդազողի հետքը։ Մութ կապոյտ զմբէթը  
գեղեցիկ ու բիւրաւոր պսպղուն աստղերով զարդարած էր։ Ո՛րքան զար-  
մանալի կերպով է զարդարել բնութիւնը այդ կամարակապ սուսա-  
տաղը, որ մարդիկ շարունակաբար, մանկութիւնից մինչև ծերութիւն,  
այնքան անզամներ տեսնելուց յետոյ, քանի վեր նայեն, էլի ապշում,  
հոգով յափշտակւում, չեն ձանձրանում և կրկին տեսնել են փափա-  
գում։

## 2.

### Կ Ո Յ Ր Հ Ա Ֆ Ի Զ Ը

Մահէկականների գիտութեան տաճարը, արեստների և ուս-  
մունքների ձեմարանը, բնութեան երեւոյթների և թագուն գիտու-  
թիւնների բանալին՝ Ղուրանն է։ Սաւււմ են և հաւատում, որ աշ-  
խարհի սկզբից մինչև վերջը եղածը և լինելիքը կայ ու գետեղւած

է այդ դրքի մէջ և, առանց խտրութեան ու բացառութեան, բոլոր մահմէդականները հաստատապէս համոզւած են և դաւանում են այս վարդապետութիւնները աներկբայաբար: Թէ խալիֆաների, թէ ամիրապետների և թէ սուլթանների հարստութիւնների շրջաններում գիտնականները և գիտութիւնները անընդհատ հալածւել են այդ իշխանութիւններից. միայն Ղուրանի վարդապետութիւնը ազատ ասպարէզ է ունեցել բռնութեամբ տարածւելու այս առաքելական փոխանորդների լայնածաւալ պետութեան մէջ: Ինչպէս որ քաղաքների և գիւղերի մէջ սխուրջ են մօլլաները, որոնք քարոզում, հովուում և առաջնորդում են բազմամիլիօն հաւատացեալներին:

Ինչպէս հայոց բոլոր եկեղեցիների գաւթում գտնւում է դպրոց, այնպէս էլ մահմէդական երկիրներում ջամիների (ճափի) բակում կայմ է դրէսէ, որը համարեա ջամիների մասն է կազմում: Այստեղ միւղէրիսը դաս է տալիս գլխին ժողոված երեխաներին, որոնք, իրանց գիտութեան համաձայն, դասաւորւած են ու ծալապատիկ գետնի վերայ նստած: Աշակերտների առաջը դրած է տախտակից զրքակալներ կամ փոքրիկ սնդուկներ: Մի անկիւնում բարձր, մինչդարի վերայ չորքած է միւղէրիսը, ֆարաշի փէշերով ծածկած ծնկներն ու ոտքերը: Առջևը կայ մի մեծ սնդուկ, որի վերայ դարսած են գոյնզգոյն կերպաներից կարած զրքամանների մէջ դրած զանազան զրքեր, Ղուրան, սորանից հաւաքներ, մարգարէի կեանքի պատահարները, նահատակներ, հիւրիները հանդերձեալ կեանքում և այլն: Մի փայտեայ պնակի վերայ դարսած են թանաքաման, եղեգի գրիչներ, զըրչահատ և գոյնզգոյն ներկեր: Աշակերտներն մէկ մէկ կանգնելով կամ չոքելով իրանց դասատուի առաջը՝ եղանակով կարդում են իրանց դասերը զրքի վերայ կամ բերանացի: Ղասազրքերը դարերով անփոփոխ են՝ այբենարան, հեգարան և Ղուրան: Տառերը ձանաչելուց, հեգելու վարժելուց յետոյ՝ աշակերտի ձեռքը տրւում է Ղուրանը: Ընթերցմունքը արաբերէն սկսւում է, արաբերէնով շարունակւում, և նոյն լեզուով վերջանում:

Ղուրանի դասընթացը եթէ յաջող առաջ գնաց, աշակերտը կարող է յոյս ունենալ, որ պիտի Իւլէմայ դառնայ: Նա տեսնում է իւր ասպագան լիովին ասպահուած, հացը պատրաստած, սիրոյ, յարգանքի և պատիւի արժանացած: Բաց է նորա առջև պաշտօնների և աստի-



ճանների ասպարէզը, որի շուքի տակ գտնուում է իւղալի եկամուտներով ապրուստը: Բաւական է Ղուբանը ազատ կարգայ, որ ինքն իրան իրաւաբան համարելով՝ վճռէ ամեն տեսակ դատ, աստուածաբան համարելով՝ ճառախօսի երկնքի փառքերի մասին, բժիշկ ու հմայող համարելով՝ հիւանդներին այցելի և ջիններից տառապեալներին ազատի: Կարդացողների անհուն փառքերից շլացած, խեղճ երեխաները զօր են տալիս աչքին, ուղեղին, կոկորդին ու լեզուին, անուշ ձայնի ելեէջով ու արաբական եղանակներով կարդում այդ գիրքը: Մէկ կամ երկու տարւայ ընթացքում սովորում են զրափառ ու առանց կակաղելու կարդալ Ղուբանը գլխից մինչև վերջը: Բայց դորանով չէ վերջանում ուսումնասիրութիւնը. պէտք է ամբողջ գիրքը բերան անել: Եւ երբ մէկը կարողանայ մի անգամից ամբողջ Ղուբանը բերանացի կարդալ մեծ կարգացողների ժողովի առջև առանց սխալի կամ կակաղելու, որոշեալ եղանակով, ուղիղ առդանութեամբ և արտասանութեամբ՝ նա ստանում է Հաֆիզ տիտղոսը, որով այնքան բարձր դիրք է բռնում ժողովրդի առջև, որի տասներորդին անգամ չեն արժանանալ եւրոպական համալսարանների դօկտօրներն ու պրօֆէսօրները:

Որքա՛ն ուշքի տէր պէտք է լինէր մի ի ծնէ կոյր, որ ուրիշ ընթերցանութիւնից կարողանար ըմբռնել ու բերան անել ողջ Ղուբանը և Հաֆիզի պատւին արժանանալ: Նախապաշարած ռամկի աչքում մի առանձին երկնային շնորհք էր վայելում աշխարհի լոյսից զրկւածը, որին առատապէս հոգևոր լուսով մխիթարել էր մարդկանց և ջինների մարգարէն:

Կոյր Հաֆիզը իւր կեանքի շրջանի լաւ տարիները անց էր կացրել փառահեղ: Նորա քաղցր ձայնի պատճառով, ջերմեռանդ իսլամները շատ անգամ ժողովելով նորա շուրջը ու կարգացնել տալով Ղուբանից զանազան հստուածներ, ոգևորւած և արտասուած մեծմեծ նւէրներ առատապէս թափած էին նորա ոտքերի տակ: Նա հռչակւած էր նաև որպէս լաւ հմայող: Ասում էին, որ շորս նշանաւոր գերի է ունեցել ջիններից և ո՛ւմ որ անուշովը կանչելիս է եղել՝ անմիջապէս ներկայացել է հրամանները կատարելու: Կոյր Հաֆիզի զոններից հիւանդներն անպակաս են եղել և եկամուտն՝ անչափ, անթիւ: Բայց անցաւոր աշխարհի ամեն շրջանն էլ անցաւոր լինելով, կոյրի փառքերի շրջանն էլ իւր

Տերութեան օրերում անցել, ինքն էլ աչքից ընկել էր: Նոր ձագերը վառեկներ զառնալով՝ թառն էին բարձրացել և պառաւ հաւերին կացահարելով՝ անկիւնները կոխել: Հաֆիզը նմանում էր առանցքին թափւած գալլի, որին կողոպուտից բաժին չէր հասնում և տարիներով դմակի համը չէր առնում:

Ձուռնուորութիւնը կրակ է, բայց տեսնելն ու կորցնելը՝ անտանելի: Քաղցած մարդը ամեն միջոցի դիմում է, բայց սովածութեան անսովորը և հալածւածը դէպի հասարակութիւնը և ընկերականութիւնը ատելութեամբ է վերաբերում: Հաֆիզի բնական ու արւեստական յատկութիւններից, ձիրքերից կամ տաղանդից յափշտակելով՝ հասարակութիւնը առանց անտարբեր մնալու, դորան շահել ու բարձրացրել էր նորա դիրքի համաձայն, որքան որ կարելի էր: Պա էլ ժողովրդի պատած առատ առատ նւէրներն վաճելով, ձրի լաւ ուտելու, խմելու վարժւելով՝ փքւել և ծուլացել էր: Ձափազանց հռչակւած անունովը զոռոզացած, աշխատանքից ձեռք վերցրած՝ փափկացել ու մեղկացել էր և այս տարիքն առած հասակում ձեռքիցը թռած բարիքների կարօտին չէր դիմանում: Մտքիցը չէր անցած, որ մի օր իւր ամեն քաղաքիսին ամբոխից ստացած անթիւ, անհամար, անհաշիւ վարձատրութիւնները պիտի դադարէին:

Հաֆիզը շարաշար ընկած էր: Մուրալուց ամառում էր ու գոզանալ չէր կարողանում: Ամիսներով նորա տունը բերք ու բարիք չէր մտնում և նախանձող հարեան պառաւներն, որոնք, մի քանի տասնեակ տարիներ նորա ճոխութիւնը տեսնելով, տրաք-տրաք էին եղել ու վերջապէս աչքով կերել խեղճ մարդուն, — այժմ հրճւում էին նորա անբաղդութեան վերայ: Յերուկը տանը ունեցած ու ճոխութեան ժամանակ ետ գցած զանազան առարկաները կոոր-կոոր փէշի տակ դնելով՝ տանում էր բազարում՝ գաղտնի ծախում և մի քիչ բան գնելով՝ տուն բերում: Ցանք ինչ որ ունէր՝ էժան թէ թանկ՝ բոլորն էլ ծախեց:

Մի օր երկու պղնձէ պնակ իրանց կափարիչներովը ռարաւ պղնձագործ Ռաւթի մօտ ծախելու: Սա, երկար ու բարակ խօսեցնելուց յետոյ, թանդ դնով առաւ այդ առարկաները: Հաֆիզը աղատ խօսակցութիւններով, հանճարեղութիւնով զրաւեց Ռաւթին: Վերջինս էլ նորա այցելութիւնները շարունակել տալու նպատակով, պողով ու



ղացիացով պատեց և խնդրեց նորան, որ ամեն անգամ բազար դալիս կամ տանը նեղանալիս՝ գալ արևեստաւորին այցելէ ու խրատներովը ոգևորէ: Հաֆիզը մի ֆինջան ղաֆի համար քառասուն դուռ էր մանդալիս. նորա պտուածն էլ Ղաւթի պէս բարեկամն էր, առանց քաշելով՝ անընդհատ շարունակեց այցելել և զանազան կախարդական պատմութիւններով զարծացներ:

Մի օր կոյրը մի ոսկէ հմայիլ, գոհարներով զարդարած, բերաւ Ղաւթին և խնդրեց որ զնահատէ: Ղաւթիթը ակաները քննելուց յետոյ, տասներկու ոսկի զնահատեց: Հաֆիզը խնդրեց, որ ծախէ այդ զարդարանքը: Ղաւթիթը ծերին առաջարկեց ներկայացնել Յովակիմ բէգին, որ զնեց տասն և հինգ ոսկով: Հազար հինգ հարիւր զուրուշով (մօս 120 ռուբլ) մի ամբողջ տարի ապրեց: Այդ Հաֆիզը համրած փողը շուտ պարպելով, կրկին նեղութեան մէջ ընկաւ և կնոջ վզից ոսկի մանեակը առնելով՝ կրկին զիմեց Յովակիմ բէգին: Եւ այս անգամ էլ աւել փող ստացաւ ու բաւական մօտրմացաւ բէգի հետ, որը նորան ծաղրելով անթիկաչի (հին Դրահէր ծախող) էր անւանում: Հաֆիզը այս դոմարով բաւական ժամանակ առանց տրտունջի ապրում էր և ամեն օր աղլուխը լիքը տուն էր վերադառնում: Թէ իւր և թէ կնոջ համար նոր շորեր կարել տւեց, կով գնեց, տան ծեփերը նորոգեց, մի խօսքով՝ շուալ անցեալի շուքի չափ հանգիստ կեանք էր վարում: Պառաւնների չարանախանձ աչքերը շատ սուր են լինում, ասում է առածը: Ասեղի ծակը չէին տեսնում թէլ անցնելիս, բայց երկու թաղ հեռուից Հաֆիզի ինչ միզք տուն փանելը նկատում էին: Մի պառաւ իւր դրացուն ասում էր.

—Այս օր Հաֆիզը մի մեծ արաբաց տալ (Գալի չողէր) էր առել երեսունը՝ հինգ զուրուշի, տունը երկու սրաց (Կարգ) շարեց և դեռ էլի աւելացաւ:

—Հողե՛մ նորա զլուխը, ասում էր մի ուրիշը, բան չ'ունի, գործ չ'ունի, այդքան փողը ո՞րտեղից է գտնում: Արմանաս ու վարմանաս, կնիկը դեռ երկու անգամ չէր հագել դու թնի կապան, ահա նորն է կարւում սեւայից: Քաւթաւը հէնց իմանաս թէ՛ նոր հարս է, բնաւ չէ պառաւում:

—Մնչ որ է, մի բան ունի, տեսնես ե՞րբ կը պարզւի:

—Ե՛հ, Կուք էլ, ի՛նչեր է լինում աշխարհում, խօ՛ տեղեկութիւն չ'ունիք, ասում էր մի ուրիշը: Զորբաջիին տարել է անթի-

կաներ, ոսկիներ, արմատներ, եաղուծներ, զմրուծներ ու փերուզներ ծախել: Նեղը մնալով՝ մի պղնձագործի հետ բաժնե գցել, երկու պղինձ ափ ու ափ ուսնանք են գտել և մէկ մեծ կարասով հին ոսկի փողեր:

—Քա՛, վո՛ւյ ձուներ զլխիս, նոր հաս'ացաց, ը՛մ... Ասածս մէկերկու ամիս աւել կաց, աղբէրդ սարացն էր դնացել ու շատ ուշ տուն եկաւ: Տանը բոլոր տղերքը քնած էին, հարսներին էլ չը խնայեցի ձայն տալու, դնացի զուռը բաց արի: Հա՛ջիզը պարսպի տակ պալլաւ էր: Օհմաւ'յ, ձայն տւի.—պատասխան չը տուց: Ել ամօթիցս աղբորդ մօտ շատ վրաց չ'ըն'աց: Յետոյ պատկելիս՝ տեսնեմ պատի տակը փորում էր: Վախեցայ գւերից ու ջիններից, էլ չը կարողացայ զուրս գալ: Քիչ թէ շատ, չը գիտեմ, որքան քնած կը լինէի, էլի զարթնեցի: Պարսպի տակից խօսակցութեան ձայներ էին դալիս. շատ ականջ դրի՝ բան չը հասկացայ, ո՛չ թուրքերէն էին խօսում, ո՛չ հայերէն, ո՛չ քրդերէն, այլ արաբերէն կամ ջիններէն էին խօսում: Գլխներդ ինչ ցաւացնեմ, մինչև լոյս խօսեցին, փորեցին ու կրեցին:

—Քա՛ յայտնի բան է, մի աչգալիսի բան լինելու՛ է: Մեր մարդիկն ու տղերքը լոյս աչքով առաւօտից մինչև իրիկուն դառն աշխատում են ու տներին ծախսը ճոթը ճոթին (ծայրը ծայրին) հազիւ հասցնում: Այս կոյրը ո՞րտեղից է գտնում ու ջրի պէս բանեցնում աչքքան փողերը:

—Ե՛հ, դուք էլ բան չ'ունի՞ք. ի՛նչ ուզում է անէ, սատանաներից թող ժողովէ, անհաւատների վերայ ծախէ՝ մեզ խօ փնաս չի՞ հասնիլ: Որ չ'ունենայ, չէ՞ որ մե՛նք պիտի նորա ապրուստը հոգանք:

Այս խօսակցութիւնները երկու-երեք օրւայ մէջ բերանից-բերան, անէ-տուն ողջ քաղաքը տարածւեցին: Բաղնիսումն էլ մի պառաւ հետեւեալ կերպով եղելութիւնը նկարագրեց փաշայի խանութին:

«Աւթը-տասը տարի կայ, որ մեր դրացի խօջայ Հա՛ջիզի գործը  
« ձախն էր գնում: Հերիք չէր, որ ձայնը կտրւելու համար Ալի փա-  
« շայի ջամիի միւսեղգլիութիւնից (աղան տալու պաշտօնից) հանեցին՝  
« փոքրիկ թոշակն էլ խլեցին, որ ստանում էր նոյն ջամիի վա գ չի ի ց  
« (Եհմադ-աֆէրից): Շատ դուռ ու երդիք ընկաւ մօլլան, ականջ չը  
« դրին դանգատին: Թշառը նեղութիւններից թռուցածի էր նմա-



« նու՛մ: Մի տարի կայ, որ սկսեց նորից շահւել, քիւրքն ու Փա-  
 « րաջէն, սարղն (Գլխի փաթառոյց) ու ֆէսը կարգի դրեց: Այս օրերս  
 « ականատեսներից տեղեկութիւն առանք, որ խօջայ Հաֆիզը շատ  
 « անգամ րամ է գցել ու բան չի դուրս եկել: Մի քանի անուշա-  
 « հոտ իւղերի, մի քանի քաղցրաբոյր խնկերի ու ծաղիկների պէտք  
 « է ունեցել, բայց այս քաղաքում չը գտնելով՝ նպատակին չէ կա-  
 « րողացել հասնել: Մի հայ այդ բոլորը եզրպտոսից ու Կ. Պօլսից  
 « բերել է: Խօջան այդ գեավուրի հետ տուն է եկել, այդ հոտերով  
 « նորան թմրեցրել է: Այդ զրութեան մէջ հայը տեսել է հեռու  
 « տեղերից, երկրէ երկիր պտուած, ճրագով մոմով ման եկած խօջայի  
 « գանձերը Հաֆիզի տան մօտ, չորս քայլ հեռու, բերդի պարսպի  
 « տակը: — Պղնձներով ու կարասներով թանկագին քարեր, աննման  
 « գոհարներ, խոշոր մարգարիտներ, ոսկի հին փողեր և էլ ինչ որ  
 « մարդու խելքից ու մտքից չի անցնիլ՝ գտել են: Կամաց կամաց  
 « կրել են ու բերել լցրել տները, փորել, թաղել, պահել ու տեղա-  
 « ւորել: Հիմա էլ քիչ քիչ տանում են քաղաքը, ծախում ու ան-  
 « հոգ ապրում: »

## Է.

## Դ Ա Ի Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մասցուի գիշերը՝ երբ հարսն ու աղջիկը բանի դործի հետ  
 էին, Հաջի Թաթոս աղան իւր հիւրերի հետ ուրախ ժամանակ էր  
 անցկացնում: Ընթրիքի ժամանակ սեղանի շուրջը բազմած էին, բո-  
 լորն էլ տնական մարդիկ՝ վարդապետը, Պապը, Դաւիթը և Չատիկը:  
 Տանտէրը բոլորի հետ սիրով էր վարում և ամենքին արժանաւոր  
 յարգանքն ու պատիւը տալիս: Լուցիա խանումը նստում էր սեղան  
 և, երկու պատառ առնելուց յետոյ, բարձրանում, գնում, բանանդ-  
 ների զլխին կարգադրութիւններ անում, հրաժաններ տալիս և կե-  
 րակուրները իւր ձեռքովը լցնում ու վերադառնում: Բազմականները  
 կշտացան և շնորհակալութիւնները յայտնեցին: Սուրճը խմելուց յե-  
 տոյ, Թաթոս աղան, զլխիցը հեռացնելու համար՝ ասաց.

— Պա՛պ, գնա՛ հօրեղբօր որդու մօտ, քիչ կանչել է: Տեսնեմ՝  
 քեզի. ծառայութիւնները ուրախութեամբ կատարես, տեղը զցես,  
 պառկեցնես, ոտքերը շփես, քնեցնես և յետոյ դաս: Բերանդ բանա-

լու տեղ՝ աչքերդ լաւ բաց, ականջներդ սրիր և խօսւած խօսքերը հասկացիր:

—Շատ լաւ, Հաջի՛ աղա:

—Պէ՛հ գնա՛, մի՛ ուշանար: Ղայֆի օճախը մի՛ պառկեր՝ շուտ շուտ զայժայ խմելու համար. բէզի սենեակը կանգնի՛ր, փնաս չ՛ունի, թոքերդ ջուր չի իջնիլ:

—Իմացա՛յ, աղա՛ փեսայ ջան. ասաց ու գնաց:

—Տեսնեմ՝ քեզի, ասաց վարդապետը:

—Այս զրդումը մարդ չի դառնալու, զիշեր ցերեկ վրան խօսի՛ր, բնաւ պէտքը չէ: Իւր փորը կուշտ, վրան տաք, կեր ուխումը տեղը լինի ու զայժման անպակաս՝ կամենաս տանես ծախես, ձայնը դուրս չի դալ: Մեր Լուցիան այստեղ խօ՛ւ չէ. որ իմանայ՝ աստուիկ կը ցաւի:

—Լա՛ւ, լա՛ւ. մարդ խոնարհ լինի, զրդում է կ'ասեն, արի լինի ու գլուխը ցոց տայ՝ խելառ է կ'ասեն. աշխարհի սովորութիւնը այդպէս եղել է ու պիտի մնայ, ասաց Լուցիա խանումը:

—Մի՛ նեղանաք, Լուցի՛ա խանում, մեր աղաների ձեռքի տակ մեծացողները բոլորն էլ ցնորածի են նմանում: Ի՞նչ անէ խեղճը, տարին տասներկու ամիս վերան ճւայել են:

—Այդ մի՛ խօսիր, այդ ցաւերից բոլորս էլ ունինք, ասաց Զատիկը. եղբայրս չորս-հինգ տարով մեծ էր ինձանից, զորա համար մինչև մեռնելը օրական քսան անգամ վերաս զոռում էր և միշտ հայհոյանքներով յիմարացնում էր ինձ:

—Ղո՛րդ, Զատիկ աղա՛, ի՞նչպէս արիք ձեր եղբօր որբերի հաշիւները բէզի հետ, ասաց Հաջի աղան:

—Մի՛ նորոգիլ ցաւերս, Հաջի՛ աղա, մենք ո՞վքեր ենք, որ բէգերի հետ գլուխ ելնենք: Վարդապետի պէս կակուղ տէր ունինք, ո՞վ պիտի մեր ցաւերը հոգայ:

—Վարդապետն ի՞նչ անէ, ասաց տէր-Վարապետը, ձեր առուտուրի գործերի մէջ մտնի ու գէշամարդ դառնա՛յ: Առէ՛ք էլ, առէ՛ք էլ, ձեր մէջը եօլաց գնացէք:

—Ելի՛ դուք պիտի եօլաց տանէք, վա՛րդապետ, ասաց Հաջի աղան:

—Ես էլ այդ եմ՝ ասում, երկու տարի է, որ չէ լսում:



—Ի՞նչ լսեմ, որ հաստատ զիր չ'ունիս, տոմար չ'ունիս, ասաց վարդապետը:

—Գիրն ու տոմարն ի՞նչիս է պէտք, պատուաւոր վկաներ ունիմ, մէկն էլ Հաջի աղան է, թո՛ղ արդարը խօսի:

—Այո՛, ես գիտեմ, որ որբերի հաշիւը մնաց բէգի վերայ: Բայց ի՞նչպէս թէ—«զիր չ'ունիմ»։ Կէ՞ որ նորանից զու շորս հարիւր ութսուն քանի ոսկու ստորագրութիւն առար՝ ի՞նչ եղաւ:

—Չը գիտեմ, մոլորւեց Զատիկը, պտուռւմ եմ, թղթերը տակն ու վրայ եմ անում, չը կայ, չը կայ ու չը կայ:

—«Չը կայ» ո՞րն է: Եթա՞նք ու վրայ արա տունդ, տեղդ, թղթերդ ու տոմարներդ ու գտի՛ր: Առանց դորան քեզ ե՞րբ փող կը տայ բէգը:

—Բանն էլ զորանում է.—ստորագրութիւնս բեր, ասում է, ու փողերդ ստացիր:

—Դու լա՛ւ նայիր թղթերդ, իմ շատ լաւ միտս է, որ նա քեզ տեց ստորագրութիւն որբերի փողի համար:

—Նոր նիզամն (նոր օրէնքը) անիծւի, ասաց Պաւլիթը. զադին Հաջի աղայի վկայութեան վերայ հիմնւած, բէգից կ'առնէր այդ փողը:

—Իբրեւ լա՛ւ օրէնքներ դրին, ասաց Հաջի աղան:

—Զատի՛կ աղա, ասաց Լուցիա խանումը ներս մտնելով, ապուխտները խնդրեմ սարքես, որ տղերքը աղը դնեն:

—Շա՛տ բարի, այս բոպէին, ասաց Զատիկն ու հեռացաւ:

—Լա՛ւ տեղը բերիր, ասաց Պաւլիթը, շատ կարգին մտաւ գործը: Նա ամեն օր ստիպւած պիտի որոնէ ստորագրութիւնը և ամեն տեղ խօսի, որ կորցրել է ու չէ գտնում:

—Լուցի՛ա խանում, ասաց վարդապետը, դուռը վրայ դիր ու արի՛ նստիր:

—Նկայ, պատասխանեց Լուցիա խանումը բակի շուրջը քննելով:

—Եղբօրդ ի՞նչ է խօսել բէգը:

—Է՛հ, ես ի՞նչ գիտեմ, ո՞վ սիրտ ունի խօսելու:—Էլ, ասել է, սրանից յետոյ քեզ ոչ ձեռք եմ բռնելու, ոչ էլ գործի դնելու. դեռ երկու հազար ոսկի պարաքիդ ստորագրութեան համար էլ զանգատ պիտի տամ ու բանտ նստեցնեմ:

—Ժառանգութեան մասին խօ՛ւ խօսք չէ՞ բացել:

—Ո՛չ, նա այդ մասին բոլորովին չէ խօսում:

—Ասա՛ Պապին, որ լուէ և ոչ ոքի այդ մասին բան չը խօսի:

—Արի Զատիկ ու մի՛ ասիր—Քեզ պէս տէր ունեցողի վերջն ի՞նչ պիտի լինի, ասաց Դաւիթը:

—Վարդապետը մի ճար պէտք է անի: Այս գործը թողնել չի լինիլ, ասաց Հաջի աղան. զեռ մենք խղճմանքներին առաջը մեղանշում էլ ենք: Պապը խեղճ, թշւառ և անկարող պաշտպանելու իւր իրաւունքները և մենք, գիտենալով այս բանը, ի՞նչպէս անտարբեր մնանք: Դու՛ հոգեւոր հայրը, Լուցիան՝ ստեր քոյրը և ես՝ ամենամօտիկ բարեկամը—մենք պարտաւոր ենք նորան պաշտպանելու: Այս մասին Արդար Դատաւորի առաջն անգամ պատասխանատու ենք:

—Դեռ սպասեցէ՛ք, ժամանակը չէ:

—Ժամանակը հասել է, երկաթը պէտք է տաք տաք ծեծել:

—Այդ բոլորը գիտեմ, բայց առաջ Զատիկն սկսելու է, ապա մենք նորա շաւիղովը կերթանք: Ես գիտեմ, թէ ի՞նչ կարող է պատահել ապագայում:

—Լա՛ւ, մենք էլ վաղուց համաձայնեցանք ձեր կարծիքին: Սկսենք ուրեմն առանց ուշացնելու:

—Սկսելու համար փող է պէտք և Զատիկը չ՛ունի, ասաց վարդապետը:

—Ես մինչև հարիւր ոսկի կարող եմ գտնել, պատասխանեց Լուցիա խանումը, եթէ պակասի՝ մնացեալն էլ դուք գտէք:

—Գործը այժմ կարելի է սկսել: Առանց փողի՝ յաջողութիւն գտնել անհնարին է: Ես խօսք եմ տալիս՝ տասն օրւայ մէջ ամեն բան կարգի բերել և խնդիրքը ներկայացնել:

—Եթէ Զատիկը չը համաձայնի, ասաց Հաջի աղան, ո՛ւմ ձեռքով կարող ենք միւնոյն բանը կատարել:

—Այն ժամանակ կը մտածենք: Լուցի՛ա խանում, մի օճախը վառեցէ՛ք, մրսեցաց: Եհ, Կարինի անվերջ ցրտերն էլի սկսեցին:

Լուցիա խանումը զուրս գնաց: Ծանր քայլերով, խոհուն, դէմքով, ձեռքերը շփելով ման էր գալիս տէր-Վարապետը դահլիճում: Դաւիթը բազմոցի վերայ տարածւած, գլուխն ափի մէջ՝ մոմտում էր: Հաջի աղան իւր տեղը կզկտած՝ աչքերը յառած լուսամուտին, մտածում էր: Լուցիա խանումը աղախնի հետ վերադարձաւ, օճախը վառեց, կրակափը աւելեց և, բերած փացաի սալան առած, դարձաւ:



Հեռզհեռէ, վառարանի կրակի բոցերը սաստկանալով՝ սենեակը սաստիկ լուսաւորեց: Նրբեմն երբեմն իւզոտ փայտի ճզճզոցը և ճալթումը խանգարում էր լուսթիւնը: Տէր-Վարապետը, աւելը ձեռին, անդադար խառնում էր: Կրակի բոցերը տաքացրին, կարմրացրին հանդիսականների այտերը և թմրութիւնը տիրեց մասճողների վերայ:

— Լուցի՛ ա խանում, Զատիկը գնա՛ց, թէ այտեղ է:

— Այտեղ է, գնացել քնել է:

— Լաւ է, եթէ պէտք զայ, կը կանչենք:

— Լուցի՛ ա խանում, ասաց վարդապետը. գնա՛. դրի՛ն ու թանաքը բեր, չը մոռանաս, թուղթ ու մի մեծ գիրք էլ բեր:

Լուցիա խանումը անմիջապէս բերաւ:

— Դէ՛հ, սխի՛ր գրել, ասաց վարդապետը Դաւթին:

— Առաջի օրւայ բարեւագիրը մօտդ է, հարցրեց Դաւիթը:

— Կարծեմ՝ մօտս է: Ծոցից մի կապոց թղթեր դուրս հանեց, որոնց միջից ջոկեց մի կապոց ալօտի թուղթ ու մեկնեց Դաւթին, որը առաւ ու սկսեց մանրամասն քննել:

— Այս մարդու բոլոր տառերին լաւ կարելի է նմանեցնել, բայց զարմանալի ձև ունի սորա «»-ին: Ինչ որ էլ արի՛ չը կարողացալ յարմարեցնել:

— Ոչի՛նչ, պատասխանեց վարդապետը, եթէ բոլոր գրերը նմանին, միայն «»-երի համար ո՞վ կարող է կասկածել: Աշխատի՛ր նմանեցնել:

Դաւիթը արաբական գրադրի պէս ձախ ծնկան վերայ չոքեց, աջ ծնկան վերայ մի գիրք դրած՝ թուղթն էլ վերան, փետուրէ գրիչը՝ ձեռին՝ դրում էր:

«Միայն չորս հարիւր ութսունը չորս ոսկի է:

« 186.. թ. մայիսի 1-ին, Կ. քաղաք:

«Նս ներքոյ ստորագրեալս, Կ. քաղաքի արտօնատէր վաճառական

« Յովակիմ Բէգ Մելիք-Վարադեօզեան, վեր առի և պարտ եմ միայն

« չորս հարիւր ութսունը չորս օսմանեան լիրաց Կ. քաղաքի բնակիչ էթ-

« տար Զատիկ Անտօնեանին: Այս գումարը վերոյիշեալ թաւանիցս

« վեց ամիս ժամանակի պարտաւոր եմ վճարելու Անտօնեանին և

« ստորագրութիւնս ազատելու: Որ եմ պարտաւոր՝ Յովակիմ Բէգ

« Մելիք-Վարադեօզեան»:

Գրութիւնը աւարտելուց յետոյ, տեղ տէր-Վարապետին՝ ասելով.

—Ահա նայի՛ր. տես հաւան՞ում ես:

—Տեսնեմ: —Վարդապետը համեմատեց նամակի և մուրհակի ստորագրութիւնները: Բոլեհական լուութիւնից յետոյ՝ ասաց. —Լա՛ւ է. բայց սորանով զործը չը վերջացաւ: Վկայ է պէտք, վկանե՛ր:

—Վարելի է ճարել:

—Հասարակ մարդ չէ կարելի:

—Մի հայ և երկու թուրք:

—Դրկիցներ կամ առևտրական մարդիկ են հարկաւոր:

—Այդ էլ դժւար չէ:

—Ո՛վքեր կան աչքի առաջ:

—Աբիթ էֆէնդին, խօջա Հասանը և Ամիրխանեան Յակոբը:

—Յակոբը թոյլ մարդ է, զործը կ'աւերէ:

—Պալտօցու չուխան կարգի կը բերէ:

—Տեսնեմ քեզի:

—Ես երեքից էլ հաստատ խօսք կ'առնեմ:

—Զգուշացի՛ր, որ չը կասկածեն:

—Մի՛ վախենա: Աբիթի ու Հասանի պրկըներին (չքննեքն)

մեզը կը քսեմ առաւօտը և խօսքերն ամուր թելով կը կապեմ: Յակոբին վախ կը տամ և վկաներ կ'ուղարկեմ մօտը, որ հաւատացնեն իրան, իւր, իբրեւ վկայի, ստորագրութիւն զնելը նոցա ներկայութեամբ:

—Ճարտար մարդիկ ու զարկելու է, որ աներկիւղ շարժեն:

—Անհո՛գ եղէք:

—Լուցի՛ա խանում, ֆանարը վառէ՛ ես գնամ:

Մինչև լապտերի վառելը՝ տէր-Վարապետը ոտքի ելաւ, մօտենալով Դաւթին, քթի ստիւը մի քանի խօսք մրմնջաց ու դէպի դուրս ուղղւեց:

—Գիշե՛ր բարի ձեզ, ասաց վարդապետը:

—Լո՛յս բարի ասելով՝ դուրս եկան սենեակից ճանապարհ զնելու:

Վերադարձան սենեակը ու մի քիչ խօսակցելուց յետոյ, Լուցիա խանումը բարձրացաւ վերի յարկը և Զատիկի քնած սենեակը մտաւ: Զգուշութեամբ պալտօն դուրս բերաւ ու տարաւ Դաւթի մօտ: Ծոցի զրպանում գտան Զատիկի թղթակալը զանազան թղթերով: Դաւթը



տեղաւորեց ալլտեղ իւր գրած մուրհակը և վերարկուն կրկին վերադարձրեց տեղը: Գիշերը շատ անցած լինելով՝ գնացին հանգստանալու:

## Բ.

## ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Կար ժամանակ, երբ Տաճկաստանը կառավարւում էր Ներխաթով, որ մահմէդականութեան իսկական օրէնքն է: Այս դատաստանագրքով ոչ-մահմէդականները համարւում էին բայա և մեծ տարբերութիւն կար իսլամին հաւատացողների և չը հաւատացողների իրաւունքների և արտօնութիւնների մէջ: Բայան, որ երկրագործութիւնով, արւեստադիտութիւնով, վաճառականութիւնով, սեղանսւորութիւնով և բժշկականութիւնով էր պարապում, իւր կեանքի, կայքի, պատուի՝ ապահովութեան համար, մտնում էր մի մահմէդականի հովանաւորութեան ներքոյ: Պետական և հասարակական հարկերը վճարելուց յետոյ, իւր դառն աշխատանքի մի մասը պարտաւորւած հասցնում էր իւր պաշտպանին: Տէրութեան ընդհանուր վարչութիւնը, սորա բոլոր ատեաններն ու ղիւանստները և հասարակական պաշտօնները վարում էին մահմէդականները: Քիչ էր պատահում, որ խելացի, նշանաւոր մարդկանց սերն ու հաւատարմութիւնը վայելող և իւր հանձարովն ու զործունէութիւնով պետական մեծ գործերը կարգի բերող քրիստոնեայն, կոչւելով մի համեստ պաշտօնի՝ մահմէդականների նախանձին ու ատելութեան զոհւած չը լինէր:

Ղաղիկների առաջը դատաստանական գործերում ոչ-մահմէդականների իրաւունքները չարաչար կրճատւած էին: Քրիստոնէի վկայութիւնը ոչինչ նշանակութիւն չունէր և ոչ մի դէպքում չէր ընդունուի, եթէ դատավարներից մի կողմը մահմէդական լինէր: Թէև թանջիմաթից (Վերանորոգում-իւն) յետոյ, 1840-ական թւականներին ժողովրդին հաւասարութիւն տրւեց և բայան ազատուեց, բայց շատ արտօնութիւններ՝ կրօնական անխցիլի սրբութիւններ համարւելով, ոչ օրէնքները կարողանում էին անմիջապէս վերացնել և ոչ պաշտօնականները, կատաղի ուամկի վախից, համարձակւում էին հրատարակած օրէնքներ-

բին հպատակել: Ակաջութիւնն էլ այս կարգի արտօնութիւններից էր և մինչև բողղարական ապստամբութիւնը մահմէդականութեան այս երկնացին պատգամը ճշգրտութեամբ պահուում էր: Սրինակի համար, պատմենք մի դէպք, որ վերջին արևելեան պատերազմից երեք կամ չորս տարի առաջ տպագրուեց Կ. Պօլսի մի հայ լրագրում, որտեղից վեր առաւ և՛ եւրոպական մամուլը, ինչպէս հետաքրքիր դէպք:

«Մօտ օրերս, գրում էր խմբագիրը, Կեսարիա քաղաքում մի աղքատ հայի կովը զողանում են: Կորստի տէրը ութն օր պտուելուց յետոյ, հեռու թաղում, մի տաճկի տանը, գտնում է կովը և պահանջում: Սա, առանց ամաչելու, ստում է, իբրև թէ ինքը կովը երեք ամիս առաջ բազարից գնած է եղել: Բաւական աղմուկից յետոյ, գործը հասնում է իրաւարան, որտեղ Ղազին, քրիստոնէի սեպհականութիւնը հաստատելու համար, վկայ է պահանջում: Սա էլ իւր հայ դրացիներին է ցոյց տալիս: Պաշտօնեայն իսկամ վկայ է պահանջում: Կովի տէրը յայտնում է, որ իրանց թաղում իսլամներ չեն բնակում և հետեւապէս անկարող է դատաւորի պահանջը կատարել: Երբ պատրաստում են մերժելու հայի արդար պահանջը, սա յուսահատուած, իւր վերջին խնդիրքն է առաջարկում:

—«Ղազի՛ էջէնդի, աղաչում եմ, եթէ կարելի է, բերել տէք կովս ու թողէք նախրի ճանապարհի վերայ, եթէ ուղիղ գնաց իմ տունս մօնի և իւր հորթին ուրախութեամբ թողնի ծծելու՝ այն ժամանակ հաւատացէք ինձ ու կովս տէք. եթէ ոչ, օրինաւոր կերպով ինձ պատժեցէ՛ք և կովը յանձնեցէ՛ք հակառակորդիս»:

«Բարեբաղդաբար Ղազին լսեց խնդիրքը, և կովը վազէ-վազ մտաւ հայի տունը բաւանջելով և սկսեց լիզել իւր հորթը: Դատաւորն հայի արդարութիւնը ճանաչելով՝ կովը տիրոջը յանձնեց»:

Այդ ժամանակները վկայութիւնն էլ մի պարապմունք էր, հացի խնդիր էր անպաշտօն մօլլաների համար և հարստութեան անսպառ աղբիւր: Հայը, որքան որ գործ ունենար դատարանը, առաջ պիտի գնար վկայ պատրաստելու: Քրիստոնեաները զոհ էին այդ օրէնքից, իրանց երգմունք անելը ամեն դէպքում մեղք համարելով: Ակաները պարապ-սարապ սրճանոցներում ծանր ու մեծ նստած իրանց չիբուխներն էին ծխացնում, զայնպէս խմում և ան-



զաղար տախտակների վերայ կաւիճով խաղած իրանց զայճաջի պարտքերն համարում:

Մասցուի գիշերւայ հետեւեալ օրը, կէսօրից երկու ժամ առաջ, Դաւիթը մտաւ մի սրճարան և, չիբուխը վառելուց յետոյ, զայճաջին ցած ձայնով ասաց, որ զայճաջ տայ խօջայ Հասանին: Այսֆանները խմելիս, նշաններից խօջան իմացաւ, որ Դաւիթը իրան պէտք ունէր: Սորա մեկնելուց կէս ժամ յետոյ, ինքն էլ իւր ճանապարհը ծռմուկով՝ զնաց մտաւ Դաւթի գործարանը: Դաւիթը մի քրդի պղինձ էր ծախում:

— Բարի լո՛յս, ուստա Դաւիթ, ասաց խօջան:

— Աստծո՛ւ բարին, խօջա՛յ էֆէնդի. հրամեցէ՛ք:

— Դու առուտուրիդ աշէ (շայէք), ասաց խօջան ու մի աթուղի

վերայ նստեց:

— Հարիւր յիսուն դուրուշից պակաս ձեռք չի տալ ու գում ես՝ զնի՛ր, չես ուզում՝ զնա՛: Նս խօջայ էֆէնդու հետ գործ ունիմ:

— Հարիւր քսանից աւել չեմ տալ, ասաց քուրդը:

— Որ այդպէս է՝ զնա՛, դուռը ցոյց տւեց քրդին:

— Չես տալիս՝ մի՛ տալ, էլ ինչի՞ ես վռնդում:

— Գնա՛, բարեկա՛մ, ծախու չէ պղինձը:

— Որ ծախու չէր՝ էլ ինչի՞ էիր ինձ այսքան նեղութիւն տալիս:

— Ախար քեզ ասում եմ, քո տւած զնին ձեռք չի տալ. զնա՛

ուրիշից զնիր:

— Ուրիշ խանութ էլ գիտեմ, ուրիշին էլ ճանաչում եմ: Բայց դու արհեստաւոր ես և այս խանութը բացել ես ամեն մարդու համար, ով ցանկանայ՝ կարող է ներս գալ. առնէ, չ'առնէ՝ դու վռնդելու իրաւունք չ'ունիս:

— Կուռօ, կուռօ, ասաց խօջան, թէ առնելու միտք ունիս, հարիւր քառասուն դուրուշ տուր՝ տար, թէ ոչ՝ զնա՛ բանիդ:

— Խօջա՛յ, քո պատւիդ համար ձայն չեմ հանում, թէ ոչ ես գիտեմ ինչ կ'անէի... ասաց ու զնաց քուրդը:

— Էս ի՞նչ մարդ է, ասաց Դաւիթը, այդ լեռնական հոյիւններից այսպէս լեզւանի առաջին անգամն եմ տեսնում:

— Թո՛ղ տուր կորչի, ասաց խօջան:

Դաւիթը աշակերտ չ'ունէր, ինքը դուրս եկաւ սուրճ պատւիրելու: Սուրճ խմելիս՝ խօջան անպապար նայում էր Դաւիթի աչքին և խօսքը բանալու սպասում: Դաւիթն էլ աչքը կրակարանը դարձրած՝ մտածում էր, թէ ի՞նչպէս սկսի խօսակցութիւնը: Վերջապէս խօջայի համբերութիւնը հասաւ:

— Ի՞նչ կայ, էլի ի՞նչ ունես, որ այդքան մտածում ես, ասաց նա Դաւիթին:

— Նա ի՞նչ պիտի ունենամ, տեսնում ես աշխատում-ապրում եմ, բայց ձեզ բան ունէի ասելու: Այս երեկոցեան մեր Զատիկի տոմարները քննելիս՝ տեսայ, որ մի բան կար գրած ձեզ վերաբերեալ, կարգացի ու դորա համար էլ կանչեցի:

— Ի՞նչ բան է:

— Նորա հանգուցեալ եղբայրը գրել է, որ երեք ու կէս հալաբի (արշն) կապոյտ չուխայ ջիւբացու է ձեզ պարտք:

— Ո՛չ, ո՛չ. ես պարտ չեմ՝ նորա եղբորը:

— Ո՛չ, ասաց Դաւիթը. Զատիկի եղբայրն է ձեզ պարտ ջիւբացու, երկու գլուխ շաքար, երեք հոխայ դաշխայ և հինգ էլ Մէջիզիէ ոսկի:

— Այո՛, այո՛, միտքս գալիս է, արդար մարդ էր, ես կարծում էի, որ հանդերձեալ աշխարհումը պիտի ստանայի այդ փողը. բայց մարդը չէ ընդունել իմ իրաւունքը ու չէ մոռացել տոմարի մէջ արձանագրելու: Ո՛րտեղ են հիմա այն մարդիկը, որոնք առանց թղթի, զրի և վկաների՝ հազարներով պարտքերը առանց այլ և այլի բերեն, տիրոջը յանձնեն: Նա՛մ բարի մարդ էր ողորմած հոգին:

— Տակն էլ գրած է, որ դուք վկայ էք նորա առնելիքի գործին, որ ունի Յովակիմ բէզի վերայ:

— Յովակիմ-բէզի՞:

— Սուրհակը գրելիս ներկայ էք եղել և վկայ գրւելով՝ ձեր կրօնիքովը վաւերացրել էք:

— Յիշում եմ, յիշում. նոր միտքս ընկաւ: Նա բամբակ ծախող խօջայ Հինգիի խանութին էի, հանգուցեալը եկաւ ինձ կանչեց:

— Գումարը չորս հարիւր ութսուն չորս ոսկու է:

— Այո՛, այո՛. այդ փողերը նորա որբերին է հասնելու և մուրհակը Զատիկի մօտն է կարծեմ:



— Ճիշդ այդպէս, մուրհակն էլ Զատիկի անունով է գրւած:

— Դիտեմ, լաւ գիտեմ, ինչպէս չէ: Մի՞թէ մարդ կարող է իր տեսածն ու լսածը ուրանալ: Ես ամեն տեղ պատրաստ եմ վկայելու այդ բանը:

— Զատիկը իւր պարտքը տալու շատ փափաղ ունէր, բայց գիտէք, որ այս օրերս մի քիչ գործը վատ է գնում, դորա համար այս երկու ոսկին ինձ տւեց, որ ձեզ տամ (իւր երեսը չէր բռնում) և խնդրեց, որ մի քիչ ժամանակ տաք մնացեալն էլ վճարելու:

— Ոչինչ, ոչինչ, երբ որ այդ առնելիքն առնէ ու պրծնի՝ այն ժամանակ թող տայ: Վնաս չ'ունի. ասա՛ իրան, որ ես պատրաստ եմ, երբ որ կամենայ, գնամ ժողովը և երգմամբ հաստատեմ իմ վկայութիւնը: Ասաց ու պատրաստեց դուրս գալու:

— Դնո՞ւմ էք, խօջա՛յ էֆէնդի, ասաց Դաւիթը: Գիտէք, գործի մէջ վկայ են՝ Աքիֆ էֆէնդին ու Ամիրխանեան Յակոբը:

— Դիտեմ, շէկ Յակոբը:

— Ճիշդ նա:

— Մնա՛ս բարով:

— Դնա՛ք բարով:

Դաւիթը առաւօտեան վաղ ժամանակ Աքիֆ էֆէնդուց խօսք էր առել, մնում էր շէկ Յակոբը, որ ամենից դժւար էր երևում: Այս մարդը տասն և հինգ հազար լիրայի կարողութիւն ունէր և Կարինի վաճառականների շարքում իւր փողովը բաւական պատիւ էր ձեռք բերել: Առուտուրը միայն քրդերի հետ էր, որոնց մէջ քսան և հինգ տարի առաջ հինգ հարիւր ղուրուշով էր մտել և նոցա կռնակից՝ այդ կարողութեան տէր դարձել: Մեծ եղբայրը Արաբկերում անդադար մանած էր մանել տալիս, հինում ու ման ուսաց գործել տալով՝ ուղարկում էր Կ. Պօլսում ծախելու: Փոքր եղբայրն էլ Կ. Պօլսում նստած, ամեն շաբաթ ապրանք էր ուղարկում: Առուտուն էլ միշտ ապառիկ էր. միայն յիսուն ղուրուշով ձեռք բերւած արխալուղը հարիւրից պակաս չէր տալ: Կարւած շորեր տւելի շատ էր ծախում, քան թէ արշինի տակ մանուֆակտուրի ապրանքներ: Վեց ամիս էլ ժամանակ էր տալիս իւր ջաճախորդներին և մնացած օրերի համար ամիսն երկու տոկոս պահանջում: Փարան ու ղուլսը մէկ էր. և այդ ճոխութեան մէջ, ուրիշի հաշւով կեւած մի փոր հացն,

մի բաժակ զինին և մի շիրուխ ծխախոտը օգուտ էր համարում: Քէլեկրօնասէր էր, բայց եկեղեցում ման ածած խաչհամբոյրի թաքախը տեսնել չէր ուզում: Առուտուրի մէջ էլ առանց երդումի գործ չը կարողանալով տեսնել, իւր համար կեղծ երդումներ էր յօրինել: — Չորս գիրքը վկայ, որ ասում էր՝ լռում էին քրդերը և առաջարկած գնովը տանում ապրանքները: — Տեսած լոյսս վկայ, ասում էր, աչքը ճրագի կողմը դարձնելով:

Դաւիթը երեկոցեան մտաւ շէկ Յակոբի մագազէն և բաւական խօսակցութիւններէից յետոյ՝ միասին դուրս եկան, կողպեցին ու գնացին Ալէք աղայի զինեստունը: Անինայ խմեց Յակոբ աղան և Դաւիթին խօսք տալով, ձեռքիցը ազատուեց:

— Մնա՛ք բարով, ասաց Դաւիթը բաժանելիս:

— Լո՛յս բարի, առաւօտը չը մոռանաս պալատն ու չուխան, որ շատ կեղտոտուել է վրաս-գլուխս, պատասխանեց Յակոբ աղան:

Դաւիթը այդ օրը պղինձ առնող քուրդի մի քանի անգամ իւր խանութի դրան առաջիցը անցնելը տեսնելիս, կարծում էր, որ նա մասնաւորաբար անցնում էր, որ ինքը նորան կանչէր և պղինձը ուզած գնովը տար: Շէկ Յակոբի մագազինը եղած ժամանակը, քուրդը ներս էր մտել և հարցրել Յակոբ աղայից, թէ տեսե՞լ է Հասօյին, Սուլօյին և Բազօյին: Սա էլ—նրանք գեղ գնացին ասելով՝ ճանապարհ էր դրել: Գինետանը բաւական խօսակցութիւնից յետոյ, նկատել էր նոյն քուրդին իրանց ետեւը հաց ուտելիս: Յակոբ աղայից բաժանելուց յետոյ, էլի տեսել էր քուրդին ճանապարհին իրան հետեւելիս: Դաւիթը թէև հարբած էր ու գլուխը տաք, բայց մտքումը այդ քուրդի վերայ կասկածներ ունեցաւ և ողջ զիշերը չը կարողացաւ հանգիստ քնել:

**Թ.**

#### ՈՍԿՈՒ ՏՈՊՐԱԿ

Ջատիկի առնելիքի մուրհակը գրւած զիշերը խորհուրդ կար Մութասարիֆ (Կալաշնիէ) Էմին փաշայի տանը: Սորա մօտ էին Համազասպ և Գէորգ Էֆէնդիները: Մութասարիֆը, որ մի նախապաշարած մարդ էր, սիրում էր շողոքորթութիւններ, որ Գէորգ Էֆէնդին իւր ճար-



տար լեզւի անսպառ աղբիւրներից առատասպէս շռայլում էր: Համազասպ էֆէնդին ծանր մարդ էր. փաշայի հետ նիստ ու կացը միայն իւր նպատակների և շահերի համար էր: Այդ օրերը վիլայէթի վալին (նահանգապետ) ֆինանսների մինիստրի պաշտօնով կոչւած էր Կ. Պօլխա: Եմին փաշան, որ ժամանակաւ որսպէս վարում էր այդ պաշտօնը, յոյս ուներ ժամանակով իւր պապի նստած աթոռը — Վալիի տեղը բռնել: Դորա համար մայրաքաղաքի նշանաւոր անձերին աղերսումներով ու նամակներով դիմած էր:

— Համազա'սպ էֆէնդի, ասաց փաշան, այս տարւայ աշարից (տուրք ցորենից, դարուց և այլն) օգուտ ո՞րքան մնաց:

— Իդր ծախսը հանած՝ երեք հազար վեց հարիւր յիսուն և հինգ լիրայ, որտեղից քառասուն լիրայ քարտուղարին իւր աշխատանքների վարձ պիտի հասցնելի, տասն և հինգ լիրայ ձեր զրան այվազին:

— Ուրեմն ինձ հասնում է ճիշդ երեք հարիւր լիրայ:

— Այս՝ տասներկու բաժնից մինը: Բայց տասն և հինգ ոսկի տուկոս էք վճարելու Յովակիմ բէգին:

— Թո՛ղ բէգը փաշայից այդ տոկոսը չը ստանայ, ասաց Գէորգ էֆէնդին:

— Քեզանից և ինձանից ստացել է, առանց մի փարայ զեղջելու: Գիտես, որ անպատճառ ինձանից կ'առնէ այդ փողը, ես ստորագրութիւն ունիմ մօտը, էլ ինչի՞ այդպիսի առաջարկութիւններ ես անում: Զուր չե՞ն այդ խօսքերը:

— Դորա համար մի՛ խօսիք, նա այնքան ճիշդ մարդ է, որ մի դուրուշ էլ եթէ պահանջ մնայ, տոմարը չի՛ ջնջիլ: Ես ձեզ, Համազա'սպ էֆէնդի, կը տամ տասն և հինգ ոսկի, իսկ դուք տուէք ինձ զիշերս իմ բաժին վաստակի համար մի պօլիսա (քոթանաչէք) Կ. Պօլսում վճարելի իմ հաւատարմատար Ջալալ բէգին երեք հարիւր ոսկի երեք օրից հատուցանելու:

— Այս բոպէիս. ասաց, և նստեց գրասեղանի առջև ու գրեց փոխանակագիրը: Դուք էլ բարեհաճեցէք տալու իմ ստորագրութիւնը: Այս ասելով՝ յանձնեց գրած փոխանակագիրը փաշային:

— Ահա՛ և ձեր ստորագրութիւնը, խնդրում եմ պատուեցէ՛ք:

Համազասպ էֆէնդին աչքի անցնելուց յետոյ՝ պատուտեց ու մանրութիւնը զցեց վառարանը: Լուսութիւնը տիրեց զահլիճում:

—Ինչի՞ չէք խօսում, ասաց փաշան:

—Ինչ ունինք, որ խօսենք, պատասխանեց Համազասպ էֆէնդին:

—Դեռ վաղ է, այսպէս կանուխ ես ձեզ չեմ թող տալ տուն գնալու. իմ էլ սիրտս նեղանում է մենակ տանը նստելիս:

—Ձենք գնալու, միտք չ'ունինք, ասաց Համազասպ էֆէնդին:

—Դիշերներն կանուխ քնելով՝ մարդու կողերն ու ոսկորները ջարդուում են, նամանաւանդ երազներով խռովում, ասաց Գէորգ էֆէնդին: Լաւ միտս ընկաւ. երեք զիշեր երազումս, (ներողութիւն, փաշայ էֆէնդի, որ մեզ համար քնում ու ձեզ վերայ երազներ ենք տեսնում)...:

—Բարի՛ լինի, ասաց էմին փաշան. պատմի՛ր տեսնենք, ի՞նչ տեսար:

—Ձարմանալի՛ բան է, խելքից ու մաքից չ'անցած. մարդ ապշում է այդպիսի տարօրինակ տեսիլքներից:

—Շո՛ւտ արա, համբերութիւնս հատաւ, Գէորգ էֆէնդի:

—Իբրեւ թէ ինձ կանչել էիք: Ես սարալի գունդից ներս էի մտնում, դուք սանդուղքներից վայր էիք իջնում: Մի բարձր զինուորական ձեզ մի ծրար տուեց: Դուք նորան հարցրիք. — Պօտի՛ցն է: Նա էլ պատասխանեց. — Ո՛չ, վալին ուղարկեց: — Թուղթը առանց բաց անելու՝ ծոցերդ դրիք և դուրս գնացիք: Դրան առաջը մի ձի կար, մի հիանալի ու աննման ձի ձեզ համար: Երբ սրտորասուում էիք հեծնելու, մի թիկնապահ մօտեցաւ ձեզ և մէջքերդ կապեց մի թուր: Այս միջոցին մեծ զղրկոցով ու մուգիկով զօրքերն եկան ու պալատի դրան առաջից անցան: Բացք բոլորովին հրապարակը չէր նմանում մեր քաղաքի հրապարակին, շատ մեծ էր և սքանչելի կերպով զարդարած ծառերով ու ծաղիկներով և զեղեցկաշէն տներով: Այդ զօրքերի աղմուկից ձեր ձին խրտնեց ու վրաս վազեց: Ես էլ վախից զարթնեցայ՝ արիւն-քրտինքում կորած:

—Ձին չը նստեցի՞:

—Ո՛չ, փաշայ էֆէնդի, թուրդ կապեցիր, պիտի նստէիր, ձին խրտնեց:



—Ափսո՛ս, հազա՛ր ափսոս, ասաց փաշան, վերջը չը բերիր: Զին մուրազ է, բայց պէտք էր հեծած:

—Զը կարողացա՞ւ հեծնել, ասաց Համազասպ էֆէնդին:

—Ի՞նչ անեմ, սուտ խօսելու խօ չե՞մ, ես տեսածս եմ պատմում:

—Գէրվի՛շ բաբա, ասաց փաշան, երազը լաւ իմացար, մեկնի՛ր տեսնենք ի՞նչ նշանակութիւն ունի:

—Շուտով բարձր պաշտօնի հասնելուդ բարի և յաջողակ լուրն ես ստանալու և փառաւորւելու:

—Լաւ չը մեկնեցիր, ասաց Համազասպ էֆէնդին. կոյր Հաֆիզը որ այստեղ լինէր, խօ տեղն ու տեղը կը բացատրէր:

—Ճշմարի՛տ է, ամենքը խօ Հաֆիզ չե՞ն կարող լինել, որ ըամ (Քալիֆա՞ն) գցելով պղնձներով ոսկի ու գոհարեղէն գտնեն, ասաց Գէորգ էֆէնդին:

—Ուղի՛ղ, այս ի՞նչ խօսակցութիւն է, որ բերանից բերան ման է դալիս քաղաքում: Այսօր ոստիկանապետն ինձ իմացրեց:

—Ուրեմն մինչև այսօր բան չէի՞ք իմացել:

—Մի քանի օր առաջ՝ հարեմումն էլ խօսեցին. առասպել համարելով՝ ականջ չը դրի:

—Որ այդպէս է, պատմութիւնը գիտես:

—Ասում են, բայց հաստատ փաստ չը կայ, կարելի է դատարկ խօսակցութիւն է:

—Դատարկ չէ, այսօր Յովակիմ բէզը ասաց, որ ինքը կոյրից մի քանի անգամ անթիքաներ ու գոհարներ է գնել:

—Մի՞թէ, ասաց Մութասարիֆը:

—Նա չի ուրանալ, կամենում էք դուք էլ առաւօտը հարցրէք նորան: Մինչև անգամ Հաֆիզից գնած մի գոհարապարզ հմայիլ ինձ ցոյց տւեց, որ յիսուն ոսկուց աւել արժէ: Մէջ տեղի զմրուխտը մատանու համար ում որ ծախես, երեսուն ոսկի կը վճարէ:

—Ուրեմն շա՛տ բան է գնել, հարցրեց փաշան:

—Զը գիտեմ, բայց յայտնի բան է, առուները, գետերը ու հեղեղները ծոփն են թափւում: Ով ինչ գործ բռնէ՝ օգուտի մեծ մասը Մելիք-Ղարազեօղեանի կասսան է մտնում:

—Զը գիտցածդ մի՛ խօսիր, Գէորգ էֆէնդի, ասաց Համազասպ էֆէնդին:

—Իմացածս եմ խօսում, աչքովս տեսած չեմ: Ասում են՝ մի մեծ սև սողորակով խօջաղ-Հաֆիզը տուն է տարել բէզին:

—Սոփորաբար այդպիսի պատմութիւնները գեղեցկացնում, զարդարում և վրադիրներով են նկարագրում:

—Ես խօ իմ յաւելւածս չ'արի:

—Դու իրա խօսքն ասա՛, զայրացած ասաց Համազասպ էֆէնդին, ուրիշի խօսածին ինչի՞ ես հաւատում:

—Ինքն ասում է, որ հմայիլը և մի քսան-երեսուն կոոր փող է գներ:

—Ճշմարիտն էլ այդ է, նա չէ ստել:

—Կարելի է:

—Ուղիղ է ասում Համազասպ էֆէնդին, ես զիտեմ որ բէզը երբէք չի ստիլ, խօսակցութեան մէջ մոնելով ասաց փաշան:

—Դրսի խօսակցութիւնն էր իմ պատմածը, ասաց Գէորգ էֆէնդին:

—Բայց ինչ որ է՝ մի բան կայ, առանց պատճառի այսքան աղմուկ չի բարձրանալ, ասաց փաշան: Հարկաւոր է քննութիւն անել:

—Այդ ձեր գործն է, ասաց Համազասպ էֆէնդին. պատասխանատուութիւնից ազատւելու և կարծիքները ցրելու համար՝ այդ կարևոր է:

—Այս մասին խորհելու և օրինաւոր կերպով վարւելու է: Գանձարանի վերաբերեալ հարց է, ապագայում Կ. Պօլսի վէզիրները մեզ մեծ նեղութիւն կը տան:

—Ո՞ր ատենի պարտականութիւնն է այս գործը, հարցրեց Համազասպ էֆէնդին:

—Կարծեմ մեր զազայի վարչական ժողովի:

—Առաւօտը խորհրդում հարկաւոր է մի տնօրինութիւն անել:

—Ժողովից առաջ պէտք է մի ղեկուցում պատրաստել: Գիշերս ես քնեմ, վաղը ձեզ կ'իմացնեմ:

Բաւական խօսակցելուց յետոյ՝ դուրս եկան էֆէնդիները: Փաշան մեկուսի ասաց Համազասպ էֆէնդուն, —Առաւօտը վաղ կրկին տուն արի: —Այս կոչումը անհանգստացրեց Համազասպ էֆէնդուն, որը իւր մուշտակի մէջ փաթաթւած անմուռն շարունակում էր ճանապարհը:

—Բաւական ցուրտ է, ասաց ճանապարհին Գէորգ էֆէնդին:



Համազասպ էֆէնդին պատասխան չը տւեց: Գէորգ էֆէնդին կարծում էր, թէ չը լսեց: Մի քիչ գնալուց յետոյ՝ ասաց.

—Մեծ բաղդի են պատահել, բայց թէ կարողանան մարտել: Տե՛ս որին է հանդիպում բաղդը:

—Գէորգ էֆէնդի, սորա-նորա խօսակցութեանը շատ մի՛ հաւատաց, ես գիտեմ և լաւ համոզւած եմ, որ դատարի բան է: Դեռ դու անխոհեմութեամբ, քիչ էր մնում, որ Յովակիմ բէգին պատասխանատուութեան տակ գցէիր: Առանց մտածելու խօսում ես:

—Ի՛նչ նոր բան խօսեցի. այդ բանը ողջ քաղաքը խօսում է:

—Քաղաքի և քո խօսելուդ մէջ շատ տարբերութիւն կայ: Ան՞ս իմանում, որ այդ խօսքերից մեծ փնաս կարող է ծագել բէգին: Բէգը, փա՛նք Աստուծոյ, երկուսիս էլ բարեկամն է: Դեռ քո կրօնակիցդ է և ինձանից շատ՝ քե՛զ լաւութիւններ է արած: Պաշտօնականները մեր բերանին են նայում. մենք որ այդպէս վարենք, ախար նոցա շա՛տ պէտքն է արդարութիւնը կամ մեր դրացոց պատիւը: Բայց այս էլ լաւ իմացիր, որ փաշան մեր երկուսից աւելի շատ է սիրում ու յարգում բէգին. և քո աւելորդ խօսքերը, նորա մէջ յարուցին ահն մտքերը, որ դու չիմար ես և անկարող ո՛չ քո և ո՛չ ուրիշի պատիւը պաշտպանելու: Այս էլ յայտնի երեւեցաւ, որ դու քո բարեկամներիդ՝ քո շահի համար ես յարգում, անկեղծութիւն ասած բանը քեզանում չը կայ, հեռուապէս կարող ես փաշային էլ դաւաճանել, եթէ նորա վերայ մի գործ կամ քննութիւն բացւի:

Ժ.

#### ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Անանային մութ գիշեր էր, կէս գիշերից՝ երկու ժամ առաջ: Հիւսիսային լեռներից ցուրտ քամին շրւացնելով փչում էր: Մարդկային անց ու դարձը փողոցներում դադարած էր: Երկու կասկածաւոր մարդիկ, առանց լապտերի, խուլ ու նեղ փողոցներով եկան ու դողդալով բարձրացան ժամատան երդիքը: Հարեան տան լուսամուտներից ծարպէ մոմի լոյսը ազօտ կերպով լուսաւորում էր տանիքը: Ծխանք թէև լաչն էր, բայց շատ ցած լինելով, անծանօթները, չը նկատելու համար, դրանք կրթնած՝ սառը ձիւնի վերայ նստեցին: Շատ

քիչ էին խօսում, այն էլ նշաններով: Բաւական ժամանակ լուռ ա-  
կանջ դնելուց յետոյ.

— Փափա՛ն, ասաց մէկը, այն կողմը դնա, որ կարողանամ սընդ-  
ված քից մի երկու աղիւս քանդել, ձայն բոլորովին չէ զալիս:

— Ա՛ւ, բայց զգուշացիր ներսը հող թափելուց. ասաց ու ետ  
քաշւեց: Նա, դողդողալով մի քանի աղիւս քանդեց:

— Տօ՛, կրկնեց նորից, մի՛, մի՛ խթխթա, ձայն է զալիս. և  
ականջը դնելով բացած ծակին՝ շունչը կտրած աշխատում էր լսել  
խօսակցութիւնը: Մի քանի վայրկեան յետոյ մըռմռաց.

— Հաստատ էս Զատիկի ձայնն է, Խեն ու նա մենակ են: Քչմա-  
րիտ, որ հին բարեկամը թշնամի չի դառնալ: Արշակ աղի խօսքն է,  
էթտարը ներսն է:

Փափանը, համոզւելու համար, զլուխը քանդւած քից ներս կո-  
խեց և զայրացած ու շարժելով դուրս հանեց: Մի ժամանակ անշարժ  
երբեմն մէկը և երբեմն միւսը լսելով ու ապշած իրար երեսը նայելով՝  
մնացին:

— Մկօ՛, ասաց Փափանը, այստեղից՝ ոչ կարող ենք տեսնել և  
ոչ էլ շնորհքով լսել: Այս սխալ ճանապարհ է, մի ուրիշ բան մտածենք:

— Փափա՛ն, չը գիտես, որ ուրիշ տեղից մօտենալը շատ դժւար  
է: Հասարակ մարդու տուն լինի, ոչի՛նչ: Մեր բէզին Ատուած կեանք  
տաց, մէկ մազիդ մնաս չի հասնիլ. բայց խօ՛ Խենին գիտես, եօթը  
տարի շղթաները ա՛չբդ առ, թէ քշեցին՝ այն էլ քեզ կարկատան:

— Մկօ՛, շատ վախկոտ ես. տօ՛՛ ո՛ւր պիտի քշեն: Ճանը երեխա-  
ներին մի կտոր հաց կաց, գնա՛ մի քիչ էլ քէջփ արա ոստիկանների  
շուքի տակը: Ծախսի փող որ ունենամ, շատ պէտքս է թէ՛ ինձ  
Սթամպոլ կ'ուղարկեն կամ Դիարբէքեր: Արի՛ մի բան մտածենք:

Մկօն զլուխը քանդւած քում լսում էր: Կրակարանը վառելով՝  
ծուխն սխեց բարձրանալ և սոցա լրտեսութեան միջոցը փակւեց:  
Այս ու այն կողմը մտիկ տալուց յետոյ՝ Փափանն ասաց.

— Նս պիտի լուսամուտի տակի պատի մէջ եղած փայտի վերայ  
կանգնեմ, որ խօսակցութիւնները լսեմ: Աւրիշ ճար չը կաց, իջնենք:

Կամաց կամաց իջան փողոց: Մկօն զլուխը պատին դէմ՝ տւած  
կուացաւ և Փափանը ելաւ շալակը: Հեռզհեռէ Մկօն ուղղւեց, Փա-  
փանն էլ, պատը ճանկռտելով բարձրացաւ, կանգնեց Մկօյի ուսերի



վերայ, պատի միջից դուրս եկած փայտը բռնեց և չարարելով վերան բարձրացաւ: Լուսամուտը, որ շատ մեծ չէր՝ թղթած էր: Լսել կարելի էր, բայց բան չէր երևում: Փափանք մատը թքոտեց և թղթի վերայ կըր հինգ փարանոցի չափ տեղ լաւ թրջեց: Պատի ծեփի միջից յարդի մի կտոր պոկեց ու շքեղութեամբ թրջած տեղիցը ծակեց: Այս փոքրիկ ծակից տեսաւ վարդապետին ու Ձատիկին իրար մօտ նստած: Գրասեղանի վերայ թափւած էին բացած նամակներ: Վարդապետը այդ նամակներն մէկ մէկ առնում ու ձեռքում եղած թղթերի հետ համեմատում, քննում էր խիստ հետաքրքրութեամբ:

— Ամենեւին տարբերութիւն չ'ունի, Ձատիկ՝ աղա, 'ասաց վարդապետը. ես տեսնելուն պէս չ'ասացի՞, որ նորա ստորագրութիւնն է:

— Զը գիտեմ, չեմ հասկանում: Լաւ, դիցուք թէ նորա գիրն է ու ստորագրութիւնը. բայց ես երկու տարի է, որ կորցրել էի, հազար անգամ այս թղթակալումս պտուել էի, ի՞նչպէս աչքիս չէր դիպել:

— Պատահմունք է, մարդ շատ անգամ բան պտուելիս՝ վրան նեղութիւն է գալիս և աչքերը լաւ չեն ջոկում:

— Ես լաւ գիտեմ, որ անգուկիցս կորաւ: Ո՞վ դրեց թղթակալիս մէջ:

— Սատանան: Ախա՛ր այդ ի՞նչ խօսքեր են, մարդուս ամեն ժամանակը մէկ չէ: Երբեմն միտքը զբաղւելով, չիշողութիւնը մի գործի վերայ ցրւած ժամանակը՝ ի՞նչ առածն ու զրածը չէ ըմբռնում: Կամ հարբած է լինում կամ վշտացած ու խելքիցը դուրս ի՞նչ ասես, որ չէ անում:

— Զը գիտեմ:

— Զէ՞ որ դու նոցա հետ հաշիւ ունես՝ եղբորդ որբերի կողմից:

— Այո՛, չորս հարիւր ութսուն ոսկիս հալեցրին, չեն տալիս և որբերը մեծանալով՝ ինձանից պիտի պահանջեն և դեռ տոկոսն էլ:

— Այդ փողերի մուրհակն է. էլ ի՞նչ ես ուզում:

— Իմ մուրհակը կորել է, այդ չէ. նորա վերայ մանրամասն հաշիւը գրած էր և որոշւած՝ թէ ի՞նչ նիւթերի կողմից էին պարտ:

— Կարելի է՝ մոռացել ես. երկու կտոր է եղած, մինը հաշւեցուցակ ու միւսը՝ այդ ցուցակի զուամարի մուրհակը: Մի՞թէ մուր-

Հակի վերայ ցուցակ կարելի է ղետեղել. ճիշդ այդպէս եղած պիտի լինի:

—Կարելի է: Մի քիչ մտածելուց յետոյ—Ո՛չ, ո՛չ. մի կտոր թուղթ էր: Լաւ յիշում եմ, մի կտոր թղթի վերայ գրեց բոլորը ու ունեց:

—Որ այդպէս է, սատանաները բերին զցեցին այդ մուրհակը քո թղթերի մէջ:

—Այդպէս բան չի կարող պատահել:

—Որբերի Տէրը զթաց և մուրհակը դուրս եկաւ ծոցիցդ: Դէ՛հ, վեր ա՛ռ փողերը և սրբիւր նոցա աչքերը:

—Շատ բարի, ասաց Ձատիկը խեղդւած ձայնով:

—Ինչ որ է, կարճ խօսք, դու պահանջ ունիս այդ մարդուց:

—Ոչ, ոչինչ չ'ունիմ:

—Ե՛հ, դո՛ւ եմ ասում, որբերը, որբերի փողը...

—Այո՛, այո՛, նոցա մօտն է և ես շարած եմ այդ մասին: Նղբօրս այրին օրը տասն անգամ տուն է գալիս, անէծք է թափում, զորգոռում ու լալիս է: Չը գիտեմ ի՛նչ անեմ:

—Դու լաւ մածի՛ր, մեղք ես. տունդ, զերդաստունդ, որդիքդ մեղք են: Այրին, որբերը իրանց փողը կը ստանան, քեզանից կ'առնեն: Ես էլ իմ խղճիս առաջը պարտաւոր եմ: Պէտք է, օր առաջ, ինչ որ անելու ես, անես ու որբերի փողերը տեղը հասցնես: Դու քո պարտքը տուր, ի՛նչ ուզում ես՝ արա՛: Յովակիմ բէգի հետ:

—Ի՛նչ անեմ, քիչ է մնում, որ խելքս թռցնեմ:

—Տունդ, տեղդ, խանութդ, սարքդ ծախիր ու որբերի աչքի արտասուքը կտրիր:

—Յետոյ էլ գնամ ջուրն ընկնեմ:

—Գո զործն է, աշխատի՛ր՝ ապրի՛ր: Եթէ ասածիդ նման առնելիք ունիս բէգից, պահանջի՛ր, ա՛ռ:

—Նա հեշտութեամբ փող տուող չէ:

—Գանգատ արա՛:

—Տէր չ'ունիմ, փող չ'ունիմ: Իմ զորդս չի անցնիլ, նորա սուտը առաջ կ'երթայ:

—Աստուած ողորմած է, հիմի կառավարութիւնը հարուստին ու աղքատին չի զանազանում, ամենքն հաւասար են: Բէգերի ու աղաների թխաթեր համար՝ի դարն անցաւ:



— Ես լեզու չ'ունիմ, բերան չ'ունիմ, դուռը ճանաչել չ'ունիմ, բարեկամ չ'ունիմ: Առանց փողի վախենում եմ յենեկու մի մէջք չ'ունենամ:

— Այդ մասին ես կ'աշխատեմ. միայն թէ խօսք տաս ժամանակին լինելիք ծախքերը վճարելու:

— Շա'տ բարի, ինչքան որ լինի:

— Որքերին ի՞նչ ես պարտ:

— Տունը երկու հարիւր ոսկի հաշւելուց յետոյ, մնում է երկու հարիւր ութսուն ոսկի:

— Հարիւր ոսկի էլ ծախք կը լինի մինչև գործի աւարտը:

— Երեք հարիւր ութսուն:

— Յիսուն էլ նեղութիւնից ազատելու համար մի սուրբ միաբանութեան կը նւիրես, որ կարողանայ նեղութեան մէջ եղածներին օգնել եկեղեցւոյ տնօրինութեամբ՝ էլի քեզ կը մնայ յիսուն քանի ոսկի: Համաձայն ես:

— Շա'տ ու շա'տ շնորհակալ եմ. այդ որքերից ինձ ազատի՛ր, ինչ ուզում ես՝ արա՛: Մի բան էլ ես ձեզ կ'ընծայեմ:

— Ես ի՞նչ պիտի անեմ, քեզնից առնեմ՝ մի աղքատի պիտի տամ: Թէ դու նեղութիւն ունիս, աւելորդ չէ՞ ուրիշին բարիք անելը:

— Ինչպէս որ կամենաս:

— Լա՛ւ, միայն չը մոռանաս՝ հարիւրը ծախս կը լինի, յիսուն էլ պիտի ուղարկել: Առանց այս ծախսերին գործը առաջ չի գնալ:

— Հասկացայ:

Լուութիւնը տիրեց: Վարդապետը բաւական ժամանակ մօրուքի հետ խաղալուց յետոյ՝ ասաց.

— Վաղը գնա՛ իրա մօտ, ուզի՛ր փողերդ. եթէ չը լսեց, երկու-երեք մարդ միջնորդ գցիր, որ մեղքի պատճառ չը լինիս. մի ութսուսն օր յետոյ գործը կարգի կը դնեմ, քեզ էլ կանչելով ճանապարհները ցոյց կը տամ: Քիչ կանդ առնելուց յետոյ՝ շարունակեց. — Վե՛ր կաց գնա՛, ես զիր ունիմ գրելու, Սաղումեանը վաղը դնում է գաւառներում շինելիք եկեղեցիներին Վե՛ր մանն երի մասով:

— Գիշերս շատ ցուրտ է երևում, վրաս բարակ է, ասաց ոտքի ելնելով Զատիկը. մինչև տուն հասնեմ, իմ բաժինս էլ ինձ կը հասնի: Դողդողուն ձեռքով վարդապետի աջն առաւ՝ համբուրեց:

—Գնա՛ս բարով. այս ի՞նչ ջերմ ունեցողի նման դողում ես: Յուրա չէ այնքան սենեակը:

—Ո՛չ, միայն անձս սրտիւմ է:

—Այս չորս պատի մէջ խօսւածը ես, դու և վերև Աստուած, էլ ուրիշ մարդ չը պիտի իմանայ:

—Մինչև գերեզմանիս դուռը սրտիցս դուրս չէ գալու այս գաղանիքը:

Վարդապետը աշտանակն առաւ և սկսեցին սանդուղքներից վար իջնել: Այս բուպէին խեղդւած ձայնով Փափանը Մկօ՛, Մկօ՛ էր կանչում: Տեսնելով որ դրանք կրթնել, թմրել ու քնել է՝ ճարահատած մի կտոր պատի ծեփից պոկեց ու զլխին գցեց: Մկօն սթափւեց և հանգամանքը Փափանի նշաններից հասկանալով՝ փախաւ, թաք կացաւ: Քիչ յետոյ՝ դուռը ձռռալով բացւեց, Զատիկը լապտերը ձեռքին դուրս եկաւ և հեռացաւ, տէր հօրը զիշեր բարի ցանկանալով:

—Լո՛յս բարի, պատասխանեց վարդապետը: Յրտից ուսերը շարժելով՝ դուռը փակեց և, վազելով սանդուղքներից, բարձրացաւ մտաւ խուցը:

—Փափա՛ն, Փափա՛ն, ասաց մի քիչ յետոյ Մկօն. իջի՛ր երթանք, էլ խօ բան չը կայ: Ոտքերս սառեցան, կանգնելու ճարս հատաւ:

—Դու գնա՛ լուր տար, ես էլ շուտով կը գամ:

—Սրեկ սիրես, իջի՛ր երթանք:

—Դու գնա՛, այստեղ ուրիշ բան կայ, պէտք է քիչ էլ համբերել:

—Ե՛ս էլ չեմ գնալ:

Փափանը ցրտից կզակները զընգզընգացնելով դողում էր. բաց հետաքրքրութիւնը չէր թոյլ տալիս ցած գալու, անդադար ծակից ներս էր նայում: Վարդապետը վեր գալուց յետոյ՝ կողենքը սարքեց և ծալքի ետևի գաղտնի պահարանից մի ծանր երկաթապատ սունդուկի դուռը բացեց և արկղիկներից զանազան թղթեր ջոկեց: Այդ թղթերը մի աս. մի կարդալուց յետոյ, մի թղթի վերայ մի քիչ գրեց, ջնջեց և վերջապէս սկսեց նամակը գրել: Փափանը՝ զգալով որ մի ուրիշ հետաքրքիր բան էլ տեսնելու կամ լսելու չէ՝ պատուաւ իջնելու: Այդ բուպէին վարդապետը զլուխը քորելով սկսեց պրտպրտալ: Փափանը ոյժն ամփոփեց քիչ էլ սպասելու, ու ցրտի



սաստկութիւնից սազի նման երբեմն աջ ոտն էր բարձրացնում, երբեմն՝ ձախը: Վարդապետը թիկնաթոռի վերայ տարածւած, գլուխը ետ գցած, աչքերն դէպի երկինք յառած, ուրախութեան փայլը դէմքի վերայ՝ զոռաց:

—Այս տարի միւս տարիներից մօտ հինգ հարիւր ոսկի աւել:

Փափանք համարեա թէ լեզուն կապւած՝ գլուխը ձիւնի վերայ և Մկոյի ուսին կրթնած՝ վազէ վազ հասան Յովակիմ բէգի տունը:

### ԺԱ.

#### ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇԻԻ

Միգապատ էր հետեւեալ առաւօտը: Աշակերտները պաշարի ու գրքի պարկերը շալկած, դպրոցում օրւայ վառելիք փայտը գրկած՝ վազում էին վարժարան: Քիչ փայտ բերողը չէր կարող վառարանին մօտենալ տաքանալու, թէև տիրացուն ամեն երեկոցան աւելացած փայտը մեծ երեխաներին բարձած՝ ուղարկում էր իւր տունը: Վարժատունը մի աղայի փայտանոցումն էր, որի մէկ կողմը շարած էր նորա ձմեռւայ վառելիք փայտը: Այստեղ լոյսը կէս քառակուսի կանգուն տարածութեամբ առաստաղի միջում եղած լուսամուտից էր ներս ցոլում, իսկ ամառն ու դարունը՝ դռնից: Դիրքը ցած, նեղ և երկայն էր, վեց կանգուն լայնութեամբ, տան և երկու կանգուն երկարութեամբ և չորս կանգուն բարձրութեամբ: Պատերը չէին ծեփած և լեռան կողմից ջուրը, խոնաութիւնը ներս էին ծծւում: Գետինը յատակ էր և առաստաղի ծածքի ծակերից հողն անդադար թափւում էր: Երեխաները տանից բերած խփրների և մինդարների վերայ էին նստում, իսկ տիրացուն՝ թախթի վերայ: Բարեբաղդաբար աշակերտները քիչ և քաջառողջ կազմւածքով, առոյգ տղերք էին և անդադար ներս ու դուրս անելով՝ մաքուր օդ ծծում ու իրանց զւարթութիւնը պահպանում էին:

Երեխաները բոլորն էլ կարողութեան տէր մարդկանց զաւակներ էին, հազուադէպ, կապուստները շէնքով-շնորհքով: Ոչ մէկի տան մարաղը վարժարանի չափ կեղտոտ չէր. բաց թէ ինչի՞ ծնողները այդ մարաղի սրտերում փոած յարզի հետքերը չէին տեսնում՝ զարմանալի չէր: Որոշոց գլխով երգում, նոցա բարեբաղդութեան

Համար իրանց կեանքը զոհում և նոցա համար հազարներ, միւլք ու կայք թողնելու համար՝ մահի հետ կուռում էին. բայց նոցա մարմնի և մտքի առողջութեան մասին չէին էլ հոգում: Իրանց որդոց զարգացման ամենագլխաւոր կարիքը՝ հոգեւոր պէտքերը՝ սովորութեան համաձայն երեք տարեկան հասակից սկսում էին ծնողները՝ լրացնել՝ սովորեցնելով Քրիստոնէականը, Հայրմերը, Ողջոյնը և ուրիշ աղօթքներ: Բոլոր հինգ տարեկան երեխաները բերան գիտէին «Հաւատամքը», «Հաւատով խոստովանիմքը», «Առաւօտ լուսոյ», Սաղմոսից զանազան փոխեր և ողջ քրիստոնէական վարդապետութիւնը, միայն առանց մի բառ հասկանալու:

Տիրացու Ստեփանը, որ սլարժենում էր իւր գրավարժութիւնով, վարժ ընթերցանութիւնով (բայց առանց հասկանալու) ու զեղեցկագրութիւնով՝ առաւօտից մինչև իրիկուն սլարապած էր վարդապետի հիւրերի համար դպրիպ եփելով: Նա հայրենիքից հեռացել էր ու եկել Կ. Պօլիս տէր-Կարապետի մօտ բան սովորելու համար, որը խոստացել էր նորան դաս տալ քերականութիւն ու ճարտասանութիւն: Բայց ամիսներով մի դաս չէր կարողանում խօսել վարդապետը, — առաւօտից մինչև իրիկուն զբաղւած էր Տիրացուն էլ մի վերականգուի յուսով թողած երեխաներին շաբաթը մի անգամ չէր կարողանում դասերը փոխել: Ծնողներն էլ անհոգ, բոլորովին չէին էլ նկատում իրանց որդոց այս վիճակը: Ասիայի խորքերում ապրող ժողովուրդները շատ կարգացողին տէրտէր, վարդապետ, մնլայ, զէրվիչ էին տեսել և կարծում էին, որ սեւը ճերմակից ջոկողները միայն այդ պաշտօններին պիտի ծառայեն: Ասում էին, որ իրանց որդոց նամակ գրել, հաշիւ պահել և տոմարը կարգալ էր պէտք և այլքանն էլ իրանք կարող էին տանը կամ դուքանումը սովորեցնել: Այդ տեղ էլ ուղարկում էին, որ տանը չարութիւն չ'անեն ու զայրացնեն ծնողներին: Իսկ վարդապետը իւր կեանքումը ոտքը այդ շէմքից ներս դրած չէր:

Բացբերան տիրացու Ստեփանը, մի նւէր ստանալու փափազով, նամակի օրինակ էր գրել Յովակիմ բէգի եղբօր փոքր որդուն՝ Սրամին, Կ. Պօլիս հօրը՝ Բէգլար բէգին գրելու և ուղարկելու համար: Առաւօտը զլիսին կանգնած, տառ-տառ թելադրելով, գրել էր տալիս: Եօթ տարեկան խեղճ երեխան զողջողալով գրում էր: Մեծ ուրա-



խուժիւն էր զգում Արամը: Ութ օր շարունակ նա միւնոյն օրինակը գրել ու վարժուել էր, և այդ գիշերն մինչև լուսանալը անքուն անցկացրել: Դրում էր Արամը ճակատը քրտնած, այտերը կարմրած, մազերը ցցւած և սիրտը պինդ պինդ տրփալով: Վերջացրեց նամակը: Տիրացուն վեր առաւ, ծալեց, ծրարի մէջ դրեց ու հասցէն գրեց:

—Տիրացո՛ւ, ասաց. Արամը, բէզս պատուիրեց, որ գրելուն պէս՝ իրան տանեմ տամ, որ այս օրւայ ճամբորդի հետ ուղարկէ: Դու էլ հետս արի՛, թէ ոչ՝ շատ կը զայրանայ բէզս:

—Ա՛ւ, երթանք:

—Նտապի՛ր, երթանք:

Տիրացուն շալը վիզը փաթաթեց և դուրս եկան վարժատանից:

—Տիրացո՛ւ, տիրացո՛ւ, կանչեց այդ ըստէին վարդապետը:

—Հրամեցէք:

—Ո՞ր կողմն ես գնում:

—Բազար պիտի երթամ:

—Այս նամակները տար ու Սաղումեանին տուր. ասա՛ իրան, որ անցեալ տարւայ պէս տանի ու տեղնուտեղը տայ, պատասխանները բերէ, ինչպէս իրան էլ երեկ պատուիրած եմ: Ծոցդ դիր, չը կորցնես:

Գնացին մօտան Յովակիմ բէգի գրասենեակը: Արամը յանձնեց նամակը:

—Շա՛տ ապրիս, մեծ մարդ դառնաս, ո՛րդիս: Ուղարկեմ գիրդ ու Բէգլարին էլ գրեմ, որ քեզ համար ոսկեթելով բանւած շորեր առնէ և ուղարկէ: Այս ասելով՝ անդուկը բացեց, Ազգէզ ամիրայի կտրած հինգնոցներից մի հատ հանելով Յովակիմ բէգը տւեց տիրացուն:

—Գնա՛, գնա՛ տիրացուի հետ տուն, աչքի՛ս լոյսը: Տիրացո՛ւ, լա՛ւ պահպանիր երեսին: Գնացէ՛ք:

Դուրս եկած ժամանակը աթուակալը տիրացուի ականջին մի բան փսփսած: Տիրացուն շեղեմուած. —Արա՛մ, ասաց, այս նամակները այն խանութը տար ու կնքահօրդ տուր, ես հիմի կը գամ:

Արամն ևս ցանկանում էր Սաղումեանին տեսնել և բերանացի մի երկու խօսք հօրը ապսպրել: Նամակները պալտօյի գրպանը

դնելով՝ վազէ վազ դնաց: Շա՛տ, շա՛տ զարմացաւ Սերովբէ աղայի խանութը մտնելիս՝ զրպանում նամակի մէկը չը գտնելով: Շփոթւեց երեխան, բայց բարեբաղդաբար մեծ բազմութիւն կար, որոնք խօսակցութիւնով զբաղւած լինելով՝ չը նկատեցին:

—Կնքահայր, ասաց Արամը, հօրս ասա՛, որ ուղածս նարեկն ու քերականութիւնը շուտով ուղարկէ. թէ դու չես ուշանալ՝ հետդ բեր, չը մոռանաս, նայի՛ր, ետեւ հետդ կը խռովիմ: Այս նամակն էլ տար:

—Շա՛տ բարի, սանի՛կս, ես կը բերեմ: Այս ասելով՝ նամակն առաւ ու միւս նամակներն մէջ դրեց:

Արամը մի քիչ սպասելուց յետոյ, տիրացուին խանը (Կարապետ) թողած՝ իրանց ծառայ Փափանի հետ գնաց տուն: Նամակը Արամի պալտօյի քանդւած զրպանից ընկաւ խորը և երկու տարի այդտեղ մնաց: Մի օր պալտօն կարկատանի համար քանդելու ժամանակը մտայրը գտաւ, որի ձեռքից անմիջապէս խլեց Արամը: Նամակի հասցէն կարդալով, ճանաչեց տէր-Կարապետի գիրը: Այդ ժամանակ Կ. Պօլսում էին ապրում Մելիք-Ղարաբեղեանները և Արամն արդէն կարողանում էր կարդալ ու հասկանալ Ֆրանսերէն: Հասցէի վերայ հայերէն և ֆրանսերէն գրած էր՝

«Առ վերապատելի

Հայր Պատկալ Դը Բուա.

Ղալաթիա, Ճիզուրիթներուն եկեղեցուն խուցը»:

Արամը դողաց: Ուզում էր պատուել ու կարդալ նամակը, բայց վախենում էր ծնողներէրը: Առանձնացաւ դիտող աչքերից, զգուշութեամբ պատռեց ծրարը և միջից հանեց նամակը: Բայց տարաբաղդաբար նամակը գրած էր իտալերէն: Միայն տառերն ու թւանշաններն էին նորան հասկանալի. շատ բառեր գիտէր, բայց դոքա միտք չէին արտայայտում: Արամը զգաց, որ դա մի պէտքական նամակ էր. ծնողներից թաքցնելու և չը կորցնելու համար՝ դասագրքի կողքը ձեղքեց և մէջը դնելով շրջեց: Հայր Դը Բուայի հասցէին գրած նամակը հինգ տարի էլ այդտեղ բանտարկւեց: Երբ Արամը սկսեց այդ լեզուն էլ կտորատել, դուրս հանեց՝ ու կարդաց: Բայց այս



անգամ այնքան զգուշութեամբ ծալեց և այնպէս լաւ պահեց այդ պատմական գիրն, որ տեսնողը կարող էր կարծել թէ՛ այդ Բումէլի երկաթուղու 600,000 Ֆրանկ վաստակած տոմսակ էր:

Ահա նամակի ձիշդ թարգմանութիւնը.—

«186.. թ., հոկտեմբերի 5-ին, Կ.

«Աերապատելի հայր իմ

«Հ. Պասկալ Դը Բուա.

« Անցեալ ամսու նամակիս պատասխանը ստացայ. տեղեկացայ,  
« որ ուղարկածս երկու հարիւր երեսուն ոսկին Բէզմէզեանից ստացել  
« էք. Ձեր անդորրագիրն էլ ստացայ: Յուսով եմ, որ Ս. Ռ. ջանքերն  
« ապարդիւն չեն և ամեն կողմից յաջողութեան աւետիսներն ուրա-  
« խութեամբ իրար ետեւից ստանում էք: Ձեզանից խնդրած էի, որ  
« միաբանութիւնից հայախօս մինը աշխատէիք տեղաւորել այս թեմի  
« մէջ, որին անմիջապէս իմ թախանձանքներով կը տեղաւորէի Մ.-ի  
« հովւի պաշտօնում: Գիտէք, բաւական նշանաւոր տեղ է, Մութա-  
« սարի՛ք է նստում, ժողովուրդը յաջողակ է և շրջապատը հարիւր ութ-  
« սուն մոլորեալների գիւղ ունի: Ս. հօտից տասն և հինգ տուն կայ  
« քաղաքում և մի քանի գիւղերում արծարծւում է եկեղեցւոյ  
« կայծերը: Թէ քարոզիչներ ունենանք՝ շատ շուտ կարելի է տարածել:  
« Դոքա ունին մի անուս ծեր ու թմրած ամուսնացեալ քահանայ՝  
« վաթսուն տարի առաջ Մուսուլում ձեռնադրւած, որը պատիւ չէ  
« բերում վիմ ի աշակերտներին: Մի քանի անգամ այցելեցի ու  
« զայրացայ. «հունձք բազումք են և հնձողք սակաւք»: Խնդրում  
« եմ, մի ճարտար մշակ ուղարկէք: Մահմէդականներն շատ սիրով են  
« վարւում և Միւթթին՝ իմ խնդրքիս համաձայն՝ ամեն ժողովին  
« կանչել է տալիս քահանային, որը սակայն բարձր Դունից արտօ-  
« նագիր չ'ունի: Մառացողները մեղրամովից կակուղ խալմներ են:  
« Հայ աշակերտներ շատ ունինք միաբանութեան մէջ, մէկին ձեռ-  
« նադրել տէք և ուղարկեցէք: Խուլ տեղ է և վիճակներս ար-  
« ցիւնաբեր:

« Ինչպէս Ձեզ յայտնի է, զառամած թեմակալը տեղդ է գտնւում:  
« Պաշտօնը կատարում է մի գեղջուկ, որը նշանակութիւնը կորցրել է  
« ստորադրեալների առջև: Ինչպէս իմանում եմ, նախագահը մտադիր

« Է մէկին ընտրել ու ձեռնադրել. բայց յարմար ոչ ոքի չեն դանում:  
 « Թեմիս մէջ եփւած մէկը չ'ունին, Կ. Պօլսեցի էլ տեղացիք չեն  
 « ցանկանում: Թեմի հօտը մի քանիաների համար խնդիրք տւեց,  
 « բայց Հասունին դուր չ'եկաւ: Յուսով եմ, որ կ'աշխատէք Ս.  
 « Ո.-ից գործունեաց, երկիրն ու ժողովուրդը ճանաչող, բարքերն ու  
 « բնութիւններն ուսումնասիրած մէկն ընտրել տալու: Այդտեղ աւե-  
 « լի հեշտ է գործը կարգի բերել, քան թէ Հռոմում: Լուի-Նապո-  
 « լէօնի դեպանի մի խնդիրքը շատ մեծ ազդեցութիւն ունի Հա-  
 « սունի վերայ, որը Ս. Ո. համար չի խնայիլ: Աթոռը տեղիցդ ե-  
 « ղած առաջարկութիւնները մերժելը դժւար է համարում: Ներե-  
 « ցէք, որ կրկին ու կրկին անգամ Ս. Ո. տարածման համար պար-  
 « տաւորեալ ձեզ յիշեցնում եմ: Միշտ ձեր ստորադրեալն և հլու  
 « հպատակը լինելս Ձեզ քաջ յայտնի է: Այս խոնարհ առաջարկու-  
 « թիւնները թողնում եմ Ձեր բարեհապեցողութեանն ու կամքին:

« Մի վերջին խնդիրք ևս: Սորանից չորս տարի առաջ, մեր  
 « Ընդհանրականը Աթոռից ինձ գրած էր, որ, թեմիս թեմակալի  
 « ընտրութեան ժամանակ, հանգամանքներն գրաւոր իրանց ներկա-  
 « յացնեմ: Դուք ի՞նչպէս էք հրամայում. Ձեզ գրեմ ու դուք իրան  
 « հաղորդէ՞ք, թէ իրան գրեմ ու Դուք աչքից անցնելուց յետոյ՝ ու-  
 « ղարկէք:

« Ահա ներկայացնում եմ Ձեզ սոյն տարւայ հաշիւը:

Մ Ո Ւ Տ Ք.

Օ. Լ.

« Օ. դաւառի քարտուղար Միւնիր Էֆէնդու միջոցով  
 « մահտեսի Յովհաննէս Խաչատուրեանի անիրաւ պահան-  
 « ջը քիւրդ Աբդի-Բէգից ոչնչացնել տալով՝ մեզ հասաւ  
 « վարձատրութիւն երկու հարիւր յիսուն ոսկի: (Միւնիր Է-  
 « ֆէնդիի Մէճիդիէ նշանը ուշացրիք: Պատրիարքարանից  
 « թախանձել տւէք, որ շուտ ուղարկել տան): Սեպտեմբերի  
 « 20-ին . . . . . 250

« Տեղիս Վաճառականական Ժողովի նախագահ Աբդուլ-  
 « լահ Էֆէնդիի աշխատութեամբ Ձմիկեանի և Աբաճեանի սը-  
 « նանկութեան գործի մատով հարիւր ութսուն լիրայ: 13  
 « հոկտեմբերի . . . . . 180



- « Մահտեսի Թումանեանի կտակի կատարման և գործադրման աշխատութեան վարձ երկու հարիւր ոսկի: 18 հոկտեմբերի . . . . . 200
- « Գասպար և Կարապետ Տէր-Ներսէսեանների Մեսրոփ Տէր-Ներսէսեան Այվազեանի հետ հարազատ եղբայրութեան և հօրից մնացած կարողութիւնը Մեսրոփի իշխանութեան տակ մնալու համար դուրս տւած վկայականի համար քառասուն ոսկի: 27 հոկտեմբերի . . . . . 40
- « Քուրդ Խանայիլ բէգի որդու Խալիլի մարդասպանութեան գործի մասով Տէր-Մափապէլեանի ձեռքով հարիւր երեսուն լիրաց: 20 նոյեմբերի . . . . . 130
- « Մուրադ բէգի աղջկան Գիւլիւզարին, որ փախցրած էր Ջաֆար բէգը, հօրը վերադարձնելու և Ջաֆարին եօթը տարի Միդիլի աքսորելու համար՝ հարիւր լիրաց: Նոյեմբերի 27-ին . . . . . 100
- « Ալի-Բաչրախտարից մահտեսի Սիմաւոնի աղջկանը Գայանէին ազատելու և ծնողներին ու քրիստոնէութեան զիւրկը վերադարձնելու համար՝ իննսուն ոսկի: 25 յունւարի . . . . . 90
- « Մուստաֆայ էֆէնդիին Թ. գալմազամութեան պաշտօնին հասցնելու համար սարաֆ Պետրոսի ձեռքով՝ հարիւր ոսկի: 20 մարտի . . . . . 100
- « Հ. զալի գալմազամ Մուհամէդ բէգի վերայ քննութիւնը ծածկելու համար Տէր-Մկրտչեանի ձեռքով՝ հարիւր չիսուն լիրաց: 15 ապրիլի . . . . . 150
- « Անթիկաներից Դաւթի ձեռքով հաւաքած հարիւր ութսուն լիրաց . . . . . 180
- « Միանւագ կոյր Հաֆիդի ձեռքով՝ երկու հարիւր լիրաց: 200
- « Հազարեանի ներկայ թւականի աշարի գործի հաստատութեան մասով, որ Կ. Պօլսում Գաթրեանի ձեռքով կատարւեց, երեք հարիւր չիսուն լիրաց: 25 օգոստոսի . . . . . 350

Գումարն է հազար ինն հարիւր եօթանասուն լիրաց . . 1970

Ե Լ Ք .

Օ. Լ.

|                                                       |     |
|-------------------------------------------------------|-----|
| « Տանա ծախքը . . . . .                                | 120 |
| « Շորեր և կահկարասիք . . . . .                        | 60  |
| « Երկու նորադարձ աղքատ ընտանիքի տան ծախսը . .         | 30  |
| « Մօլլաներին, զերվիչներին և տէրտէրներին շորեր, կօշիկ- |     |
| « ներ և ալյն . . . . .                                | 50  |
| « Մառաջողներին նւէրներ բերել տալու համար .            | 60  |
| « Քաղաքի աղքատների տները ուղարկւած զանազան ու-        |     |
| « տելիքներ, հագնելիքներ և աշնան կարիքներին . . . . .  | 30  |

---

Գումարն է երեք հարիւր յիսուն լիրայ . . . . . 350

« Բէզմէզեանի կօնտօրի ձեռքով Ձեզ ուղարկւած . . . 1620

---

« Գումարն՝ հազար ինն հարիւր եօթանասուն լիրայ . . 1970

« Այս տարի փողերը ժամանակ ժամանակ այստեղ մնալով, քա-  
 « ուստուն ոսկի շահ է ստացւած, որոնք տօներին աղքատներին բաժա-  
 « նելու մտադիր եմ:  
 « Ձեր ամենահնազանդ ստորագրեալ՝

Հ. ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՏՅՈՆ»

(Կը շարունակւի)



## Օ Ա Զ Ի Ս

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Մենք գընում ենք... բայց դեռ մօտ չէ ցանկալի մեր հեռաստան.  
Մենք յոգնած ենք և այրւած ենք, պաշտօնական ենք մենք սաստիկ.  
Մենք գընում ենք... բայց դըժուար է, աւագոտ է մեր ճամբան.  
Վայրենի է շրջակայքը, ամայի է և լըռիկ:

Բայց այնտեղ, ուր մենք գիմում ենք թառանչով և անհամբեր,  
Մեզ քարշում է; գըրաւում է դիւթական մի տեսարան.  
Բացւելու են մեր սըրտերը, փըշրւելու են շըղթաներ,  
Որ կապել են, կաշկանդել են մեր թըռիչքըն առնական:

Անոյշ բոյրըն ու զով հողմըն փըշրւելու են մեր դէմքին,  
Թարմ ծառերըն յըղելու են մեզ ողջոյնը սիրային,  
Կարկաջով էլ հոսելու են առւակները պաղպաջուն,  
Եւ իւր գիրկը բանալու է սիրեցեալ մեր բընութիւն:

Այն միտաժ չէ, որ քարշում է. օգուժը չէ նա կանգնած.  
Այլ օազ է—իրական է հըրապոյրըն ալդ անուան:  
Տեսնելու ենք, ո՞վ Աստուած իմ, մեր աշխարհըն աւետեաց,  
Հասնելու են մեր ըղձերը և մեր ուխտը կատարման.  
Թէ կարօտը մեր սրտումը՝ լինելու ենք նահատակ,  
Եւ աւազ է ծածկելու մեզ, ողորմելի մեր դիակ:

# ԳԱՂԹԱԿԱՆԻ ՊԱՏՄԱԾԻՑ

ԱԼԻՔԵԱՆԻ

(նւէր Աւերիկա դաղթողներին)

Պատրաստուում էին մեր բոլոր գիւղեր  
Զըւել գաղթելու հեռաւոր կողմեր.  
Ես էլ զբաղւած միւսների նման՝  
Վերջացնում էի գործեր զանազան,  
Մեծ ճանապարհի համար հարկաւոր  
Հաւաքում էի սարք ու կարգ բոլոր:

Բայց շատ էր ցաւում իմ սիրտ ու հոգին  
Եւ ուրախ չէի ես իմ արածին...  
Ինչպէս ես թողնեմ իմ տարած տեղեր,  
Ինչպէս մոռանամ մեր ձոր ու սարեր.  
Տանջւում էի խիստ ցերեկ և գիշեր  
Ողբում լալագին մեր բողբոջ, մեր օրեր:

Ձերմ համբոյր տալով երկրիս պապական՝  
Ես հարցնում էի ինքս ինձ շատ անգամ.  
Գաղթեմ հեռուներ թէ նստած մնամ,  
Ինչպէս այս ցուին անեմ լաւ դարման.  
Տանեմ զրկանքներ իմ բնիկ երկրում,  
Թէ հանգիստ ապրեմ խաղաղ աշխարհում:

Վերջին օր գնացի մեր հանգստարան,  
Ուր թաղւած էին հայր, մայր, ազգական.  
Գերեզմանների տուաջ չոքեցի  
Եւ արտասուքով նոցա գոչեցի. —



Մի ելք ցոյց տրւէք, ո՞վ փորձւած ծերեր,  
Երազ-տեսիլում տրւէք խորհուրդներ:

Եւ երազ եկաւ, երազ սարսեցնող,  
Որ միշտ յիշելիս ազդում է ինձ դող.  
Երևաց ծերուկ իմ հայրը սգւոր  
Եւ ասաց ահեղ ձայնով զօրաւոր.  
«Մի թող դու, որդի, քո ծնած տեղեր,  
Որ կեանք են տւել մեզ ամբողջ դարեր:

Յաւ ու տառապանք մենք էլ ենք տեսել,  
Անգուլթ տանջանքից հալումաշ եղել.  
Այդ ո՞վ է կարող համարձակ ասել՝  
Թէ լաւ վախճանի կարող էք հասնել.  
Ո՞վ է մեր կեանքի գաղտնիքն իմանում,  
Հեռու ապագան ուղիղ գուշակում»:

Ջարթնեցի իսկոյն սաստիկ սարսափած,  
Մնացի ինքս ինձ՝ իսպառ շւարած.  
Տեսնում եմ կնկաս շոքած աղօթում,  
Մեր տան պատերը լիզում համբուրում.  
«Չ'գնանք, սիրելիս», ասացի նորան.  
Իսկ նա չը տրւաւ ո՛չ մի պատասխան:

Արդէն ուշ էր շատ և միայն իզուր  
Մեր ցաւած սրտեր խոցում էինք սուր. —  
Ժամանակ չ'կայ, անցնում է գիշեր,  
Պէտք է վերկենալ, պատրաստել սալեր...  
Աչքերս սրտսրած, գլուխս տրաքւում,  
Ինքս էլ չ'գիտեմ թէ ինչ եմ անում...

Գիւղում զարթնեցին, սալեր ճռւացին,  
Գոռում զոչումներ օգը թնդացրին.  
Ջերմ համբուրեցի մեր որբ խեղճ տնակ,  
Իմ ձեռքը առի գաղթական մահակ.  
Պատրաստ էինք մենք. սալերս հանեցինք՝  
Եւ նշանակած տեղը քշեցինք:

## Յ Ե Յ Ե Ր

Վ. Է Պ

Պ Ե Ր Ճ Պ Ռ Օ Շ Ե Ա Ն Յ Ի

(Շարունակութիւն և վերջ 1)

**Ի Ե.**

Ն Ո Ր Է Ն Դ Է Պ Ի Վ Ա Ն

Դիշեր է. մի շատ մութն և ականակիր գիշեր, ձմեռուայ այն աղջամղջուտ և ծանր գիշերներնց մէկը, որի համար ժողովուրդը սովոր է ասել՝ մահ մանածողն աշխարհքի վրայ թևերը փռել է: Սուտ չէր, օդի թանձրութիւնը ամբողջ 0. գիւղացւոց սրտի վրայ փթանոցի նման ծանրացել, նստել է. կարծես՝ ողջ գիւղը մի գերդաստուն լինի և այդ ընտանիքի ամենասիրելի ու պիտանի անդամը հէնց այսօր կեանքն ու արեւը քեզ է տուել և բոլորի աչքիցն այնքան արտասուք է թափել, որ արտասունքի պարկերը դատարկուել են և աղբիւրակները չորացել. կարծես այնքան են զլիններին վերհասել, որ սկաւառակներում ուղեղի փոխարէն կապար է լցուել, կարծես այնքան են դուացել, որ կոկորդում ձայների թելերը կտրատուել են, էլ չեն գործում, որ մարդիկ իրարու միտք հաղորդեն:

Բաւականին գիշեր է անցել, բայց ոչ քնողն է քնել ինչպէս հարկն է, ոչ արթունն է բաւականութիւն ստացել. քնածները անհանգիստ երազների մէջ են խորդում ու խեղզուում, արթունները ջարդ-

1) Տե՛ս «Մուրճ»-ի 1, 2, 3, 4 և 5 համարները:



ուած, վհատուած ու լքուած՝ հազիւ մի երկու խօսք լռիկ մընջիկ փոխանակում են միմեանց հետ:

Այս ամենը դժնդակ օրուան համատարած անխորժ լուրերն էին ազդել. ո՛վ յաղթուեց, ո՛վ տարաւ, ո՛վ պէտք է իսկապէս ուրախանար ցորեկը կատարուած դէպքերից, ոչ ոք հաշիւ չը կարողացաւ տալ իրան. համայնքի մեծամասնութիւնը սրտաբեկ էր՝ անմեղ ու ազնիւ երիտասարդն ի զուր տեղը դատապարտուել էր. տանուտերի վկաների խղճերը ճիրաններն ու ժանիքները սրել էին և ծուռտուճ ստախօս տէրերի սրտերը. ինքը տանուտէր Խուզօն իւր մեծ հովանաւորի հետ աւելի իրաւունք ունէին տրոմելու, քան թէ ուրախանալու. ի՛նչ արժէք ունի նրանց այս օրուան յաղթանակը—Սամփսոնի բանտարկութիւնը և չհասի հաս ապացուցուելը, Սիսակի թըղթերի կապոցը և Գնթունու տանից խուզարկութիւնից յետոյ զուրս եկած չարագուշակ փաստերը մեծ յեղաշրջութիւն պէտք է տան տարիներով մտածած, կազմած և իրագործուելուն մի քաջ մնացած ծրագրին:

Ստո՛յգ է, ոչ Բալասան աղէն և ոչ իւրաքինք գիտեն Սիսակի կապոցի և Վանեցու զգրոցից զուրս հանած մի քանի թղթերի ու նամակների բովանդակութիւնը, բաց եթէ նրանք իւրեանց համար աննպաստ և կասկածելի չը լինէին, ինչո՞ւ ապա քննիչն իւր խուզարկութիւնը վերջանալուն պէս՝ տնօրինեց բանտարկել Տաճատ վարժապետին և ցանկութիւն յայտնեց փոխուել մի ալ տուն, ուր, իբր թէ, ըստ իւր ասութեան, ոչ ոք իրան չը խանգարէ պարապելու:

Մեծ տեղիք ունէր Վլադիմիր Նեստորիչը քննչի իւր տանից փոխուելուց և զործակալի նոր թողած իջևանը—երեցփոխ Ղազարբիճի տունը գնալուց յետոյ՝ կրճտել ատամները МАЛЪЧИША (աչաւ երեւոյ) քննչի վերայ և Վասիլ Վասիլիչի մօտ սպառնալ, որ հինգ օր չի քաշիլ՝ այս նահանգից նրա ոտքը ինքը կտրել կը տայ:

Ի՛նչ ունէր Վասիլ Վասիլիչը Մելնիկովի օրինաւոր վրէժխնդրական յուզմունքի զէմ՝ բացի հաւանութիւն տալուց և քննչի զէմ արդար բարկութեամբ տհաճութիւն արտայայտելուց. երեկուան երեխայքն այսօր եկել են և տարիներով ծառայութեան մէջ կեանք մաշած գործողների վարկը ոտնատակ տալիս:

—Ի՛մ կարծեօք, ի պատիւ Ձեր, Վլադիմիր Նեստորիչ, ասաց

Վասիլ Վասիլիչը, քննիչը պարտական էր բազմութեան առջև Ձեզ սառը խօսք ասել յանդգնողի բերած անպէտք թղթի կտորտանքը կրակն ածել և իւր ասած անպատկառ խօսքերի համար նրան անմիջապէս բանտարկել տալ, այլ ոչ թէ մի աչքի պոչով թղթերը լուպէական զննութիւնից յետոյ՝ նրա ետեւիցն ընկնել, գնալ, երկար տարուան արժանաւոր դրազրի տունը խուզարկել և վերջը՝ նրան էլ բանտարկել, ՅԱ ՊՏՕ, ՊՐՕ ՊՏՕ?։

Այո՛, Բալասան աղի խորհրդապահ Գնթունին էլ բանտարկուած էր և այլ հանգամանքը մի հաստ ջրաղացաքարի պէս նըստել էր Մելնիկովի սրտի վերայ։

Բանտարկուած էր Վանեցին միւլնոյն յարկի տակ, միւլնոյն տանը, ուր վարժապետից երկու ժամ յառաջ մտել էր և գլուխը կախ, բայց խիղճը հանգարտ նստել Սոնայի անփորձութեան զոհ սիրելին՝ չը գործած յանցանքը վիզն առնող Սամփսոնը։

Մտել էր Գնթունին իբրեւ կալանաւոր Գիւլնազարենց խանութաներից մէկի մէջ, որ շատ ժամանակ չէր, բանտի տեղ էր պէտք գալիս. բայց նա չէր տեսնում Սամփսոնին. միւլնոյն յարկի տակն էր արդարեւ Սամփսոնը, բայց երկուսին անշատող միջապատ կար։

Հին մոլորութեան ժամանակները զիւղերումը բանտեր չը կաշին, դատաստանը շատ բաղադրեալ չէր, ծանր յանցաւորին մի երկու ժամով կոխում էին մի գոմ, կամ մի մարագ և դուռը վրէն փակում. իսկ թեթեւ, տանու գողերին՝ զիւղական տանուտէրը՝ ծերունիներին և քէթիտեղէքանց բանաւոր վճռի համաձայն՝ մի քանի ապտակ էր հասցնում, կամ մի երկու ժամ ծառիցը կապում ու բաց թողնում. իսկ հաշտարար օրէնքներից յետոյ՝ հասարակութեան տանուտէրը զիւղական դատաւորների համաձայնութեամբ մի յարմար տուն է վարձում բանտի համար։

Օ. զիւղի հասարակութեան բանտը Գիւլնազարենց դատարկ երկու խանութներն էին։

Շատ տարապալման վճիռ էր կաշացրել այս անգամ քննիչը, տանուտէր Նուրոյին էլ յետ էր կանգնացրել պաշտօնավարութիւնից. այդքանն էլ բաւական չէր, իր սեպհական տանը հրամայել էր ինչպէս կալանաւոր մնալ այս գիշեր, իսկ տանուտէրի օգնականին բա-



ցարձակապէս պատուիրել էր երկու պահապան բանտի դռանը դնել՝ մէկն էլ տանուաւորի փողոցումը շրջեցնել:

Գիշերից բաւականին անցել էր. Մորփէոսի շաղ տուած խաշ-խաշի փոշին արդէն իւր ազդեցութիւնն արել էր Ս. գիւղի բնակիչների վերայ. թշուառ Գալ-ափուն էլ իրանից աւելի անբազդէ կնոջ հետ լացել, գլխները կոծել էին, և շորերով նստած տեղը՝ նշրել, ննջացել. բացք քնի մրափեցնող Աստուածը կամ լաւ չէր տեսել, կամ չը տեսնելու էր տուել մի քանի հոգու, որոնց աչքերից քունն իսպառ փախել էր:

Ահա միաժամանակ՝ բոլորովին զուգադիպութեամբ՝ երկու տանից դուրս եկան երկու հոգի. նրանցից մէկը դէպի աջ փողոցը թեքուեց, միւսը՝ դէպի ձախ. նրանք իրար չեն տեսել, մոլթը խիտ է: Մենք չենք կարող նշմարել երկու խորհրդաւոր գիշերաշրջիկների դէմքն ու հագուստը, սակայն եթէ նրանցից մէկին ծրագի լուսով մի տեղից տնողէինք, կը տեսնէինք, որ լացն ու երկացն դաշոյնի կոթի վերայ փայլում են երկու արծաթեայ բևեռազլուխներ: Միւսի մասին աւելորդ է հետաքրքրուել, նա ոտով գլխով մեզանից անընկատելի մնաց:

Անյայտ անձնաւորութիւնները զանազան խտտորնակ փողոցներից դուրս եկան Ս. գիւղի ծայրը և մէկը «Եօթն եղբօր» կոչուած գերեզմանների կողմից՝ միւսը կիր աջրելու մեծ հնոցի տակից մօտեցան մի շինութեան. այսպէս ասել՝ մէկը հիւսիսից և միւսը հարաւից յառաջեցին դէպի միւսնոյն շինութիւնը: Ոչինչ տուն, ոչինչ ուրիշ շէնքեր չը կային այդ միայարկ մի կարգի կառուցած սենեակների մօտ. նոքա շինուած էին գիւղից դուրս՝ Ս. գիւղի խլրամը տանող ճանապարհի վերայ:

Ահա հիւսիսային կողմից եկողն անցկացաւ շէնքի քամակը. նոյնն արեց և հարաւից եկողը, բաց սա չը ծռուեց դէպի շինութեան ետևի կողմը, այլ կկըզեց հարաւային պատի մօտ եղած ձիաքար մահարձանի տակին:

Հիւսիսայինը հանեց դաշոյնը և սկսեց շէնքի պատի վերայ փոքրիկ ոտնատեղիներ փորել:

— Լա՛ւ է, մրմնաց նա և կատուի նման պատը չանգռելով՝ վեր բարձրացաւ շինութեան կողմը և հիւսիսային բաշի վերայ բացուած ծխնելոցի ծակից զլուխը ներս խցկեց:

—Վարժապե՛տ, վարժապե՛տ, շատ հազիւ ներս թափանցեց անեկի մէջ անծանօթի խուլ ձայնը:

—Վասա՛կ եղբայր, դո՛ւ ես, մի նոյնպիսի բռն յատաստան եղաւ ներքեւից:

—Թէ կարաս՝ վերեւ արի՛, աղէն բան ա ասել, պտի քեզ հասկացնեմ:

—Ինձ վեր ելլել անյարմար է, ագնիւ Վասա՛կ, ծխնելոյզի ձանձախարիթ (հո-բ) մեր հազուստ սեցնելով՝ վաղը մեզի կը մատնէ, եթէ կ'ուզես նէ՝ ինքզ իջիր:

Վասակը, որ արդէն հասկացանք, Մելնիկովի քոջ որդին էր, ոչինչ ընդդիմութիւն չ'արաւ, քսուելով մտաւ ծխահանի մէջ և դժուարութեամբ իջաւ շինութեան ներսը, որը, ինչպէս տեսանք, բանտն էր:

—Պահապաններ չը նկատեցի՞նք քեզի, հարցրեց կալանաւոր Վանեցին:

—Մեռլի պէս քնտաած են չարգախի ծածկի տակ. մին ուզեցայ մօտենամ, ձեռս կոխեմ, ջիբներիցը բանտի բալնիքը հանեմ, բաց անեմ, դռնովը տուն գամ, մին էլ սիրտ չ'արի, ով գիտայ՝ որի ջիբին ա:

—Որքան մենք լսեցինք, Գասպար առաջարկեց Շամօյին պահել բանալին:

Թողնենք Մելնիկովի երկու հաւատարիմներին խորին խորհրդակցութեան մէջ, մենք անցնենք բանտի հարաւային պատի միւս կողմը և հետեւենք մէկէլ անծանօթին:

Երկար ժամանակ անցայտ անձնաւորութիւնը նստած էր դամբարանի մօտ. նա ալլալուած էր, նա չէր կարողանում սրտի տըրտիք հանգստացնել:

Երեւում է, որ անծանօթը Վասակի նման քաջասիրտ չէր, մի տեսակ վստահութիւն, մի աներկկիւղութեան ոյժ, կարծես, պակասում էր իւր կեանքի մէջ առաջին անգամ այսպիսի համարձակ քալ անող էակին:

Խաւարի թանձրութեան մէջ նա մի քանի անգամ շուրջը նայեց, ամեն մի զերեզմանաքար, ամեն մի զիմացի այգիների ծառի կատար մի մի հսկաներ, մի մի՛ գլուխ երկնքում, ոտները գետնքում՝ ալք (շաջ) էին թուում նրա աչքին և նա զողում էր:



Յանկարծ դէպի գիւղի գլխի բլուրը յետ նայած ժամանակ՝ ամպալից երկնքի պատռւածքի միջից՝ սակաւաթիւ աստղերի ցրացրած աղօտ լուսով փայլին տուեց բլրի լանջի վերայ դարերով յառաջ շինուած մատուռը:

Անճանօթը երեսը դէպի աւանդատունը դարձրեց և երեսին խաչակնքելով՝ մի երկու աղօթք մըմնջաց:

— Ով կոնդի (Քլոք) գլխից հուրհրատող (փայլող) սուրբ մատուռ, քեզ եմ ապաւինել, դու էս տաք ջրին մի հով ջուր ածես, դու իմ սիրտս պնդացնես:

Անշուք տաճարը սուրբ Սարգսի նման ոգևորեց ջերմեռանդ հաւատաւորին:

Նա վեր կացաւ և յառաջեց դէպի բանտի դուռը:

Զգոյշ էին նորա քայլերը, բաց լստահ: Նա մօտեցաւ երկու քնած պահապաններին և շատ հեռաքրքրութեամբ դիտեց նրանց դէմքերը. երեւի պահապաններից մէկին էր պոռուում՝ նա, որ գտաւ և ամենամեծ զգուշութեամբ շարժեց՝ ականջումը փափալով նորա անուներ:

— Շամօ ջա՛ն, Շամօ՛, կանչեց նա անխելի կոչիւնով:

— Ը՛...ը՛...ը՛...

— Վեր կա՛ց:

— Ո՞վ ես, աչքերը ճմռելով՝ չիմացած թէ ո՛ւր է հարց տուեց Շամօն:

— Հետո արի՛, ասաց վերջինս և նորից անցկացաւ բանտի հարաւային պատի կողմը, նստեց նախկին դամբարանի վերայ:

Շամօն անգիտակցաբար հետևեց:

— Աղջի Սօնա՛, դու գժուել ե՞ս, էս կէս գիշերին, էս անվերի վերի (փայրի) անապատումն ի՞նչ բան ունիս, ճանաչեց և հարցրեց պահապան Շամօն:

— Շամօ ջա՛ն, անումիդ մեռնի քո Սօնէն, ինձ տուն տար Սամփսոնի մօտ:

— Աղջի՛, գետինը չե՞ս մոնում, ուղում ես աշխարհքի մէջ թուք անես քո հօրն ու մօրն է՛լ, ձեր աղդ ու ընտանուն է՛լ. էդ ի՞նչ ես արել, էդ ի՞նչ ես ասում:

— Արեւիդ մատա՛ղ, Շամօ ջա՛ն, թէ մի մազի չափ սիրում ես

քո քեռու աղջկանը՝ խնդիրքս կատարի, ես քեզ համար քեռու աղջիկ չեմ էլել, օխտը հալալ քուեր համ եմ տուել:

—Ախար՝ դու ո՛վ, Սամփսոնն ո՛վ, դեռ մի դարդակ խօսք ա հօրդ տուածը, էն էլ էսօր խալխի միջին ասել ա, որ ըստուց յետոյ քեզ գետը կը քցի ու Սամփսոնին չի տալ:

—Ես էլ չեմ ուզում Սամփսոնին, Շամօ ջա՛ն, բայց սրտումս դարդ կը մնայ, թէ որ երկու խօսք ունիմ ասելու՝ չը կարենամ իրան հասցնել:

—Դու ինձ ասա՛, ես Սամփսոնին կը հասցնեմ:

—Ձէ՛, քեզ մատա՛ղ, իմ լիզուովս պտի ասեմ, կենտ երկու բերան խօսք:

Շատ դիմադրեց Սօնի հօրաքրոջ որդի Շամօն, բայց վերջը սոխպուեց բանալ բանտի դուռը և ներս թողնել Սօնային և դրսևից դուռը փակել:

Մի թոյլ հազ միայն Սամփսոնի կողմից յայտնի արաւ նորա արթնութիւնը:

Սօնան յառաջեց դէպի հազը՝ նախապէս մեղմ արտասանելով մեզ քաջածանօթ հնձանաբազի սուլման նշանաբանը:

—Բ՛ս...ս՛...ս՛...:

—Բ՛...ս՛...ս՛...:

Վերջին ըս հնձման վերայ մի հարցական շեշտեց Սամփսոնը:

—Բ՛ս...ս՛...ս՛, հետեւեց դրական պատասխանը աղջկայ կողմից:

Սամփսոնը վեր թռաւ, կուռը բռնեց և նստացրեց իւր տակը փռած չոր եղեգնեայ խիրի վերայ:

—Դու աչտտե՞ղ, հոգի ջա՛ն, և ի՞նչպէս:

—Հօրաքուերս տղայ Շամօն տուն թողեց. լռի՛ր, թող հանգըստանամ, տես իմ հալը, ասաց Սօնան և բռնեց Սամփսոնի ձեռքը, պինդ սեղմեց իւր կրծքի վերայ:

Մրրկածուփ լծի լեռնացած ալիքների նման ընդհարում էին աղջկայ սրտի կափարիչներն իւրեանց ափուռքին:

Սամփսոնը հնազանդեց. նա լռեց:

—Աստուած՝ իմ, էս ի՛նչ թրպպոց էր, շշնչաց Սամփսոնը և ականջը դեմ տուեց իւր թիկնած պատին:



Արդա՛րեւ, պատի միւս երեսին, բանտի մէկէլ կիսումը, մի թեթեւ թրխկոցից յետոյ՝ լսուեցաւ խօսակցութիւն:

— Լսիր:

Երկու սիրահարները բերանաբաց ականջ էին դնում:

— Դու կ'ասես, Վասակ եղբա՛յր, թէ քեզ մեր պերազնիւ պաշտպան Մելնիկեա՞ն ուղարկեց մեզ մօտ:

— Հա՛, հէնց քեռիս ինքն իր բերնովը հրամայեց, որ գամ քեզնից իմանամ:

— Այո՛, ազնուաւիպ տէր՝ Բալասան աղան կը ցանկաց գիտել, թէ ի՞նչ թղթեր էին ատելի Սիսակին բերածներ, որք տգէտ ամուսնոյս անփորձ յիմարութենէն անցեր էին երեսփոխան Ղազարի կնոջ ձեռք ու անտեղէն զիպուածով մեր ոտխի վրիժառութեան փաստեր դարձած. այո՛, կըսես մեր քաջ հովանաւորին, թէ ինչպէս այն թղթեր, նմանապէս և շատ ուրիշ աներկբայելի ապացոյցներ խուզարկութեան ատեն այս երեկոյ անցան քննչի ձեռք. ես այժմ մի առ մի չեմ կրնար բացատրել, զրելու ձեռնհաս միջոց ալ չունինք, բայց փութա՛յ յայտնել իրեն, որ եթէ ան թղթերն այս գիշեր մի տեսակ չ'առնէ քննչէն և չ'այրէ, մոխիրն ալ հողմերու չը յանձնէ, զմեզ, զտանուտէր և ինքը զինքը մեծապէս պիտի վնասէ, մեր ռիսքիմներ վաղ առաւօտ կ'արդարանան և այս յիմար անձնադաւ Սամփտոն, որ չըրածը բերանովն անտեղի խոստովանեցաւ, պիտի ազատի, թշնամիք պիտի հրճուին և նոյն ինքն նախկին տանուտէր ամբաստանեալ Յարութիւն Գոմշակերեանց պիտի անմեղ ելլէ ու կրկին տանուտէր վերակոչուի:

— Յաւն էլ հէնց եղաւ, որ շան տղի քննիչը քեռուս տանը չը կացաւ, դունչ ու պռունգը քեռուս վրայ կիտեց ու վեր կացաւ, զործակալի գնալուց յետոյ՝ կորաւ մութավէլի Ղազարի տանը քնեց:

— Սեւահամբոյր սանդարամե՛տք, եթէն զլիւսան վիշա՛պք, տարտարոսի՛ն զաւակներ, մենք կորած ենք, այնպէս խիստ ճշաց Վանեցին, որ Շամօն դրսից լսեց և մօտ եկաւ դռանը խփեց ու հարցրեց:

— Ի՞նչ ես գոռում, վարժապե՛տ:

— Ոչի՛նչ, ազնիւ Շամի՛ր, սառն հանդարտութեամբ ներսից պատասխանեց Գնթունին, անհանգիստ երազներ զմեզ արթնցուցին:

— Ալ քեզի մնալ անհնար է, քրթմնչեց Վասակի ականջումը

գրագիրը. շուտ զնա՛ և յայտնէ մեր բարերարին: Թո՛ղ հնար մի գտնէ՛  
Վաստկը ծխնելուզի ծակովը վեր բարձրացաւ:

— Նորէն դէպի Վան. կայք, կին, զաւակ ամենայն տեղ զիւրին  
է ի ձեռս բերել, իսկ անձին ապահովութիւն, իսկ իրեն ես, իրեն  
գլուխ՝ գեր ի վերոյ է քան զամեն. «զի՛նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշ-  
խարհ ամենայն շահեսցիւ և զանձն իւր տուժեսցէ»: Դեռ ևս թարմ  
և կայտառ է մեր դէմք, սեւթոյր մեր հերք զմեզ 25-էն աւելի  
հասակ չեն ընծայեր, թէպէտ 35-էն 40-ին մէջ կը խաղայ. ամե-  
նութեք կարելի է, դրամն ի քսակ, կրկին ամուսնանալ. բնութիւն  
գեղահրաշն Վասպուրականին աղջկունք առաւել չքնաղ է կերտեր  
և բարեկազմ, քան զկապկանմանս Արարատայ: Բարեբաղդ դէպք մի  
էր տաճիկ Սալիմ բէգին իւր 150 բուբլի պարտք այսօր վճա-  
րելն, խոհեմութիւն էր մեր կողմէն խուզարկութեան ատեն 500  
բուբլիով լի քսակս ծոցս առնել. հապա 350 մանէթ գիւղական  
հարկ, որ երեկ տանուէր մեզ յանձնեց ծրարել զանձարանն առա-  
քելու և մեր զրպան մնաց, հապա 175 բուբլի տաճկահայ սովելոց  
անուամբ ժողոված նպաստ, որ զաւառէս ժողոված իմ քով, իբր, ա-  
ւանդ էր: 1175 մանէթով զկէս տաճկահայք կարելի է զնել և բո-  
լոր փաշաներ ու Գիւրգերու Շէյխեր իւր գործոյն ծառայեցնել: Յնծա՛  
անձն իմ և ուրախ լե՛ր, բազմիր բաղդին քառաձի կառք և սլացի՛ր՝  
ուր երկիր առաւել բեղմնալից կը սպասէ ճարպիկ և հմուտ վայելողի,  
քչփչաց ինքն իրեն Վանեցին և կապկի արագութեամբ վառարանի  
ծխնելուզից դուրս մագլցեց, պատն իջաւ ու քայլերն ուղղեց ոչ  
դէպի իւր տունը, այլ իւրամը ցած գնաց և ճաճկաստանի ճանա-  
պարհը բռնեց:

Հա՛, մոռացանք, իւր տան հանդէպ հասած ժամանակ՝ Գնթու-  
նու ներսից մի ձայն, կարծես, թելադրում էր նրան յետ նայել, կին  
և որդի մի վայրկեան սլացան նրա յիշողութեան մէջ, բայց խոհեմ  
և կամքի տէր մարդը ժխտական մի շարժումով փշրեց սրտի շէնքը  
և սառն ու դառն հեգնութեամբ բաւ համարեց ծաղրել իւր մարդ-  
կային թոյլ յատկութիւնն ու յառաջ ընթանալ:

— Ոնց որ երևում ա, ձէնը կտրուեց, շէնչաց Սօնան, Վանեցին,  
կարծես, բուխարու ծակովը Վասակի հետ դուս գնաց:

— Զառը զնա՛յ՝ ջհանդա՛մը, Սօնա ջա՛ն:



— Ինձ համար ուրախութիւնն էն ա, Սամփոնն ջա՛ն, որ դու էգուց կ'ազատուիս նրա թղթերով:

— Քանի՞ կուպէկի կ'առնեմ, ընտեղ կ'ազատուեմ, ընտեղ էլ ինձ կը սպանեմ:

— Ի՞նչ ես ասում:

— Սուտ չեմ ասում, ինձ հօ բռնիլ տուողը Վանեցու շինած սուտ թուղթը չէ՞ր. քո էս օրուայ գոմնւմն ասած խօսքն էր. դու չէի՞ր, որ ասեցիր՝ պտի հօրդ լսես, տանուտէրի հարսը դառնաս:

— Դու էլ հալած եղի տեղ ընդունեցիր խօսքե՞րս. ես մախսուս (շէփաճփ) ասեցի, որ տանուտէրի օգնականը լսի ու սխառչու մօտ վկայի, ես տեսայ նրան ներս գալուս:

— Սօնա ջա՛ն, ղո՞րթ:

— Սօնէն գլխովդ պտիտ դնա՛յ, ես եկել էի քեզ ասեմ, որ գլուխ առնես, թռչես, յոյսս մեր Շամօն էր, որ մի հնարքով քեզ բաց թողար. բայց հիմիկէց դէնը միամիտ եմ, լիսը կը բացուի, դու էլ իմ գիրկը կ'ընկնիս:

Դուռը բացուեց և պահապան Շամօն ներս մտաւ:

— Ա՛յ աղջի, հերիք ա, արի գնա՛ է՛, հիմի հընկերս կը զարթնի՝ գետինը կը մանենք:

— Ես էս ա գնում եմ, բայց դու հընկերիդ զարթնացրու, Վանեցու քամակիցն ընկէք, հէնց իմանաս բուխարու երթկովը դուս փախու, ասաց Սօնան և իւր եկած ճանապարհովը վերադարձաւ:

Մէջ գիշերին գիւղը զորդոցն ընկաւ. պահապան Շամօն ու Դասպարը մի քանի հրացանի պայթիւններով ամբողջ գիւղը ոտքի հանեցին:

Վանեցին փախել է՝ տարածուեցաւ գիւղը, բուխարու ծակովը դուրս է գնացել:

## Ի. 2.

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Հետևեալ առաւօտն երեցփոխ Ղազար-բիձու տանը քննչի հըրամանաւ՝ տանուտէրի օգնականի ձեռքով՝ կրկին հաւաքուեցին Օ. գիւղի առաջաւորները. խօսք չը կայ, այնտեղ էր և Մելիք-Բադալն և այսօր առաջին տեղն էր բռնել: Երեկ նա մի անկիւն էր քաշուել և սպասում էր, թէ մի ըտեպից, մի ժամից իրան էլ կը կանգնացնեն քննչի առաջ, բայց օրը մթնեց ու նրան ոչ ոք հարցմունք չ'արաւ:

— Հա՞, Սիսակ ջա՛ն, ասում ես՝ բանն ըտէնց փոխուե՞ց, Վանեցու տանիցն էդ լաւ լաւ թղթերը դուս եկա՛ն. մեռնե՛մ Աստծու ողորմութիւնին, հասը նհախին չի տալիս (արդարաւոր է).՝ ուրախութիւնից գիշերս քունս չի տանիլ, զրկենք աշուղ Բալանուն բերիլ տանք, սաղը քօքենք, մի քանի մեր սրտի բարեկամներ էլ կանչենք, սուփրէն բաց անենք, իմ ձեռով կոտորած՝ աղ ու սաքտեղն արած՝ զինին էլ վրէն լցրած բաստուրմէն մի կողմից շամփուրը քաշենք, տժտժացենք, մի կողմից եալլաց կանչենք, քէֆ անենք ու Բալանու ասած Քեռ-օղլուի ու Նահ-Խամայիլի հէքիաթները լրսենք, հետն էլ նոր-նոր հայաւար տաղեր ասենք, խոզի արնի պէս կարմիր և նոր կտրած պօլլմբուեալի պէս դեղին պսպղուն զինին վրէն կոնձենք, խեղճ Գալ-ափունի ցաւերն էլ մտիցը քցենք, ընչանք բարի լիսն ամեն հայ-քրիստոնի հետ մեր վրայ էլ ծագի՝ Աստծու ողորմութեան դուռը բացուի, զնանք մի տեսնենք, թէ մեր Վառչիկ խաչագող Գնթունին ի՛նչ պատասխաններ պոփ տայ սըլէստչուն:

Վերողրեալ միջոցն առաջարկեց Մելիք-Բադալը՝ զիշերուաց երկայնութեան դէմ կռուելու և իւր անհամբերութիւնն անզգալի կացուցանելու համար, երբ նախընթաց երեկոյին մթնով՝ շատ ուշ՝ Սիսակն եկաւ և Վանեցու տանից խուզարկութեան ժամանակ դուրս եկած փառտերի մասին պատմեց:

— Զէ՛, ասաց Սիսակը Մելիքին, դու լաւ կ'անես՝ սիրտդ հանգիստ՝ թեք ընկնես, քնես, որ հզուց միտքդ բաց՝ լաւ լսես քննչի հարցմունքներն ու Վանեցու պատասխանները:



Լաւ էլ քնեց Մելիքը, շատ էլ վաղ եկաւ երեցփոխի տունը, բայց Վանեցու երեսը չը կարողացաւ տեսնել. նրա քամակից ընկնողներին մինն էլ իր տղէն էր, որ զէնք ու զրահ կապած՝ գիւղի կրտսրի՞ն ջահէյների շարքումը՝ ձիաւորուել էր ու Վասիլ Վասիլիւի հետ Վանեցու քամակիցն էր ընկել:

Ձմեռուան արեւն երկու ձողաչափ բարձրացել էր, ինչպէս ասում են՝ ով օխան էլ ունէր, կերել պրծել էր, որ Վասիլ Վասիլիւն իր պալտօյի մէջ ցրտից կուշ եկած՝ մի բռունցքը դառած՝ իր ձիաւորներով տուն ընկաւ քննչի մօտ և ասաց. էդ մարդը, ինչպէս երևում է, սատանայ էր, նա հիմի զեանի տակին՝ բեհեղզեբուղի կողքին նստած՝ իր քաջագործութիւնները կը լինի պատմում, թէ չէ՝ ես Վասիլ Վասիլիւն լինիմ, մինչև Նրատի կամուրջը տեղ չը թողնեմ՝ ոտնատակ տամ, գիւղեր չը թողնեմ՝ փոթորիկ բարձրացնեմ և երկրի երեսին չը գտնեմ, էդ անհնարին է:

— Եթէ այդպէս է՝ մեր գործը տեսնեք, վճռեց քննիչը և ժողոված մարդկանց մօտ կարդաց Վանեցու տանից դուրս եկած թղթերը՝ սկսելով հետեւեալ նշանաւոր յիշատակարանից:

2ր մոռանանք առել, որ ժողովին ներկայ էր և Վլադիմիր Նեստորիչը, տանտուէր Խուզօն և երեկուան կալանաւոր Սամվատը:

— «Առաջին թերթ, առաջին տարի, առաջին երես», բարձրաձայն գոչեց քննիչը և կարդաց.

«10 սեպտեմբերի 18... ամի, Վան: Ըստ Խորենացւոյն՝ «սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանեն, այնքան ունին» Մեզի համար այս երկիր որչափ և սիրելի՝ իբրև մայրենի տնակ, բայց ապարդիւն. հողն առատ՝ զրամ սուղ, հարստութիւն՝ կենաց նպատակ, հայրենասիրութիւն՝ անոր ուղին հարթող պատրուակ, Հայրիկին յանձնարարական և ի դիւրահաւան երկիրն Արարատեան»:

«13 սեպտ. յաջող ելլը, բարի ճանապարհ, ողջամբ մնա՛, Այգեստան, մանկութեանս օրօրա՛ն...»

— Սոքա մեր գործերին չեն վերաբերում, աչքի տակով մի երկու երես անցնելով՝ ասաց քննիչը և կանգ առաւ երրորդ երեսում:

«20 սեպտ. Աղէքսանդրօպօլ, Սհաթչոնց խան. Կարուց սրբազանի յանձնարարական մեզի մեծ յոյս տուաւ, բայց տեղւոյս պաղարիւն Յաջորդ Յ. վարդապետին յանդիմանութիւն և անհիւրասիրութիւն

փոքր ինչ զմեզ կը խռովէ. եթէ բոլոր էջմիածնականք ասոր նըման խորագէտ և խոչընդակ ըլլան մեզի՝ մեր ձեռնձգութիւնք կը դժուարին: Որքան կը յիշեմ անսիրտ վարդապետին հայեացք և անոր կծու խօսքեր՝ կը քստմնիմ. ուխտաւորին, կ'ասէ, այս թղթեր պիտոյ չեն և ոչ մեզի գիմելու հարկ կայ. ահա՛ էջմիածին, գնացէ՛ք, ուխտերնիւ կատարեցէ՛ք և դարձէ՛ք: Ձեր երկիր աւելի կարիք ունի ձեզ նմանների, կ'ասէր, մեզ բաւական են մեր գործիչք: Սակայն չը գիտեմ, կը հասկնամ՝ վարդապետն, թէ մեզի համար նշանաւոր է ոչ գործ, այլ գործին անուամբ մեր քսակ:

«21 սեպտ. Ի նանիր աշխատութիւնդ, հա՛յր Յ., մենք քո խիւքթիւ, տակ գտանք մեզի հաւատ ընծայողք. կաթոլիկ քահանայի մը ծանօթացանք, զմեզ պապին երկրպագուներէ մին ներկայացուցինք, որ կ'երթայ, իբր թէ, իւր կորուսեալ եղբայր որոնելու և անոր մոլեռանդութեան շնորհիւ հինդ ուռլի—մօտ 100 զուրուշ շահեցանք և մի ժամէն Աշտարակեցւոց ուղեկցութեամբ յուղի կ'անկանիմք՝ նախապէս գնած և ծանօթացած զիւղական օրինագրքին հետ, որ զւամիկն շահելու կը նպատէ մեզ, կ'ասեն՝ կաթոլիկ հոգևորականն ևս մեր կարծածին չափ տգէտին մէկ չի եղեր, նա ևս իւր հաշիւն ունեցած է, մեր անուամբ ժողովածին կէսն իրեն է պահեր. կեցցէ՛. գիտէ գործել:»

«22 սեպտ. Աբարան: Այս գաւառ մեր երկրէ խաւար կ'երևի, կ'արժէր այս կոյր աշխարհէն օգտուիլ. բայց Աշտարակեցի ուղեկիցքս էջմիածնի շուրջ կը գերադասեն. հարկ է երթալ և այդ Աւետեաց երկրին քաղցրութիւն ճաշակել: Նաո հիւրասէր են Աշտարակեցիք, մեզ և ոչ մի ասպարէզ թոյլ տուին հետի քայլելու, իւրեանց գաւառի կ'առնեն մեզի: Ահսո՛ս, որ նախապէս իմիչք ատող յայտնեցի զիս, իւրաքանչիւր քաջափութին կարելի էր Աշտարակայ զինով զուարճանալ, ձիանց վերայ բարձած՝ անընդհատ ի վաճառ կը տանին Աշտարակեցիք գինի և օղի, ամեն բեռնակիր կ'առաջարկէ վերադարձողներուն անուշ անեւ, ինչպէս իրանք կըսեն:»

Քննիչը մի երկու թերթ ևս շրջեց և կանգ առաւ:

«23 սեպտ. Ս. զիւղ: Այս է հանգիստ իմ, ի սմա բընակեցայց, զի հաճեցայ ընդ սա: Մեր օթեան փէ՛ք յարմար է. Մելիք-Բաղալ թէպէտ հեգնարան ոմն է, յաճախ զմեզ խաչապող



կ'անուանէ, բայց մենք չը հասկնալ կը ձեռացնենք. թող ասէ, որ կու գայ՝ ծուխ իւր քթէն կը հանենք, առ այժմ երեսուն մանկանց ուսուցման վարձ և զիւղական զրազրի բեղմնալից պաշտօն մեր վարկ բարձրացոյց և այդ շատ է մեզ:»

Այնուհետև Յիշատակարանի մէջ շարունակուում էր Ս. զիւղի մէջ Վանեցու հաստատուիլը, ժողովրդի հետ իւր վարուելու եղանակը, աշխատութիւնը, նախապաշարմունքների նշանակութիւնը բարձրացնելը, իւր ամուսնութիւնը և այլն:

Այս ամենը թուուցիկ հայեացքի տակով անցկացրեց քննիչը և կարդաց.

«18... Թուական. երկրորդ տարի. 5 փետրվարի. Ս. զիւղի Քործերնիս լաւ կ'երթայ. տանուտէր Վարապետի տգիտութիւն մեզի կը նպաստէ, ինքն կ'առաջարկէ շատ քչէ շահուիլ— զարիւթս, կ'ասէ, օգտուի՛ր, ալ չզիտէ խղճուկ, թէ նոր ահա երկրորդ տարին կը սկսի մեր գալն, և այսօր մենք սովորով բաւականաչափ զրամ տուած ունինք:»

«20 փետրվարի: Քաղաք գնացինք տնային պիտոյք գնելու, կտաւեղէնք ծրարած լրագիր զմեզ գնած կտաւէն առաւել ծառայեց. Տաճկահայքին մէջ քանի մ' յիմարք ձերբակալուած են եղած, երեկ յաջողեցանք անոնց խնկութիւն ազգային նահատակութեան անուամբ այստեղ համբաւել, Խորխորունի Խորէնին կողմանէ մի նամակ շարադրեցինք և ասոնց կարդացինք, որ իբր թէ ազգին անպարտ զոհերուն ընտանիք անսնունդ մնացած են, ազգացնոց ձեռնառութիւն կը յուսացուի, Հայրիկին կողմանէ ալ Խորէնին նամակին մէջ շրջաբերականի մի մասն եղած յաւելինք, յորում Հայրիկ, իբր թէ, կ'առաքէ իւր ձեռեր ի սփիւռս աշխարհի՝ ազգասէր հայերու զթութեան փշրանք ժողովելու: Մեր հանճարեղ զիւտին սկզբնական յաջողութիւն առաւել շահաւէտ ապառնի կ'աւետէ: 15 բուբլի հանգանակեցինք և Վարուց վերայով տեղ հասուցած քարոզեցինք: Մասամբ իրաւ ըսինք, զրամ մեր քովէն ելաւ Յ. զիւղացի մաշաղի Օրուջին տոկոսով տուինք՝ վեց ամիս ժամանակամիջոցով՝ քսան բուբլի հաշուած:»

«10 մայիսի: Փա՛ւք ճակատագրոյն, մեր կարծածէն առաւել երջանիկ ենք եղած. ընդհանուր խլրտում մի կը յուզի այս կող-

մեր. Ա. Բնծայնոց զինքն գլխաւոր գործակալ կը քարոզէ ամենուրեք. այս աւուր իրմէ ստացած նամակիս մէջ ծրարեալ վկայագիր մը զիս Արարատեան լայնատարած դաշտին կեդրոններու միոյն վարչութեան մենաշնորհութիւնը կուտայ: Հունձք բազումք են և մըշակք սակաւք, կը գրէ սիրելին Բնծայնոց, հնձէ որքան ուշխմութիւնդ կը թելադրէ. ցորենին մի մաս սեպուհ շտեմարանիդ մէջ ամբարէ, միւս մաս մեզի բաժին հան, իսկ աննշան մասն ալ յարդին փոշուն հետ աչքեր խոտղելու համար խտաշունչ հողմոց բերան տալուն և տեղ հասուցանելուն մի յուլանար. երբեմնսպէս քո գործունէութենէն բարձրաբարբառ հաշիւ տալ պարտք համարիր, նուէրք և զրամք, իբր թէ, մեր Յակոբոսին ձեռօք Վեդրոնական յանձնաժողովին ուղարկած նըշանակէ. մի՛ մոռանար զՀայրիկ ցուցանել Ատենապետ կեդրոնին, անոր անուն միակ զօրավիզն է մեր քաջակորով շահագիտական ձեռնարկութեանց:»

«Խորամանկ Բնծայնոց շարունակ կ'ատէր զՀայրիկ և կը հայհոյէր զինքն, իբրև անբարեբարոյ՝ Վարագէն վանելոյ առթիւ. այսօր նա ելեր յանուն Հայրիկի դաշխարհ կը թնդեցնէ: Վնաս չ'ունի, մենք ևս չենք սիրեր զՀայրիկ, բայց ի պահանջել հարկին նոյնը կրնենք:»

«7 յունիսի: Ա. Բնծայնոց կը գրէ, թէ մի շահաւոր առևտուր սկսած է ինքն մեր նախկին ընկերաց հետ. արագածիդ ոռոսական ձևի հրացանք մեծ արժէք ունին ի Տաճկահայս, քիւրդեր հօտերով ոչխարք չեն խնայեր՝ մի հատ ձեռք բերելու: Ես, կը գրէ Բնծայնոց, հարիւրէն աւել ժողոված և Վանեցու տարազ մտած հայախօս քիւրդ Մսոյին ձեռօք Իգդիրի ճանապարհով ի Բագրևանդ հասուցած եմ. այնտեղ մեր Արտակ Պալունին կը ստանայ և քիւրդերուն մէջ ի վաճառ կը հանէ: Այստեղ երեկ, կ'ասէ, մի հատ մը ինքս վաճառեցի 25 ո. ճանապարհորդ բժշկի մը: Այժմ, կ'ասէ Բնծայնոց, հրացան և փամփուշտ խնդրել օգտաւէտագոյն կը դատեմ, քան դրամ, զի յանուն քիւրդերուն և տաճիկներուն ձեռք հարստահարեալ հայ եղբարց՝ հրացան և փամփուշտ խնդրելը տեղւոյս թեթեւամիտ զիւրահաւանաց զրգիւռը կը շառցնէ և մեր ոտաց ներքոյ հողն առաւել ամուր կընէ:»

«30 յուլիսի: Ա. Բնծայնոց կը կշտամբէ զմեզ ցարդ և ոչ մի հրացան չ'առաքելուս համար. երկիցս կը գրէ, Մսոն առ քեզ է



ուղղուեր և ձեռնունայն վերադարձեր: Հաւատարիմ աղբիւրներէ ինք լսեր է, թէ մեր կողմեր՝ մանաւանդ Ա. քաղաք՝ հայրենասիրական վառ եռանդ առաւել շատ կարելի է արծարծել, իսկ այնտեղ հրացանի և փամփշտի մեծ պաշար կայ և հեշտիւ ի ձեռս կուգայ:»

«Սիրե՛մ գքեզ, ըստ Հայրիկին, միամիտ իմ Ընծայնո՛ց, մենք արդէն քո առաջին նամակ ստացանք և անյապաղ գրեցինք ի Վան, կոչեցինք մեր եղբայր Մարտիրոս և 150 հրացան 10000 փամփշտաց հետ առանց մի վճարքի Սարիղամիշու կողմով եղբօրս ձեռօք Վարին ուղարկեցինք. եթէ Բագրեանդայ սովալլուկ քիւրդեր հայերու հօտեր կողոպտելով կարող են լաւ զին վճարել, Վարնոյ ճոխ տաճիկներ և բազմաթիւ քիւրդերու ազգապետք, որք անպակաս կը վիստան անդ, միմեանց ընդդէմ մրցելով՝ տաննապատիկ կը հատուցանեն:»

«20 Օգոստոսի...» Մարտիրոս կը գրէ, թէ ինք երկու աւուր մէջ վաճառեց հրացաններ և կը խոստանայ իւր բաժին դրամ ի Վան տանել և փութով վերադառնալ. հոգ չէ, արժանի է մշակն վարձու իւրոյ. սակայն անիծեալ Սադայէլ՝, օր աւուր տարակուսանք կ'ալեծփէ ներսս. Մարտիրոս շատ ուշացաւ. արդեօք քիւրդեր կողոպտեցի՞ն, թէ հարազատ զհարազատն դաւաճանեց: Վերջինս առաւել հաւանական կը թուի: Մարտիրոս խոժոռեցաւ, երբ վաճառքէն քառորդ մասն միայն իրեն բաժին որոշեցի. ըստ իս, կը բաւէր. բազմահմուտ խոհարարին ձեռօք պատրաստած անուշահամ կերակուր ամեն ոք կարէր ուտել...»

Այս տեղից սկսած քննիչը երկար չէր կանգ առնում երեւելի ջիւշատակարանի վերայ, նա հետեւում էր գտնել իւր գործին վերաբերեալ յարակից դէպքեր:

Եւ ահա բաւական թերթ անցնելուց յետոյ, նա կարդաց.

«18... թուականի, երրորդ տարի, 20 սեպտեմբերի: Բաղլին ժպիտ քաղցրէ աւ իսկ, գաւառիս հզօրագոյն աստիճանաւորներէն ամենազօրաւոր և ամենավտանդաւոր մեզ իւր գաղտնի խորհրդական ըրաւ, իւր բարձր հովանաւորութիւն մեր վերայ ունիլ խոստացաւ. մենք աչտուհետեւ իւր ծածկապահ դպիր և նստարն ենք:»

«18... թուական, չորրորդ տարի:..»

Քննիչը բարւոք դատեց լուծեամբ կարգալ և անցնել: Նա երբեմնապէս մի մի կէս հեգնական, կէս արհամարհական և՛ կէս յանդիմանական ակնարկ էր դարձնում դէպի Մեղնիկովը և նրա ականջին փախում:

— Վերջապէս, ներողութիւն եմ խնդրում, Վլադիմիր Նետտորի՛չ, ասաց նա, որ ես ստիպեալ եմ այս յիշատակարանից մի քանի կտորներ, որոնք ձեր պատիւն են շօշափում, իսկ մեր գործի շատ մութն և կարևոր կէտերը լուսաբանում՝ իբրև քաղուածք արտագրել:

Նա կարգաց.

«18... Թուական, հինգերորդ տարի. 25 հոկտեմ.:

«Այս գիշեր Մեղնիկով յանձնեց մեզ կնքելու իւր համար շատ չըգրուած մուրհակի դրոշմեալ թղթեր և բաւականին հասարակ գրելու թերթեր. մենք փոխեցինք նրա յանձնարարականով բազում մուրհակաց թուականներ:»

«...Այս անձ, որքան խարդախ, այնքան սնապարծ, ստախոս է, ցայսօր իւր շատ խոստումներէն և ոչ մին կատարեց, շարունակ կուզէ իւր ազդեցութեամբ մեզ ընկճած պահել, կը խոստանայ իւր հովանաւորութիւն՝ եթէ մեր զաղտնի գործեր յայտնուելու ըլլան. մենք ալ բառախաղերով իրեն հասկացուցինք մեր ոյժ: Այլ ևս անազան է, ինք այժմ մեզնէ առաւել կախումն ունի, քան թէ մենք իրմէ, սպառնացինք զինքն յերևան հանել, եթէ մեզի չարիք մը հասանել դիպի:»

Քննիչը նորից լռեց. մօտ երկու ժամ յիշատակարանից կտորներ էր արտագրում նա:

Սարսափելի էր Բալասան աղայի և իւրայնոց դրութիւնը, երբ քննիչն ընդհանուր ուշադրութիւն հրաւիրեց և կարգալով մի առ մի համեմատեց երեցփոխ Ղազար-բիձի լուսամտից և Վանեցու տանից հանած թղթերը:

Այստեղ պարզուեցան Մեղնիկովի թելադրութեամբ կատարուած բոլոր չարիքները—Վլակոթենց Հալթօի ձեռքով Դօնդարենց Ասոյի սպանութիւնը, Արտեմ Սէրգէյիչ Գոմշակերեանցի անկումը, Սամփոնի դէմ խմբագրուած մեղադրականը, Սիսակի ձեռքը կեղծելու փաստերը, նրա կողմից շարադրուած նամակը, Խուդօյի տանուտէրութեան մանրամասնութիւնները, Սիսակին կործանելու ձգտումներն և այլն



և այլն: Մի խօսքով այն ամեն ապացոյցները, որոնցով քայքայուեցան Մեղնիկովի ցանցերը, որոնցով պարզուեցան խաբեբայ թափառաշրջիկների ձեռքերով ստեղծած շահադիտական նշանաւոր ձեռնարկութիւնները: Բոլոր սեւադրութիւնները, ի՛նչ և ո՛ւմ համար Վանեցին գրել էր, բոլոր թղթերը, որտեղ ձեռքեր կեղծելու փորձեր ու վարժութիւններ էր արել՝ պահուած էին:

Քննիչը փակեց և կնքեց ճարպիկ Վանեցու յիշատակարանը և բոլոր իրական գրաւոր փաստերը: Ընթերցողի համար էլ փակուում են պատմութեանս ամենահետաքրքիր և տխուր էջերը:

Միւս օրը գաւառական բանտն ուղարկուեցին երեք հոգի. նրանք էին՝ Մեղնիկովի երաշխաւորութեամբ ազատ շրջող Ասատուր Դոնդարեանցի սպանութեան համար մեղադրուած Հայրապետ Բվակութեանցը, Բալասան աղայի քրոջ որդի Վասակը և տանուտէր Խուզօն:

Դիւսաւոր գործիչներից Ս. գիւղում մնացին ինքը Վլադիմիր Նեստորիչ Մեղնիկովը և աւագերէց տէր-Սուքիասը:

Տէրտէրի համար բաւական համարեց քննիչը գրել զործակալին, իսկ Բալասան աղայի համար ստիպուեցաւ միայն հրաւիրել գաւառական բժշկին:

Ուրիշ անելիք անհնար էր, դեռ նոր էր քննիչն իւր որոշումը յայտնել վերոյիշեալներին բանտարկելու և Մեղնիկովին դատախազի իրաւանցը յանձնելու համար, որ Վլադիմիր Նեստորիչը ամենքի ուշքն իւր վերայ դարձրեց:

Աթոռը չը կարողացաւ դիմանալ իւր վերայ նստած երեւի Բալասան աղայի ծանրութեանը, շրջուեց գետին՝ իւր հետ տարածելով յատակին Վանեցու պաշտպանին:

Հարուածը խիստ էր. յանկարծական կաթուածքը թուլացրեց Մեղնիկովի աջ կէտը՝ դիւից սկսած մինչև վերջը:

Շատ անտանելի կացութիւն էր. երեք տարի թշուառ մարդը հիւանդ մնաց, ինչպէս ասում են՝ գետնին գերի, անկողնին աքացի տալով, այն էլ՝ մի ոտքով:

Շատ բժիշկներ եկան, մեծ մեծ այցավճարներ ստացան և դարձան, բայց ամենքը միաձայն անբժշկելիութեան վճիռ կարգացին:

Երեք տարի էր շարունակ կցկտուր և անհասկանալի բացականչու-  
թիւններով, ինչպէս երևում է, ցանկանում էր Բալասան աղէն մի  
քանի խօսք ասել և չէր կարողանում, լեզուի ձախ կողմով սկսուած  
հնչիւնը անհասկանալի թոթովանքի կամ լիլիոցի էր փոխուում ձախ  
կիտումը, ձախակողմեան առողջ ուղեղի հոգեկան թելադրութիւնը  
խառնաշփոթ զանգուած էր դառնում աջ կիտումը:

Երեք տարուց յետոյ՝ խալառ դադարեցան Վլադիմիր Նեստորիչ  
Մեյնիկովի տառապանքները. Պարկեան քայրերը վերջապէս խղճա-  
ցին և նրա ցաւալի կենաց թելը բաւ համարեցին յետ տալ: Մըկ-  
րաոր թէև բուժ էր, բայց կորեց:

Ով ոք ցանկանում է փարատել անախորժ զէպքերի անախորժ  
ուպաւորութիւններն իւր սրտից, թո՛ղ շնորհ բերէ քննութիւնը վեր-  
ջնալուց մօտ մի ամիս յետոյ՝ Գալ-ափունենց հացատունը:

Պսակաճաշ է, տէրտէրընոր վերջացրեց «Թ ա գ ա լ ո Ր դ ո լ ո Վ Ը»),  
նորափեսայ Սամիսոնը կանգնեց տան վերի պատի տակին դրած բար-  
ձին, իսկ նորահարս Սոնային Գալ-ափունի կին Զարմանը պարելով՝  
դափ ու զուռնի ուղեկցութեամբ տարաւ հարսի համար պատրաս-  
տած սենեակը:

Հարսանիքաւորները լաւ քէֆի մէջ են. խմուում է թ ա գ ա լ ո Ր ի  
(նորափէնի), թ ա գ ո լ հ ո լ (նորահորի) և խաչեղբայր Մե լ ի ք-Բ ա դ ա լ ի  
կենացը:

Կառավարիչ կամ թամադայ է Ս. գիւղի սիրելի և միահաւան  
քուէից առաւելութեամբ ընտրած, խարդախ ճանապարհներով հաս-  
տատուելուց զրկուած, բայց արդարութիւնը պարզուելուց յետոյ՝ նո-  
րից հաստատուած տանուտէր Արտեմ Ս է Ր գ է Յ ի չ Ը:

— Ադա՛, ա՛յ անշնորհք, տաւարի հրեշտակ Գալ-ափո՛ւ, ձէն  
տուեց խաչեղբայր Մե լ ի ք-Բ ա դ ա լ ի, չե՞ս ամաչում, մեր աւագ երե-  
ցին համեցէք չես արե՞լ:

— Ետեղ չի, չա՛րդ տանեմ, աղայ խաչախայէր Մե լ ի ք ջ ա՛ն, տէր-  
Սուքիաս հայրը Սեանումն ա, հիմի քեզ համար աղօթք ա անում,  
վեց ամսից յետոյ կը գայ ու քեզ կ'օրհնի:



— Խնդրում եմ՝ մեր ուրախութեան ժամանակ աւելորդ խօսակցութիւնները դադարին, «Հին դարմանը քամուն չեն տալ», մէջ խառնուեց Օ. գիւղի նոր վարժապետ և նոր գրագիր Սիսակը և իւր կողմից առաջարկեց Արտեմ Սէրգէյիչ կենացը:

Երեկոյեան զանգակները տալիս էին և Գալ-ափունի տան ուրախութիւնը դեռ շարունակուում էր:

# Ա Մ Բ Ո Ւ Ն

ԱՐԹԻԻԵԱՆԻ

Ի՞նչ ես պահանջում, կատաղի ամբոխ,  
Պու ազատ երգչի անկեղծ քընարից.  
Ի՞նչ ես դու, որպէս չարանենգ ոսոխ,  
Հալածում նորան՝ կուրացած կրքից:

Ի՞նչ ես պահանջում... Արդեօք ուզում ես,  
Որ նա իւր սրտի խանդն ու զգացմունք  
Զոհելով կամքիդ՝ երկրպագէ քեզ,  
Եւ քո առաջի խոնարհի՞ իւր ծունկ:

Արդեօք ուզում ես, որ նա սրբազան  
Իւր մաքուր երգը, որպէս մի վաճառք  
Հանելով փողոց՝ քսու մեծատան  
Դրւատէ՞ գործեր զազիր և անարգ:

Արդեօք ուզում ես, որ նա ստրկացած,  
Որպէս անլեզու մի թշուառ գերի,  
Խոնարհի՞ ալնտեղ, ուր գետնատարած  
Պու ոտք ես լիզում ունեւորների:

Ո՛չ... ամբոխ տգէտ, ամբոխ դու թշուառ,  
Զուր են քո ջանքեր, ցնորք—քո պահանջ.  
Ե՞րբ ես տեսել դու, որ լոյսը պայծառ  
Ընկճւի, խորտակւի խաւարի առաջ...



Ե՞րբ ես տեսել դու, որ երկրի կրճքից  
Ուժգին դուրս ժայթքող հըրաբուխն անշէջ  
Հանգչէ գէթ վայրկեան հեղեղ—անձրևից,  
Թէ անգամ նոքա տեղան միշտ, անվերջ:

Ասա, տեսած կաս, որ դէպի երկինք  
Անվախ սաւառնող հզօր արծւին  
Սարսեցնեն մըրիկ, որոտ, փոթորիկ,  
Երբ նա լողում է ամպերի միջին...

Մօսկւա. 1889 թ., մարտի 20.

\* \* \*

(ՖԵՕԴՕՐՕՎ՝-ԻՅ)

Ձ. ԲԱԼՈՒՂԵԱՆԻ

(Նւէր սիրելի ընկերոջս՝ Բ. Արղունթեան—Երկայնաբազուկ):

Մի թունաւորի գառըն ծիծաղով  
Նորաբաց գարունն քաղցրը յոյսերիս...  
Սիրոյ արշալոյս նաշխուն գոյներով  
Դեռ նոր է ծագել իմ մատաղ սրտիս:

« Կեանքը—ճահիճ է, աղտերով լըցւած...  
« Գոլորշիներով օդը վարակւած...  
« Խաւար է—կասես—մառախուղ սաստիկ,  
« Եւ բողբոջ միայն—երազ խաբուսիկ...»

Փոյթ չէ... մի գարթէք, անուշիկ ցնորքներ...  
Դեռ շատ է երկար իմ ընտրած ճամբան...  
Անկասկած հողմը մահաշունչ ձմռան  
Կը մեռցնէ մի օր իմ կոկոն վարդեր...:

1889 թ., 6-ին մայիսի.

Յղեաս:



## ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՇԵՔՍՊԻՐ ՎԻԼԻԻԱՄ, Թարգմանութեամբ Սենեքերիմ Արծրունու՝ ՀԱՄԼԷՏ, ողբերգութիւնն հինգ արարւածով: Հրատարակութիւն Բարսեղ Քամախեանցի: Թիֆլիս, տպարան Ռոտինեանցի, 1889 թ., քառածալ, յառաջաբան VԻ, 124 էրես, տառ. № 10, գինը 1 ր.:

Շեքսպիրի վրածներն հալ թարգմանութիւններն մասին մեր ամսագրի առաջին №-ում առիթ ունեցանք խօսելու: Գէորգ Բարխուդարեանցի «Շէքսպ», Մալխասեանցի՝ «Արքայ Լիր» և Յովհ. Լալաբեանցի՝ «Ջուր տեղը մեծ աղմուկ» թարգմանութիւններից լետոյ, ահա մեր սեղանի վերայ դրած է «Համլէտ» — թարգմանութեամբ Սենեքերիմ Արծրունու:

Մի բոլորովին անաջող գործ. ճիշդ աչքքան անաջող, որքան պէտք էր, որ մենք, աչդ թարգմանութիւնով, չը ճանաչէինք Շեքսպիր-հեղինակի հանճարեղ լեզուն: Համլէտ-հօր ուրաւականը, իւր գծագրութիւններով, որպէս մենք սովոր ենք տեսնել բեմի վերայ, աւելի է նման իսկական Համլէտին, քան պ. Արծրունու աչ թարգմանութիւնը իւր բնագրին:

Մեզ դուցէ առարկեն, թէ թարգմանութեան հարազատութիւնը պարտադիր չէ, մանաւանդ մի աչնպիսի գրածքի նկատմամբ, որը, ուրիշ լե-

զուներում, աղաւաղութեան չափ փոփոխութիւններն է ենթարկւած: Մեզ դուցէ առարկեն նաև այն, թէ բեմի համար նշանակւած լինելով, բեմական պահանջները ալ են, գրականութեան պահանջները՝ ալ, և որ, ուրեմն, թարգմանութիւնն էլ կարող է ալ բնաւորութիւն կրել, քան եթէ նախնիք նորա վերայ բուն գրական տեսակէտից:

Այդ և նման առարկութիւնները բոլորովին անտեղի են: Շեքսպիրը գրել է «Համլէտ» որոշ բնաւորութիւն կրող լեզուով. գործող անձերից իւրաքանչիւրին տւել է որոշ բնաւորութիւն և, իւրաքանչիւրի բնաւորութեան և գործողութեան հանգամանքների համեմատ, ամեն մէկի բերանը դրել է որոշ լեզու, որոշ ոճեր: Եւ բարձր զրամատիւզմ և հեղեղութիւն և սարկաղմ և վերամբարձ վստմութիւն և ծաղր և ցինիզմ և ալլաբանութիւն և երկչոտութիւն և անպաշտութիւն և երկդիմութիւն և

պարզախօսութիւն—ալդ բոլորի համար հարկաւոր է համարել Շեքսպիրը ոչ միայն բեմական հանգամանքներ ստեղծել, այլ և ալդ հանգամանքների համեմատ լեզու բանեցնել: Ով թարգմանում է, նա պարտաւոր է հետեւել հեղինակին և ճիշդ թարգմանել լեզուի նրբութիւնները, իսկ եթէ որ և իցէ փոփոխութիւններ է անում թարգմանողը, նա ալդ պէտք է լիատակէ ծանօթութիւնների մէջ:

Պ. Արծրունու չառաջաբանից, սակաւն, գործին անտեղեակ ընթերցողը կարող է եղբակայնել, իր թէ իրօք ալդ թարգմանութիւնը միացնում է իւր մէջ «բնագրի բոլոր լատկութիւնները», որովհետեւ ինքը թարգմանողը բնական է գտնում, որ «մեր ժամանակակից թարգմանիչները պարտ են փախչել միակողմանիութիւնէն և փոխանցանել (ալիսքն ի հարկէ՝ փոխադրել) կամ թարգմանել «Համլէտ» ալնպէս, որ բնագրի բոլոր լատկութիւնէն, ի կարեաց չափու, արտապաշտուի և մարմնան» թարգմանութեանց մէջ»:

Ալդպէս էլ պէտք էր անել և ալդ պարտականութիւնը ոչնչով չի նշաւողում նորանով, որ թարգմանիչը «թարգմանելով «Համլէտը», միշտ աչքի առաջ է ունեցել հալկական մանուկ բեմը և հալ հանդիսականներին, որոնք պիտի հասկանալին բեմից արտասանած մեծախօսութիւնները»: Մեզ համար բաւական է, որ հալ ընթերցողը կարող է ընդունել պ. Արծրունու թարգմանութիւնը, որպէս բնագրի բոլոր լատկութիւնները իւր մէջ բովանդակող: Արդ, որովհետեւ զա մեծ չափազանցութիւն է և որովհետեւ

մենք մեծ գրական շահ ունինք, որ Շեքսպիրը հալ գրականութեան մէջ պրօֆանացիային չ'ենթարկուաւ մենք չեչտելով զգուշացնում ենք, որ հալ ընթերցողները չը դատեն Շեքսպիրի «Համլէտը» պ. Արծրունու թարգմանութեան հիման վերալ: Մենք ալս բուպէին կտորներ կը բերենք՝ խնդիրը պարզելու համար: Բալց էս գլխից պիտի լալտենք, որ պ. Արծրունին 1) չատ տեղերում Շեքսպիրի խօսքերի իմաստը չի հասկացել, 2) թու է աւել նու իսկ հալիւն լեզուի խոչոր սխալներ, 3) փոփոխել է կտորներ, հետեւելով սուսական անաւող թարգմանութիւններին, 4) ամեն տեղ ստորացրել է Շեքսպիրի ոճը և ալն, և ալն: Ալդ բոլորի համար բաւական է մի քանի տեսարաններից օրինակներ բերել, զէմ աւղէմ կացուցանելով պ. Արծրունու թարգմանութիւնը՝ բնագրի հետ: Տեսնենք, ուրեմն, ինչ է ասում Շեքսպիրը և ինչ՝ պ. Արծրունին:

Ալդ նպատակով մենք ընթերցողների աւջն կը զնենք Շեքսպիրի խօսքերը հարաւատ կերպով հալիւն թարգմանած պ. Աւետիք Նզեկեանից և նորա զէմը կը զնենք պ. Արծրունու թարգմանութիւնը: Որ պ. Նզեկեանի թարգմանութիւնը հարաւատ է՝ գրեթէ բաւացի թարգմանութիւն Շեքսպիրի—ալդ մենք ինքներս ստուգած ենք, համեմատելով բնագրի և, զուգընթացաբար ֆրանսերէնի հետ: Բալց չը նալած դորան, մենք տեղ-տեղ աւաջ կը բերենք նաև անգլիական բնագիրը և նորան կից՝ նաև ֆրանսուա-վիկտոր Հիւգօ-ի ֆրանսերէն նմանապէս



հարազատ թարգմանութիւնը: Անգլիերէն տեկտոնի համար մենք մեր ձեռքի տակն ենք ունեցած՝

Complete works of Shakespeare  
Revised from original editions by  
J. O. Halliwell.—The London Prin-

ting and publishing Company.

Ֆրանսերէնի համար՝

François—Victor Hugo, traducteur.  
Oeuvres complètes de W. Shakes-  
peare, deuxième édition. Paris, Pa-  
gnerre, 1865.

ՅՕԳԻԱԾԻՍ ՄԷՋ ՊԱՏԱՀՈՂ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳՐԻԱԾ ԵՆ ՎԵՐՋԸ:

Ա Ջ ր ա ռ — ա ծ ա ա ջ ե ն, ա ե ա ի լ Է .

ՇԵՔՍՊԻՐ

ԱՐԾՐՈՒՆԻ

Մարցելլօ: Է՛լ, Բերնարդօ:

Բերնարդօ: Ինչ կալ: — Հօրացիօն

ալստեղ է:

{ Նոյնը:

Հօրացիօ (Յէառլ «Եղիւլ»): Ահա մի  
կտոր նորանից (a peace of him).

Հօրացիօն, իւր ձեռքը մեկնելով ղէպի Բերնարդօն, և ասելով՝ «ահա մի կտոր նորանից», ուղղւում է ասել, թէ ահա ես եմ, որ կամ և այս ձեռքը նորանն է: Իսկ պ. Արծրունին չի հասկացել այդ սրամտութիւնը և, փոխանակ զորան, ասում է՝ մասամբ. մի խօսք, որ միտք չ'ունի ալդտեղ: Յետոյ՝ Համլէտի հօր ուրականի երևալը պ. Արծրունին թարգմանում է լատնութիւն, մինչդեռ պետք է ասէր՝ երևոյթ: Բայց շարունակենք:

Բերնարդօ: Նստիր մի քիչ և թող  
մեր այս երկու գիշերապ տեսածովը

էլի բախենք լսելիքդ, որ ալդքան

ընդդիմանում է մեր պատմութեանը:

Հօրացիօ: Նստենք և լսենք, թէ  
էլ ի՞նչ կը պատմես մեզ, Բերնարդօ:

Բերնարդօ: Հենց երէկ գիշեր էր,  
երբ ա՛յ, ա՛յն աստղը, որ բնե-  
ւից գէտը՝ արևմուտք է գնում,  
լուսաւորել-պրծել էր, ուր նա հիմա  
փալիւլում է: Մարցելլօն և ես—  
ժամը ա՛յն պահին մէկն էր  
խփում. . .

(Տրոսօ է աւազանը):

Բերնարդօ: Միևնոյն կերպարան-  
քով, նման մեռած թաղաւորին:

Նստենք մի փոքր, և թող սուր  
ղարձեալ լարձակուել քո լսելիքի  
վերապ, որ շատ ծանրացել է մեր  
պատմածի համար, թէ մենք նորան  
երկու անգամ տեսել ենք:

{ Մօտաւորապէս նոյնը:

Անցեալ գիշեր, երբ ահա այն  
աստղը, որ բնեւից ղէպի արևմուտքն  
է ծագում, փալիւլ, իսկ աջտեղ,  
ուր ալժմս էլ է փալլում: Մարցել-  
լօն և ես, երբ կէս գիշերուան  
զանգը լսից (Խփում է 12 ժամ):

Մարցելլօ: Լսի՛ր, ահա նա զալիւ է:

Բերնարդօ: Իսկ և իսկ մեր հան-  
գուցեալ թաղաւորն է:

## ՇԵՔՍՊԻՐ

Մարցելլո:

.....

Հօրացիօ: Ո՞վ ես դու, որ բռնակալում ես գիշերուպ աչս ժամը, միանգամա՛ն և աչդ ազնական և պատերազմիկ կերպարանքը, որով երբեմն չըջում էր Դանեմարքի անցեալ վեհափառութիւնը: Հարկադրում եմ քեզ երկնքի անունով, խօսի՛ր:

Բերնարդօ: Տես, անց է կենում գոռողաբար:

Հօրացիօ: Կայց, խօսի՛ր, խօսել եմ հրամայում քեզ, խօսի՛ր:

Մարցելլո: Նա գնաց—չը կամեցաւ պատասխանել մեզ:

Բերնարդօ:

.....

Հօրացիօ: Առաջի Աստուծոյ, մըտքիցս չէի կարող անցկացնել աչդ, առանց իմ սեպհական աչքերիս ըզգալի և լալոնի վկայութեանը:

Մարցելլո: Աճպէս չէ, որ նա չատ նման էր թագաւորին:

Հօրացիօ: Որպէս ինքդ քեզ: Զբոհն ի՛սկ նորա կրած զրահն էր, երբ նա լաղթահարեց մեծամլաւ Նորվեգացուն. աչդպէս էր նա կուտակում ջօնքերը աճն ժամանակ, որ, մի կատաղի տեսակցութեան միջոց, ոտի տակ սառուցի վրա ճմլեց սահնակաւոր Պօլեակին: Տարօրինակ բան... (Tis strange բնագրի մէջ. c'est étrange! Ֆրանսուա Հիւգօ-ի թարգմ. մէջ):

## ԱՐԾՐՈՒՆԻ

{ Մօտաւորապէս նոյնը:

Ո՞վ ես դու, որ տիրապետել ես կէս գիշերուպ գեղեցիկ ժամը գիշերուրական զղեստով և զէնքով զարդարուած, որով չըջում էր երբեմն Դանիալի թագաւորը: Յանուն երկնքի երդուեցնում եմ քեզ, խօսի՛ր:

Մարցելլո: Նա վիրաւորուեց:

Նա հեռանում է:

Կանգնի՛ր, խօսի՛ր, երդուեցնում եմ քեզ, խօսի՛ր:

{ Մօտաւորապէս նոյնը:

Երդում եմ Արարչի անունով, որ եթէ իմ սեպհական աչքերս ինձ երաշխաւոր չը լինէին, ես ուրիշ խօսքերին չէի հաւատալ:

Նոյնը:

Ինչպէս դու ինքդ քեզ: Իսկ եւ իսկ աճպէս էր զրահաւորուած, ինչպէս գոռող Նորվեգիացուն խորտակելու ժամանակ. նոյնպէս ջօնքերը կխտած, ինչպէս մենամարտութեան ժամանակ լեհացուն ձղեց սառուցի վերաջ: Անիմանալի է:



## ՇԵՔՍՊԻՐ

Մարցելլո: Այդպէս, երկու անգամ արդէն և ճիշդ այս մեղեդական ժամին, արեսական ձեռքով անց էր կենում մեր պահատեղի մօտով:

Հօրացիօ: . . . . .

Մարցելլո: Լաւ, նոտենք և թող գիտեցողը ասէ ինձ, թէ ինչի ալ՝ ալսքան խիստ և ալսքան աչալուրջ պահպանութիւնն, ալսպէս ամեն գիշեր երկրի բնակիչներին դիւադադար են անում: Ինչո՞ւ համար է այս պղնձէ թնդանօթների ամենօրեայ ձուլմունքը և ալսքան պատերազմական պաշարեղէնի դրսից գնելը: Ինչո՞ւ ալսքան ստիպմունք նաւաչէների վրա, որոնց տաժանալից աշխատանքը կիրակին հասարակ օրից չի ջոկում: Ի՞նչ է այդ շնչասպառ գործունէութեան նպատակը, որ աշխատակից է անում գիշերը ցերեկին: Ո՞վ է այս բանը ինձ բացատրել կարողացողը:

Հօրացիօ: Այդ կարող եմ ես. գոնէ չչունչը ալսպէս է պտտում: (That can Y; at least, the whisper goes so.) Մեր հանգուցեալ թագաւորը... կուլի կանչւեց... Ֆորտենբրաս Նորւեգացիից, որին մղում էր մի գոռոզ նախանձաւորութիւն:

Պ. Արծրունու ալս դարձաձեներից չի հասկացում, թէ ով ո՞ւմ կանչեց կուլի և առհասարակ նօտրատիպ խօսքերը անհասկանալի են: Անցնենք ալժամ Համլէտի նշանաւոր մենախօսութիւններից մէկին:

Տ ե ո ո ռ ո ՞ ն ե ր է ր ո ՞ ր ո ՞ ր , ո ե ո է լ Բ .

Համլէտ: Ո՛հ, եթէ այս շատ ու շատ թանձր մարմինը կարենար հալ- ներ, դու, ալսքան ամրացեալ ոսկե-

## ԱՐՅՐՈՒՆԻ

Իսկ այդ կերպ նա երկու անգամ խոր գիշերուալ մէջ անցաւ մեր մօտով մարսի քաղերով:

Մօտաւորապէս նոյնը:

Նստենք, բարեկամներ, թող բացատրէ, ով որ դիտէ, թէ ինչո՞ւ համար են գիշերալին այս խիստ և արթուն պահպանները, որոնք խանգարում են Գանիալի ժողովուրդի քունը: Ինչո՞ւ համար է, որ ամենալին օր թնդանօթներ են ձուլում և օտար երկիրներից պատերազմական իրեղէններ առնում, գործաւորներին բռնութեամբ նաւարան ուղարկում, որտեղ նորա չեն զանազանում տօնը հասարակ օրից: Ով կը բացատրէ ինձ:

Ես: Գոնէ ալսպէս կը պատմեմ մեր հանգուցեալ թագաւորը... մենամարտեց Նորվեգիալի Ֆորտենբրասի հետ: Նա (ո՞վ՝ նա) դրդուած լինելով իւր նախանձելի բաղդից՝ (ո՞ւմ) նորան մենամարտութեան կանչեց:

## ՇԵՔՍՊԻՐ

## ԱՐԾՐՈՒՆԻ

ւիւ, լուծւիւ և ցնդիւ իբրև ցող, կամ  
եթէ Յաւիտենականը իւր թնդանօթ-  
ներն ուղղած չ'ունենար անձնասպա-  
նի վերալ... Աստուած իմ, Աստ-  
ուած<sup>1)</sup> Որքան ծանր, մարած, անհամ  
և ամուլ են երևում ինձ այս կեանքի  
բոլոր վաղեքները: Ինչ եմ անում  
այդ, ինչ եմ անում, դա՛ մի անքաղ-  
հանք պարտէլ է, ուր մոլի խոսն հա-  
տիկ է տալիս, ուր աւելի տեղ են  
գրաւում ապակահաւած ու անպիտան  
բաները: Պէտք էր, որ բանը անտեղ  
հասնէր: Երկու ամիս միայն է նորա  
մեռնելը. ո՛չ, այդքան էլ չէ, երկուս  
չը կալ. անպիտի մի պատուական  
թագաւոր, որ ան էր սորան՝ ինչ  
Հեպերիօնը մի ալծամարդի. անքան  
խանդոտ (սիրով լիքը) մօրս համար,  
որ չէր ուզում թողնել, թէ երկնքի  
հովերը խտուրթեմք գիպէն սորա  
երեսին: Երկնք ու գետնք— լիչեմ  
միթէ: Ո՛հ, սա (թագուհին) անպէս  
էր փաթաթում նորան, որ կարծէր  
թէ իւր ցանկութիւնը լազնալով,  
էլ աւելի աճումն էր առնում: Իսկ  
հիմա, մի ամիս չ'անցած... Է՛հ,  
թողնենք այդ մտածութիւնը... Բե-  
կուենու թիւն, քո անուագ է  
կին: 2) Մի փոքրիկ ամիս, զեռ  
չեն էլ մաշած ան մաշիկներն, ո-  
րոնցով նա գնում էր խեղճ հօրս զի-  
ակի վտօքից, Նիօբէի նման արտաս-  
ւաթոր: Եւ. Բնչ, դա՛, նոյն ինքն զա՛յ—  
ո՛վ երկինք. անասուն ասածդ էլ, որ  
խորհրդածութիւն չ'ունի, աւելի եր-  
կար կը պահէր, սուղը,—պսակած՝  
իմ հօր եղբորս հետ, հօրըս կղբօրը,  
միայն՝ անքան նման հօրս, որքան

րացս զանգուած, փշրուէիք, քաղքալ-  
ուէիք և ցող դառնալիք, և կամ թէ  
Դու, Դատաւոր երկնքի և երկրի,  
չը սահմանէիր օրէնք անձնասպա-  
նութեան դէմ, ո՛հ, Աստուած իմ, Աս-  
տուած: Որքան դարչելի, որքան կո-  
պիտ, դատարկ, անպտուղ և չնչին է  
երևում աչքիս կեանքն այս աշխար-  
հում: Ատելի աշխարհ: Կեանք, դու  
ինչ ես. վալրենի, անպտուղ, չորա-  
ցած տունկերով խեղդուած մի պար-  
տէղ: Ինչո՞ւ մինչև ան աստիճան  
պիտի համէր: Միայն երկու ամիս  
է, որ նա մեռաւ, ոչ, երկու էլ չը  
կալ: Թագաւորն անքան ազնիւ, որ-  
քան Հեպերիոն Աստուծոյն (?) հա-  
մեմատելով. անքան խանդակաթ  
սիրով սիրում էր մօրս, որ երկնալին  
հողմին կ'արգելէր գիպէլ երեսին:  
Երկնք և երկիր, Բնչու եմ վիշում—  
սա էլ նորան անքան անձնատուր էր,  
նորա սէրը կարծես սիրոյ երջանկու-  
թեան հետ աճում էր, և մի ամիս  
հաղիւ անցաւ... լաւ է չը մտածել  
դորա վերալ: Թուլութիւն. ահա  
քո անուանը, ո՛վ կին: Մի կարճ  
և զիւրընթաց ամիս. զեռ ան կօշիկ-  
ները չէին մաշուել, որոցմով նա սղա-  
ւոր իբրև Նէօբէ, հօրս զաղաղին էր  
հետևում: Ո՛հ, երկինք, անմաստ և  
անբարբառ. զաղանն անգամ աւելի  
սուղ կը պահէր: Նա հօրեղբորս կինն  
է, իսկ հօրեղբայրս անքան նման է  
հօրս, որքան ես Հերքուլէսին: Մի  
ամիս է միայն, և զեռ կեղծ արտա-  
ստաց հետքերը չը ցամաքած իւր  
աչքերի վերալ, նա արդէն ամուսին  
է: Ո՛հ, պիղճ անհամբերութիւն. այդ-



## ՇԵՔՍՊԻՐ

ես՝ Հերքուլէսին: Մի ամսում, առանց անդամ սպասելու, որ իւր կեղծ և պատիր արտասուքի աղը զաղարէր իւր կարմրացած աչքերը բորբոքելուց՝ նա ամուսնացաւ: Ո՛վ, ոճի՛ր խանդ, ալսպիտի բաղձոտութեամբ վազել դէպի ազգապիղծ անկողինը: Կա մի վատ արարք է, որ կարող չէ բարի վախճան ունենալ: Բալց բեկւի՛ր, սի՛րտ խմ, որովհետեւ պէտք է լիզուս կապ պահում:

Բալց ահա և Համլէտի հռչակաւոր մենախօսութիւնը—«Լինել, թէ չը լինել»: Արարած երկրորդ: Տեսարան առաջին: Տեսիլ Ա.

Համլէտ: Լինել, թէ չը լինել—  
ահա աղ է խնդիրը: Որն է աւելի հոգու աղնութիւն, տանել լկողբաղդի նետերին ու քարերին, թէ զինել ծովահնդեղ վշտերի դէմ և, ընդդիմանալով վերջ տալ նոցա: Մեռանիլ... քնանալ,\* ) էլ ոչ աւել... Նւ ասել թէ քնանալով վերջ ենք տալիս սրտի ցաւերին և բնական հաղար ու մէկ տանջանքն երին, որոնց ով օժտած է մեր մարմինը, դա մի վախճան է, որին կարօտով պէտք է փափագել:<sup>3)</sup> Մեռանիլ... քնանալ, քնանալ, գոչէ երազել: Ահ, աղդտեղ է տարակուսանքը: Որովհետեւ մահու աղ քնի մէջ ինչ երազներ կարող են զալ, երբ մենք աղատուել ենք մահականացուիս չուղմուռնքն երից, աղբ բանը մեզ կանգ է առնել տալիս: Ահա աղ խոր:

\*) Դիտմամբ երեք վանկանի են վերջբաժ, որպէս զի մտածողութեան ժամանակ տրւի:

## ԱՐԾՐՈՒՆԻ

պէս արագ ընկնել ազգապիղծութեան անկողնու մէջ: Չար է դուշակում այս ամենը: Վշտացի՛ր, հողիս, չըրթունքներս պէտք է լսեն:

Լինել, թէ չը լինել—ահա աղ է խնդիրը: Որն է աւելի աղնիւ, տանել չարագործ բաղդի նետերը և հարուածները՝ թէ դիմադրել թշուառութեանց ոլկիւնոսի դէմ՝ և պատկազմելով վերջ տալ նոցա: Մեռնել, քնել, ոչ աւելի և գիտենալ, որ աղն քնով մենք վերջացնում ենք բոլոր վշտերը և հաղար մի բնական աղտեղութիւններ, որ ժառանգել է մեր մարմինը.— ամենացանկալի վախճան:— Մեռնել—քնել,—քնել: Բալց եթէ աղն քնի մէջ մեզ երազներ ալցելեն.— ահա արդէլ: Որպիտի երազներ կարող են լինել մեռեալ քնի մէջ, երբ մենք մեղանից թափ կը տանք երկրաւին բողբոռնալնութիւնները. ահա ինչն է ընդմիջում մեր ապապալճանապարհը. ալապէս ով կը համբերէր ժամանակիս պատիժը և ծաղրը իրաւանց անզօրութիւնը, իշխանասէրների ճնշումը, գողողների անարգանքը, մերժած սիրտ տանջանքը,

ՇԵՔՍՊԻՐ

ԱՐՄԻՈՒՆԻ

հրդածութիւնը դատապարտում է մեզ երկարօրէն ապրելու թշուառութեան:

(բայ թողած)

Ով վերջապէս կամք կ'ունենար համբերել ժամանակաւոր ծաղրերին ու թշնամեքին, հարստահարողի նախատինքին, աղքատութեան գլխակոտորութեանը, արհամարած սիրող տառապանքին, օրէնքի դանդաղութեանը, իշխանաւորի չանդղնութեանը և այն կիցերին, որոնք, ահարժանների կողմից, տրւում են համբերատար արժանաւորին, եթէ կարողանար մի հասարակ հերիւնով \*) խաղաղանալ զոցանից: Ով կը կամենար կրել իւր բռնները, հեծել ու քրտինք թափել մի ճնշող կեանքի տակ, եթէ որ և է բանի երկիւղը մահից՝ այդ չը խուզարկած զաւառից անդին, ուստի ոչ մի ճանապարհորդ վետ չէ գալիս, չը պղտորէր մեր կամքը և չը ստիպէր մեզ աւելի շուտ տանել այն չարիքները, որ ունինք, քան ունալ դէպի միաները, որ չենք ճանաչում: Ազգայն, գիտակցութիւնը մեզ ամենիս երկչոտ է դարձնում. ազգայն, որոշակամութեան կենդանի երանգները տըժգունում են մտածութեան զալուկ չողբերի տակ. ազգայն, ամենաուժեղ և ամենակարեւոր ձեռնարկութիւնները այդ մտքի առջև խոտորում են իրենց ընթացքից և կորցնում են «դործ» անունը... Յուշիկ հիմա: Ահա

դատաւորաց ինքնակամութիւնը, երբ ինքդ սրի մի հարուածով կարող ես այդ ամենից աղատուել: Ո՞վ տնքալով և քրտինքով կը տանէր կեանքի ծանրութիւնները, եթէ վետ մահուան երկիւղը, այն անձանքի աշխարհը, որ տեղից ոչ ով չէ վերադարձել, չը չփոթեցնէր մեր կամքը և չը հարկադրէր տանել կեանքի տառապանքները, փոխանակ նետուելով դէպի դադար, դէպի անպարտութիւն: Ազգայն ուրեմն խղճմտանքը մեզ դարձնում է վախկոտ. ազգայն հանգչում է մեր մէջ ուժեղ կամքի և վճռահատութեան արեզը, երբ մենք սկսում ենք խորհել, և մեծամեծ նշանակութիւն ունեցող նպատակները չեղւում են ճանապարհից: Ա՛, Օֆելիա... (Ո՛հ, Նեմֆալ): Ո՞վ հարս, վիշի՛ր դու ինձ քո աղօթքների մէջ:

\*) Հերինը, ժողովրդական խօսքով հերօնը—ծակելու գործիք է, մինչդեռ պ. Արծրունին Համլետին դուրս է բերում սրով:



## ՇԵՔՍՊԻՐ

## ԱՐԾՐՈՒՆԻ

գեղեցիկ Օֆելիան... Հրեղէն կուս,  
աղօթքիդ մէջ փշէ իմ բալոր մեղ-  
քերս:

Մինչ ալժամ բերած կտորները մէջ պ. Արծրունին, որքան և իցէ, Շեքս-  
պիրի խօսքերը թարգմանում է: Բայց ահա կտորներ չորրորդ զործողու-  
թիւնից, որտեղ պ. Արծրունին իրան ուղղակի Շեքսպիրի տեղն է զրել:  
Այդ աչն սրտաչափ տեսարանն է, որը ներկայացնում Օֆելիային խելացնո-  
րութեան մէջ և որտեղ նա խօսում է երգերով: Ինչ ասել կ'ուզէ, որ Օֆե-  
լիան ցնորաժ է Համլետի վրայ, թէպէտ նա, կարծես, ողբում է իւր հօր մահը:

Այլ քաբ-ած չորբ-բրդ, քեռաբա՞ն Ծ-բդ, քեռէլ ա.

.....

Թագուհի: Ինչ է պատահել քեզ,  
Օֆելիա:

Նոյնը:

Օֆելիա (երգում է):

Ինչով ջոկեմ ձեր սիրողին

Ուրիշ մէկից.

Բոժոժ գդակովն ու իւր փալատի,

Սանդալ կոշիկով: <sup>4</sup>)

Օֆելիա: Ճանաչում էք հողոս  
սիրելուն

ձերմակ փետրոց մէջ ուժեղ զիւ-  
յաղուն

Նա էր արի և մի քաջ սրտի տէր:

Թագուհի: Ախ, խեղճ Օֆելիա,  
ալդ թնչ ես երգում:

Նոյնը:

Օֆելիա: Ասում էք: Դէ լաւ մտիկ  
արէք: (երգում է)

Ես թնչ եմ երգում, հապա լսեցէք  
իմ երգը (երգում է):

Մեռաւ ու գնաց, տիկին,

Մեռաւ ու գնաց:

Գլխի վերեւ բալ կանանչ

կրքնկի վերայ քար:

Օ'հ, օ' (գրգռու լալով է): <sup>5</sup>)

Մեռաւ, մեռաւ, ո՛հ իմ հայրը,

Մեռաւ և արդէն թագուհացաւ.

Ծաղիկ ծածկեց իւր տապանը,

Շիրիմ փակեց դամբարանը:

Թագուհի: Մի, Օֆելիա, մի:

Անգին Օֆելիա:

Օֆելիա: Մտիկ արեք, աղաչում եմ:

Ոչ, ոչ. լսեցէք իմ երգին (երգում է  
է և յարգում է լեռնաբլուզ):

Լերանց ձեռն պէս ձերմակ պա-  
տանը... (յարգում է լեռնաբլուզ):

Նա ննջեց ի քուն հանդուտան  
Եւ արտասուքներ ինչպէս եղեամ'  
Ջովացրին նրան:

## ՇԵՔՍՊԻՐ

Թագուհի (Լեֆու-սին): Աւա՛ղ, տե-  
սէք ազտեղ, իմ տէր:

Օֆելիա (շարահանելով):

Հեշտարուրիկ ծաղկով զարդ \*)

Նա գնաց փոսը, սիրու է լացի

Յոգովն անցողիկ:

Թագաւոր (Օֆելիային): Ի՛նչպէս էք,  
սիրունիկ տիրուհի:

Օֆելիա: Լաւ, Աստուած ձեզ  
վարձատրէ: Ասում են, թէ բուն, ժա-  
մանակով, հաղարարի աղջիկ է եղել:  
Տէր, մենք գիտենք՝ մենք ինչ ենք,  
բայց չը գիտենք՝ ինչ կարող ենք լի-  
նել: Աստուած ձեզ սեղանա-  
կից:

Նոտրաշար նախադասութեան միտքը պ. Արծրունին, որպէս երևում  
է, չի հասկացել: Աւանդութիւնը ասում է, թէ Յիսուս Քրիստոս, աղքա-  
տի շորով, զնացել է մի հացթուխի մօտ, սորանից հաց խնդրելու: Հաց-  
թուխի աղջիկը նորան մերժում է հաց տալ: Քրիստոսը այդ աղջկան բու-  
ն է դարձնում: Գորանից ծագել է այս դարձւածը՝ Աստուած (Քրիստոս) ձեզ  
սեղանակից. աչխնքն՝ մի՛ մերժէք: Բողոքովին այլ բան է ասում պ. Արծ-  
րունին, որովհետեւ Աստուած կարող է լիութիւն տալ մէկին, որպէս և  
հացթուխը աղքատ չէր, բայց կարող է լիութիւն ունեցողը աղքատին  
մերժել, որպէս հացթուխի աղջիկը մերժեց աղքատի շորով Քրիստոսին:

Թագաւոր: Որ և է ակնարկ իւր { Խեղճ, միտքը հօր վերալ է:  
հօր մասին:

Օֆելիա: Այդ մասին չը խօսենք,  
խնդրեմ. բայց թէ մէկը ձեզ հարցնէ,  
թէ այդ ինչ է նշանակում, այս ասա-  
ցէք (երգում է): { Մօտաւորապէս նույնը:

Բարի լոյս, օրըս է Սուրբ-Վալենտին,  
Վաղ են դարթել ամենքը:

Աղջիկ եմ ձեր պատահանի տակ,

Ձեզ վալենտին լինելու:

Սիրելիս, պաշտաւ առաւօտ,

Գաղանադողի եկել եմ,

Եղիր դու ուրախ Վալենտին

Նալիր լուսանցքի տակին:

Իսկ նա հապտուկցաւ չուտով:

Փակեց դռն եւ ըր մեղմիկ:

\*) Չարդարած:



## ՇԵՔՍՊԻՐ

Նա վերկացաւ, հալաւն հաղաւ,  
Բացեց դուռը սենեակի.

Մտաւ աղջիկ, որ էլ աղջիկ  
Չ'ելաւ նա դուրս աչն տեղից: <sup>6)</sup>

(Որպէս տեսնում է ընթերցողը, բնագրի և պ. Արծրունու թարգմանութեան մէջ զանազանութիւնը չատ է զգալի, բայց դեռ աւելին տեսէք հետևեալում):

Թագաւոր: Սիրուն Օֆելիա:

Օֆելիա: Արդարեւ, առանց հայհոյանքի վերջ կը տամ բանին:

Սէրն Յիսուսին, սուրբ զթութեան,  
Ա՛յ, վա՛յ, ամօթ չ'ունիք, ի՛նչ:  
Ջախիւները ալդ են անում, երբ  
մօտն են.

Վատ են անում, Պրիսպոսը \*) գիտենալ.

Ինձ չը ճմռած, ասում է նա,  
Կին անել ինձ խոստացաք:

Իսկ պատասխանը.

Եւ կ'անէի, ա՛յ, արեգակն վկայ,  
Թէ դու չէիր եկել ծոցըս:

Նոյն ալդ տեսարանի վերջում կան երկու կտոր երգեր, որ ահա՛.

Օֆելիա (երգում է)

Երեսը բաց տարան նորան ճաղ-  
բով \*\*),

Այ, վա՛յ աւա՛ղ, աւաղ վա՛յ, ալ ա-  
ւաղ,

Եւ փոսի վրայ ցողեց շատիկ ար-  
ցունք:

## ԱՐԾՐՈՒՆԻ

Նորան ցաւէտ սիրել, պահել նա եր-  
դունց.

Բայց չետո՛ւ խաբեց թողեց:

Բաւական է, Օֆելիա:

Ճշմարիտ, երգելու հարկ չը կայ, ես  
խսկոյն կը վերջացնեմ: (Երգում է)

Մի՛ հաւատա դու նորան.

Սիրականդ վատ անգութ է,

Կը ծիծաղէ քեզ վերալ:

Տարփածուն օրիորդն ասաց.

Արդեօք մոռացար քո երգմանց.

Չէի հաւատար ես երբէք,

Որ այսպէս ինձ մոռանաս:

Տարփածուն ծաղրով ասաց.

Իմ երգմունքը չեմ մոռցած.

Մի՛ թէ աղջիկը չը գիտէ,

Որ հանաք, ես հանաք էի անում:

\*) Դիցարանական անձնաւորութիւն, որին վաւաշոտ կանայք բաղձում էին:

\*\*) Ճաղբը՝ դադաղը բարձրացնող փայտեւն են:

## ՇԵՔՍՊԻՐ

## ԱՐՇՐՈՒՆԻ

Բարով երթաս իմ վարուժան:

Լաէրտ:

Լաէրտ:

Օֆելիա: Պէտք է երգէք՝

Պէտք է դուք երգէք «ի գերեզման,

«գետին, գետին, գետին նորան ի գերեզման կանչեցէք նորան»: Ինչ  
զլորեցէք»:

Ո՛հ, ինչպէս աչս կրկնու- ցին: Սա աչն կառավարիչն է, որ  
թիւնը տեղին է: Խօսքը հաւա- փախցրեց իւր պարոնի աղջկան:  
տաղրուժ տնտեսի վերաջ է, որ գո-  
ղացաւ իւր տիրոջ աղջկէր:

(Նստաւազար խօսքերով Օֆելիան ասում է, թէ իրան դուր է գալիս  
«գետին, գետին, գետին» խօսքերի կրկնութիւնը, մինչդեռ պ. Արծրունին  
աւել բան է ասում):

Նւ լետու՛

Օֆելիա (երգելով)

Նւ էլ լետ չի՛ գալ:

Նւ էլ լետ չի՛ գալ:

Ո՛հ, ոչ. նա մեռաւ.

Գնա՛ մահիճդ.

Նա էլ լետ չի՛ գալ:

Իւր մօրուքը ձիւնածերմակ,

Շիկահեր էր գլուխը:

Նա գընաց, նա գընաց,

Ունայն են մեր ճիւղեր,

Ողորման, Տէր, իւր հողուն.

Նւ համայն քրիստոնէից հողուն:

Աղօթում եմ Աստուծուն. Աստուծո՛ժ,

եղի՛ր մեզի հետ:

Նա չի դառնալ, նա չի դառնալ.

Նորան կրկին մենք չենք տեսնելու.

Ո՛հ, նա մեռաւ և թաղեցաւ,

Մենք նորան կրկին ալ չենք տես-  
նելու:

Հողմը փչում է լերան վերայ,

Ուր թաղեցին ծերունուն՝

Երեք նոճի, երեք ցարամի տնկե-  
ցին,

Որք լալիս են, որք լալիս են՝ որ-  
պէս իմ վշտեր,

Նւ ցաւեր միշտ հեծեն:

Ստանալով մենք վերջ ենք տալիս մեր խօսքին: Յույժ տալու հա-  
մար պ. Արծրունու թարգմանութեան բոլոր սխալները, պէտք էր հետեւել  
նորան տող առ տող,—մի բան, որ անկարելի է և աւելորդ: Որ պ. Արծ-  
րունին կարող էր, իւր սաճած սիրովն համար դէպի հաղիական բեմը,  
չը մերժել թատրոնական վարչութեան խնդիրքը՝ թարգմանել «Համլէտը»



շտապով և մի որոշ խմբի ներկայացման համար,— մեծ լանցանք չէ։ Ազգ-  
տեղ կա՞ն արդարացնող հանգամանք։ Բալց ոչնչով։ չի արդարացում սլ-  
թարգմանչի ցանկութիւնը՝ զբաղման հրապարակ ղուրս գալ մի թերի  
գործով, որի վերաջ աշխատելու համար նա տասը տարի ժամանակ էր վի-  
րապահել իրան։

### Ժ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

#### Ա Ն Գ Լ Ի Ե Ր Է Ն Բ Ն Ա Գ Ի Ր

<sup>1)</sup> O, that this too too solid flesh would melt,  
Thaw, and resolve itself into a dew!  
Or that the Everlasting had not fix'd  
His canon 'gainst self—slaughter! O God! O God!

#### Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Է Ն

A! si cette chair trop solide pouvait se fondre, se dissoudre  
et se perdre en rosée!— si l'Eternel n'avait pas dirigé ses canons  
contre le suicide!... O Dieu! o Dieu!—

#### Ա Ն Գ Լ Ի Ե Ր Է Ն Բ Ն Ա Գ Ի Ր

<sup>2)</sup> Frailty, thy name is woman!

#### Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Է Ն

Fragilité, ton nom est femme!

#### Ա Ն Գ Լ Ի Ե Ր Է Ն Բ Ն Ա Գ Ի Ր

<sup>3)</sup> To die,—to sleep,—  
No more;—and, by a sleep, to say we end  
The heart—ache, and the thousand natural shocks  
That flesh is heir to,— 'this a consummation  
Devoutly to be wish'd.

#### Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Է Ն

Mourir?... dormir,—rien de plus... et dire que par ce sommeil nous  
mettons fin aux maux du coeur et aux mille tortures naturelles  
qui sont le legs de la chair: c'est là une terminaison qu'on doit sou-  
haiter avec ferveur.

## ԱՆԳԼԻՆԵՐԷՆ ԲՆԱԳԻՐ

4) How should J your true love know  
 From another one?  
 By his cockle hat and staff,  
 And his sandal shoon.

## ՖՐԱՆՍԵՐԷՆ

Comment puis-je reconnaître votre amoureux  
 D'un autre?  
 A son chapeau de coquillages, à son bâton,  
 A ses sandales.

## ԱՆԳԼԻՆԵՐԷՆ ԲՆԱԳԻՐ

5) He is dead and gone, lady,  
 He is dead and gone;  
 At his head a grass—green turf,  
 At his heels a stone  
 O, ho! *և այլն.*

## ՖՐԱՆՍԵՐԷՆ

Il est mort et parti, madame,  
 Il est mort et parti.  
 A sa tête une motte de gazon vert,  
 A ses talons une pierre.

## ԱՆԳԼԻՆԵՐԷՆ ԲՆԱԳԻՐ

6) Good morrow, 'tis Saint Valentine's day  
 All in the morning betime,  
 And la maid at your window,  
 To be your Valentine:  
 Then up he rose, and don'd his clothes,  
 And dupp'd the chamber door;  
 Let in the maid, that out a maid  
 Never departed more.

## ՖՐԱՆՍԵՐԷՆ

Bonjour! C'est la Saint—Valentin



Tous sont levés de grand matin.  
 Me voici vierge, à votre fenêtre,  
 Pour être votre Valentine.  
 Alors, il se leva et mit ses habits,  
 Et ouvrit la porte de sa chambre;  
 Et vierge, elle y entra, et puis oncques vierge  
 Elle n'en sorti.

Ա.

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԳԻՍԱՐԱՆ, ամսաթերթ, քառասներորդ եօթներորդ տա-  
 րի. Հատոր խէ. Վենետիկ, ի տպարանի Ս. Ղազարու, 1889 թ.,  
 Յունւար, Փետրւար, Մարտ և Ապրիլ (128 երես ընդամենը):

Վենետիկի Միսիթարեանները «Բազ-  
 մավէպը» կարող է համարել թարգ-  
 ման նոցա գաղափարների և աշխա-  
 րահանգողութեան: Տեսնենք ինչ է  
 զրուս, ինչ մտածում և զգում լու-  
 տաւորեալ Ներոպալում գտնող, հա-  
 մալսարաններով շրջապատուած, զար-  
 քանալու բոլոր լաջող պայմանները ու-  
 նեցող ալը զեռ ևս անցեալ դարու  
 երկրորդ կիսում հաստատուած Միա-  
 բանութիւնը:

«Բազմավէպը» չօղածները, ըստ բո-  
 վանդակութեան, զետեղւած են 3 բա-  
 ժիններում՝ Հաղկականք, Բանասի-  
 րականք և Գիտականք: Յօղածնե-  
 րից շատերը «չարունակելի» են, բայց  
 ալը չի խանդարում ընդհանուր հասկա-  
 ցողութիւն կազմելու նրանց բովան-  
 դակութեան և ուղղութեան մասին:

«Հաղկականք»-ի չօղածներից ու-  
 չաղրութեան արժանի են միայն Հ.  
 Բ. Սարգիսեանի չօղածները: «Ազա-  
 թանդեղոս և իւր բաղմադարեան  
 դաղանիքն» գրածքի ներածութիւ-  
 նից մենք խմանում ենք, որ Հ. Բ.

Սարգիսեանը պէտք է քննէ հետեւեալ  
 խնդիրները. 1) Արդեօք Ազաթանդե-  
 ղոսը ականատես է եղել աչն դէպքե-  
 րին, որ նկարագրուած է. ուրիշ խօս-  
 քերով՝ Ազաթանդեղոսը ժամանակա-  
 կից է եղել Տրդատին ու ս. Գ. Լու-  
 տաւորչին, թէ ոչ. 2) Ազաթանդե-  
 ղոսի պատմութիւնը ամբողջապէս  
 պատկանում է Տրդատի քարտուղարի  
 (Ազաթանդեղոսի) գրչին, թէ ալը  
 մեզ հասած գիրքը կազմւած է ալը  
 և ալ հեղինակութիւններից կամ, ինչ-  
 պէս ինքը հեղինակն է ասում՝ «պալ  
 և ալ հեղինակութեանց և գործող կաղ-  
 մակերսուած խմբագրութիւն մի».  
 3) Ալը երկասիրութիւնը հալերէն  
 գրեց, թէ չունարէն. 4) Ալթմեան  
 լուծարէն Ազաթանդեղոսի պատմու-  
 թիւնը հալերէնի բնագրին է, թէ  
 ընդհակառակն հալերէն բնագրից չի-  
 տու էղած թարգմանութիւն. 5) «Լու-  
 տաւորչալ կարծեցեալ ընդարձակ վար-  
 դապետութիւնը» տոտղիւ հարադատ  
 իցէ, թէ գործ վտանգունի ուրումն  
 ժամանակաւ»:

Առ ալժամ հեղինակը միայն քննում է այդ խնդիրներին վերաբերեալ դրականութիւնը: Առաջ բերենք մի կտոր հեղինակի դատողութիւններէց նորա իսկ լեզուով՝ ցոյց տալու համար թէ ինչ լեզուով է գրում և ինչ կարծիք ունի գիտնական քննադատութեան մասին Մխիթարեան Միաբանութեան ներկաջ ամենատաղանդաւոր և գիտնական անդամներից մէկը՝ Եւրոպական մի քանի գիտնականների քննադատութիւնը Ազաթանգեղոսի վերաբերեալ համարելով «պարծալողական», հայր սուրբը աւելացնում է. «իսկ տոհմալինք և տոհմալին լեզուին ծանօթ Եւրոպացիք ունանք՝ Մխիթարեան Հարց հետ պահպանողական դրութեամբ չառաջելով կը կոծին և մրցին, ունելով ի միջի զոսկին խնամքը զոսկեպրիչ երկն Ազաթանգեղեալ գրոց: Վերջինները՝ իւրեանց հազրենի հնաւանդ լիշատակարանաց վրաջ լարեալ և պանծացեալ՝ վարկպարապի չոմանց գուցէ թէ հնամուրք (միթէ հէնց «Քաղմալէս») ի լեզուն իրաւունք չի տալիս ալջպէս մտածելու? իսկ կոչեցան. սակալն առաջնոց քմահաճոյ աւերմունքը չի գործելէ՛ զատ, ինչպէս փորձն ինքնին ցուցուց, ժամանակին աջակցութեամբը մեծամեծ ծառայութիւններ ևս մատուցին մինչև ցալսօր տոհմալին մատենագրութեան և պիտի չը դադարեն մատուցանել. վասն զի ժամանակեան նորութեանց (?) և հնութեան ճարտար գործիչներ լինելով մէկ նշխար մի կամ նշմար չեն ուզեր վերցնել կամ փոփոխել, առանց նոցա տեղ փոխանակելի առձեռն պատ-

րաստ նիւթեր ունենալու» (եր. 10) .

Նոյն հեղինակին է պատկանում «Տեսութիւն տառագարձութեան խնդրուն և հալերէն նշանագրոց վրայ» լօգւածը: Այդ խնդիրների մասին թէ Պօլսեցի «գիտնական» էֆէնդիները, թէ Վիէննայի և Վենետիկի Մխիթարեանները անբաւ թուղթ, թաւաք և ժամանակ են կորցրել և չարունակում են ալդ անել. — էլ սովորութիւն, դադափարների չիտթում, հակասութիւն ասեւ չի մնացել, որ չ'անեն, միայն ցոյց տալու համար. . . որ առողջ մաքից և գիտնականօրէն մտածելու եղանակից բոլորովն զուրկ են: Միմիայն ալն հանգամանքը, որ ալդ բոլորը գրած է եղել ամենաանճոռնի, տաղտկացուցիչ, միթին և խառնաշփոթ լեզուով, ծածկում էր ընթերցողներից ալդ բոլոր մրտած թղթերի անհեթեթ և ողորմելի բովանդակութիւնը: Հ. Բ. Սարգիսեանի լօգւածը դանաղանում է մինչև ալժամ գրածները՝ դատելու հիմնաւորութեամբ և հետևողութեամբ, թէ և Մխիթարեաններին չատուկ նոյն պաճուճաւոր, աւելորդաբանութիւններով հարուստ ոճը և հնի ու նորի խառնուրդ ներկայացնող լեզուն մարդուս մինչև դալբացները տաղտկացնում են:

Հ. Թորոսեանի «Նգնիկ և իւր երկասիրութիւնը» առ ալժամ ոչինչ նոր բան չի պարունակում իր մէջ, միայն լօգւածի վերջի երեսից խառնում ենք, որ Նգնիկի գրքի մէջ, հալրսուրբի ասելով, չի կարելի գտնել «կապ մի իմաստից». ի գուր է նոյնպէս իւր թէ փնտել «միութիւն ոչ եթէ գլխոց, ալ և պարբերութեանց» և ալն,



«քայլ ի հաստատութիւն այս ամեն բանից»), վտազսոյ թերթերում է խոստացուած:

Յետոյ զալիս է «Հաջ թարգմանութեան և Ս. Գրոց կարգ ու դաստիարակութիւնը» լոգաւոր սկիզբը: Եթէ պարզութեան համար զէն ձգենք լոգաւոր մի քանի նախադասութիւնները, ահա ինչ կ'իմանանք աղջ մութ զբուռածքի բովանդակութեան մասին.—

«Աստուածաշունչ զրոց մատենական դասակարգութիւնը ընդհանրապէս ժամանակագրական-պատմական է, թէ փերայական և ի քաղղէացի բնադրին և թէ ի լոյն թարգմանութեան և յօթանասնից: Մեր թարգմանութիւնն ալ այս վերջնոյս վրայ և զած ըլլալով, ալք բնական կարգը պահած է ի նմա, առանց զնեւու խտիր ընդ նախնական և ընդ երկրորդական կոչեցեալն, և աղջպէս զրչադրաց ի զրչագիրս փոխանցուելով հասած են առ մեզ... Աստուածաշունչ տառից բովանդակութեան մէջ, ի ցուցակս զրոց, կան ալնպիսի մասունք, որ նոյն սուրբ մատենին հետ երկրորդական վերաբերութիւն ունին: Այս գրութեանց ներքին և մատենադրական արժէք կը բռնադատեն զմեզ համառօտիւ խօսիլ վրանին: Այն Նախադրութիւնք, որ ի վրակս ամեն մատենից աստուածաշունչ տառից հնոյ կտակարանին կը գտնուին, 1) արդեօք սկզբնագիրք են առ մեզ, թէ թարգմանութիւնք լատար լեզուաց, 2) ունին արդեօք զայն հնութիւն, ինչ որ Սուրբ Գրոց թարգմանութեան կուտան ստուգահաւատ աւանդութիւնք և պատմութիւն»:

Թողնում ենք մեր հոգևորականներին

հետաքրքրել աղջ լոգաւորով, ի թէ միայն մութ լեզուն չի ձանձրացնիլ նրանց: Բացի այս բոլորից «Հաղկականք»-ում զեանդւած են «Խրատք Խիկարի» ահա այս բովանդակ միտմիտ փիլիսոփայութիւններ:

«Որդեանի, թէ բարձր է չեմ տանք, երկայն որպէս կանգունս եօթն, լորժամ մտանիցես՝ խոհարհեցս զգլուխն քո»:

Թէ ոչ, պէտք է աւելացնէին, զլուխդ կը կալլի չեմին և կը ցաւի... Նոյն «Հաղկականք»-ում է և «Տաղ ի Կարութիւն Տեառն»... «Միտք լաւխտեանս ամէն» — և վերջացաւ այն բաժանմունքը, որը պէտք է ներկայացնէր զիտնական հետազօտութիւններ և ուսումնասիրութիւններ հաղկական լեզուի, գրականութեան, պատմութեան և Հայաստանի աշխարհագրութեան, և անցեալ ու արդի վիճակին վերաբերեալ լոգաւոր: Բացի աղջնապէտք է տար ամբողջ հեղուցումս եւրոպական գիտնականներից աղջ հարցերի նկատմամբ արածները: Այսպէս ենք մենք հասկանում «Հաղկականք»-ը և կարծում ենք որ զանազան ծամծամած, աննշան հարցերի կրկնութիւնները կամ Խիկարի միամտութիւնները և եկեղեցական տաղերը արժանի չեն զետեղուելու մի աղջպիսի բաժանմունքում:

Տեսնենք այժմ՝ ինչ է «Բաղմավէպի» աղջպէս անւանւած «Բանասիրականք»-ը: Հ. Ք. Քաշեկերեանի «Նոր ջրմուղ թէոդոսիոյ» լոգաւոր խմանում ենք, որ Անեցի հալ զաղթականութիւնը XV և XVI դարերում թէոդոսիայի մէջ արհեստական աղբիւրներ է չինած լինում քաղաքին ջուր մատակարարելու համար: 1778

թւին, ռուսներին ալ քաղաքի առման միջոցին, աղբիւրները քարուքանդ են լինում ու ջրերը ցամաքում: «Հալաղգի նկարչապետ Յ. Ալվաղեանը» անցեալ տարի կատարած իր 50-ամեակի վիշտակ՝ քաղաքին ձրի նւիրում է 50,000 զողջութիւն քաղաքին մօտ գտնուող իր սեպական գիւղի ինքնաբուղի աղբիւրին: Զուրը հոսքին քաղաքը 1888 թ. սեպտ. 18-ին: Յետոյ գալիս է ալ օրւայ հանգիսի նկարագիրը. «երկալնաձիգ սեղանները՝ ակոթադրգիւ ըմպելիօք և ճաշակելիօք», «փրփրադիւղ բաժակը լցած շամփանի գինով» և ալ: Բացի ալ բանասիրականից՝ կա և մի փոքրիկ պատկեր «Եղնիկ», որը ղանաղանում է «Բաղմալէպլ» միւս գրածներից իւր մատչելի լեզուով, իսկ բովանդակութիւնը շատ բարձր է մի մանկական ամսագրի համար: Բացի ալ ինքնուրույն արձակ լեզուներից, տպւում է և Էդմոնդ դէ Ամիչիսի «Միրտ» գրքի թարգմանութիւնը պօլսեցւոյ բարբառով: Ալք թարգմանութեան մէջ չաճախ պատահում է «ի ո ի ա ն (?) վարժապետին» (փոխանորդ վարժապետի տեղ) խօսքերը:

«Բանասիրականք»-ի մնացածը բաղկացած է առածներից, ոտանաւորներից և առակներից: Ահա ինչ տեսակ իմաստալից առածներ են. — Մանուկն ծնանի՝ մեռնելու համար: Իսկ տունն կանգնի՝ ընկնելու համար: Յետոյ գալիս են «Պձ ու Զուկը», «Աղաղամիս և Խնձորենի» և ալն անհամ ու սրամտութիւնից զուրկ առակները: Ամեն մարդու բան չի առակ գրելը և Միսթարեանները,

քանի որ չ'ունին Նդոպոսների, Լաֆօնէնների և Կրլոֆիւերի պէս տաղանդներ, լաւ կ'անեն թողնեն իրանց ալք անլաջող փորձերը:

«Բանասիրականք»-ում կան և ոտանաւորներ. երկու գրաւար անգոյն թարգմանութիւն՝ «Չարչարածաղիկ—կոմսուհի Յովհաննա տը Շամպրէօնի» և «Որոտեալ փլակիոսի առ Հասարակապետութիւն», երկու աշխարհաբար և երկու գրաւար ինքնուրույն ոտանաւորներ:

«Մալր առ շիրմօք վաղամեռիկ դստեր» «Եղերերգութիւն»-ը (երես 66) սկսւում է ալսպէս.

Սուգ եմ սուգ եմ մըտել, ճիկեարս  
խորովի,

Է՛ մահ, վիմ սիրտ մըխիւր քո նետ  
կորովի...

Դէ՛հ, հըմի՛ սըպանես զիս՝ հոգուս  
դուշման,

Ու նափասըս թորկես լուկ դահրի  
նըման և ալն:

Այս երկար «Եղերերգութիւնը» մի ժողովրդական երգ է, ալ արեւոստական և ոչինչ տպաւորութիւն չը թողնող մի ինչ որ «Ալիք» բանաստեղծի շարագրածը: Ալք տեսակ երգեր ժողովրդական լեզուով գրւած և շատերը անկեղծ զգացմունքով լի՝ կարելի է գտնել մեր եկեղեցիներում գործածուող «Մեծ Մաշտոց» գրքում: Այս վերջինի և «Բաղմալէպլ» բանաստեղծի գրւածքների մէջ տարբերութիւնը սա է, որ մէկում (Մաշտոց) կա անկեղծ, բուռն զգացմունք, իսկ միւսում՝ (Բաղմալէպլ) արեւոտական, չինծու «ա՛խ ու մհ»-եր:

Իսկ «Մալր առ Մանկիկ» ոտանաւորի բովանդակութիւնը ալս է (երես 68).



Հիւանդ մանկան օրօրոցին նըս-  
տած քով,  
Յուրտ մէկ զիշեր՝ մալրիկն ան-  
ձալն կ'աղօթէր.

Պէմքըն հիւծեալ, աչքըն լցուած  
արցունքով՝  
Փոքրիկ շրթամբ մընչէր. «Որդւոյս  
ղըթն, Տէր»... .

Բանաստեղծը զգացած է, նա խղ-  
ճում է խեղճ մօրը և խորհուրդ է տա-  
լիս նրան մի բօլ լաց լինել. —

Լաց, մալրիկ, լաց, քիչ են արցունք,  
հէ լաց դուն:

Լաց, հէ, աչի, դուցէ Աստուած ո-  
ղորմի.

Եւ մալրը հետեում է բանաստեղծի՝  
կարապետ Ռ. Ոսկեանի՝ բարի խօր-  
հրդին և աչքքան լաց է լինում, որ՝  
Անդէն անդօր ինկաւ գետին խե-  
լալեղ:

Ալն ժամանակ բանաստեղծը օգնու-  
թեան է կանչում «անճառ սիրու Քե-  
րովբէ»-ին և

Սենեակն լանկարծ կարծես մի լոյս  
ողողեց,

Եւ գեղադէմ աննիւթ հրեշտակ մի  
սիրուն,

Օրօրոցին փոքրիկ կեցած եղեր լեց  
թևոյն հեղիկ զիպաւ մանկան ա-  
չերուն:

ձիշտ նոյն պահուն շարժեցան մօրն  
ալ աչեր,

Եւ ի կուրծքէն թըռաւ հառաչ մի  
մեղմիկ.

Մինչդեռ մանկան ձալնիկն անուշ  
մըրմընջէր,

«Մալրիկ, զարթիր, ես քիչ մի լաւ  
եմ ալմիկ»:

Տեսնում էք, ինչ հրաշքներ է անում  
«Բագմավէպի» բանաստեղծը: Ախոս,

որ մենք էլ չ'ունինք աղպլիսի բա-  
նաստեղծներ. ալն ժամանակ մեր  
մալրերը աղատած կը լինէին բժըշկ-  
ներին փող տալուց...

Մինչև այս ալսպէս կատարում է,  
ահա ինչ տեսարան է ներկայացնում  
«Պողպոթա լեռ» (Երես 71). — զերեղ-  
մանները բացում են, լեռները շարժ-  
ւում և

Գիտախու անդէն Աղամ և քնալից  
Բղղլուխն ի վեր առ և լտին կանգ-  
նեցաւ:

Յեղեղեաց շուրջ զիւրեաւ ըլլիւ-  
սըն բըծոտ,

Ջարմանաւքանչ լըցեալ ահիւ պա-  
կուցմամբ...

Բաց թողնենք, որ այս «Մինծոնի» բա-  
նաստեղծը շարունակէ աղպլիսի զար-  
հուրելի բաներ դուրս տալ, իսկ մենք  
հետեւենք Հ. Թ. Թ.-ին, որին իր սան-  
ձակոծ Պէդասը տանում է հասցնում  
մի «Վործանեալ եկեղեցւոյ աւերակ-  
ների մօտ» (Երես 111), ուր՝

Լուսաճաճանչ ակն արեգին, ամպք  
ի ստուեր,

Ի քարաժեռսն առնուն շրջան դար-  
ձադարձ.

Լուսին ընդ ճեղս ոստոց լածեալ  
տարուբեր

Յընցըղկէ զշոգս իւր արծաթիւս  
սիրարձած:

Անդր ի խորէջս և աստ զորմովք  
կիսստիպլ՝

Տունկք ջովացեալ, բոցս խիտ առ  
խիտ թարմատար և ալն:

Ահա «Բագմավէպի» «Բանասիրա-  
կանք»-ի բովանդակութիւնը: Մնում  
է մեզ հիմա գաղափար կազմել «Գի-  
տականք» բաժանմունքի մասին:

«Հնձող միքենալք» լօղւածում

հայր-սուրբերը նկարագրում են մի քանի հնձող մեքենաների կազմութիւնը, տալիս են երեք նկարներ, խօսում են ալդ մեքենաների գործածութեան մասին և բացատրում են ալն «առաւելութիւնը, որ ունի հնձող մեքենան յերանգեաց վերայ, զոր կը գործածեն աղքատ և միջակ կալուածատեարք»։ Ասելն աւելորդ է, որ լեզուն և բացատրութիւնները բոլորովին անմատչելի են չինականին։ Ո՞վ կարող է ընդդէմ լինել, որ քանի ալդ ամսաթերթը «Բաղմալէպ» է, նորա մէջ կարող են զուտ լեզուաբանական չօղածների կողքին զետեղած լինել և՛ առական, և՛ առաձներ, և՛ անմարտիկ ոտանաւորներ, և՛ «կաղերի» մասին չօղած, և՛ «հնձող մեքենալք», և «Պուլանժէ», և ալն և ալն։

Բայց մարդ էլի իրան հարց է առաջարկում, «ա՛խր, ի՞նչ նպատակով են ալդ «Հնձող մեքենալք» չօղածը զրել, է՞»։ Գուցէ Ամերիկա և Ներոպա գաղթած հայերի համար, բայց նրանք ապրելով ալդ լուսաւոր և բարօրութիւն վազելող երկրների քաղաքն երում, երկրագործութեան հետ րան չ'ունին, եթէ ունենան էլ, մասնադիտական բաղմաթիւ թերթեր են ալնտեղ հրատարակում։ Իսկ տարէնը մի երկու անգամ լոյս տեսած պատահական չօղածների համար ալդ երկրագործը «Բաղմալէպը» չի կարող բերել տալ։ Եւ վերջապէս ինքը չօղածը մի ալնպիսի գրածք չի, որ իր-րն մի հետաքրքրական նորութիւն, մի մանրաւոր կարդացելի Ուրեմի երեկ որ և՛ գործնական տեսակէտ են ու-

նեցիկ տպողները։ Գուցէ Ռուսաստանում ապրող հայերի համար է։ Բայց նախ՝ մեր երկրագործը չի ստանում «Բաղմալէպ», չի էլ ստանալ, որովհետեւ ոչ նրա լեզուից և ոչ չօղածներից ոչնչից ոչինչ չի հասկանալ, եթէ հասկանալ էլ, էլի մի որ և է պատահական դիւղատեսական չօղածի համար «Բաղմալէպ» բերել տալ չի կարող։ Այլ խնդիր է, եթէ հրատարակէր մի զուտ չինական էժան թերթ, որը մատչելի, պարզ լեզուով հաղորդէր դիւղացուն գործնական, հեշտ իրագործելի, անհրաժեշտ գիտելիքներ և տեղեկութիւններ, բայց, եթէ ալդ պահանջը ըզգացէր, ռուսահայերը բաւական պատրաստ և երկրի ու դիւղացիների կեանքի պայմաններին ի մօտոյ ծանօթ մարդիկ ունին՝ ալդ իրագործելու, առանց սպասելու, որ հեռուից, Ալենտիկի հայր-սուրբերը պատահաբար մի կցկտուր և գործնական ոչինչ հետևանք չ'ունեցող դիւղատեսական չօղած տպեն։ Մնում է ենթադրել, որ «Բաղմալէպը» ի նկատի ունի թիւրքիան և թիւրքաց-Հայաստանի ժողովուրդը։ Բայց ալդ դէպքում մնում է միալն բոլոր վերե բերած առարկութիւններին աւելացնել մի քանի դիտողութիւններ ևս։ Թիւրքա-հայաստանցին ուրախ կը լինէր, եթէ գերանդիի համար էլ հունձ լինէր և նա դեռ չատ և չատ հեռու է մինչև անգամ ալն «աղքատ և միջակ եւրոպական կալուածատէրերից, որոնք գերանդի կը գործածեն», ինչպէս ասում են Մխիթարեանք։ Էլ ձրտեղ մնաց, որ խեղճ հալ չինականները թիւրքիալում ճանապարհներ չը լինելով և



գրպաններում «փարա» չ'ունենալով հանդերձ, մտածեն «Սպարն ամերկեացու միաձի հնձող մեքենայ» կամ «Ալպարէ երկաձի հնձող մեքենայ» հեռու Եւրոպայից բերելու մասին: Իսկ հալ արհեստաւորը ոչ՝ կարող է օգտուել «Ֆաղմալէպի» մի քանի կցկտուր տեղեկութիւններից և ալդ տեսակ մեքենաներ չինել, ոչ էլ եթէ զիցուք մի կերպ գիւղացիք բերել տան ալդ մեքենան և եթէ նա կտուրէ կամ խանդարէ՝ կարկտել ու նորից վերաշինել: Ել չենք ասում, որ ալդ խաւար երկրում գիւղացիք ոչ կարգաւ գիտեն և ոչ միջոց ունին մի թերթ ըստանալու: Եթէ հայր-սուրբերը խնդում են թիւրքա-հայաստանցուն, կա՞ մի գործնական միջոց նրան օգնելու—ուղարկել Թիւրքա-Հայաստան եւրոպական պարզ, թեթև և ամուր գութաններ՝ գործին տեղեկ մի մարդ էլ հետը, որ փոխաբէն ծանր, վերին աստիճանի անչարմար նահապետական գութանների, որոնց լծում են մօտ 10 դուգ եղ կամ դոմէշ և հերկելիս տաժանելի աշխատութիւն են գործ դնում—մտցնէր ալդ տեսակ գութանների գործածումը: Ալդ գութանների կազմութիւնը աչնքան պարզ է, որ հեշտութեամբ հաշ ընդունակ արհեստաւորը կը սովորէր ալդ տեսակ գութաններ չինելը և աչնուհետև տեղումը պատրաստած ալդ գործիքները ի հարկէ աւելի մատչելի կը լինէին գիւղացիներին: Իսկ ընթերցանութեան միջոցով տարածել գիւղատնտեսական գիտելիքների միալն աչն կերպ կարելի է, ինչպէս վերեր լիչիցինք, բաց դա

էլ, առ ալժմ, միալն pia desideria է:

Ուրեմն ինչ միտք ունի ալդ տեսակ լօղածներ տպելը: Ալդ նման է անա ինչի: Մի շատ աղքատ ու քաղցած մարդ դիմում է մի հարուստ պարոնի և ողորմութիւն է խնդրում: Ալդ պարոնը ցոյց է տալիս նրան մի փառակալմ գիրք, ուր գրած է թէ ինչպէս լաւ, համեղ, բաց թանգ կերակուրներ պատրաստել, և ասում է.

—Ահա, սիրելիս, թէև դու մերկ ես ու քաղցած, բաց ալդ ոչինչ, ա՛ռ ալս գիրքը և կարդա...

—Աղա, քեզ զուրբան, կարդալ չը գիտեմ:

—Դա էլ ոչինչ, շարունակում է պարոնը ուշադրութիւն չը դարձնելով աղքատի ասածի վրայ, դու միալն թերթիւր ալդ չբեղ գրքի երեսները և տես ինչպիսի լաւ, համեղ կերակուրներ են լինում մեծատունների համար...

—Աղա, մի կտոր հաց եմ ուղում, հաց, արտասուքը աչքերին պաղատում է խեղճը:

—Է՛հ, ակամախ, քեզ բան եմ ասում. միթէ չը գիտես, (ուչ միալն հացիւ կեցցէ մարդ...)»

Դառնանք «Գիտականք»-ի միւս լօղածներին: «Հնձող մեքենայք»-ին հետեւում են՝ «Ուսումնական մանրալուրք», անա՞, օրինակ, ինչ բաների մասին. «Նոր մակարոն ձձի մի ի մարդ», «Շան հաղի միքրոպ», «ամենապարզ փորձեր կաղերու խտութեան» և ալն: Ալդ մասը, իբրեւ քօնիկոն, բաւականին լաջող է:

Յետոյ գալիս է նոն «Գիտականքում» (?)... «Փաղաքականտեսութիւն»։ Զարմանալի է, որ դեռ շատերը մեղաւորում շարունակում են «Փաղղիա» և

«Գաղիացի» բառերը գործածել՝ «Ֆրանսիա» և «Ֆրանսիացի»-ի տեղ: «Բաղմավէտ»-ի «քաղաքական տեսութիւնները» ոչ ալ ինչ են, եթէ ոչ կատարւող անցքերի մասին մակերևութալին, կարճ տեղեկութիւններ, օրինակ ալսպէս. «Ֆլօքէ պաշտօնարանն (?) երբ իւր վերջին խնդիրը (իսկ որ—ալդաւորդ է երկի) մերժուեցաւ Վատենին՝ ընկաւ»... «Պուլանժէ զօրավարը ալս օրերս Գուռի հաղկերութիւն մէջ նշանաւոր ճառախօսութիւն մ'ըրաւ.

ամաք իր խօսքերուն քաղաքական նշանաւոր հանդամաք չեն ընծայեր, բալց մեծամասնութիւնը կը դատէ զալն վրաւի քաղաքական դէպք մը»:

Մի նկատողութիւն էլ արտաքինի մասին. պէտք է, որ ամսական հրատարակութիւնը մի ամիսի համար կաղմի, ինչպէս և արւած է ապրիլի տետրակում, բալց որ կարւած լինի և ոչ անկապ, առանձին թերթիկներից բաղկացած:

Լ. Ս.



## ԲԱՐԱԿԱՑԱԻ—ԹՈՔԱԽՏԸ

Նորերումն բժշկ. դոքտոր Ա. Բաբայեանը հրատարակեց իւր մի դասախօսութիւնը՝

ԲԱՐԱԿԱՑԱԻ—ԹՈՔԱԽՏԸ տարափոխիկ (բէպչաղ) հիւանդութիւն է։—Նորա տարածման առաջն առնելու միջոցները։—Հրապարակական ընթերցանութիւն «Ապսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան 25-ամեայ յօբելեանը տօնելու օրւայ հանդիսաւոր նիստումը 1889 թւի, ապրիլի 12-ին։—Փարզմանեց Աւոն Մելիք-Ալամեան՝ հեղինակի խմբագրութեամբ։ Հրատարակութիւն Ապսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան։

Հրապարակախօսը իւր ճառի առարկայ է ընտրել թոքախտի տարափոխիկ լինելու խնդիրը, որը այժմ յուզում է ոչ միայն գիտնականներին, այլ և քաղաքակիրթ ազգերի վարչութիւններին, որոնք զանազան կարգադրութիւններ են անում բարակացաւի տարածման առաջն առնելու համար։

Ճառախօսը շատ տեղերում կրկնութիւններ է անում. միջանկեալ պատմութիւնները մթնացնում են գլխաւոր խնդիրը. նոյնպէս աւելորդ է, մեր կարծիքով, կուբորտների կամ բարակացաւի բժշկելու մասին խօսելը, որով նա շեղում է իւր գլխաւոր առարկայից։ Ժողովրդեան համար գրողը միշտ պէտք է խոյս տայ աւելորդաբանութիւնից. կարելի է ընտելացած մարդը երկարաբանութիւն չի սիրում, նրան հարկաւոր են պարզ, ազդու և կարճաօր գրածներ։ Զը նայելով այդ պակասութիւններին, ճառախօսը իւր ընտրած խնդրի վերաբերութեամբ գիտութեան վերջին խօսքը լիովին ամփոփել է իւր ճառի մէջ՝ որի գլխաւոր պարունակութիւնը հետևեալն է.

Հիմնւելով Բոբերտ Կօխի գիտնական հետազօտութիւնների վե-

րաց, բարակացաւի պատճառը համարում է բացիլները, որոնք դորնւում են հիւանդների խորխի մէջ: Աչքի առաջ ունենալով Կօրնէի և Բիւլիների վերջին ժամանակաց զիտնական զխողութիւնները՝ ապացուցած է համարում, որ հիւանդութիւնը տարածւում է շորացած խորխի միջոցով, որը փոշիանալով և իւր մէջ պարունակելով բիւրաւոր բացիլներ, մտնում է ուրիշների թոքերի մէջ և վարակում է նոցա:

Երկրորդ աղբիւրը հիւանդութեան տարածւելու ընդունում է կերակուրը, այն է՝ թոքախտով հիւանդ կենդանիների միսը և գոհարացառով հիւանդ կովի կաթը, որովհետեւ կովերի գոհարացաւը համապատասխանում է մարդկային թոքախտին:

Հիւանդութիւնը ուղղակի կարող է հիւանդից անցնել նորա շրջակայքում դանձաժ առողջների վերայ, կամ կարող է բնակարանի միջոցով տարածւել, երբ առողջը հիւանդից յետոյ բնակւում է նորա սենեակում, կամ կարող է տարածւել իրեղէնների միջոցով՝ հազուստի, ականջի օղերի և այլն:

Ճառախօսը մէջ բերելով այն փաստը, որ հիւանդութիւնը տարափոխւելուց յետոյ, մի քանի ամիսներից, մինչև անգամ տարիներից յետոյ է երևան գալիս, ուստի և ժողովուրդը կարծում է, որ թոքախտը տարափոխիկ չէ: Միայն Իմերեթիայում (և մենք կ'աւելացնենք՝ Խոալիայում) բարակացաւը տարափոխիկ է համարւում:

Բարակացաւի ժառանգականութիւնը ընդունւում է այն մտքով, որ մարդս ժառանգում է միայն տրամադրութիւնը և, յաջող պայմանների մէջ, հիւանդութիւնը կարող է գոյութիւն ստանալ: Հետաքրքիր է իմանալ, արդեօք նորածինների թոքախտը վեց շաբաթեայ հասակում կամ ոսկրների տուբերկուլօզը երեք շաբաթեայ հասակում ժառանգական է համարում ճառախօսը, թէ ստացական:

Բարակացաւի տարածման առաջն առնելու համար՝ մատնացոյց է անում, որ հիւանդի խորխն է փոսնդաւոր. երբ նա ցամաքում է, դառնում է փոշի, բարձրանալով սենեակի օդի մէջ, նստում է յատակի, կահկարասիքի և ուրիշ բաների վերայ և ապա մտնում է շրջապատողների թոքերի մէջ: Ուստի նա տառջարկւում է, որ այն տներում, ուր թոքախտով հիւանդներ կան, ամեն առաւօտ յատակը մաքրեն թաց շորով և որ այլպիսի սենեակներից սրբած բոլոր



կեղտոն և փոշին ամենեւին չը թափուին գաւիթներէ մէջ կամ փողոցը, այլ ուղղակի ալբէն: Այլ մէկ դէպքում բարակացաւով—[Թոքախտով հիւանդները չը պէտք է թքեն յատակի վերայ, [Թաշկինակներէ մէջ կամ գորգերի վերայ (մենք կ'աւելացնենք՝ և պատերի վերայ), այլ միայն հասարակ ջուր ածած աժանագին լայն հողէ ամանների մէջ: Սրը մի քանի անգամ պէտք է այլ ամանները դատարկեն կոյուղիների կամ արտաքնոցների անցքերի մէջ, ուր [Թոքախտային բացիլները անշուշտ կ'ոչնչանան և ապա նորից ջուր ածել և դնել հիւանդների մօտ և նրանց սենեակի զանազան մասերում:

Հիւանդների սպիտակեղէնը (լեպտոս) առանձին ժողովել, մանաւանդ [Թաշկինակները, որոնք չը պէտք է [Թողնել գրպանում մինչև խորիւի շորանալը, հարկաւոր է առանձին լանալ և հիւանդի բոլոր լւացքը գոնէ երկու ժամ եփ տալ ջրի մէջ:

Շատ փնասակար և վտանգաւոր սովորութիւն է [Թոքախտով կամ այլ վարակիչ հիւանդութիւնով մեռածների շորերը խեղճերին ընծայելը. աւելի լաւ է, մեր կարծիքով, աչրել նոցա, իսկ եթէ ո՛չ, ինչպէս ճառախօսը առաջարկում է, հարկաւոր է երկար ժամանակ եփ տալ ջրի մէջ և ապա գործ ածել:

Աւր հիւանդը ապրել է կամ մեռել է, այն սենեակի յատակը, առաստաղը և պատերը, նոյնպէս և մեծածաւալ իրեղէնները պէտք է սպիտակ կամ սև հացի միջուկի մեծ մեծ կտորներով սրբել և ապա մաքուր ջրով լանալ, կամ, եթէ հնար կայ, սրսկել 50/0 կարբօլի [Թթւով:

Կերակուրների մասին ճառախօսը խորհուրդ է տալիս, որ կովի կաթը առաջ եփ տան և ապա գործ ածեն, նմանապէս կովի, հաւի և խոզի միսը կիսաեփ կամ հում խորոված գործ չը դնեն:

Սոքա են այն գլխաւոր կանոնները, որոնք ճառախօսը առաջարկում է հասարակութեանը [Թոքախտի տարածման դէմ մաքաւելու համար:

Ի դէպ ենք համարում այստեղ մէջ բերել հետեւեալը. նախ, որ Բերլինի ոստիկանապետը նորերումս հրաման ուղարկեց խելագարների համար հիմնաւ մասնաւոր հաստատութիւններին հետեւեալ կանոնները գործադրելու, որոնք հիմնաւ են զօքոտոր Վէրդ Կօրնէի

Հետազօտութիւնների վերայ և որոնց նպատակն է բարակացաւի տարածման առաջն առնելը:

1. Բարակացաւով հիւանդներին միւս հիւանդներից բաժանել և առանձին զետեղել:

2. Խստիւ հսկել, որ նոքա իրանց խորիւր թքեն մի անօթի մէջ, որի յատակը սակաւ ջրով ծածկած է: Այդ անօթները օրը զոնէ մի անգամ հարկաւոր է եռացող ջրով մաքրել, բոլոր պարունակութիւնը արտաքնոց ածել: Յատակի, պատերի և նստարանների ապականութիւնները որչափ կարելի է շուտով եռացող ջրով կամ այլ ճանապարհով մաքրել. ապականած անկողնի կամ այլ լւացքը հեռացնել և եփ տալ:

3. Անկողնակալների, վերմակների և այլ զործածական իրեղէնների հետ, որոնք զործ են ածել բարակացաւոտները, վարել ըստ կանոնի ոստիկանական հրամանի փետրւարի 7-ից, 1887 ամի:

4. Նոյնպէս մաքրել, այդ կանոնին համեմատ, այն սենեակները, ուր բարակացաւոտները պառկած են եղել:

Երկրորդ՝ Ֆրանսիական հանրապետութեան նախագահը յուլիսի 28-ին, 1888 ամի, իւր դեկրետով հրամայեց՝ տաւարի և խոզերի թոքախտը տարափոխիկ հիւանդութեան շարքում համարել և հետեալ կանոնները զործադրել. —

1. Եթէ տաւարը բարակացաւով հիւանդ դոնւի, պրեֆեկտի (նահանգապետի) հրամանով, կենդանիները բժշկի հսկողութեանը ենթարկւին:

2. Եւրաքանչիւր բարակացաւոտ կենդանին պէտք է միւսներից բաժանել ու փակել և միայն մորթելու կամ ոչնչացնելու նըպատակով հեռացւի: Կենդանիներին մորթել հարկաւոր է բժշկի հսկողութեան ներքոյ. բժիշկը պէտք է կենդանու մարմինը հետազօտի, և հինգ օրւայ ընթացքում պրեֆեկտին զեկուցում ուղարկի:

3. Բարակացաւով հիւանդ կենդանու միւր զործածելը արգելւում է այս դէպքերում:

ա. Եթէ հիւանդութիւնը ընդհանրացած է, այն է եթէ հիւանդութիւնը միմիայն փորոտիների և նոցա աւշեայ անօթների վերայ է գտնւում:

բ. Եթէ հիւանդութիւնը, թէև սահմանափակւած է, բայց



փորձաքի մեծ մասը վարակել է կամ տարածւել է կրծքի վերայ կամ փորի մէջ:

Գործածութեան համար արգելած միայն և տուբերկուլոզական փորձաքիները չը պէտք է կենդանիների համար իբրև կերակուր գործածել, այլ հարկաւոր է ոչնչացնել:

զ. Կաշին պէտք է առաջ անմիապ անել, ըստ կանոնի, և ապա գործածել:

զ. Թոքախտով հիւանդ կովերի կաթը ծախելը արգելւած է. սակայն այդ կաթը, նոյն իսկ տեղում եփ տալուց յետոյ, կարելի է գործածել կենդանիներին կերակրելու համար:

Բժշկ. դօքտօր Գ. ԳԱՍՊ. ՏԷՐ-ԳԻՒԳՈՐԵԱՆՅ (Ղզլարցի):

#### ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԲԵՐ

1) ՊՈՇՆԱՆՅ ՊԵՐՃ:—ՅԵՅԵՐ, վէպ: Արտատպած «Մուրճ» ամսագրից: Թիֆլիս, տպար. Ռօտինեանցի, 1889 թ.: Գլին է 1 լուրջի:

2) ԿՈՅԼԱԻ ՀԱՅՐ. ՎԼԻՆՆԱՎԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈւԽՈՐԵ:—ԲԱՌԳԻՐԲ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ: ՎԻԵՆՆԱ, 1889 թ., տպ. Մխիթարեան Ուխտի:

3) ԱՇԸԳ ԶԻԻԱՆ:—ՔԵԱՐԱՄԻ և ԱՍԼԻԻ ՀԷՔԻԱԹԸ հանդերձ երգերով: Փոխադրութիւն տաճկերէնից: Հրատարակութիւն Գ. Սանդեանցի: Ալեքսանդրօպօլ, տպար. Սանդեանցի, գրաշար Բոլեմեանց, 1888 թ.:

4) ԽԱՐԱԶԵԱՆՅ ԳԷՈՐԳ, ՕՃՆԵՅԻ:—ՆԺԴԵՀԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻԻՆ-ՆԵՐԸ: Ոտանաւորներ և երգեր: Գիրք Ա., Թիֆլիս, տպ. Վարդանեանցի:

5) ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՅ ԳԷՈՐԳ:—ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԳԻԿ: Առաջ չափահասների համար: Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի. 1889 թ.:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

Որքան էլ խղճուկ է մեր հասարակական կեանքը, բայց և այնպես, առանց ակնույլ էլ, կեանքի երևույթներով զբաղւողը զիտէ իւր լիչատակարանը մոցնել նորանոր սողեր, որոնք անհերքելի կերպով վկայում են մեր բնաւորութեան կենդանութիւնը, հասարակութեան ճիգը՝ ապացուցել իւր գոյութիւնը և խօսել տալ իւր մասին: Առիթներ, որոնցից կարող է հասարակութիւնը օգուտ քաղել իւր միտքը ու բաղձանքները չափնելու, երևան հանելու իւր հոգեկան տրամադրութիւնը, սխալ թէ ուղիղ հասկացողութիւնը՝ արդարև չատ են: Ընդհանրութիւնը ըմբռնող տուժմունքները չատ և չատ սակաւ են խաղում մեր երակներում, բայց զանազան չըջաններում կատարում են բաներ, որոնց համար հետաքրքրութիւն է նշմարում կատարող չըջաններից դուրս: Իսկ այդ արդէն բաւական է, որ քրօնիկօրը, նրանց իւր համար նիւթ դարձնէ:

Տեսէք, ինչպիսի տուժմունքներ առաջացրեց Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովը, կամ աւելի լաւն ասած, ժողովները, որովհետև այդպիսի «մեծ» դործերի համար հարկաւորեցին երեք նիստ, փոխանակ մէկի կամ չատ չատ՝ երկուսի: Եւ դեռ սպառնում էլ են մի չորրորդ անգամ ժողով կազմեն՝ լաւ և վատ ճառեր կարդալու համար:

Մի բան, որ ամենեւին չի հեռանում սրտիս վրայից, այդ այն խղճաւի տպաւորութիւնն է, որ արեցին ինձ վերաջ այդ ժողովները: Այս ալտոնդ առաջին անգամն էի տեսնում ակն լանդիման, թէ ռըպիսի նեղ մտածմունքների միջնորդութիւն մէջ է սնւում հալ գրական դասակարգի մի սուարադուն մասը, թէ ինչպէս նա նմանում է աւաղանի մէջ պահած ձկան, որը ոչ մեծ գետեր է տեսել և ոչ ծովերի ալիքների մէջ խաղացել: Եւ այդ ձուկը խփում էր իւր պոչով այնպէս, որպէս թէ ոլկիւնոսի ջրերի մէջ լինէր: Եւ ի հարկէ, նա միշտ խփում էր պատերին... Այդ բոլորը տխուր տպաւորութիւն արաւ վերաս, մտածելով, որ այդ երկրորդները ալտօր լքցնում են լրագիրների էջերը իրանց «մտածողութիւններով» և դողանով կերակրում՝ ով կալ ընթերցող մեր մէջ: Այս նրանց տալիս եմ հա-



մոզւած մարդկանց անունը: Յիշում եմ, թէ ինչպէս մի խնճողքում, ուր հաւաքւած էին պատանի օրիորդներ, նոցանից մէկին վիճակւած էր «դահիրէ» (դափ) ածելը: Բայց ալդ պաշտօնը օրիորդը ալն աստիճանի լրջութեամբ էր կատարում, որ, կարծես, վարձւած լինէր դրա համար: Նա ոչ ոքի վերաջ չէր նայում, ալ մի առանձին, միմիայն ուստաներին չատուկ կերպով բռնած էր դահիրէն, գլուխը մի առանձին կերպով ծռած դէպի դահլիճի անկիւնը, աչքերից ցալտում պատասխանատուութեան զգացմունքը—նա ածում էր իւր դահիրէն... Նորան անւանեցին «համողւած» օրիորդ: Կս էլ մեր հասարակական «դահիրա» ածողներից շատերին անւանում եմ «համողւածներ»: Իսպանացին նրանց կ'անւանէր «Դօն Արիստ»-ներ: Եւ Դօն Արիստը շատ «համողւած» մարդկանցից էր, որպէս էր նաև Էրկման-Շատրեանի հերոսներից մէկը՝ «հռչակաւոր զօքաօր Մաթէոս» և նորա ուղեկից Աուկու Պետր'ը:

Երկար և խորը քնից ոտքի է կանգնեցնում Հրատարակչական Ընկերութիւնը, հին անգործ կառավարիչների տեղը ընտրւում են նորերը,— և արդէն առաջին իսկ Նիստից Ընկերութեան անդամները, որոշ խումբերի բաժանւած, մէկը միւսին խարդախութեան մէջ է մեղադրում՝ առանց մի ակնյալտնի ապացոյցի: Որ հասարակական ժողովներին անսովոր մարդկանցից սպասելի չեն ըստ ամենալնի կարգին ժողովներ—ալդ հասկանալի է: Բայց մեր զանդատը ամենեւին ալն չէ, թէ ինչո՞ւ Հրատարակչական Ընկերութեան նորեկ ժողովները ալնքան էլ կարգին չէին. մարդիկ են, կը սովորեն, կը կրթւեն: Բայց մեղ խորը ցաւ պատճառողը սա է, որ ալդ տխուր իշատակներ թողնողները ալն մարդիկ են, որոնք հրապարակախօսութեան գրիչը տարիներով ձեռքում ունին բռնած: Անհեթեթութիւնները և սղեղութիւնները իսկույն երևում են ժողովներում: Այստեղ կալ անմիջական ընդդիմախօսութիւն, կալ կարդալահ—նախադահ, և լաւն ու վատը, կանոնաւորը և անկանոնը իսկույն ցոյց են տրւում և հանդիսականները ալդ բոլորը նկատում են: Ալ լաւն է մամուլը, որտեղ կատարւում է նոյնը, ինչ որ լինում է ժողովներում, և արդէն սուկի սանձարձակ կերպով, բայց... ընդդիմախօսութիւնը անմիջական չէ, դատաւորները—ցրւած, նախադահութեան աթոռ—պարապ: Սուտ խօսողը չի կարմրում, որովհետև իսկույն ետի նորա սուտը չի երևում, խարդախութիւնը աւելի ևս մեծ ասպարէզ ունի, քան սուտը, որովհետև խարդախութեան մէջ զեր է խաղում հուն ա բը, արևստը, որը փակ է մնում ընթերցողի առջև: Նախանձը և չարակամութիւնը մնում է շատերի համար անթափանցելի: Ժողովներում թիւրիմացութիւնները իսկույն ետի ջոկւում են, և վերջապէս քւէարկութիւններով դատաւտան է կատարւում չալոնած կարծիքների մասին: Իսկ մամուլը մէջ... արի ու սղաւիր, թէ հասարակութիւնը պէտք է դատէ:

Անցեալ մալիս ամսին երեք եկեղեցիները ծխականները պատգամաւորները հաւաքել էին Յովնանեան-Մարիամեան օրիորդաց դպրոցի հոգաբարձական ընտրութիւն կատարելու համար, Հոգաբարձական ընտրութիւնները մեղանում սոխորական են, բայց լիջեալ դպրոցի համար, որը արդէն 15 տարի է գոյութիւն ունի, դա՛ մի արտասովոր բան էր: Հանգուցեալ Ստեփան Յովնանեանցը, չօթարելով իւր խորհրդատուների թախանձանքներին, հիմնել էր այդ դպրոցը և նորա վերալ խնամակալներ էր նշանակել իւր եղբորը՝ պ. Ալեքսանդր Յովնանեանցին, փեսային՝ պ. Միքայէլ Շահ-Պարոնեանցին և իւր աղբական պ. Յովհաննէս Խաւրսեանցին: Այդ խնամակալութիւնը պէտք է մնար անփոփոխ մինչ դպրոցի հիմնադրի մահը: Բայց ահա վախճանում է հիմնադիրը անցեալ տարի և, դպրոցի Բարձրագոյն հաստատած կանոնադրութեան համաձայն, կատարում են հոգաբարձական ընտրութիւններ երեք եկեղեցիների պատգամաւորներից, որոնց, վերջիններիս, ընտրում են բոլոր ծխականները:

Ահա ձեզ իրաւունք, ժողովուրդը, պատգամաւորների միջոցով, ընտրում է դպրոցի հոգաբարձուներին:

Բայց եթէ աշխարհումս միմիայն իրաւունքը չարգելք... Ի՛նչ, այն ժամանակ ամեն պարտականութիւն կատարւած կը լինէր՝ իրաւունքը լանկեցնելով: Բայց ո՛չ, իրաւունք է տրւած ընտրել, փոփոխել, որպէս կամենում է ժողովուրդը, բայց կանոնադրութիւնը չէ պարտաւորեցնում անպատճառ փոփոխել եղածը, երբ այդ եղածից զժգոհ լինելու պատճառ չի եղած: Արդ, մինչ ալժամ Յովնանեան-Մարիամեան դպրոցը գործել է աշխատ, որպէս միայն մի բարեկարգ դպրոցից պահանջել կարելի է: Մի աշխարհի ժամանակ, երբ մեր դպրոցական հոգաբարձութիւնների վերալ ընդհանուր դանդաղ կալ և սատարի արտունջ և մինչև անգամ բողոքներ, մի աշխարհի ժամանակ, երբ դպրոցական հոգաբարձութեան իրաւունքների ի չար գործադրութիւնը, այդ հաստատութեան իրաւունքների սահմանափակումը հերթական խնդիրների չարքն է դրած,—մի աշխարհի ժամանակ, ասում եմ, ուշադրութեան չ'առնելը Յովնանեան-Մարիամեան դպրոցի մինչև ալժամ եղած խնամակալների կամ հոգաբարձուների խոհեմ գործունէութիւնը—բարոյական անիրաւութիւն է: Պատգամաւորները քւէարկութեամբ ընտրում են նախկին հոգաբարձուներից միայն երկուսին, այն էլ միայն մէկին միաձայն, իսկ երկրորդին՝ ձայների բազմութեամբ, մինչդեռ երրորդին սեպցնում են: Սև բանից դուրս է գալիս, որ այդ երրորդը հէնց ուղիղ նա է, որը ամենամեծ ջանքեր ունի գործ դրած լիջեալ դպրոցի համար թէ՛ աշխատելու հանգուցեալ հիմնադրի մօտ և թէ՛ այդ դպրոցի գոյութիւնը ապահովելու՝ Յովնանեան կէս միլլիօն արժէք ունեցող կարւանսարալի եկամուտները դպրոցին խափայցնելու համար: Հապա ինչպէս չը բացականչել, պարօղիա անելով Շեքսպիրի փառնի խօսքերին՝ ապերաւտութիւն, քո անունն է մա՛րդ:



Մի ժամանակ, երբ ուլ միայն կարող է, փախչում էր Պարիզ, մի բուն Պարիզեցի եկաւ մեզ մօտ հիւր, մեզ մօտ՝ ուղում եմ ասել հայերիս մօտ: Ճիշդ է, միմիայն մի երեկոյի համար: Կա է՝ Ժորժ Օնէ, բայց ի հարկէ ոչ անձամբ, ալ իւր գործքերից մինով: Նորա դրաման՝ «Կարբնոցի պետը», Le maître de forges, որ մալխին առաջին անգամ ներկայացրին հայկական բեմի վրայ Թիֆլիսի հալ թատերասէրները:

Հետաքրքրական հեղինակ է Ժորժ Օնէն և, աւելի քան մի կողմից, հետաքրքրական են նորա պիեսները: Ամեն դրողին չի վիճակում աչքան շուտով տիրանալ հասարակութեան տրամադրութեանը, որքան Օնէն, որը ֆրանսիական նորագոյն գրողներին է և՛ վաւերաներից: Համարձակ է իւր դրամական կօմիքնացիաների մէջ—մինչ լանդշուլթիւն, բայց նորա լանդշուլթիւնը միամիտ է, ուղիղ, բաց: Օնէն ունի մղուն մտքի, որը ուղիղ իւր նպատակին է զիմում և որը զարմութեամբ թռչում է բոլոր խոչընդոտների գլխի վրայից և որը չի էլ կասկածում, թէ մի աւելի խելօքը կը վախենար նոյն տեղերում վիզը կտրել:

Այսպիսի տպաւորութիւն արաւ նորա առաջին դրաման՝ «Սերժ Պանին», որը առաջին անգամ ներկայացեց Պարիզի լալ թատրոններից միում, Théâtre de Gymnase, 1882 թ. լունւարին և ալը առաջին անգամով ունեցաւ հազիւ չաջողութիւն: Նոյնը եղաւ, երբ ուղիղ երկու տարի քետոյ, 1884 թ. լունւարին, նոյն թատրոնում, ներկայացեց «Կարբնոցի պետը»: Նա ողջունեց, որպէս թատրոնական մեծ չաջողութիւն:

Այժմ գրեթէ սովորութիւն է դառել ֆրանսիացում, որ հեղինակները, նախ քան դրաման գրելը, բօման են գրում, որը քետոյ դարձնում են դրամա: Այնպէս որ թատրոնը անցնում է դրականութեան միջով: Որքան էլ որ մի հեղինակ չաջողութիւն է գտնում իւր բօմաներով, այնու ամենայնիւ նա իւր հեղինակային փառքին հասած չի համարում, մինչև որ իւր գործը բեմի վրայ չը տեսնէ: Բեմը դառել է փորձաքար բօմանի չաջողութեան: Բեմի վրայ աչքը տեսնում է աչն, ինչ բօմանում նկարագրած է. բայց կարգալիս՝ ընթերցողը պէտք է քննադատի ոչն ունենալ, որ նկատի բոլոր անբնական զիրքերը, բեմի վրայ՝ ալը բոլորը ուղղակի ներկայացւում է, լաւն ու վատը, բնականը և անբնականը, հոգեբանական ճշդութիւնը, թէ անճշդութիւնը—բեմի վրայ մարդու աչքին են դարձնում, իսկ բօմանի մէջ՝ ոչ նոյն չափով: Ներկայացրէք բեմի վրայ աչն, ինչ պատմում էք, տեսնենք որքան միտք ունի ասածդ,—կարծես ասում լինին վիպասաններին:

Այս հալեացքը դրամալի մասին անշուշտ առանց պակասութիւնների է, բայց դեռ ևս զէպքը կը բերի մեզ խօսելու ֆրանսիացոց այս սովորութեան մասին աւելի մանրամասն կերպով: Բաւական է աստեղ ասելը միայն, որ ալը սովորութիւնը արդէն աղղկ է բօմանի վրայ աչս մըտքով, որ նա, կարծես, գրում է նախադիտումով, որ նորանից անպատ-

ճառ կարելի լինի դրամա դուրս բերել: Չէ թէ ախար ամեն բոմանից զբրամա չի կարող դուրս գալ: Իսկ միւս կողմից, բոմանից վերցրած դրամաւի մէջ խիստ նկատուի է լինում, որ վտակից բոման է կանգնած, աչնալէս որ բոմանը ալդ դէպքում ծառայում է որպէս լրացուցիչ բան գրամալի համար: Ինչ մութը կէտեր որ դրաման է ներկայացնում, նոյա բոմանն է պարզում:

Աւելին ալս անգամ թողնում եմ ֆրանսիացոյ ալդ սովորութեան մասին խօսելու: Բայց միթէ ալդքանովն էլ բաւական չէ ակնարկած, որ, քան ի որ հաշկական նոր գրականութիւնը չի արտագրում դրամատուրգներ, բայց արտագրում է վիպասաններ, որ, ասում էմ, մեր բեմական բեմադրութեան ինքնուրոյն դրամաներով հարընտացնելը ես սպասում եմ վէպերից:—Հաշկական բեմի վերածնունդը ես սպասում եմ վիպական գրականութիւնից: Աւ ալժամ էլ արդէն մեր նորագոյն գրականութիւնը դուրս համար նիւթ է աւելու: Բոմանից դրամա չինողը կարող է ե չը լինել ինքը վիպասանը ե, մինչև անգամ, սովորաբար ուրիշն է լինում, բեմին աւելի ծանօթը, բեմական հեղինակի արժանաւորութիւն ունեցողը:

Բայց սա մի միջանկեալ էր ե անցնենք Օնէին: Որպէս շատ ուրիշները, նոյնպէս ե Օնէն, իւր դրամաներից առաջ, գրեց բոմաններ: «Աերթ Պանինը», գրամալից առաջ, դուրս եկաւ բոմանի ձևով: Արժանաւորութեան մասին առ ալժամ շատանք ասել, որ նա պսակեց ֆրանսիական Ակադեմիալից: Բայց բոմանի մէջ արդէն զրապում էր, որ աչնուղ կալ մանաւանդ դրամա, մի արդէն պատրաստի դրամա, ե որ բաւական էր բոմանում իշխող տեսարանները մի քիչ դէսից, մի քիչ դէնից կարատել, որ ալդ բոմանը բեմի վրալ դնել: Աւ ալդ գործն է, որ Օնէն փալլուն ե չաջողակ կերպով կատարեց:

Աս խօ ասացի, թէ Օնէի դրաման ծնեց բոմանից: Բայց բնորոշը սա է, որ Օնէն կարծես առաջ գրում է դրաման, նորանից բոման չինում ե ներկայացնում հասարակութեան ե վտոլ հրատարակում դրաման, իբր թէ բոմանից դուրս բերած, աչն աստիճանի տեսարանները թւում են իբր ծագած մի բուն գրամալական զաղափարից: Կարգալով ինքը բոմանը, միաք է ծագում, թէ էջերը՝ նւիրած նկարագրութեան, պէլլամին, հոգեբանական անալիլին—վտոլ աւելցրած լինին, որպէս զի գրամալին բոմանի կերպարանք արւի:

«Իարբնոցի պետը» նմանապէս քաղած է նոյն անունով բոմանից: Աւ ալսուղ, որպէս «Աերթ Պանինը» համար ասուեց, կարծես հեղինակի զաղափարը ներկայացած լինի առաջ գրամալի ձևով ե որ բոմանը ոչ ալ ինչ է, եթէ ոչ պիտի զարգացում: Ալդ կարևոր է աչն պատճառով, որ բոմանից ծնած մի պիտի սովորական պակասութիւնները չեն երևում «Իարբնոցի պետի» մէջ:



Ժօրժ Յնէլէն ցալժմ զբաղեցրած թեմաներն են եղած՝ կռիւը ծաղումով արխատկրատիալի և փողի արխատկրատիալի մէջ. մի կռիւ կամ մրցումն, որը սաստկանում է և կենտրոնանում ամուսնութեան մէջ: Այդ է «Սերժ Պանինի» գրեածքը:

«Կարրնոցի պիտի» սխեմաը նոյն տեսակ է. ազնիւ աշխատաւորը հարստացած՝ խեղդում է ծնունդով աղնւականին, որ փչացած է:

Անա գործողութեան գլխաւոր դերերը: Մարկիզուհի Բօլիօ ունի մի աղջիկ՝ Կլարա անունով և մի քեռորդի՝ դուքս զը Բլիւնի: Կլարան և զը Բլիւնի երիտաւարդները պէտք է պսակէին. բայց մի վատ վարած դաւանական դործ մարկիզուհուն զրկում է իւր բոլոր կարողութիւնից, իսկ միւս կողմից՝ դուքս զը Բլիւնին իւր բոլոր կարողութիւնը խծուել-պրծել է: Դուքսը, որի պատիւը անգամ արատաւորւած է, համաձայնում է ամուսնանալ օրիորդ Աթենալիս Մուլլենէի հետ, որը մի հարուստ արհեստագործի աղջիկ է: Այդ լուրը իմանալուն պէս, Կլարան չի կարողանում զսպել ոչ իւր արհամարհանքը և ոչ իւր վիշտը. թէ մէկը և թէ միւսը նորան վճռել են տալիս փոքր խնչ արագ կերպով մի ուրիշ պարտիալին համաձայնել: Հանքագործարանի մի գլխաւոր, Ֆիլիպ Կերբէլէ, վաղուց կրում է իւր մէջ մի կրքոտ հիացումն երիտաւարդ Կլարայի համար, և նա է, որ պիտի սրտակի ալդ աղջկալ հետ. Կլարան ինքն է դուքսին ներկայացնում Կերբէլէին, որ պէս իւր փեսացու:

Պսակը կատարւում է, բայց Կլարան իւր ուժերի վրալ չափազանց էր լուսեր դրած. տեսնելով իրան միայնակ Կերբէլէի հետ, ամուսնական նշարանի չէմքին, նա ցոյց է տալիս սրտի անձկութիւն և հակառակութիւն: Ֆիլիպը (Կերբէլէն), որ մինչ ալդ ժամանակ աղքատ բարի էր, բռնւում է խանդոտութիւնով. նա ենթադրում է, թէ իւր կինը դու ևս ամուսնում է և գուցէ սիրում իւր առաջին փեսացուին՝ դուքս զը Բլիւնին: Կլարան նորան չի պատասխանում՝ ոչ, հէնց իսկ ալն պատճառով, որ լուս ունի դորանով խոյս տալ ամուսնութեան առաջին հետեանքներից, կամ գոնէ ալդ փտածգուր Կլարան լաջողում է ալդ բանում իւր սպասածից աւելի, և Ֆիլիպը ինքն է արտասանում իւր բաժանելու վճիռը. «Ներ գուք մի օր կը հասկանաք ձեր անարդարութեան ամբողջ ծաւալը, թէկուզ էլ չփէք առաջիս ներողութիւն խնդրելու, ես այն չը պիտի տամ»:

Կլարան և Ֆիլիպը (Կերբէլէն) սակալն իրար սիրում են, և ալդ սէրը զնալով անում է, նա մանաւանդ, որ նոքա իրար բաժանող խոչընդոտը իրանց սեպհական ձեռքերով հեռացրին: Բայց նոյա մէջ կալ արժանապատուութեան խնդիր, վերջապէս, եթէ ուղէք, հարատուութեան խնդիր. Կերբէլէ իրան ցոյց է տալիս իբր թէ մտերմանում է զը Բլիւնիի կին Աթենալիսի հետ, մի բան, որ անտանելի է թւում Կլարային: Կա նոյն ալն Աթենալիսը չէ, որ իրեց իւր առաջին փեսացուին, իսկ հիմա սպառնում է իրիլ իւր ամուսնուն, ալն ամուսնուն, Կերբէլէին, որի վեհանձնութիւնը ղէպլի իրան, Կլարան, որի

այնս սորա խիղճը խալթում է. ասն Դերբլէին, որի պատակահու-  
թիւնը, որպէս մարդու, ճանաչում է աւելի ու աւելի, և փալլում դուքսի  
բարոյական ոչնչութեան առջև: Կլարան սաստիկ խանդոտութիւնից բը-  
նած, իւր սեպհական տանը, հրաւէրքի ժամանակ, խալտաւակում է Աթե-  
նալիսին. Դերբլէն Աթենալիսի սպասածին հակառակ, վաւերացնում է իւր  
կենջ արարքը: Մենամարտը ղը Բլիւնիի և Դերբլէի մէջ դառնում է ան-  
խուսափելի: Բայց Կլարան չի համբերում տանը, վաղում է մենամարտու-  
թեան տեղը և ղը Բլիւնիի դնդակը, որ Դերբլէին պիտի զիպէր, իւր վրայ  
է առնում: Կլարան մեռնում է, բայց արդէն ընդունելով իւր մարդուց՝  
Դերբլէից սորա սիրու խոստովանութիւնը:

Այս կարճ անալիզը միմիայն անկատար դադարաւ է տալիս գրամալի  
մասին, որը լինէ է նրբութիւնով, շիտակութեան զգացումներով, խանդա-  
կաթ և խորը սիրով:

Ահա այս գրաման է, որ իւր վրայ էր լանձն առել Հալուհեաց Բա-  
րեղործական Ընկերութիւնը հայկական բեմի վրայ դնել սիրողների ձեռ-  
քով: Ֆիլիպ Դերբլէի դերը կատարեց պ. Վահան Մամիկոնեան, Կլարալի  
դերը՝ օրիորդ Նելլա Նաղարբէղեան: Եւ կատարեցին նոքա իրանց պա-  
տասխանատու դերերը՝ մէկը հմտութեամբ, միւսը՝ վճռականութեամբ, ար-  
ժանի ամեն խրախուսանքի: Ուշադրութեան արժանի է, որ օրիորդ Նա-  
ղարբէղեանը, որը գրեթէ ամբողջ ժամանակ բեմի վրայ էր, առաջին ան-  
գամ բեմի վրայ ոտք էր դնում. և այդ հանգամանքները, չ'երեաց, թէ ազ-  
դում լինէին նորա վրայ. նա իմացաւ իրան իշխել, որ մի մեծ պալման է  
մանաւանդ մի նոր սկսողի համար, ասն էլ մի աղբալիսի դերի մէջ: Մի  
խօսքով, օրիորդ Նաղարբէղեանը, որպէս Կ'ատէր Փրանսիացին, ձեռք բե-  
րեց գրամալական շատիւ քաղիպագիտի վկայութուղթը (acquis ses lettres  
de naturalisation dramatique).

Միւս խաղացողները գրեթէ ամենքը խաղացին հասկանալով իրանց  
դերերը և, պ. Մամիկոնեանի հետ, Թիֆլիսի սիրողների ներկայացումների  
չաջողութեան գրաւականներն են կազմում՝ տիկին Եւանդուկեան (մարկի-  
զուհու դերում), տիկին Աւթանդիլեան (Աթենալիսի դերում), տիկին Քա-  
լանթարեան, օրիորդ Սապարեան, պ. պ. Ալլահվերդեան, Մանգլինեան  
Ամիրան, Ղ. Տիգրանեան և այլն:

Սիրողների այս անգամաւ ներկայացումը իմ առջև բացեց երկու հո-  
րիզոն՝ մէկը մեր թատրոնական գրականութեան համար, միւսը՝ մեր բեմի  
համար: Եւ արդէն վերը ասացի, թէ ինչ օգուտ պէտք է քաղի հայկական  
թատրոնը հայկական վիսպական գրականութիւնից: Ուրեմն, կրկնողութեան  
մէջ չ'ընկնելու համար, ուղղակի բացատրեմ իմ միտքը բեմի նկատմամբ:

Սա մի գաղտնիք է, չը բացատրւած ոչ ոքից, բայց և աչնպէս ճշմար-



տուեթիւն է, ամենպէս ամենքին, և ամենքից խոստովանած, որ Կովկաս-  
տեան հալերը չեն արտադրում զրամաւական տաղանդներ: Տաղանդի պա-  
կասութիւն: Ով գիտէ, եթէ ճակատագրին, Փատալիզմին չը հաւատալու  
համար բաւականաչափ հիմքեր ունինք, ցեղային լատիւթիւնների մասին  
չատ ենք լսել, շատ էլ կարդացել և շատ էլ գիտել սեպական աչքերով:  
Ուրեմն անկարելի չէ, որ մեզ, Կովկասի հալերիս ընդհանրապէս, բնութիւնը  
օժտած չը լինի զրամաւական լատիւթիւններով և կամ, եթէ ուզէք, մեր  
սպփմեան բարք ու վարքը, մեր կուլտուրը չի նպաստում զրամաւական  
զգացումների զարգացման: Այդ ինչպէս պատահեց, որ ահա 30 տարի է,  
որ հակական թատրոնը գոյութիւն ունի և մենք՝ կովկասցիքս, չ'ունեցանք,  
չեմ ասում հանճարեղ, բայց գոնէ մի քանի արտակարգ զրամաւական ար-  
տիստներ և արտիստուհիներ. ճշ, մանաւանդ արտիստուհիներ, որոնց նկատ-  
մամբ կատարեալ սով է մեզանում: Եւ միթէ պատահական երևոյթ է, որ  
մեր ամենակատարեալ դերասանը մի Ադամեան է, որը Պօլսեցի է, միթէ  
պատահական երևոյթներ են Գարաթաշեանների, Հրաչեաներ, Սիրանուշներ,  
Մեակեանների, որոնց նմանները Կովկասը յալժամ չը կարողացաւ արտադրել:  
Ոչ, պատահական չէ այդ երևոյթը: Արտիստական շնորհքից ընդհանրապէս  
զուրկ ենք մենք, ինչպէս երևում է:

Բայց դպրոցը, վարժութիւնը, կրթութիւնը կարող են մինչ մի չափնի  
աստիճան զարգացնել մեր մէջ զրամաւական ճաշակը: Եւ ես կարծում եմ,  
որ ալն կարևոր շնորհքները, որ պէտք է մի դեռ ևս մեծ աշխարհք  
չը տեսած հալ դերասանուհի ձեռք բերի, մոնի ու ընտելանալ թատրոնա-  
կան աշխարհի հետ,—այդ դպրոցի մէջ սնւում է իւրաքանչիւրը, որը ըն-  
տելանում է եւրոպական դադափարներին և ապրում եւրոպական կեանքով՝  
ալն կեանքով, որի ծնունդ է ներկալ եւրոպական դրաման: Նա, որը իւր  
նկատ ու կացով, իւր ընկերական լարաբերութիւններով, իւր ուսումով և  
կարդացած գրքերով չըջում է եւրոպական միջնդոտում, նա արդէն նա-  
խապատրաստում է եւրոպական դրաման լաւ հասկանալու, նա արդէն  
անցնում է ալն կեանքի չկօլան, որը վեր է քան բոլոր կրթական դպրոց-  
ները: Մի հատ օրինակ բաւական է միտքս պարզելու համար: Խօս ամեն-  
քին չափնի է, թէ ինչ լատիւթիւն է կնոջ մէջ ալն, ինչ Փրանսիացին  
անւանում է grâce, ալսինքն շնորհալիութիւն: Դա հոգու լատիւթիւն է,  
որը երևում է և մանդալու և խօսելու բոլոր հանգամանքներին մէջ: Բայց մինչև  
որ մեր աղբի կեանքը չի պահանջում իւր կանանցից շնորհալիութիւնը ալն  
չափով, որքան, օրինակ, Փրանսիական կեանքն է պահանջում, ինչպէս սպա-  
սենք, որ մեր սովորական շրջաններից ծնւած մի կին-դերասանուհի բեմի վրա  
ցոյց տալ շնորհալիութեան բոլոր նրբութիւնները: Չէ թէ ալն բոլոր ձևերը,  
որոնցով արտապատում է շնորհալիութիւնը, պէտք է չինձու չ'երևան, ալ  
երևան որպէս բնական, որպէս լատուկ՝ խաղացող դերասանուհու բնաւո-  
րութեան: Գանգատում ենք, թէ մշտական բեմ չ'ունինք, զանգատում

ենք, թէ դերասանուհիներ չ'ունինք: Ո՞րտեղից սոքա պէտք է ծնւին, քանի որ մեր հալիական կեանքում այն բոլոր չատկութիւնները, որոնք կարեւոր են դերասանուհուն, մենք հալածում ենք և կամ զոնէ նոցա չենք մշակում:

Դորա համար հարկաւոր չէ անպատճառ բարձր ուղղնական կեանք, բաւական է, եթէ կանացի նուրբ չատկութիւնները ժողովրդի աչքում չարգեն և ընտանեկան կրթութիւնով զարգանան. բաւական է, որ բնական չատկութիւնները ընտանեկան և հասարակական կեանքի մէջ հէնց սկզբում չը խեղդեն նախապաշարունակների աղղեցութեան ներքոյ:

Աղղայէս է արդեօք մեղանում: Ունի արդեօք մեր հասարակ ժողովուրդը կարգին գաղափարներ կանանց կրթութեան վրայ: Ոչ, ոչ, հազար անգամ ոչ: Եւ խնդիրը արժէ, որ մի փոքր կանգ առնենք: Բայց մի մոռացէք, որ իմ խօսքը կանանց կրթութեան մասին չէ առհասարակ, այլ որքան որ այդ կրթութիւնը կապ ունի բնմի պահանջների հետ:

Մի մեծ թիւրիմացութիւն է տիրում բնմի նկատմամբ ոչ միայն ժողովրդի ամենաստորին խաւերում, այլ նոյն իսկ միջին դասակարգի մէջ: Հալիական ընտանիքը միմիայն մի բան է ճիշդ ընդունում աղջիկների կրթութեան գործում. այդ աչն է, որ աղջիկը պէտք է լինի ամօթխած, լինի նա անուսում, թէ սւտում առած:

Բայց աչն, որտեղից սկսում է տարբերութիւնը գոհնիկի և լուսաւորւածի հալացքների մէջ, այդ աչն է, որ հասարակ հալը, կնոջ ամօթխածութիւնը պաշտպանելու նպատակով, կնոջ համար ստեղծել է կեանքի պարմաներ, որոնցմէլ խեղդում են կնոջ բնական բոլոր միւս չատկութիւնները, մինչդեռ լուսաւորւածը աշխատում է, զարգացնելով կնոջ մէջ սորա բոլոր չատկութիւնները՝ ամօթխածութիւնը կամ աբուռը ձեռքից չը թողնել: Մէկը՝ գոհնիկը, տգէտը վախենում է կնոջ ազատ շրջելուց, մի գուցէ գալթակղւի, մոլորւի: Լուսաւորւածը մտածում է այլ կերպ. թող կինը վալելի ազատութիւն, միայն թէ նորա ոգուն և մտքին աչն ուղղութիւնը տամ, որ նա իւր ազատութիւնից չար գործադրութիւն չ'անէ: Ուրեմն մէկը, գոհնիկը, ստիպւած է փակ պահել կնոջ, և աչն ժամանակ կրթութիւնը նորա աչքին աւելորդ բան է երևում, միւսը, լուսաւորւածը, կրթութեան զեկը իւր ձեռքին պահելով, չի վախենում կնոջ ազատութիւնից: Երկուսն էլ հաւասարապէս պաշտպանում են կնոջ ամօթխածութիւնը, բայց մէկը՝ գոհնիկը, տգէտը՝ վախկոտ է, միւսը, լուսաւորւածը, կրթւածը՝ քաջ է և արի, նա չի վախենում զարգացումից, առանց որի առաջդիմութիւն առած բանը չի կարող կատարւել:

Հալեացքների և հանգամանքների այդ տարբերութիւնը ունեցել է այս հետևանքը, որ հալ կինը չի կարողացել երևան դուրս բերել իւր բոլոր չատկութիւնները, որոնք և մնացել են փակւած, խեղդւած: Այդ ներգործել է հալ կնոջ և՛ հաղուստի և՛ ճաշակի վրայ, և՛ քաղւածքի և՛ խօսելու ձևերի վրայ, մի խօսքով նորա արտաքինի վրայ և, ի հարկէ, ոչ ի



Նպաստ, ալ ի մեաս: Դրաման, սոխիսօգրական, հոգեբանական դրաման, մանաւանդ աղնպիսին, որի նիւթը առնւած է կնոջ աղատ շարժողութիւնը թողատրող կեանքից, չափազանց մեծ դժւարութիւններով կարող է գտնել իւր թարգմանները մեր հայկական հասարակ կարգի ընտանիքների մէջ տնւած կանանց մէջ:

Անա՛ աղջ մտածումներն են, որ ինձ տեղիք են տալիս թիֆլիսի սիրողների ներկայացումներին մի առանձին նշանակութիւն տալ: Այստեղ ես տեսնում եմ խմբւած հաջ կանայք, որոնց տաղանդի մասին ես ոչինչ խօսելու չ'ունիմ, բայց որոնք մի մեծ արժանաւորութիւն ունին ցայժմ տեսնւած կովկասի «գերասանուհիներին» վրաջ, աղջ աղն է, որ «սիրողների» խմբին մասնակցողները իրանց ընտանեկան կրթութիւնով քիչ թէ չատ տարբերում են հայկական սովորական նախապաշարումներով խեղդւած ընտանիքների կրթութիւնից: Նոքա իրանց հալեացքներով և կրթութիւնով աւելի մօտ լինելով եւրոպական կրթութեան, նոքա, աղջ սիրողները, բնականապէս իւրացրել են, հալեացքների հետ, նաեւ եւրոպական շարժումները և միտքը աղատ, բայց և բնական կերպով արտապատկերւած ընդունակութիւնը: Ի հարկէ, միայն մի չափով չափով, բայց աղջ չափը արդէն զգալի է: Ան մեր «սիրողների» ներկայացումները միշտ աւելի հետաքրքրական են, քան մեր մշտական խմբերի ներկայացումները. հաւատացէք, որ ոչ միայն բարեգործական նպատակների պատճառով, ալ ուղղակի իրանց խաղով:

«Սիրողների» ներկայացումներին, ուրեմն, ես տալիս եմ աւելի մեծ նշանակութիւն, քան սովորաբար տրւում է նրանց. միմիայն բարեգործական նպատակով փող ժողովելու օրդաններ չեն նոքա, աղջ «սիրողների» ներկայացումները, ալ ապագայ մշտական բեմի պատրաստական զըպրոց: Հէնց աղջ տեսակէտից է, որ ես ուրախութեամբ կ'ողջունէի սիրողների ներկայացումները, եթէ նոքա կրկնէին այնքան չաճախ, որ քան հարկաւոր է խմբի գոյութիւնը զգալ տալու համար:

Բաքուի Մարդասիրական Ընկերութիւնը մալիսի 21-ին տօնեց իւր 25-ամեայ լոբելեանը, իսկ սույն չունիս ամսի 4-ին, Նրեանի Հայոց թեմական դպրոցը տօնեց իւր գոյութեան 50-ամեակը: Նրկու քաղաքների հաջ բաղմաթիւ հասարակութիւնները աւիթ են ունենում խմբելու մի միակ մոքի մղումով՝ թէ նոքա դործել են միասին՝ աղգին ծառայելու համար: Նրկուսն էլ խմբում են անցեալի աշխատութիւնները վերալիչելու, իրանց մտքից միաժամանակ անցկացնելու, միաժամանակ զգալու համար աղն, ինչ կարող էր արտադրել նոցա գործածներից լաւագոյնը: Ներկայ 19-րդ դարը մեր կեանքի պատմութեան աղն էպօքն է, իրր թմրած, չորացած երակների մէջ կենդանարար արիւնը կրկին սկսում է խաղալ, ուղեղի բթացած թելերը կրկին սկսում են շարժւել և միտք արտադրել:

Եթէ շատ ազգերի համար մտածելը և առաջադիմելը մի բոլորովին որոշ, բայց նոր ժամանակից է սկսում, մեզ՝ հայերիս համար, նա հին է, որպէս և հայ ազգը հին է, որպէս կուտուրական ազգ:

Բարի վիշատակ Ներսէս V-ին, Մատթէոս I, Գէորգ IV-ին, որոնց հովանաւորութեան ներքոյ աճեց 50-ամեակը լրացրած Երևանի Թեմական դպրոցը, հաշ կրթութեան սերմնարաններից մէկը. բարի վիշատակ բոլոր նրանց, որոնք իմացել են հասարակութեան և հովապետների լուսերը արդարացնել ազգ դպրոցում գործելու. բարի վիշատակ բոլոր նրանց, որոնք իրանց սրտի լաւագոյն զգացումները գէթ մի րոպէ միացրած են եղած ազգ դպրոցի գոյութեան հետ և արդիւնաւէտ եղած, նպաստած՝ լուսադրած նպատակների համար: Մաղթենք, որ և ալտուհետև, բայց արդէն աւելի հսկայական քաղերով առաջադիմել կարողանալ տօնող դպրոցը. մաղթենք, որ դորա համար հարկաւոր համերաշխութիւնը ժողովրդի և ազգիս հովապետների մէջ անդրդուելի մնալ, համերաշխութիւն, որը մեր հասարակական գործունէութեան շահաւէտութեան զրաւականն է եղած և մընում է նոյնը ալսօր:

«Մարդասիրական Ընկերութեան» 25-ամեալ ջօրելեանի տօնի առիթով, ներկայ համարում ընթերցողը կը կարդալ մեր սեպհական թղթակցից հաղորդած տեղեկութիւնները: Մի բան, սակայն, աչքի է ընկնում: Սա գոնէ բնական կը գտնէի, եթէ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ոչ թէ մի հեռագրով շնորհաւորէր մեր անդրանիկ բարեգործական ընկերութիւնը, ալ շնորհաւորէր նորան լանձին իւր մի պատգամաւորի, որը պէտք է լինէր կամ ընդհանուր ժողովների նախագահը և կամ խորհուրդի նախագահը, բայց աւելի առաջինը: Հանդիսին Ն ե ր կ ա ղ գտնւելով, թերևս Թիֆլիսի հասարակութիւնը իւր վերաջ զգար ալն ներգործութիւնը, որը կ'անէր իրանից աւելի գործօն մի ընկերութիւն:

Անցեալ ամսալ Աովկոսեան շաբաթներից մէկը իրաւամբ պատկանում էր վրացի իշխան Ակակի Յերետելի'ին: Ամենալն իրաւամբ վրացի գրողներից մէկը ասում է, որ «ալն երախտապարտ զնահատումը, որ արաւ Գութալիսի Միքալէլեան կալածական բանկի ընդհանուր ժողովը Յերետելի'ի գրական ծառաութիւնների նկատմամբ, գործեց մեծ և բարերար ազդեցութիւն ոչ միայն վրացոց, ալ և մեր հասարակութեան բոլոր խաւերի վրալ» Ալն, ոչ միայն վրացոց, ալ մանաւանդ նաև հայերի վրալ, կը վկայւմ ևս: Յատնի է, թէ որն է իրողութիւնը: Իրողութիւնը սա է, որ վիշեալ բանկի ընդհանուր ժողովը վճուեց տալ վրաց բանաստեղծ իշխան Յերետելի'ին տարեկան 1500 ռուբլի հաստթ ցմահ: Ալն իրողութիւնը, որի հասարակական նշանակութիւնը ամեն ընթերցողին հսկանալի է, և որի վրալ, ուրեմն, ևս կանգ չեմ առնում, տեղիք տուց զրաւների, որոնցից ևս առաջին անգամ ծա-



նօթացալ վրայ բանաստեղծութեան, գրականութեան հետ առհասարակ, իսկ մասնաւորապէս, թէ ի՞նչ տեղ է բռնում ալդ գրականութեան մէջ իշխան Յերետեւին: Մենք, հալիւս, ամենքս լաւ գիտենք, թէ ո՛րքան սենք անգէտ ենք մեր գրացի աղբի գրականութեան մասին. ալդ ինձ շատ հետացնում է պարզ խոստովանութիւններ անել իմ անգիտութեան մասին նոյն առարկայի վերաբերեալ: Է՛հ, և ի հարկէ, դա մի ոչ շատ պատուարեր հանգամանք է մեզ համար. բայց որ իմանալու լինենք, թէ ո՛րքան նոքա, վրացիք, անգէտ են մեր նկատմամբ, աչն ժամանակ մենք մեր մեղքը չուտով կը մոռանանք: Աղբիսով ես իմ մեղքին ինքս թողութիւն եմ չնորհում, ուրախ լինելով, որ Յերետեւի՛ն դէպքը ինձ առիթ տւեց ծանօթանալու մի առարկայի հետ, որը շատ կողմերով հետաքրքրական է ընդհանրութեան համար: Եւ անձ թէ ինչ է ասում հեղինակաւոր վրացիներէից մէկը՝ պ. Նիկողաձէն, որի գրածքի մասին առհասարակ իմ կարծիքը կը բարոնեմ ցետոյ: Առ ալժամ ես քաղում եմ միայն աչն, ինչ վրաց գրականութեան է վերաբերում և, մասնաւորապէս, իշխան Յերետեւի՛ն:

«Ակսել Նորանից, ասում է նա, որ իշխան Ակ. Յերետեւին, բառիս բռն ճշանակութեամբ, իսկական բանաստեղծ է. ալդ դեռ քիչ է. նա միակ բանաստեղծն է վերջին կէս դարի վրայ ոտանաւոր գրողների մէջ: Ես ալդ ասում եմ աչն մտքով, որ նոցա մէջ միայն Նորան բնութիւնը օժտել է չատուկ ընդունակութիւններով, որ մարդուց բանաստեղծ են չինում: Նորանից զուրս ալդ հաղազիւս բարեմանութիւնները, վերջին ժամանակաւ բոլոր վրաց ոտանաւոր գրողների մէջ (իսկ նոցա անունն է լէգէօն), սրբազնաւորած էին և աչն էլ մի քիչ ժլատութեամբ, գուցէ միայն իշխան Գ. Կօչակիձէ՛ին (Չալաղիտէլի անունով չալոնի), որը մի առժամանակ փալկեց վրաց գրականութեան մէջ 60-ական թւականների վերջում և որը թաւաժեց հասունութիւնից շատ առաջ: Միմիայն իշխան Յերետեւին է կանդնած մի ուրիշ, 40-ական թւականների նմանապէս ճանաւոր արժանաւոր վրաց բանաստեղծի հետ մի չարքում, իշխան Նիկ. Բարատաշելիի հետ, և ալդ երկու գրողները ներկայացնում են լիովին ներկայ դարի Վրաստանի ամբողջ բանաստեղծութիւնը: Միայն նոքա մայրին ալդ բանաստեղծութեան մէջ կենդանի, անմահ պատկերներ, թեթեւութեան և ձեւերի անկեղծութեան հետ միասին. և միմիայն նոցա ստեղծագործութիւնները, որ արդէն մտած են ժողովրդի չիչողութեան և ճանաչողութեան մէջ, կը թողնեն անջնջելի հետք, որ բաժինն է միայն բնաւոր բանաստեղծական չնորհքի: Իշխան Յերետեւի՛ն գրական ընդունակութեան ոլժը բոլորովին աղէկացուցիչ է... Նա մեղքից անհամեմատ աւելի շատ ունի արդ անդանատիւ արժանիքը, որ և գրողի ծայրագոյն ոլժն է՝ թափանցել ընթերցողների մէջ կարծես էլէքտրական հոսանքով, մի և նոյնն է, թէ ինչից էլ նա խօսի: Նա ցնցում է, արթնացնում է, ոտքի է կանգնեցնում մինչև անգամ կաթածահարին, թողնելով առ

միշտ անջնջելի հետք ոչ միայն իւր գաղափարով, այլ և նորա արտապատկեր ձևով—և մինչև անգամ ձևով աւելի, քան գաղափարով: Մի խօսքով, բոլորը ինչ կարող էր տալ էն իսկ վրացական առատ բնութիւնը, ոչ չափ, ոչ սահման չը ճանաչելով մի գրողի՝ նա տաւ է իշխ. Ակակի Յերետելի՛ին, աչն չափսերով, որոնց մասին իրաւունք չ'ունի երազել ոչ մէկը Վովկասեան գրողներին: (Ասենք թէ պ. Նիկողաձէն աւտոեղ նոյն վրացական առատ բնութեան մղումին է հետևում, որը ոչ չափ, ոչ սահման է ճանաչել, ուղեւոր իւր բանաստեղծի գիրքը որոշել աչն Վովկասեան գրողների շարքում, որոնց նա նոյնքան է ճանաչում, որքան, օրինակ, հայերը՝ Յերետելի՛ին):

«Փառած ալդքան հաղապիւտ գրական տաղանդով, իշխ. Յերետելին գրական ասպարէզ եկաւ իւր պատանեկական հասակում, 1857 թ., դեռ ևս գիմնապիլայի ակթուի վրայ նստած: Վրաց գրականութեան մէջ, գրականապէս ոչնչի հետ չի կարելի համեմատել նորա առաջին իսկ ոտանաւորի տպաւորութիւնը: Ռուսաց գրականութեան մէջ նա նման էր Պուշկինի երկրորդ մոտաւոր տպաւորութեանը: Ամենքը, գիտնականներ և տղետներ, իսկոյն հասկացան, որ համեստ Յ ստորագրութեամբ ոտանաւորների մէջ հնչում է «ոտանաւորի ներդաշնակութիւնը», աչն իսկ ներդաշնակութիւնը, որի «աստուածապին խորհուրդները», ըստ ասելոյն Մալիովի, ի դուր կը լինէր որոնել իմաստունների մատենների մէջ: Ալդ ոտանաւորների լեզուն իսկոյն երեան էր դալիս մինչ աչն ժամանակ անչալտ ժողովրդական բարբառի հրապուրով և թեթևութիւնով, առանց ամենաչնչին խառնուրդի գրքական արեւստականութեան և պալմանաւորութեան: Առհասարակ առաջինից մինչ վերջին օրը իւր գրական գործունէութեան, իշխ. Յերետելին սլահականց նոյն գիրքը վրաց գրականութեան մէջ, ինչ Պուշկինը ունի ռուսաց գրականութեան մէջ՝ վերաբերեալ գրածների լեզուին և ձևին: Նա առաջինն էր իսկ վետոյ աւելի քան մի ուրիշը իւր հայրենակիցներից, որ ուժեղ կերպով մօտեցրեց գրականութեան լեզուն ժողովրդականին, տալով նորան անհաւատալի ձկունութիւն և շնորհալիութիւն, արտապատկեր իւր և գոյն»: Բայց վրաց գրողը շտապում է չալտնել, որ Պուշկինի հետ համեմատութիւնը միայն ձևին և լեզուին վերաբերեալ է թող տալիս, որովհետև՝ աւանդ, վրաց բանաստեղծին չը չաջողեց համեմատել ռուս բանաստեղծի հետ և առաջ բերել արմատական վեղաշրջում իւր հայրենիքի գրական արտադրութիւնների ոչ միայն ձևի, այլ և բովանդակութեան մէջ:

«Ալդ բարձր պատիւը՝ տալ հայրենի ժողովրդի գրական ուժերին նոր և արժանի խնդիրներ—եղաւ բաժին վրաց գրականութեան մէջ ոչ թէ իշխան Ակակի Յերետելի՛ին, որին ալդ ամենից շատ կը սալէր, այլ մի ուրիշ գրողի՝ իշխան Իլիա Չաւչաւաձէին, որը և ալդ իսկ պատճառով, իրաւամբ բռնեց առաջին տեղը, որպէս գլուխ ներկայ գրականութեան:



Բանից դուրս է գալիս, ըստ Նիկողաձէի, որ իշխան Չաւչաւաձէն Յերետելի'ի բնական տաղանդի հատիկն էլ չ'ունի, բայց, չը նալած դորան, Չաւչաւաձէն է գլուխ վրաց գրականութեան և ոչ Յերետելին, որովհետեւ Չաւչաւաձէն է, որ տւեց ուղղութիւն իւր հայրենիքի նորագոյն գրականութեան: Մէկը, Չաւչաւաձէն, բնութիւնից համեմատաբար աւելի քիչ օժտւած, առանց դադարելու ճիշդ թափեց, զոհեց իւր բոլոր ժամանակը, որ իւր ընդունակութիւններին տալ աչն բոլոր զարգացումը, բոլոր կարողութիւնը, որքան միայն նրանց մատչելի էին: Ունենալով կամք, հաստատամտութիւն, ունենալով իւր կեանքում նպատակներ, նա չը վախեցաւ աշխատելուց՝ սորա բոլոր ծանրութիւնով և անհրապուրանքով հանդերձ: Նա յուսանում էր, կարգում էր ուրիշ գրողներին, ուսանում էր կեանքի խնդիրները.— և զարգացրեց իւր խելքը մինչ իւր ժամանակի լուսաւորւած մարդկանց ընդհանուր մակերևութը...: Այն նա չաջողեց ամեն բանում, չաջողեց աչն պատճառով, որ, իւր հայրենակիցների մէջ, նա թերեւս միակ գործիչն էր կամքով, հաստատամտութիւնով, աշխատասիրութիւնով: Այն նոյն իսկ բանաստեղծութեան մէջ, ալիք քրտնաջան աշխատութիւնով ձեռք բերած կարողութիւնով, թողեց իւր հետքը, ի մեծ օգուտ ժամանակակիցների և հետագաների համար:

«Իսկ միւսը, իշխան Յերետելին, որը ծնւած է իսկական բանաստեղծ, աւանդ, իւր վերայ ոչինչ ուժ գործ չը դրեց, իւր անզուգական բանաստեղծական տաղանդը չը զինեց բոլոր անհրաժեշտ պայմաններով և միայն իւր մերկ բնութեան սկզբնական պարզութեան մէջ: Նա զմալեցնում է, երբ նորա երգը հնչում է, զմալեցնում է, որպէս անմահ սոփալ, բայց հենց ալիքան: Նորա երգը չի մեռնելու և չի մուսայելու. օ՛հ, ալիք ճիշդ է, որպէս Աստուած սուրբ է: Բայց նա չը բռնեց վրաց գրականութեան մէջ աչն գերիշխող տեղը, որը պատկանում է նրան ծնունդով: Ծուլ ծառայ, նա թաղեց հողի տակ Աստուածանից նրան տւած ուժեղ գործիքը, և իւր ազգի գրականութիւնը չը քաղեց նորա գործունէութիւնից բոլորը, ինչ կարող էր տալ նորան ալիք ահաբէն տաղանդը, «ինքն իրան աւերող և թշնամի»:

Ահա՛ այսքանը իշխան Յերետելի'ի մասին մասնաւորապէս, վրաց գրականութեան մասին ընդհանրապէս, որքանով որ զորա մասին պ. Նիկողաձէն ձեռնհաս է դատելու: Այս իմ կողմից ընդունում եմ, որ նորա դատողութիւնը գոնէ մի արժանաւորութիւն ունի, որ նա հասկացնում է ինչ ուղում է ասել: Իսկ ալիք արդէն մեծ արժանիք է: Բայց ևս մի փոքր անհաւատ եմ դառնում, երբ, ի միջի ալիք, պ. Նիկողաձէն չափաբարում է ի լուր ամբողջ Ռուսաստանի աղօսիսի մի հալեաղք, լսեցէ՛ք. «Ապրելի է առանց որ և է չափազանցութեան տակ, որ բնական տաղանդով նա, իշխան Յերետելին, ամբողջ զիւրով բարձր է բոլոր Արմաւուսեան գրողներից, բանաստեղծներից և արձակ գրողներից, առանց որ և է

բացառութեան: 'Իէ', ասացէք խնդրեմ, ի սէր Յիսուսի և Սուրբ Գթութեան, ապրիւ Ռաֆայէլ Պատկանեանի, Բաֆֆիլի և Պռօշեանի ժամանակներում և սոցա, որպէս և շատ ուրիշներին չը ճանաչելով, առանց ցերեմոնիայի ալդ ձևով խօսել, — վիրաւորանք չէ կրիտիկոսի պատւին:

«Մուրճ»-ի ընթերցողները անշուշտ զարմացած կը լինին ալն սառն վերաբերմունքի վերապ, որ ամսագրիս խմբագրութիւնը ցոյց տուց իւր դէմ գրոտողներին: Խմբագրութիւնը բազմաթիւ զրաւոր փաստեր ունի, որ ալդ զարմանքը հիացմունքի է հասել շատ և շատ չըջաններում և ալն էլ ամենուրեք: Բալց խնդիրը ալդ չէ: «Մուրճ»-ի մասին կարծիք չալտնողներեց եղաւ նաև հէքիաթաբան և մանկական գրականութեան մէջ հաստատ տեղ բռնած և ամենքից էլ, որպէս ալդպիսին գնահատւած, պ. Աղապեանը, որը, դժգոհ իւր ալդ պատաւար դիրքից, զօրով ուղղւում է կրիտիկոս դառնալ, զոհելով դորա համար նոյն իսկ իւր սեպհական կաշին: Նոյն ալն քննադատութեան մէջ, որի ամեն ալիթ խարի մասը հենց նորա լատաջաբանն էր, պ. Աղապեանցը խօսեց նաև պ. Գէորդ Բարխուդարեանցի «Բարեպաշտ Մարգիկ» պօէմի մասին, որից, որպէս լիշում են «Մուրճ»-ի ընթերցողները, մի նմուշ տալեց ամսագրիս առաջին համարում: Պ. Աղապեանցը ալդ պօէմը պարկապղուկ անւանեց — ամենքին զարմացնելու համար, որպէս լատուկ է բոլոր «վիթխարի» մարդկանց: Ալժմ պ. Բարխուդարեանցը, հրատարակելով իւր պօէմը ամբողջապէս, գործը վերջացնում է մի վերջարանով, որով լուծում է մի պսիխօ-ֆիզիքական խնդիր, ալն է, թէ՛ ի՞նչ զանազանութիւն կալ հոգու և մարքի մեծութեան և մարմնի մեծութեան մէջ: Նւ ահա թէ ինչ է ասում երգիծաբանը.

«Վերջացնելով իմ առակը,  
Պէտք է խնդրեմ ներողութիւն,  
Թէ պատճառեց ալս տեսրակը,  
Իմ ընթերցող, քեզ ձանձրութիւն.

. . . . .

Եթէ ես էլ գործ ածէի  
Հալր Խորէնի «Յանգարանը»,  
Ալնպիսի բան կը ստեղծէի,  
Որ զարդարէր թանգարանը.  
Ես երգում եմ, իբրև դուստն,  
Ինչ որ աղղում է մուսան.  
Գորա համար դուցէ երգոս  
Հնչւում իբրև պարկապղուկ  
Մի աղաչին, որին երկըս



Հաճելի չէ, որին թղուկ  
 Երևում են բոլոր մարդիկ.  
 Միայն ի՞նքն է մեծ, ի՞նքն է հանճար.  
 Նրան համոզել զուր կ'աշխատիք,  
 Թէ նա մեծ չէ, ալ միայն երկար:

Ուրեմն խնդիրը պարզւում է նորանով, որ մեծ պէտք է ասել խելքով և հոգով մեծին, բայց մարմնով մեծին պէտք է ասել երկար: Որոշումը սրամիտ է: Բայց միայն մի պալմանով, որ սատիրը դորանով իւր վերջին խօսքը ասած լինէր, առանց հարկաւորութիւն զգալու դիմել օգնութեան Նզուարտեան կատակներին:

ԼՈՒՍԻՆԻ

#### ԲԱՔՈՒԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Սորանից ճիշդ 25 տարի առաջ, Բաքուի հալ հասարակութեանը տիրում էր նույն ուրախութիւնը, նույն ոգևորութիւնը, ինչ ամսուս 21-ին, միայն ալն զանազանութեամբ, որ նոցա շարժառիթները տարբեր էին: Այն ժամանակաւ ոգևորութեան պատճառը ալն պալմառ աստղն էր, որ երեսոց Բաքուի հօրիպօնի վերաջ և հրաւիրեց մտածող հալին լուսաւորութիւն և մարդասիրութիւն տարածել իրանց համազգիների մէջ: Այդ աստղը ալման Մարդասիրական Ընկերութիւնն է, որի կանոնադրութիւնը Նախկին փոխարքայ Նորին Վալսերական մեծութիւն իշխան Միխայէլը բարեհաճեց հաստատել մալխի 21-ին, 1864 թ.: Ո՞վ էր ալն մարդը, ալն ուժը, որը ալնալիս լուսաւոր ժամանակ, ինչպիսին էր վաթսուհական թեւականը, բայց մի ալնալիս լեռ ընկած գաւառական քաղաքում, ինչպէս էր Բաքուն, որը իրաւամբ կոչւում է կղել Կովկասի Սիբիր, ոգևորած մարդասիրական գաղափարով, երեան է գալիս խաւար ամբոխի մէջ մարդասիրութիւն և լուսաւորութիւն տարածելու: Դա՛ հանգուցեալ բժիշկ Դաւիթ Ռոստոմեանցն էր: Այդ հաղազիւտ մարդու մասին շատ քիչ տեղեկութիւններ կան. ինչ որ էլ նորա մասին պիտի ասեմ, ալք քաղում եմ Ընկերութեան քարտուղար պ. Ա. Գալստեանցի տեղեկագրից: Յանկալի կը լինէր, որ նոքա, որոնք բաղդ են ունեցել նորա հետ ընկեր, բարեկամ կամ պաշտօնակից լինելու, շտապէին նորա մանկական, ուսանողական և բժշկական կեանքից տեղեկութիւններ հաղորդել Ընկերութեան քարտուղարին, որը տպագրութեան համար պատրաստում է ընդարձակ տեղեկագիր, որի մէջ անշուշտ կը մտնի և հանգուցեալ հիմնադրի կենսագրութիւնը:

Հանգուցեալ բժիշկ Դաւիթ Ռոստոմեանցը ծնւել է Թիֆլիսում, 1820 թ. և վախճանւել է 1869 թ., ուրեմն 49 տարեկան հասակում: Նա իւր

բժշկական ուսումը ստացել է Մոսկւայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, և աւարտել է 1842 թ., ուրեմն 22 տարեկան հասկում: Դորանից լիտուացի անմիջապէս բժշկական պաշտօնով գալիս է Նուխաւ գաւառը, իսկ մի տարուց լիտուացի տեղափոխում են նորան Բաքուի գաւառը: Այստեղ երկացել էին ալդ ժամանակ զանազան տարափոխիկ և վտանգաւոր հիւանդութիւններ, ինչպիսին է խօշերան, որը սկզբում տարածւել էր Սարեանում, Լենկօրանում և ապա Շամախու գաւառում: Ռոստոմեանցին են լանձնում դոցա առաջն առնելը, որը և կատարում է ամենաջն ճշդութեամբ: 1849 թ. նշանակւում է նահանգական բժշկի օգնական, իսկ բժշկի մահից լիտուացի լինքն է վարում չորս տարի նորա պաշտօնը: Բացի դորանից, նա երկու տարի, 1850—1852 թ., վարել է քաղաքային բժշկի և կենդանաբուժի պաշտօն, իսկ 10 տարի շարունակ կատարել է ռուսաց սբ. Նունէ չորս-դասեան զպրոցում բժշկի պաշտօն: 1868 թ.ին ստանում է Բաքուի նահանգական բժշկի պաշտօն, որը և վարում է մինչև իր վախճանը: Այդ անխոնջ մշակի գլխաւոր և արժանաւոր չափութիւններն, որոնցով նա կարողանում էր ազդել շրջապատողների վերաջ և զրաւել նոցա համակրութիւնը դէպի իրան՝ էին նորա զարգացումը, լեզուն, զգայուն սիրտը, կարեկից և փափուկ բնաւորութիւնը: Նա կարեկցում է եղել ամեն մէկ թշուառի, երբէք չի զլացել հասցնել իւր բժշկական օգնութիւնը կարօտեալներին. ալդպիսիների համար նորա դուռը միշտ բաց է եղել: Պատելով գաւառները, նա ի մօտոյ ծանօթանում է հայերի թշուառ գրութեան հետ. նա տեսնում է, որ նորա թշնամին ազիտութիւնն է, նա կարօտ է լուսի: Եւ անա ալդ ժամանակ նորա մէջ զլանում է ալժման Մարդասիրական Բնկերութեան գաղափարը: Նա ալս միաքը լալտնում է հանգուցեալ Մովսէս Զոհրաբեանցին և ուրիշներին և գրաւում է նոցա համակրութիւնը և ուշագրութիւնը: Ալդ պարոններից Մովսէս Զոհրաբեանցը լինում է Ռոստոմեանցի գաղափարների ջերմ պաշտպանող և տարածողը: Ալդ երկու անձնաւորութիւնները կազմում են Բնկերութեան կանոնադրութիւնը և ուղարկում են նորան հաստատութեան, որը և ստացւում է մի քանի փոփոխութիւններով 1864 թ. մալիսի 21-ին: Ալդ ժամանակ հիմնադիր գրւում են ութ հոգի, բալց մինչև հաստատուելը աւելանում են կրկին հինգ հոգի և ալդպիսով զաւնում են տասներեք հոգի: Սոքա վեր են դնում 12,650 ռ., որը և կազմում է հիմնական զբամաղլուխ:

Ահա հիմնադիր պարոնների անուն և ալդանունները:

- 1) Ռոստոմեանց Դաւիթ Յարութիւնեան, բժշկ. (Տփլիսիսցի):
- 2) Տէր-Ղուկասեանց Ալէքսանդր Արտեմիչ (Տփլիսիսցի):
- 3) Կրասիլնիկեանց Ներսէս Նիկիտիչ (Շուշեցի):
- 4) Զոհրաբեանց Մովսէս Զոհրաբեան (Շուշեցի):
- 5) Շահգիդանեանց Մուսաէլ Դանիէլեան (Բազուկցի):



- 6) Թումազեանց Գրիգոր Հալրապետեան (Շուշեցի):
- 7) Ալվադեանց Սարգիս Կիրիլի:
- 8) Տէր-Գրիգորեանց Սարգիս Տէր-Յովհաննիսեան:
- 9) Լալապեանց Գէորգ Բէգ Պօղոսեան (Շամախեցի):
- 10) Ալրեւսեանց Յակոբ Սահակեան:
- 11) Հախումեանց Ոհանջան Գրիգորեան (Շուշեցի):
- 12) Գրիգորեանց Սարգիս Յարութիւնեանց:
- 13) Աղսմեանց Գաւիթ Յովհաննիսեան:

Այժմ զիմնեք Ընկերութեան բուն գործունէութեան: Այս զէպքում՝ ամենից պերճախօսը թանջաններն են, որ հարկաւոր եւ համարում զնել ալս տել, քաղելով նոցա պ. ատենադպիր Վալտտեանցի տեղեկագրից:

Մարդասիրական Ընկերութիւնը 25 տարւալ ընթացքում ստացել է 185.324 ռ. 33 կ. մուտք՝ հետեւեալ աղբիւրներից.

|                                                        | րուբլ. կ. |
|--------------------------------------------------------|-----------|
| 13 հիմնադիր անդամներից (12.650 փոխարէն) . . . . .      | 9.650 —   |
| 4 պատուաւոր անդամներից . . . . .                       | 4.000 —   |
| 317 անփոփոխ անդամներից . . . . .                       | 32.625 —  |
| 869 տարեկան անդամներից . . . . .                       | 4.459 —   |
| Գրամաւլ, սոկոսիք և արդիւնք վաճառականութիւնից . . . . . | 62.294 41 |
| Կտակած գումարներ . . . . .                             | 4.280 —   |
| Նւիրատութիւններ . . . . .                              | 4.954 94  |
| Ներկայացումներից . . . . .                             | 2.763 19  |
| Տպարանից եկամուտ . . . . .                             | 5.397 81  |
| Տպարանի վաճառումից . . . . .                           | 675 —     |
| Շինութեան Նկուղից և սենեակից վարձ . . . . .            | 2.955 —   |
| Ձեռագործների վաճառումից . . . . .                      | 1.298 6   |
| Գրքերի վաճառումից . . . . .                            | 106 19    |
| Աշակերտներից թոշակադրամ . . . . .                      | 1.340 —   |
| Շոգենաւակից արդիւնք . . . . .                          | 1.025 —   |
| Շոգենաւակի վաճառումից . . . . .                        | 1.200 —   |
| Ծխական հողաբարձութիւնից . . . . .                      | 13.341 65 |
| Նոր շինութեան համար ժողոված գումար . . . . .           | 29.636 99 |
| Պալմանաւոր գումարներ . . . . .                         | 1.490 84  |
| Գրադարանական գումար . . . . .                          | 1.977 72  |
| Անյալ աղբիւրներից . . . . .                            | 883 53    |

25 տարեալ ընթացքում ծախս եղել է 122.623 ռ. 10 կ. հետևեալ առարկաների վերաւ.

|                                                                                  | րուբլ.  | կ. |
|----------------------------------------------------------------------------------|---------|----|
| 1) Բաքուի դպրոցները վերալ. . . . .                                               | 48.147  | 33 |
| որից 34.805 ռ. 68 ռ. Ընկերութեանն է, մնացածը հոգաբարձութեան և մասնաւոր մարդկանց: |         |    |
| 2) Գիւղական և քաղաքային դպրոցներին նպաստ . .                                     | 7.411   | 10 |
| 3) Որդեգրաց օժանդակութիւն . . . . .                                              | 14.645  | 30 |
| 4) Ողորմութիւն աղքատաց Բաքուի, Փանձակի, Սա-<br>մարալ և Զուղալի . . . . .         | 2.099   | 22 |
| 5) Տան վարձ դպրոցները և զբաղման համար . . . .                                    | 1.635   | —  |
| 6) Տպարանի վերալ ծախքեր . . . . .                                                | 7.447   | 49 |
| 7) Հին շինութեան վերալ ծախք . . . . .                                            | 7.715   | 93 |
| 8) Շինութեանց կարկառոտաց վերալ . . . . .                                         | 4.600   | 31 |
| 9) Նոր շինութեան վերալ ծախք . . . . .                                            | 16.370  | 53 |
| 10) Գրատան վերալ ծախք՝ գրքերի, լրագիրների և ալէն .                               | 5.544   | 81 |
| 11) Գործաւարական և անտեսաւարական ծախքեր . .                                      | 5.332   | 18 |
| 12) Բանկին տուտ . . . . .                                                        | 2.321   | 10 |
| 13) Անակնունեւի ծախքեր . . . . .                                                 | 352     | 80 |
| Աւելացնենք սորա վերալ և զանազան դէպքերում ստա-<br>յած վեճանքեր . . . . .         | 6.765   | —  |
| Կը ստանանք ընդամենը ծախսած դումար . . . . .                                      | 128.388 | 10 |
| Ալժամ Ընկերութիւնը ունի չարժական և անչարժ կապքով .                               | 62.370  | 50 |

Ուշադրութեամբ նաեւ լով Ընկերութեան գործունէութեան վերալ, մենք տեսնում ենք, որ նա իւր բոլոր ուժը չի կենտրոնացրել մի բանի վերալ և մի տեղում, այլ նա իւր բարոյական և նիւթական ուժերը տարածել է ալն տեղերում և ալն բաների վերալ, որտեղ և ինչ բանում կարիք է զգացել: Դպրանից ամենամեծ նպաստը ստացել են ուսումնարանները, ալ խօսքով, զբաղրութիւն տարածելուն ևն գործադրել և ալն էլ զխաւորապէս քաղաքներում. միմիայն վերջին ժամանակներս է Ընկերութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնում գիւղական դպրոցները վերալ: Մեր կարծիքով, ժամանակ է վերալն քաղաքային դպրոցներին հասանելիք նպաստը. քաղաքները իրանք կարող են իրանց դպրոցը ապահովացնել, նամանաւանդ Բաքուն, որի առաջադեմ ժողովուրդը չափն է ամենուրեք. ալզ գումարները զխաւորապէս պէտք է գործադրել գիւղական դպրոցների վերալ, որոնց միջոցները սուղ են: Միմիայն Բաքուի դպրոցներին չստիպեցրած նպաստով կարելի է գիւղերում 10 դպրոց բանալ: Մենք յոստիդ չենք պնդում քաղաքային դպրոցներին նպաստ չը տալուն, ոչ. մեր ցանկութիւնն է, որ չափաւոր նպաստեն, իմէ չեն կարող միանգամից դադարեցնել: Քա-



ղաքները ունին չափաքանակի աղբիւրներ. օրինակ, միաջն Բաքուի ուսումնարանները ժամանակով կարող են ապահովել եկեղեցիներով, եթէ ժողովուրդը աշխատի երեցփոխ ընտրել ներկա երեցփոխի նման անչափասէր, անխաղախ և ազնիւ մարդկանց:

Օգնել զպրոցներին, նամանաւանդ գիւղական զպրոցներին, մի շատ համակրելի բան է. բայց դորա հետ միասին հարկաւոր է հսկել, որ ալը նպաստը ճիշդ իւր նպատակի համար դորձադրուի Պատահել են դէպքեր, որ Ընկերութիւնը ուղարկել է նպաստ, հաւատարմով միանգամայն աչա կամ աչն պարտնի խօսքին, աչն ինչ զպրոցը իրօք գոյութիւն չի ունեցել. կամ ուղարկուած է աչնպիսի գիւղական զպրոցներին, որտեղ կանոնաւոր զպրոց չը կա, ալ գիւղի քահանան, ժողովելով մի հինգ-վեց աղաջ սովորեցնում է Սաղմոս և Աւետարան: Ալք տեսակ տեղերին օգնելը միանգամայն աւելորդ է, որովհետեւ Սաղմոս և Աւետարան, առանց Ընկերութեան նպաստի էլ, կը սովորեցնուի, ինչպէս ալք անում են ամեն գիւղերում քահանաները և տիրացուները, որի համար ուսուցիչը կը ստանալ գիւղացիներից իւր վարձը: Մենք կը կամենալինք, որ Ընկերութիւնը նպաստէ միայն աչնպիսի զպրոցներին, որոնց եկամուտի վերաջ եթէ աւելացնելու լինենք Ընկերութեան նպաստը, կը պահել մի կանոնաւոր ուսուցիչ: Վամ եթէ կամենում են թրքախօս գիւղերում զպրոցներ բանալ, իրանք ուսուցիչներ վարձեն, ուղարկեն և միայն մի մասնաւոր ծախս գիւղացիներից պահանջեն. հակառակ դէպքում, շատ ապարդիւն կ'անցնի:

Քսանահինգ տարւալ ընթացքում Ընկերութիւնը նպաստել է 15 դպրոցի, որոնցից 6-ին ոչինչ չէ ուղարկում ալք, իսկ մնացածները չարունակում են ստանալ իրանց նպաստը: Յիշեալ զպրոցներից մի քանիսին օգնել է փողով, մի քանիսին էլ թէ Ընկ. դրամով և թէ դասագրքերով: Ներկայումս օգնում է միայն փողով:

Նրկրորդ տեղը ծախսի մէջ բռնում է տան վարձը և ուսումնարանի համար չարմար չինութիւն կառուցանելը: Վերջինս մօտիկ ապագայում պիտի կազմի նորա պարծանքը: Նա դեռ չէ վերջացած և սպասում է հասարակութեան օգնութեան:

Յուցակում երրորդ տեղն է բռնում որդեգրների վերաջ արած ծախսը, որը հասնում է մի պատկառելի թւանշանի, աչն է 14.645 ր. 30 կ.: Որդեգրներ ունեցել է չարունակ մինչև ներկալ թւականը. հիմնած տարիներից սկսած մինչև 80 թւականը, դրեթէ զլիսաւոր ուշադրութիւնը դարձրած է եղել դոցա վերաջ, միայն ներկայումս է, որ ունի միայն մի որդեգիր:

Մարդասիրական Ընկերութիւնը իր 25 տարւալ գոյութեան ընթացքում պահել է թէ Խուսափանի և թէ արտասահմանի գանտղան զպրոցներում 22-ից աւելի որդեգիրներ: Ահա ալք որդեգիրների անուն, ազգանունները և նոցա որդեգրութեան տարեթիւը:

1) Գարրիէլ Ռոմանովսկիւ 8 տարի, 2) Աւագ Գրիգորեանց (ալժմ քահանայ) 5 տարի, 3) Աղէքսանդր Քալանթար (գիւղատնտես) 1 տարի, 4) Միքայէլ Տէր-Օհանեանց (բժիշկ) 4 տարի, 5) Ներսէս Աբէլեանց (տեխնո-լոգ) 12 տարի, 6) Ա. Գալստեանց (տեսուչ) 2 տարի, 7) Սարգիս Մեհրաբեանց (տեխնիկ) 8 տարի, 8) Տիկին Մեղանկի 2 տարի, 9) Տէր-Մարկոսեանց 2 տարի, 10) Սարգիս Ծատուրեանց (աւարտել է Պետերբ. համալս. ֆիզիկո-մատեմատ. բաժնում) 14 տարի, 11) Գասպար Յակովբեան 2 տ., 12) Նիկողայոս Փիրումեանց 4 տարի (ուսուցիչ), 13) Բադրաս Նազուբեանց 10 տարի (ուսուցիչ), 14) Միքայէլ Ղալաբեղեանց 3 տարի (ատե-նապետ), 15) Տ. Նաւասարդեանց 3 տարի (գրատէր), 16) Գեորգ Տէր-Սարգսեանց 2 տարի, 17) Լեւոն Աթաբէկեանց 2 տարի (վախճանած), 18) Գիւրջեանց 2 տարի, 19) Ղարաջեանց 3 տարի. մնացածները կամ կամով են թողել ուսումը կամ վախճանել են:

Ընկերութեան մնացած Կործոնէութիւնը ամփոփւած է աղքատներին օգնելու, գրադարան-ընթերցարանի և տպարանի հիմնելում. մնացածը անշուշտ է: Աղքատներին և չքաւորներին օգնել է մինչև ալժմեան աղքատա-նոցի հիմնաւիլը, ուր ալժմ զետեղւած են մօտ 20 ընտանիք:

Գրադարան-ընթերցարանը կարող է նմանապէս նորա պարծանքնե-րից մէկը համարուել: Նա հիմնուած է ժողովրդի մտաւոր պահանջներին բա-ւականութիւն տալու և նորանից ալժմ օգտուում են ամենքը, առանց ազգի և կրօնի խտրութեան: Մինչև 85 թ. նա մի առանձին դեր չէր խաղում և գտնուում էր շատ անկանոն զրութեան մէջ. ներկայումս կարգի է բերւած և կազմւած է մի լանձնաժողով նորա վերաջ հսկելու, ցուցակագրելու և ղաժը և մինչև ժամանակ միջոցներ դառնելու նորան հարստացնելու համար:

Մինչև լանձնաժողովի հիմնիլը գրադարանը ունէր 3506 հատոր գիրք, արժողութեամբ 3301 ռ. 86 կ. ներկայումս, չնորհիւ լանձնաժողովի ջանքերի, գրքերի թիւը հասցրած է 4600 հատորի, արժողութեամբ 5575 ռ. և, բացի գորանից, ինչպէս ունի 1800 ռ. որը շահեցնում է Ընկերութեան փողերի հետ: Ալժմ ընթերցարանը ստանում է թէ հալերէն և թէ ուսուրէն լեզուներով 30 պարբերական հրատարակութիւններ, որոնցից 9 հալերէն է, մնացածները՝ ուսուրէն:

Իւր գոյութեան ամբողջ ընթացքում Ընկերութիւնը ունեցել է սո-փորական և արտաստիւր նիւստեր 578 անգամ, ընդհանուր ժողովներ 22 անգամ. իսկ ժողովներին մասնակցել է մօտ 1000 հոգի. 25 տարւալ ըն-թացքում Ընկերութիւնը ունեցել է 6 նախագահ, 3 պանձապահ, 6 ատե-նադպիր և 26 խորհրդական անդամներ:

Այս ընդհանուր տեսութիւնից չեսող, հարկաւոր եւ համարում դնել այստեղ յօդերիանի կարճաւոս նկարագրութիւնը:

Մալիսի 21-ին տօնակց չքեղ կերպով «Մարդասիրական Ընկերութեան» 25-ամեակը, այն ընկերութեան, որ իւր բեղմնաւոր աշխատութիւնով ար-



ժանացել է ընդհանուր ուշադրութեանը և լարդանքին: Հակառակ նախկին որոշման, հանդէսը կատարեց ուսումնարանի բազում, որը, շնորհիւ պ. պ. Ս. Բաղիրեանցի և Պ. Ղուկասեանցի, զարգարած էր մեծ ճաշակով: Արեւից պաշտպանելու համար, բազմ վերելից ծածկւած էր բրնձիւնով, պատերից խփւած էին խալիներ և դրօշակներ. տեղ տեղ զրւած էին ծաղիկներ. բազմ մէջտեղում կարգ կարգ շարւած էին աթոռներ՝ հանդիսականներին համար. ուղիւ նոցա զիմաց պատից կախւած էին հանդուցեալ Կալսր Աղէքսանդր II և ներկալ Թագաւոր Ալէքսանդր III-ի մեծադիր պատկերները և նմանապէս Մակար Կաթողիկոսի: Նոյնպէս և հանդուցեալ հիմնադիր անդամներին պատկերները: Ամսու, որ հանդուցեալ հիմնադիր Աստուծանցի մեծադիր պատկերը իւր ժամանակին չը հասաւ. նա պատկերւած է Պետերբուրգում և արժէ 150 ռ.: Պատշգամբի մի մասում զրւած էին աթոռներ հիմնադիր և խորհրդական անդամներին համար և մի ամբիոն՝ ճառախօսներին համար: Որոշւած ծրագրի համաձայն՝ նախ կատարեց պատարագ և մօբերին ներկալ Կալսր Աղէքսանդր III-ի համար և ապա հոգեհանգիստ հանդուցեալ հիմնադիր անդամներին համար: Պատարագի ժամանակ հալը պատարագիչը մի կարճառօտ քարոզ խօսեց, որով թեւց Րնկերութեան արած ծառայութիւնները լօգուտ ազգի, քրդորեց ժողովրդին օգնել Րնկերութեան, նամանաւանդ շինութեան, որը սպասում է ժողովրդի օգնութեան, որպէս զի շինւիւ վերջանալ, Եկեղեցական ծիսակատարութիւնը վերջացաւ ճիշդ ժամի 12-ին: Այնուհետեւ ժողովուրդը զիմեց ուսումնարանի բազմ, ուր պիտի կատարէր հանդէսը: Բազմ զուռը պահում էին մի քանի ոտտիկաններ, որոնց պատկերւած էր միայն կանանց թուլ տալ, խկ տղամարդիկ կարող էին եկեղեցու բազմից լսել: Նստերը աշխատում էին ուսումնարանից ներս մտնել, բայց քիչերին էր լաջողում ալդ, աչտեղից էլ էին վռնդում. նոյն խկ պատուար անդամներից ալսօրւալ օրը զրկւած են մասնակցելու ուրախութեան, աչն ինչ նոցա տեղը բռնած էին աչտիտի մարդիկ, որոնք երբէք ոչ մի բանով չեն մասնակցել Րնկերութեան գործերին և ալսօր էլ ոչինչ պիտի քաղեն զանազան ընթերցումներից և ալս ամենը շնորհիւ լանձնաժողովի սխալ կարգադրութեան: Լուռւմ են աղաղակներ և տրտունջներ. ալդ ամենը մի կերպ խաղաղացնում է: Պ. Կարա-Մուրզալի և հալկական երաժշտական խմբերը բռնել են պատշգամբի վերալ իրանց պատշաճաւոր տեղերը: Պ. Կարա-Մուրզալի խումբը բաղկացած է 150 հոգուց՝ երկու սեռից: Հանդէսին պատուել էին իրանց ներկայութիւնով քաղաքադուխը և մի քանի ալաղգի արկիներ և սարոններ: Ճիշդ ժամի 12-ին բարձրանում է ամբիոն Րնկերութեան նախադաս պ. Անտօնեանցը. ամեն տեղ տիրում է լուռութիւն. նա մի քանի խօսքով բանում է հանդէսը. նորա ճառին հետեւում է ուստաց «Бже, царя храни» հիմնը. ամենքը ոտքի են կանդնում և զլիարաց ու ուռալով բնդունում են երգը: Այնուհետեւ բարձրանում է ամբիոն Րնկերութեան անդամ և ատենադպիր պ. Ա. Պալստեանցը և կարդում կարճառօտ տեղե-

կազիր Ընկերութեան 25-ամեայ գործունէութեան: Սա տեղում է  $\frac{3}{4}$  ժամ. հասարակութիւնը ընդունում է ծախահարութեամբ: Անուհետեւ խումբը երգում է այդ օրւայ առիթով լօրինւած երգը, հեղինակութիւն պ. Ն. Ղուկասեանցի և երաժշտութիւն պ. Կարա—Մուրզալի: Նշանակը թողնում է հանդիսականների վերաջ ամենաքաղցր տպաւորութիւն. պ. Կարա—Մուրզան ստանում է Ընկերութեան նախագահից իբրեւ ընծայ մի երաժշտական դաւադան ոսկեղօծ ծաղերով: Գորանից չեսող կարգացւում են ստացւած հեռագիրներ, ուղերձներ և ոտանաւորներ: Ջանադան կողմերից ստացել են 22 հեռագիր, 6 ուղերձ և 4 ոտանաւոր: Հեռագիրներից նշանաւոր է Մօսկւայից ուղարկւած Շահաղիլ—Կամսարականի բանաստեղծական հեռագիրը, Կարգացւելին և ասուցին մի քանի ճառեր, որոնք ընդունւում էին ծախահարութեամբ. ոտանաւորները և ճառերը ընդմիջւում էին երգերով:

Հանդէսը վերջացաւ ճիշդ ժամի երկուսին: Անուհետեւ հասարակութիւնը զիմեց ուսումնարանի դահլիճը՝ ձեռագործ իրեղէնները տեսնելու և գնելու: Դահլիճը չքեղ կերպով զարդարւած էր զեղեցիկ ձեռագործ իրեղէններով, որոնց հասարակութիւնը գնում էր ամենալն սիրով: Ձեռագործների վաճառումից գոյացաւ 500 ռ. ասելի: Նոյն օրը քաղաքային ապում կար ի պատու Ընկերութեան պրօսանք, որից գոյացաւ 1500 ռ. ասելի:

Վերջացնելով խօսքս, չեմ կարող չը լալտնել լարգելի Ընկերութեան ջերմ զգացումներս, ցանկանալով նորան երկար տարիներ լողութիւն չօգուտ ազգի:

## Ա. ԶԼԻՑԵԱՆՑ

## Բաքու:

Դնում ենք ապտեղ ստացած հեռագիրների և ուղերձների ցուցակը: ԹԻՖԼԻՍԻՑ: Հայոց Բարեգործական Ընկերութիւնից, «Մուրճ»-ի, «Մշակ»-ի, «Նոր-Գար»-ի և «Արձագանք»-ի խմբագիրներից, Արիստակէս սրբադանից, Պռօչեանից (սա նւիրում է 100 օրինակ իւր հեղինակութիւններից), Մուրացանից, Շիրվանզադէից և Թիւսիկեանից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ: Նզեանից և Սանասարեանից միասին և «Արաքս»-ի խմբագրութիւնից:

ՄՈՍԿԻԱՅԻՑ: Շահաղիլ—Կամսարականից, Լեղարք Փամհարեաններից և պ. Լիանօղեանից:

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ: Պ. Նզիչէ Նաբաթեանից:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆԻՑ: Գարրիէլ Ռամանովսկուց (որդեղիր):



ՍԱԼԵԱՆԻՑ: Բժիշկ Արամեանից, Իզդրաշեանից և Գաբրիէլեանից, (զբւած է.  
զբարբար՝ ուստերէն տառերով):

ՂԱԶԱԽԻՑ: Պ. Ս. Ամիրեանից:

ՓՕԹԻԻՑ: Պ. Աղէքսանդր Զաքարեանից:

ՂՈՒԲԱՅԻՑ: Բժիշկ Զալեանից:

### Ո Ւ Ղ Ե Ր Զ Ն Ե Ր

ՊԵՏԵՐՈՒՐԳԻՑ: Դեղապետ Իզդրաշեանից:

ԴԵՐԲԵՆԴԻՑ: Օր. Եղիսարէթ Զուարեանից:

ՍԱԼԵԱՆԻՑ: Բժիշկ Գաբրիէլ Յովհաննիսեանից:

ԲԱԳՈՒԱՅ րէալական դպրոցի ուսուցիչ Азиевский-ից:

ՇԱՄԱԽՈՒՑ: Մակար վարդապետ Բարխուդարեանից, և

(Բաղուխ) Գրիգոր քահանալ Գրիգորեանից:

Բացի դոցանից, ստացւած են և չորս ոտանաւորներ, որոնցից երեքը տեղւոյս ընտելեալ դպրոցի աշակերտներից են, իսկ մէկը Ննալի համալ-  
սարանի ուսանող Արշակ Տէր-Միքէլեանից:

### ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՁԱՊԵՏԻ ՇՐՋԱՆԵՐԱԿԱՆԸ

Կովկասեան Կառավարչապետան ուղարկել է պ. պ. Նահանգապետնե-  
րին հետեւեալ շրջաբերականը 1889 թ. Ապրիլի 16-ից № 3716:

Ամենայն Հաւոյ Կաթողիկոս Մակարի չարուցած միջնորդութեան  
համաձայն՝ բացատրելու աչն խնդիրները, որոնք վերաբերում են հալ-լու-  
սաւորչական կրօնի դաստաւութեանը պետական ուսումնարանների մէջ,  
ինչպէս և 1884 թ. փետրարի 16-ին հրատարակւած կանոնների հալ-լու-  
սաւորչական ծխական ուսումնարանների մասին և ալի կանոնները լրաց-  
նող բացատրութիւններին, որոնք չափուած են Կովկասեան երկրի պ. պ.  
Նահանգապետներին և գլխաւորներին 31 մարտի 1886 թ. № 3217-ով ուղ-  
ղած իմ շրջաբերականով, Թաղաւոր Կալսրը, ալի հարցերի մասին կալա-  
ցած առանձին խորհրդակցութեան արձանագրութեան ամենահստակ զե-  
կույցման համաձայն, սնցեալ մարտ ամսի 22-ին բարեհաճեց Բարձրագոյն  
հրամայել:

1) Թուլատրել, ժամանակաւորապէս, մինչև որ կը կաշնաւ ալի մա-  
սին մի առանձին կարգադրութիւն, ժողովրդական լուսաւորութեան մի-  
նիստրի, ներքին գործերի մինիստրի և Կովկասեան Կառավարչապետի հա-  
մաձայնութեամբ, հալ-լուսաւորչական դաւանութեան կրօնադիւտութեան  
դաստաւութիւնը Կովկասեան ուսումնարանական շրջանի միջնակարգ դըպ-  
րոցական հաստատութիւններին մէջ՝ հալերէն լեզուով:

2) Հալ-լուսաւորչական եկեղեցական-ծխական ուսումնարանների մէջ ուսուցիչ լինելու, Ռուսաստանի աշխարհադրութեան, պատմութեան աւարկաների դասատուն պէտք է նշանակելին միայն ալն անձինք, որոնք ունին որոշեալ ուսուցչական ցենդ. բաւց թողատրել Վաթուղիկոսին ալդ ուսումնարանների մէջ աւանդուող աւարկանների համար ընդունել ուսուցչիչ նաե վերոյիշեալ ուսուցչական իրաւունքը չ'ունեցող անձանց, միայն ալն պալմանով, որ ալդ բացառութիւնը կարող է տեւել մինչև 5 տարի: Ալդ ժամանակամիջոցից վետոյ ուսուցչական իրաւունք չ'ունեցող անձերը ալլ ևս չեն ընդունել աւհասարակ իբրեւ դասատու ալդ ուսումնարանների մէջ:

3) Բացատրել, որ, ընդհանուր կանոնով, եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչների նշանակումն ու արձակումը կատարուում է անմիջական կարգադրութեամբ հալ-լուսաւորչական հոգևոր իշխանութեան, որ, ի դէմս թեմական առաջնորդների, պարտաւոր է հաղորդել Վովկասեան ուսումնարանական չրջանի պ. հոգաբարձուին ուսուցիչների անձնական կազմակերպութեան մէջ եղած բոլոր փոփոխութիւնների մասին: Եթէ հարկաւորել հեռացնել եկեղեցական-ծխական դպրոցներից ալն ուսուցիչներին և ուսուցչուհիներին, որոնք իրանց զիտութիւնով և ուրիշ մանկավարժական չատկութիւններով կամ վարքով չեն համապատասխանում իրանց տոանձնած պարտաւորութեանը, ալն ժամանակ Վովկասեան ուսումնարանական չրջանի հոգաբարձուն նախապէս ալդ մասին ղիմում է տեղական հալ-լուսաւորչական թեմական առաջնորդին: Եւ եթէ ալդ մասին համաձայնութիւն չը կապնալ հոգաբարձուի և առաջնորդի մէջ, ալն ժամանակ հոգաբարձուն պարտաւոր է անմիջապէս ղեկուցանել Վովկասի կառավարչապետին, որ քարտերութեան մէջ է մտնում ալդ առիթով Վաթուղիկոսի հետ, վետոյ ձեռք է առնում, ըստ իւր հալեցողութեան, համապատասխան միջոցներ:

Ալդ կանոնը միակերպ տարածում է և թեմական տեսուչների վերալ:

4) Յուց տալ Բարձրագոյն Պատրիարքին, որ Հալաստանի պատմութեան և աշխարհադրութեան աւանձին դասատուութիւնը պէտք է հանել հալ եկեղեցական-ծխական դպրոցներում աւանդուող աւարկանների չարքից, իբրեւ օրէնքով չը թողատրւած աւարկալ: Բնդ տմին նորա անմիջական կատարման հսկողութիւնը չանձնել մերձաւոր ուսումնարանական իշխանութեան:

Ալդ վերոգրեալ Բարձրագոյն հրամանի մասին առաջարկած է ի կատարումն և ի ղեկավարութիւն թէ ուսումնարանական չրջանին և թէ Նորին Սրբութեան Մակար Վաթուղիկոսին:



## ԱՐՁԱՆ ՊԵՏՐՈՍ ՇԱՆՇԵԱՆՅԻՆ

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը.

Հանդուցեալ Պետրոս Շանշեանցին լարգողներէ մի խումբ, ցանկալով չաւերժացնել նորա չիշատակը, իբրեւ հասարակութեան մի ընտիր ու ազնիւ գործիչի և ճշմարիտ քրիստոնէի կատարեալ տիպարը իւր մէջ մարմնացնող մի անհատի՝ ընտրել է իւր միջից մի մասնաժողով, որ հողալու է աչս նպատակի իրագործման համար—մահարձան կանգնեցնելով նորա չիրմի վերայ և կենսագրութիւնը նորա կենդանագրով հրատարակելով: Հարկաւոր ծախքերը ծածկելու համար մտադրութիւն կալ ժողովարարութեան ղիմնելու թէ Տփլիսում և թէ դաւառներում. ցանկալի էր, որ հալ հասարակութիւնը չը զլանար իւր նպաստը աչնպիսի մի անզուգական հալի և քրիստոնէի չիշատակի չաւերժացնելու ձեռնարկութեանը՝ իւր աջակցութեամբ և առատաձեռնութեամբ:

Մասնաժողովի նախագահ ընտրած է պ. Մարկոս Դոլուխանեան, անդամներ՝ արժանապատիւ հարք — տէր-Արսէն Բագրատունի և տէր-Սահակ Սահակեանց և պ. պ. բժշկապետ Մալուրեանց, Յակոբ Տիգրանեանց և Բագրատ Միրիմանեանց:

Յարգելի ժողովարարներին խնդրում է հանգանակած գումարները ուղարկելու Տփլիսի հալ լրագրութեանց խմբագիրներին և կամ մասնաժողովի գանձապահ պ. Յակոբ Տիգրանեանցին՝ Տփլիսի քաղաքալին վարչութեան հասցէով:

## ՊԵՐՃ ՊԵՏՐՈՇԵԱՆՅԻ 30-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Վիպասան պ. Պերճ Պռօշեանցի տաղանդը և երկարամեալ գործունէութիւնը լարգողներին կարող ենք չաւարարել, որ նշանաւոր վիպասանի և գործիչի 30-ամեալ յօբելեանը արժանաւոր կերպով տօնելու համար նախապատրաստութիւնները տեսնում են: Պ. Պռօշեանցին լարգողների մի խումբ, աչս չունիսի 8-ին, հաւաքեց պ. Գէորգ Չմշկեանի մօտ՝ ալ խնդրի մասին խորհրդակցելու և վճռեց կազմել կարգադրիչ մասնաժողով, որի անդամներ խնդրած են լինելու՝

պ. պ. Սունդուկեանց Գաբրիէլ

Չմշկեան Գէորգ

Նրիցեան Ալէքսանդր

Տիգրանեան Յակովբ

Եզեկեան Աւետիք

Սարգսեան Լևոն

Նեղիբարեան Գարեգին

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Չը նայած, որ ամառուայ ամիսներն ենք մանում, երբ քաղաքականութիւնը առհասարակ դադարում է, բայց քաղաքական կեանքը կատարեալ եռման մէջ է Ներուայում: Ճշմարիտ է, ամենազլխաւոր իրողութիւնը որպէս անցեալ ամիս, նոյնպէս և այս ամիս շարունակում է մնալ Պարիզի Համաշխարհային հանգէսը, որտեղ ամբողջ աշխարհիս թէ մաքի և թէ արհեստի մշակները իրար rendez-vous են տւած: Այդ մեծ հանդիսի հետեանքները իրանց շուտով զգալ կը տան և «Մուրմ»-ը կ'աշխատի ծանօթացնել իւր ընթերցողներին այն բոլորի հետ, ինչ ամենից արժանաւոր է մեր միտքը գրաւելու: Բայց աշխարհահանդիսի տպաւորութիւնը միակ իշխողը չէ Ներուայի քաղաքական հօրիզոնի վրայ: Աշխատանքի ձայների ներդաշնակութիւնը խանդարւում է ուրիշ պէպքերով, որոնք ոչ միայն ներդաշնակ չեն Պարիզի հանդիսին, այլ ուղղակի նորահակտակ են և կարծես դիտմամբ նշանակւած՝ նսեմացնել այդ մեծ հանդիսի քաղաքական նշանակութիւնը: Բիւսմարկը ընտրել էր հէնց այդ րոպէն, որ Գերմանիայի մայրաքաղաք Բերլինում ի ցոյց աշխարհի սարքէ մի այլ տեսարան՝ բուն քաղաքական, որի հեռաւոր հետեանքները պիտի զգալ տան իրանց, երբ աշխարհահանգէսը վերջացրած կը լինի և յիշողութեան մէջ միայն մնացած:

Անցեալ ամիս էր, որ Խաւիլայի Հումբերտ թագաւորը փոխադարձաբար այցելութեան գնաց Վիլհելմ II կայսեր: Շքեղ, փառաւոր և ոգևորւած ընդունելութիւն Բերլինում, հանդէս, որին մասնակից էր ոչ միայն կայսերական տունը, այլ և պարլամենտը և քաղաքի վարչութիւնը: Հումբերտի հետ էր և նորա առաջին մինիստրը, նախկին յեղափոխական, այժմ Բիւսմարկի բարեկամ Կրիսպին:



Իտալիան, որպէս մեր ընթերցողներին արդէն յայտնի է ամսագրիս № 1-ից, մտած է երեք-պետեան միութեան մէջ: Մի ժամանակ այդ միութիւնը կազմում էին Գերմանիան, Աւստրո-Ունգարիան և Ռուսիան: Ռուսիան, սակայն, դուրս եկաւ այդ միութիւնից: Դորա փոխարէն Բիսմարկը մոցրեց իւր քաղաքական կոմբինացիայի մէջ Իտալիային:

Իտալիան հարեան է Ֆրանսիային, որը կապւած է առաջինի հետ պատերազմական յիշողութիւններով, երբ 1859 թ. նա օգնեց Իտալիային Աւստրիայի դէմ՝ Լոմբարդիան Աւստրիայից յետ խլելու և Իտալական միութիւնը ստեղծելու համար այժմեան թագաւորի հօր՝ Վիկտոր-Էմանուէլի օգտին: Առանց Ֆրանսիայի օգնութեան, Նապօլէօն III-ի ժամանակ, Իտալիայի միութեան գաղափարը, որը նոր չէր, չէր մեռնիլ. բայց այդ ցանկացած միութիւնը կատարւած իրողութիւն չէր լինիլ: Իտալիան պարտական է Ֆրանսիային իւր միութիւնով և, բացի դորանից, կապւած է Ֆրանսիայի հետ իւր ցեղական ծագումով և անտեսական շահերով: Այնպէս, ինչպէս որ կայ համալսարանական գաղափար, համագերմանական գաղափար, կայ և համալատինական գաղափար: Վերջինս ուզում է, որ այն ազգերը, որոնք լատինական ծագում ունին՝ Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան (գլխաւորները), իրանց բնութեան յատուկ քաղաքակրթութիւնը պաշտպանեն գերմանական ազգերի ծնշումից և չը թող տան, որ լատինական ազգերը, որպէս լատինական ազգեր, թուլանան յօգուտ գերմանական ազգերի, որոնց նմանապէս ոգեւորում է համագերմանական համերաշխութեան գաղափարը՝ ընդդէմ մի կողմից, լատինական ազգերի, որոնց մեծը Ֆրանսիան է, և միւս կողմից՝ սլաւոնական ազգերի, որոնց մեծն է Ռուսիան: Իսկ ինչ վերաբերում է անտեսական կապերին Իտալիայի և Ֆրանսիայի մէջ, այդ աւելի լաւ կը զգացւի մի առանձին յօդւածից, որ մենք նւիրելու ենք Եւրոպական միջազգային առևտրական շարաբերութիւններին: Առ այժմ այսքանը կ'ասենք, որ Իտալիայի արտահանութեան ամենամեծ շուկան է Ֆրանսիան և որ Իտալիայի պետական օբլիգացիաները գլխաւորապէս Ֆրանսիացոյ ձեռքին են: Ֆրանսիան այդ կողմից նոցն է Իտալիայի համար, ինչ է Գերմանիան Ռուսիայի համար:

Գերմանիայի հետ մտերմանալ և դաշնակից լինել Իտալիայի կողմից,

Նշանակում է՝ զոհել, գոնէ մի յայտնի չափով, լատինական համարաշիտութեան գաղափարը, եղբայրական-զինւորական յիշատակները 1859 թւականից, որ և ամենամեծ թւականն է 19-երորդ դարի Խոալիայի համար և զոհել երկրի տնտեսական շահերը, քանի որ քաղաքական թշնամութեան հետեանքն է մաքսային պատերազմը, որից աւելի Խոալիան կարող է զնասել, քան մեծահարուստ Թրանսիան:

Ռրտեղից ապա ծագեցին չկամական զգացումներ Խոալիայի մէջ Թրանսիայի դէմ. որովհետեւ սա հաստատ է, որ ամեն դաշնակցութիւն ներկայ Գերմանիայի հետ կարող է կատարւել միայն ի փոսա Թրանսիայի:

Այդ չկամական զգացումները ծագել են Խոալիայում՝ մէկ, որ պատճառ են ունեցած նեղանալու Թրանսիայից, երկրորդ, որ պատճառներ ունին Գերմանիան իրանց բարեկամ համարելու:

Թրանսիան էր, Նապոլէօն III-ի ժամանակ, որը ամեն կերպ զիմադրում էր իտալական հայրենասէրների ձգտումին՝ միացնել միացած Խոալիայի հետ Հռոմի Պապի թագաւորութիւնը: Յայտնի է, որ Հռոմի շուրջը գտնւած մի քանի նահանգներ կազմում էին այսպէս կոչւած «եկեղեցական նահանգներ», որոնք կազմում էին տէրութիւն Հռոմ մայրաքաղաքով և որի իշխանն էր Պապը: Պապը և՛ եկեղեցու գլուխ էր և՛, միևնոյն ժամանակ, տէրութեան գլուխ, աշխարհական թագաւոր: Բայց կարելի՞ էր արդեօք Խոալիան «միացած» համարել, քանի որ Խոալիայի մէջ կը շարունակէր գոյութիւն ունենալ մի ուրիշ տէրութիւն. միևնոյնն է, թէ այդ տէրութեան գլուխը մի աշխարհական է, թէ մի Պապ: Բացի դորանից, Հռոմը բնական մայրաքաղաքն է Խոալիայի, Հռոմ, որը մնում էր Պապի ձեռքին: Վիկտոր-Էմանուէլի դէմ Պապին պաշտպանելու համար, Նապոլէօն III-ը զօրք ուներ կանգնեցրած Հռոմում: Խոալիան, սակայն, ձգտեց և խորտակեց Պապի տէրութիւնը, միացրեց եկեղեցական նահանգները թագաւորութեան հետ: Մնաց Հռոմը, որը զբաւեց Վիկտոր-Էմանուէլը 1870 թւականին, Թրանս-Պրուսական պատերազմի ժամանակ, երբ Պապը Թրանսիայից օգնութիւն սպասել չէր կարող: Այսպէս կատարեց Խոալիայի կտտարեալ միութիւնը Սալօյեան ցեղի թագաւորական տան ձեռքով, որի առաջին իտալական թագաւորն էր



Վիկտոր-Էմանուէլ, իսկ երկրորդը՝ Իտալիայի աշխարհային թագաւոր չափաբերորդ:

Ֆրանսիան, առանց որի եղբայրական օգնութեան Իտալիան չը պիտի կարողանար իւր յաղթութիւնները տանել 1859 թ. և ստեղծել իտալական միութիւնը, դառաւ կասկածաւոր, երբ նա յամառութեամբ դիմադրեց Իտալիայի «կատարեալ» միութեան, պաշտպանելով Պապի աշխարհական իշխանութիւնը:

Այդ ժամանակներից իտալացոց մէջ մնացել են թշնամական զգացումներ դէպի Ֆրանսիան, որոնց, սակայն, ժամանակը մեծ մասամբ ջնջել է, քանի որ հանրապետական Ֆրանսիան նոյն կղերականութիւնը և Պապի աշխարհական իշխանութիւնը և ձգտումները համարում է նորագոյն Ֆրանսիայի թշնամի՝ «Le cléricalisme, — voilà l'ennemi». կղերականութիւնը — ահա՛ թշնամին — որպէս ասաց Գամբետտան:

Բայց այն, ինչ իսկապէս հեռացնում է Իտալիային Ֆրանսիայից և մոտեցնում Գերմանիային, ուրիշ հանգամանքներ են: Այդ հանգամանքներից ամենագլխաւորն է՝ Իտալիայի արտաքին քաղաքականութիւնը — նորա կոյնիական քաղաքականութիւնը: Կուլի ամենագլխաւոր առարկան է Միջերկրական ծովը, որի վերայ Իտալիան ուզում է եթէ ոչ միակ, դոնէ իրան, իբրև մեծ պետութեան վայել իշխանութիւն ձեռք բերել: Այդ կարելի է միայն, երբ Իտալիան տիրապետի Աֆրիկական ափերը, որոնք Իտալիայի դիմաց են: Բայց Միջերկրական ծովը այս րոպէին աւելի Ֆրանսիական է և անգլիական, քան իտալական: Ֆրանսիական է այն պատճառով, որ այդ նշանաւոր ծովի հիւսիսային ափերից մի մեծ տարածութիւն ուղղակի շփուում է Ֆրանսիային, որի միւս դիմաց՝ Աֆրիկայում, գտնուում է Ալժիրիան: Իսկ Ալժիրիան Ֆրանսիացոց ձեռքին է 1830 թւականից: Այդպիսով ծովի մի մեծ մասը բնկած է Ֆրանսիական հողերի մէջ: Բայց դեռ այդ բաւական չէ: Այժմ այնքան հալածւած Փիւլ-Ֆերրիի դաղթական քաղաքականութեան շնորհիւ, Ֆրանսիան, վերջին 10 տարում, իւր իշխանութիւնը տարածեց Ալժիրիային հարեւան Տունիսիայի վերայ. մի երկիր, որի հիւսիսային բաւականի երկար սահմանը Միջերկրական ծովն է: Այնպէս որ Ֆրանսիային է պատկանում այդ ծովի Աֆրիկեան կողմի մեծ տարածութիւնը:

Տունխիայի զրաւումը Ֆրանսիայից առիթ տւեց ցոյցերի խաղական կառավարութեան կողմից, որ քիչ էր մնում բացարձակ թշնամութեան հասնէին: Տունխիայում, որը Խալիպի գրեթէ հանդէպն է, Խալապիք ունին աււարական յարաբերութիւններ, կօնտօրներ: Որպէս նաեւ այլ եւրոպացիք, խալապիք ևս չէին ենթարկուում Տունխիայում այդ երկրի դատաստանական օրէնքներին, այլ իրանց, իտալական օրէնքներին, իրանց կօնսուլների ձեռքով: Բայց երբ Ֆրանսիան իւր գերիշխանութիւնը տարածեց Տունխիայի վերայ, նա այդ երկիրը մոցրեց Ֆրանսիական դատարան, այնպէս որ անգլիացոց, իտալացոց և ուրիշների մասնաւոր արտօնութիւնները դառան աւելորդ: Բայց իւր նախանձը չը կարողացաւ ծածկել Խալիան, որ ապարդիւն, բայց ինչ և իցէ յամառ կերպով պնդեց իւր արտօնութիւնների վերայ, չ'ուզելով որ Ֆրանսիական դատարանը դատի խալապիներին: Այտք է ասած, որ Ֆրանսիան ոչ թէ տիրապետել էր Տունխիային, այլ միայն տարածել էր իւր «հովանաւորութիւնը» երկրի վերայ, որը մնաց բէշութիւն (բէդ), որպէս և էր առաջ, այս զանազանութեամբ, որ Տունխիայի Տունխաքաղաքում այժմ նստում է Ֆրանսիական բարձր աստիճանաւոր, առանց որի համաձայնութեան, բէշի կառավարութիւնը չի կարող գործ կատարել, մանաւանդ ինչ վերաբերում է արտաքին գործերին: Նրկրի զօրքի հրամանատարները Ֆրանսիական են. այդ ի հարկէ նոյնանշան է տիրապետութեան, որովհետեւ բէշը վայելում է միայն պատիւը, իսկ երկրի կառավարութիւնը իսկապէս և իրօք Ֆրանսիական է:

Նւ այսպէս, Խալիան չը կարողացաւ զսպել իւր բարկութիւնը Ֆրանսիայի դէմ, որը, հաշւի չ'առնելով Խալիայի նկրտումները, իւր իշխանութիւնը տարածել էր ոչ միայն Ալժիրիայի, այլ Տունխիայի վերայ և դորանով իսկ զօրեղացրել իւր իշխանութիւնը Միջերկրական ծովի վերայ: Խալիան ևս աչք էր տնկած Տունխիայի վերայ, բայց չէր համարձակուում իւր քաղաքական դիտաւորութիւնները գործով ցոյց տալ՝ դժւարութիւնների մէջ չ'ընկնելու համար: Նւ կամ գոնէ սպասում էր, որ եթէ ինքը չի վերցնում, Ֆրանսիան էլ չը պիտի վերցնի այդ երկիրը: Ֆրանսիան ասկայն չը հարցրեց Խալիային և տիրապետեց երկրին, ուրեմն չը յարգեց Խալիային: Չը յարգեց, — լաւ, եւ նորան ցոյց կը տամ, մտածեց Խալիան:



Այդ դէպքը շատ կարեւոր դատաւ Խաղիայի յարաբերութիւնների համար դէպի Պրանսիան: Նա սկսեց զայրանալ, կատաղել Պրանսիայի դէմ՝ նա՛ առաւել վստահ և համարձակ ու բաց կերպով, որ Պրանսիան լուրջ բանի տեղ չէր դնում Խաղիայի ոտնահարումը: Պրանսիան աշխատում էր միայն հանգըստացնել Խաղիային, ասելով, թէ՛ դու էլ գնա՛, ու տիրապետիր Տունսիային կպած և Խաղիային դեռ աւելի էլ մօտիկ Տրիպօլիսիային: Խաղիան այդ չ՛արաւ. դորա համար հարկաւոր էր պատրաստուել ամեն դէպքի համար հաշիւ տեսնելու Քիւրքիայի հետ, որին պատկանում է Տրիպօլիսիան: Մնաց միայն ռիւր Պրանսիայի դէմ, որից չէր վախենում Խաղիան, որովհետեւ զիտէր, որ երբէք չէր վճռիլ Պրանսիան պատերազմել Խաղիայի հետ, քանի որ Գերմանական-Ֆրանսիական կնճռոտ հանդուցը դեռ չէ լուծւած: Իւր այդ աջող չիրքից Խաղիան այս տարիներում օգուտ քաղեց որքան կարող էր՝ անբաւականութիւններ ստեղծելու Պրանսիայի համար, առանց օգուտի իւր համար: Խաղիային մղում էր ցանկութիւն՝ կօլօնիական պետութիւն դառնալու, Միջերկրական ծովի վերայ ազդեցութիւն ձեռք բերելու և, առհասարակ, եւրոպական մեծ պետութիւնների կոնցերտում աւելի մեծ դիրք բռնելու, քան բռնած ունէր: Գայժմ: Նա այնքան ուժեղ չէր, որ կարողանար միայնակ այդ գործերը կատարել. նրան հարկաւոր էր մի զօրեղ դաշնակից: Սկզբում նա մի փորձ փորձեց Անգլիայի հետ մտերմանալ: Անգլիան նորան խորհուրդ տւեց նաւատորմիդը զօրացնել, որովհետեւ Պրանսիայինը շատ զօրեղ է: Շատ թանկագին բարեկամ գտած համարելով, Խաղիան համաձայնութիւն կայացրեց Անգլիայի հետ, որ Կարմիր ծովի ափերում գտնւած Մասսօվան ինքը տիրապետի: Եւ գնաց Խաղիան տիրապետելու Մասսօվան, մարդ չը զիտէ թէ ինչի՛ համար. և այնքան անկարող գտնւեց, որ ահա՛ քանի տարի է, դեռ ինչի՛րը չի վերջացած նորա և Հաբեշաստանի մէջ: Մասամբ այդ անաջողութիւններից արած տպաւորութիւնը ջնջելու և գլխաւորապէս իւր քաղաքական ղիտաւորութիւնները առաջ տանելու համար, Խաղիան որոնեց Գերմանիայի բարեկամութիւնը:

Որոնելու շատ ջանք չէր հարկաւոր: Բիւմարիքը առանց այն էլ միշտ ընկած է բարեկամների յետևից: Ընթերցողները յիշում են

ամսադրիս № 1-ից, թէ ինչպէս Բիւմարկը դաշնակցութիւն կապարեց Վերմանիայի, Աւստրո-Ունգարիայի և Ռուսիայի հետ և թէ ինչպէս Ռուսիան, այս վերջին տարիներում, դուրս եկաւ այդ դաշնակցութիւնից: Այդ պակասորդը հարկաւոր էր մի կերպ լրացնել: Ի հարկէ, Խաղիայի բարեկամութիւնը չի կարող Ռուսիայի բարեկամութեան տեղը տալ, բայց ինչ արած, չարաց չը կայ, եղածինն էլ օգտւելու է: Խաղիան սկսեց մօտենալ Վերմանիային դեռ կոմս Ռօբերտինի ժամանակ, որը արտաքին գործերի մինիստրն էր. բայց այդ քաղաքականութիւնը աւելի շեշտւեց ներկայ մինիստր-նախագահ ու արտաքին գործերի մինիստր Կրիսպինի ժամանակ: Սանտիսկին յեղափոխական մարդ է, յուզւող, կամախոր, մեծ ամբիջիացով: Խելքի ու տաղանդի մասին բաւականաչափ նիւթեր չ'ունինք դատելու, բայց նորա յաճախ և անտեղի «լիխօղկա»-ները Ֆրանսիայի դէմ մեծ ապացոյցներ չեն տալիս նորա քաղաքական հեռատեսութեան: Ինչ և է, բայց նա առաջին անգամ իւր տեսակցութիւնը ունեցաւ Բիւմարկի հետ 1887 թ., դեկտ. 2-ին (նոր տոմար), երկրորդ անգամ անցեալ 1888 թ. օգոստ. 21-ին, իսկ նոյն ամսի 25-ին Աւստրո-Ունգարիայի մինիստր կոմս Կալնօկիի հետ: Անցեալ տարի ամռանը կայսր Վիլհելմ II, եւրոպական արքունիները այցելելիս, եկաւ նաև Հռոմ, և այդ այցի փոխարէնն է, որ անցեալ մայիսին թագաւոր Հոլմբերտը հատուցեց զերմանական կայսր Վիլհելմ II-ին Բաց թագաւորի հետն էր և մինիստր Կրիսպին, որի ներկայութիւնը անհրաժեշտ է քաղաքական բանակցութիւնների համար:

Արդ, թէ ի՞նչ բանակցութիւններ տեղի ունեցան Բերլինում—այդ թանձր քօղով ծածկւած է: Ֆրանսիական աղբիւրները պնդում են, թէ Վերմանիայի և Խաղիայի մէջ կապւեց մի դաշնակցութիւն, որի զօրութեամբ իտալական զօրքի հրամանատարը, պատերազմի դէպքում, լինելու է գերմանական զենեքալ և որ Խաղիան նոյն պարտաւորութիւններն է յանձն առնում կատարել Վերմանիայի համար ընդդէմ Ֆրանսիայի, ինչ պարտաւորութիւններ որ յանձն է առած Աւստրո-Ունգարիան յօգուտ նոյն Վերմանիայի ընդդէմ Ռուսիայի: Յայտնի չէ, թէ ինչ փոխադարձ ծառայութիւններ են խոստացւած Խաղիային՝ Վերմանիայի կողմից: Մի քանի ժամանակից յետոյ թերեւս վարագոյրը բացւի:



## „ՄՈՒԴՔ“-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ղ.ԶԼԱՐ. Ղ.Ղլարցուն։ Որպէս առանձին տպւելիք—չենք ընդունում. բայց  
նա հարկաւոր կը դալ, երբ կը զրադւենք հաշիւական ուսուցիչ-  
ները զրութեան խնդրով։ Այն ժամանակ Զեր «Անձնագրոյ վար-  
ժապետ» տոմսաւորը իւր տեղը կարող է ունենալ։

ԲԱՔՈՒ. պ. Կ. ին։ «Աքսորածի դաւակը» կը տպւի պատկէ ժամանակին։  
ԱՂԱՍԱՖԱՍ. պ. Արէլ Ապրիսեանցին։ Ստացանք հասցէի փոփոխութեան  
համար 5 հատ 7 կողեկանոց մարկաւ Մի հատը աւելորդ էր,  
և զրեցինք իւր մուտք՝ փոխառութեան խնդրական դանձարանի  
մատենում։

«ՄՈՒԴՔ»-ի վէպերը։—Այս համարում վերջանում է Պերճ Պռօշեանցի «Յե-  
ցեր» վէպը և այսօր էլ նա մտնում է զրաւաճառանոցը, որպէս  
առանձին վէպ, հրատարակութիւն «Մուրճ» ամսագրի։ Մեր  
ամսագրի առաջին հրատարակութիւնն է ալ։ «Յեցեր» վէպը,  
որպէս առանձին գիրք, տպւած է մաքուր և սպիտակ թղթի  
վերալ, ծաւալը փոքրացրած է մինչ 5 քառակուսի տողի  
երկարութիւն, մինչդեռ «Մուրճ»-ինն է  $6\frac{1}{2}$  քառակուսի,  
երեսի տողերի թիւն է 27, մինչդեռ «Մուրճ»-ինն է 34. աղպիւսով  
«Յեցեր» վէպը կազմում է 336 երեսից բաղկացած բաւականին  
վաղելուց մի հատար և վաճառւում է 1 բուլբլով՝ չօդուտ հեղի-  
նակի։ Այդ հրատարակութիւնը ընկնում է հեղինակի 30-ամիալ  
չօրելեանի տարին։ Ներկալ համարով սկսւում է տպագրւել մի  
գեռ ևս անչալտ հեղինակ պ. Սարգիս Ասրապետեանի մեծ բօ-  
մանը՝ «Խե կարապետ»։ Ենթադրարար, ալդ բօմանը ունենալու  
է 260 «Մուրճ»-ի երեսներ, այնպէս որ աւելի մեծ է լինելու, քան  
«Յեցերը»։ Կարելիին չափ արագ վերջացնելու համար, ալս և հի-  
տեւալ համարներում կը տանք ալդ բօմանից աւելի մեծ մեծ կտոր-  
ներ, քան մինչ ալժմ սովոր էինք անելու։ Աղպիւսով նաև ընտա-  
նիքները, որոնք հեշտ ընթերցանութեան նիւթ են պահանջում,  
կը ստանան իրանց բաւականութիւնը։ Ալժմ, երբ ամառալ

չոքերն են սկսում, մենք կ'աշխատենք, որքան կարելի է, ընթերցողների աչք պահանջը լրացնելու:

Պ. Ասարկանանի բոմանից զտա՝ զուգընթացաբար պիտի ստանք շուտով պ. Լէօի լատիսպէս («Մուրճ»)-ի համար գրած «Կորածներ» վերնագրով վէպիկը, չը խօսած արդէն «Պատրիկեանի նամակներ» մասին, որոնց բնագործիկն էնտ մեր ընթերցողները բաւականին ծանօթացած պիտի լինին: Այդ «նամակները» ներկայացնում են իրարից բոլորովին անկախ պատկերներ, հասարակական, բայց արդէն միայն ինտելիգենցիայի, աչն էլ՝ գործիչ անձերի տիպարներ: Այդ «նամակները» կը տպւին նաեւ ապագայում:

Բացի աչք բոլորից, սպասում են իրանց ժամանակին արդէն բոլորովին պատրաստ արկին Մ. Խ. «Նինա» և պ. Լէօի «Գործիչ» մեծ բոմանները, մէկը՝ բարձր չրջանների կեանքից, միւսը՝ դաւաճական կեանքից: Մենք կարծում ենք, որ «Նինա»-ն կարող պիտի լինենք սկսել տպագրելու հոկտեմբեր կամ նոյեմբեր ամսից:

ԻԶՄԻԲ. պ. Ս. Սիվրիսարեանին: Բոլոր Տաճկա-հայերից Գուք ստաջինն էր գրած «Մուրճ» ամսագրին, որ ստիւ է թէ՛ Գուք առ աշխարհ միակ տաճկա-հայ բոմանորդն էր: Փնտք և պատիւ տաճկա-հայերին:

ԲԱՔՈՒ. պ. Ա. Դաւթեանցին: Ստացանք Ձեզնից և պ. Ան. Քալանթարից 6 ր. 25 կոպ. նւէրը լոգուտ «Մուրճ»-ի փոխատու-խնայողական դանձարանի: Ընդունեցէք մեր շնորհակալութիւնները:

ԱԿՈՒԼԻՍ. պ. Դադարեանցին: Ձեր գրածքը չեաւ տւինք պ. Մկրտչեանին: Այդ նիւթի մասին ստացւած են շատ աւելի ընդարձակ և հեղինակաւոր գրածներ, բայց մնացին անտպ: Նորութիւն չը կա՛ մէջը:

ԲԱՔՈՒ Մարդասիրական Ընկերութեան 25-ամեայ ջօրելեանին «Մուրճ»-ի խմբագրութիւնը, քանին խմբագրի, ուղարկեց հետեւեալ հուռգիրը: — Բաքուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան: Խմբագրութիւնը «Մուրճ» ամսագրի չլուծ է իւր ջերմագին շնորհաւորութիւնները 25-ամեայ ջօրելեանի առիթով: որտանց ցանկանում է ապագայ բարդաւածումը լուսախոնական չիչատակ հիմնադրների, իրախոյս կառաւարիչների, տիտիւմն կարօտակների և մեր ամենքիս բարեկեցութեան:

ՄՈՍԿՒԱ. Ուստնոզ պ. Յակոբ Թաղէսեանին: Ձեռները կ'ուղարկեն նոր հասցէով:



ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԻՆ. Որպէս զի «Մուրճ»-ի բովանդակութեան հետ ծանօթանալ հասարակութեան ալն մասը, ուր «Մուրճ»-ը զեռնու հէ թափանցել, ալս համարով ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին «Մուրճ»-ի չորս ՌՁ-ների բովանդակութիւնը կրկին անգամ, լստուկ նպատակով, որ բովանդակութեան ալց թերթը մեր բաժանորդները տան իրանց ծանօթներին: Խմբագրութիւնս կարծում է, որ բոլոր չափարարութիւններից դա՛ լաւագոյն տեսալին է:

Նոր բաժանորդները կը ստանան բոլոր անցեալ համարները:

ԺԸՆԵԻ. պ. Յոնան Դաւթեանցին: Հասցին ուղղեցինք:

ՎԻՆՆԱ. Խմբագրութեան «Հանդէս ամսօրեալ»-ի: Պարոն Յ. Չաթալբաշեանը մեզ հաղորդեց, որ «Մուրճ»-ի ՌՁ-ները 2-ից սկսած ստացած չէք: Պարտք ենք համարում չափանել չարգոյ խմբագրութեանը, որ «Մուրճ»-ի բոլոր ՌՁ-ները Ձեզ ուղարկւած են, բաց միայն հասարակ բանդերօլով, որովհետեւ տարեկան ապահովագրով պօստատունը չի ընդունում արտասահմանի համար: Դէպքը մեզ և զարմացնում է և վշտացնում: Մենք ալս անգամ ուղարկում ենք Ձեզ վիշեալ ՌՁ-ները երկրորդ անգամ:

ԲԱՔՈՒ. պ. Խաչ. Մ. Դիլանեանցին: Ստացանք 35 բուբուռ ծրարը և չանձնեցինք ըստ հասցէին՝ Ա. Ք.-ին:

ԹԻՖԼԻՍ. պ. Դ. Աղադեանցին: Ձեր լոյսը, որ «Մուրճ»-ը եւ իւր կողմից մէկին կը չանձնարարի հիւն և վեւ-ի մասին գրել, պիտի մնալ անկատար: Մենք որ զիմենք մի խնդիրքով մէկին բան գրելու, մեր խնդիրքի առարկան կը լինի, օրինակի համար՝ պանդըխտութեան խնդիրը հաւերիս մէջ, զիւղական դարդն ու ցաւերի վերաբերեալ մի խնդիր, հարկերը Անդրկովկասում, դպրոցական չառաջդիմութեան խնդիրը, իրերի դրութիւնը Թիւրքաց-Հայաստանում, նորագոյն բանաստեղծութիւնը մեղանում, հալ կնոջ դրութիւնը և նորա չառաջդիմութեան պտղմանները, առևտուրը Նրևանում, Բաքուում, Թիֆլիսում, Բաթումում, առևտրական կրիզիսները մեղանում, վիպասանութիւնը մեղանում, ուսուցչական ապահովութեան խնդիրը, գրող դասակարգի համար փոխառութեան խնդրական կաստան, քրէական չանցանքները Անդրկովկասում, զաչագութիւնը մեր երկրում և ալն և ալն: Ահա իրօք հարկաւոր, կենտական, հիւթալի խնդիրներ, բաց ի հարկէ, խնդիրներ, որոնք չեն կարող հետաքրքրել առհասարակ, ինչ կալ մեղանում, փոսած-նեխած չբջաններին: (Ո՛չ անդատման անկիրթներին, օ ոչ. ցաւը սա է, որ նեխածներ կան մանա-

ւանդ մեր «ուսումնական» շրջանների մէջ!): Խնդրի վերաբերեալ զրուածներ մենք սխալ կ'ընդունենք, բազմ միայն եթէ նորա իրօք նորութիւն են չապրած: Եւ որովհետեւ մենք մեծ լոյսեր չ'ունինք, ալի պատճառով կարծում ենք, որ հիւն և վեւ-ի մասին զրականութիւնը, եթէ արդէն սպառած է, չատ չուտով կը սպառւի: Իսկ ով իրօք նոր բան ունի չապրելու, նա կը դրի առանց սպասելու որ խնդրեն:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԻԱՆ. պ. Շ.-ին: Ստացանք Ձեր նամակը և 4 մարկան: Թուլ-տուլութիւն ենք խնդրում, որ մի ամիս եւ չօգւածը մեզ մօտ մնայ, որովհետեւ ժամանակ չ'ունեցանք նորանով զրադւելու:

ԲԱՔՈՒ. պ. Ա.-ին: Ձեր վէպիկը չանձնեցինք պ. Շիրվանդադէին:

ՎՋԻԿԱՆԻՔԻ: Սոյն 6-դ Ձեռն, «Խե Կարապետ» վէպում պէտք է ուղղել հետեւի տպագրական սխալները:

|          |         |               | տպւած է    | ուղղել է   |
|----------|---------|---------------|------------|------------|
| Երես 843 | 2-դ տող | Ներքեից՝ ստեր |            | ստիր       |
| 855      | 18-դ    | »             | ու տարի    | տարի       |
| 872      | 5-դ     | »             | Թանջիմաթից | Թանդիմաթից |
| 876      | 8-դ     | »             | Կ. Պօլսում | Կարինում   |
| 877      | 5-դ     | » վերեից՝     | գ ի ր ք ք  | գ ի ր կ ք  |
| 886      | 4-դ     | » Ներքեից՝    | մասով      | մասին      |
| 889      | 15-դ    | » վերեից՝     | Կ. Պօլս    | Կարին      |
| 892      | 14-դ    | »             | Մ.-ի       | Մուշի      |

Անցեալ 5-դ Ձեռն, Կարա-Մուրզայի կենսագրութեան մէջ առւած է (երես 822), թէ նորան ուղարկել են խապիս, ու Վաղարի վանքը (Վենետիկ), մինչդեռ ճիշդը սա է, որ միայն մտադիր են եղել ուղարկելու նորան ալեքսի:

Անցեալ Ձեռն 5-ում, «Ուղղագրութեան խնդիրը» չօգւածում, երես 818, 8-դ և 7-դ տողեր Ներքեից՝ «որպէս և մեր հիւնը՝ երկու գէպում իսկապէս ճաշնաւոր է» խօսքերը սխալմամբ են տպւած, որպէս ալի պարզ երևում է նախադասութեան մտքից, որի հետ ալի խօսքերը բոլորովին չեն կապւում:



ՎԵՐՋԻՆ ԺԱՄԻՆ ՍՏԱՅԱՆՔ ՀԵՏԵԻՆԱԼ ԵՐԿՈՒ ԳԻՐՔԸ.

ЗЕЛИНСКИЙ, Ст. П.—ОБЪЯСНИТЕЛЬНЫЙ СЛОВАРЬ Татарскихъ, грузинскихъ и армянскихъ словъ, вошедшихъ въ матеріалы по изуч. быта госуд. крестьянъ въ Закавказ. краѣ. (Приложеніе къ своду).

ԽԱԶԱՏՈՒՐ ՇԱՀԻՐ.—ԾԱՂԻԿ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԳԵՐ, *ժողովեց և հրատարակեց օր. Մարիամ Մակարեանց: Թիֆլիս. տպարան Մարտիրոսեանցի, 1889 թ.*

## ՄՈՒՐՃ՝ ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՇՏԱՅՐԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Ուսուցիչների, վարժուհիների և բարձրագույն դպրոց-  
ների ուսանողների համար:**

ԹԻՖԼԻՍՈՒՄ վճարում են կամ միանգամ 8 թուրքի տարեաց սկզբին  
և կամ տարեկան 10 թուրքի աջակէս՝

|                            |   |    |
|----------------------------|---|----|
| Յունւարի 1-ին . . . . .    | 2 | ր. |
| Փետրւարի 1-ին . . . . .    | 2 |    |
| Մարտի 1-ին . . . . .       | 2 |    |
| Մայիսի 1-ին . . . . .      | 2 |    |
| Սեպտեմբերի 20-ին . . . . . | 2 |    |

ԳԱԻԱՌՆԵՐԻՅ ուղարկում են տարեկան 9 թուրքի աջակէս՝

|                         |   |    |
|-------------------------|---|----|
| Յունւարի 1-ին . . . . . | 3 | ր. |
| Փետրւարի 1-ին . . . . . | 3 |    |
| Մարտի 1-ին . . . . .    | 3 |    |

Բարձրագույն դպրոցներում ուսանողները վճարում են տարեկան 8  
թուրքի աջակէս՝

|                         |   |    |
|-------------------------|---|----|
| Յունւարի 1-ին . . . . . | 3 | ր. |
| Փետրւարի 1-ին . . . . . | 3 |    |
| Մարտի 1-ին . . . . .    | 2 |    |

Հասցէ՝ Тифлисъ. Редакція журн. МУРЧЪ.



# ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՐԿՈՒՄ

## ԱՐԺԱՆԱՅԱԾ

աշխարհի մէջ կարեւորեցանք ըրոր յուսանողներում

## ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

կարոր ընկերներ տան տիկիներին և աղջիկ ողնականներ  
բոլոր արհեստաւորների համար

## ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Զինգերի ընկերութեան կիսգործնական պահեստում, Գո-  
լովինսկի պրոսպեկտի վերայ, Մերեմանովի տան և նրա բաժանմունք-  
ներն մէջ:

Բազում. Մեքայելեան փողոցում, ||  
Մերզա Աւագեանի տ.  
Քութայիսում. Բուրլարի գէմ,  
Զերեկովի տ.

Բաթումում. Պոլեյեական փողո-  
ցում, Թէրզի օղլու տ.  
Թէհրանում. Մարշ-Մէյդանի  
գէմ, բուլվարի վերայ:


և նրանց շահապարհորդող գործակալներին հօր

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՍՏՈՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ.  
ԳԼԽԱՌՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

Գ. ՆԵՅԳԻԼԻՆԳԵՐ

Վնդները կարող են, եթէ կամենում են, զրամբ հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, աչն է՝ չաբաթով կամ  
ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւականով զրամբ վճարելու համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնուում են մեքենաներին պատկանելի գործիքները, լնչպէս են.  
ասեղներ, թել, մետաքս և ալ մեքենային պատկանելի իրեղեններ սովորապէս զներով:





THE NEW YORK PUBLIC LIBRARY  
ASTOR LENOX TILDEN FOUNDATION  
1215 6TH AVENUE  
NEW YORK 17, N.Y.







# Մ Ո Ւ Ր Ճ

## ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է:

|                                 |            |
|---------------------------------|------------|
| Տարեկան բաժանորդագինը . . . . . | 10 ռ.      |
| Կէս տարւանը . . . . .           | 6 ռ.       |
| Երեք ամսւանը . . . . .          | 4 ռ.       |
| Մի գրքովը . . . . .             | 1 ռ. 50 կ. |

Աւսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վաղելում են զիջումներ, համեմատ առանձին տպած չափաբարութեան:

Մուրճի ամէն մի համարը, որպէս առաջին «Հրաւեր»-ի մէջ առաւ էր, ունենալու է 8—10 տպագրական թերթ, կամ որ նոյն է՝ 128 մինչ 160 երես: Մուրճը յայժմ՝ առած է 172 երես աւելի, քան միջին թւով խոտադածը: Ամբողջ տարին Մուրճը կազմելու է 12 զիրք, երեք մեծ հատորներ, շուրջ 1800 երեսով:

Նոր բաժանորդները կը ստանան նախորդ համարները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

|                                 |       |
|---------------------------------|-------|
| Անուան մի երեսի համար . . . . . | 10 ռ. |
| „ կէս երեսի համար . . . . .     | 6 ռ.  |
| „ քսուորդ երեսի համար . . . . . | 4 ռ.  |

Կրքերի չափաբարութիւնների համար կարելի է վճարել նաև չափաբարած գրքերով՝ սոյա գների համաձայն:

Խմբագրութեան հասցեն՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Խմբագրութիւնը գտանուում է՝ Գանովեան փողոց, տան Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ Іоаннисиани). Բոլորովին մծա Արեանեան հրատարակին:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».



